

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ**

**ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ**

**ՆՈՐ ԶՈՒՂԱՆ**


**ԵՎՐՈՊԱԿԱՆ**

**ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

**17-18 ԴԱՐԵՐՈՒՄ**

**ՄԱՍ II**

**ԵՐԵՎԱՆ 2017**



9(47.925)  
թ -12

ՀՀ ՍՓՅՈՒԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

հշ.

## ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱՋԻՐՅԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՆ  
ԵԿՐՈՊԱԿԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ  
17-18 ԴԱՐԵՐՈՒՄ

ՄԱՍ II

(Բնագրերի թարգմանություն, ծանոթագրություններ)

5999

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԿԻԱՆ

ՄԱՏԵՆԱԾԱՐ

173



ARCH. MESROB ASHJIAN

BOOK SERIES

173

ԵՐԵՎԱՆ 2017





ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3(5Դ)

Թ 249

Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով

Աշխատութիւնը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյան  
Գրախոս՝ պ. գ. թ. Սեդա Տ. Օհանեան

Թափառյալի Էլիզաբեթ

Թ 249 Նոր Ջուղան եվրոպական աղքատներում 17-18 դարերում, մաս II (Բնագրերի թարգմանություն, ծանոթագրություններ) / Է. Խ. Թափառյալի.- Եր.: Պատմ. ինստ., 2017, 294 էջ:

17-18-րդ դարերում բազմազան նպատակներով Արևելք են այցելել բազմաթիվ եվրոպացիներ, որոնց թողած ուղեգրություններում, նամակներում եւ գեկուցագրերում ծավալուն տեղ է գրավում Նոր Ջուղայի հայ գաղթօջախին վերաբերվող նյութը: Աշխատության այս մասում ներկայացվում է եվրոպական հեղինակների (Գարսիա դե Սիլվա Ֆիգերոայի, Գ. Ֆիլիպի, Ադամ Օլեարիուսի, Գաբրիել Շինոնի, Դուրե Դելանդի, Ֆրանսուա Պիկեի, Թեվրնոյի, Սանտոնի, Ֆիլիպ Ալրիի, Տուրնեֆորի, Ժակ Վիլլոտի, Ջեմեյի Կարերիի եւ այլոց) բնագրերի հայերեն թարգմանությունները եւ ծանոթագրությունները:

Գիրքը նախատեսվում է պատմաբանների եւ գիտական լայն շրջանակների ընթերցողների համար:

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3(5Դ)

ISBN 978-9939-860-62-6

- © Պատմության ինստիտուտ
- © ՀՀ Սփյուռքի նախարարություն
- © Էլիզաբեթ Թափառյալի

Հորս՝ Խոսրով Թափառյալիի հիշատակին,  
ով լեզուների իր իմացությամբ մշտապես  
կողքիս էր իր խորհուրդներով:

### ԱՌԱՋԱԲԱՆ

«Նոր Ջուղայի Հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եւրոպական աղքատներում» մենագրության 2-րդ մասն ընդգրկում է 17-րդ դարում Պարսկաստան այցելած եւ այնտեղ դիվանագիտական, զինտա-կրթական, Հոգեւոր եւ առեւտրական գործունեություն ծավալած մի շարք եւրոպացի ճանապարհորդների եւ միսիոներների ուղեգրությունների այն հատվածները, որոնք անմիջականորեն վերաբերվում են Հիշյալ ժամանակաշրջանի Նոր Ջուղայի Հայկական գաղթօջախի կյանքի ամենատարբեր ոլորտներին՝ սկսած Հայ Համայնքի Սպահանի արվարձանում հաստատվելուց, մինչեւ սոցիալ տնտեսական խնդիրները, Հոգեւոր եւ էթնո-մշակութային կյանքի վերլուծությունը:<sup>1</sup>

Անդրադառնալով ոչ բոլոր, սակայն իրենց գործունեությամբ առավել կամ պակաս նշանակալից Հեղինակների աշխատություններին, ցանկացել ենք Հանձինս նրանց՝ բացահայտել Եւրոպայի աշխարհիկ եւ Հոգեւոր վերնախավի իրենց առջեւ դրած խնդիրներն

<sup>1</sup> Վերջին քսան տարիների ընթացքում աշխատելով Եւրոպայի տարբեր գրադարաններում եւ արխիվներում ուսումնասիրության կատարելով «17-18-րդ դդ. եւրոպական աղքատները Հայաստանի եւ Քայերի մասին» թեմայով, բազմիցս զգացել եմ իմ եւ եւրոպացի գիտնականների ջերմ վերաբերմունքն ու խորհուրդներն իմ ուսումնասիրությունների ժամանակ: Երախտագիտությամբ եմ հիշում այն անձանց, որոնց մասնագիտական աջակցությունը մշտապես ուղեկցել է ինձ այդ հետազոտությունների ընթացքում: Փարիզի Ազգային գրադարանի հայկական ֆոնդի մասին պատասխանատու եւ նուրբարյան գրադարանի մասին տնօրեն Հարություն Ռայմոն Գեորգյան, ֆրանսիացի արեւելագետ Ֆրենսիս Ռիշար, Վատիկանի «Գաղտնի Արխիվների» մասին տնօրեն Մոնս. Յոզեֆ Մեցլեր, մոնս. Կառլոս Ալոնսո, մոնս. Կառլոս Լոնգո, Գերապայ-ժառ Լեոն արք. Ջեքիլյան, Միսիոնային միաբանության մասին Արքաներ՝ Լ. Սահակ Ժեմմեյան եւ Լ. Եղիա Քիլադյան: Մշտապես զգացել եմ նաեւ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ղեկավարության բազմամյա հովանավորությունն ու աջակցությունը այս աշխատանքն իրագործելու ընթացքում:



այս տարածաշրջանի հայ բնակչության վերաբերյալ: Ինչպես նաև անտեսված չէ նոր Զուղայի հայ համայնքի վերաբերմունքը նրանց՝ եւ նրանց այստեղ գործուղող իշխանությունների հանդեպ: Այս առումով հիշյալ հեղինակների նոթերը մեզ համար խիստ կարեւոր են տարբեր մասնագիտությունների տեղ անձանց կողմնակի հայացքով դիտված զանազան փաստերի վերլուծության տեսակետից: Չմոռանալով հանդերձ նրանց անձնական մոտեցումներն ու շահագրգռության աստիճանը, հաճախ նաև այլ ճանապարհորդների եւ միսիոներների աշխատանքների եւ պատմածների ազդեցության տակ գտնվելը, որի պատճառով որոշ հեղինակների մոտ տեսնում ենք նաև բազմաթիվ կրկնվող հատվածներ<sup>2</sup>: Նրանցից շատերի տրակտատներն ուղղակի նամակներ եւ զեկուցագրեր են իրենց անմիջական մեծավորներին՝ այդ թվում վարչապետներին, միսիոների առաջնորդներին, այսինքն կրում են գործնականության ու շահագրգռվածության հետքը: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ Ֆրանսուա Պիկեն, դիվանագիտական գործունեությունը համատեղում էին հոգեւոր առաքելության հետ<sup>3</sup>:

Ժամանակագրական առումով մեր նշած հեղինակներից առաջինը Գարսիա Դե Սիլվա Ֆիգեռոան է (*L'Ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, Paris, M. D.C. LXVII*)՝ Իսպանիայի արքա Ֆիլիպ 2-րդի դեսպանը, որը պարսից շահի հետ պետք է դիվանագիտական եւ առեւտրական պայմանագրեր կնքեր Պարսից Ծոցում Հորմուզի պատկանելության եւ մետաքսի առեւտրի վերաբերյալ:

2 Ֆրանսիացի մեծ ճանապարհորդ Ժան Ծարդենը ակադեմիկոս Ծարպանտիեին ուղղած իր նամակում (7.04.1681 թ.) գրում է. «Պ. Թավերնիեի ուղեգրություններում եւ Պ. Թելընոյի ետմահու հրատարակություններում նկատեցի, որ հեղինակներն իրենց՝ ճանապարհորդների մտքերը չէ որ պատմում են, գուցե հիշողության շփոթմունքի պատճառով, կամ գուցե իրենց համար անձանոթ կամ մոր իրերի կամ իրադարձությունների մասին ճշգրիտ տեղեկություններ չունենալու պատճառով» (St' u Dirk Van der Cruisse, *Jean Chardin*, Paris, 1998, p. 287, III, chap. XIII, n. 37):

3 El-Mudarris Hussein.I., Salmon Olivier, *Le Consulat de France à Alep au XVII siècle (Journal de Louis Gédoyne, Vie de François Piquet, Mémoire de Laurent d'Arvieux)*, Alep, 2009.

Հաջորդ դիվանագիտական այցը կատարել է Ադամ Օլեարիուսը (*Подробное описание путешествия Голштинскаго Посольства въ Московию и Персию въ 1633, 1636 и 1639 годах, Москва, 1870*)՝ Ֆրիդրիխ 3-րդի Հոլշտեյնյան դեսպանության կազմում, որի խնդիրն էր պարսկական մետաքսի առեւտրի ցամաքային ճանապարհի հիմնումը դեպի Եւրոպա՝ Ռուսաստանի վրայով: Նրա աշխատության առաջին հրատարակությունը (1647 թ.) դիվանագիտական զեկուցագրի բնույթ էր կրում: Իսկ դեսպանության նպատակներն ի դերեւելան նախ ցամաքային ճանապարհների անապահովության եւ ապա Պարսկաստանում դեսպանության անդամների ոչ հարգալից պահվածքի շնորհիվ: Այնուամենայնիվ շատ հետաքրքիր է Օլեարիուսի ուղեգրության մեջ հետաքրքրող մասը՝ հարուստ հայ ընտանիքում հյուրընկալության նկարագրությունը եւ հայկական ծեսերի մասին նրա տպավորությունները: Օլեարիուսի ուղեգրությունը հարստացված է նաև հեղինակի բազմաթիվ մեծարժեք նկարագրողումներով:

Երրորդ ճանապարհորդը, որին անդրադարձել ենք այս հատորում, Պարսկաստան է մեկնում Ժան Բատիստ Թավերնիեի հետ Անդրե Դոլիե Դելանդին է (*Les Beautés de la Perse, Paris, 1673*): Նրա ճանապարհորդությունը, եւս կրում է ճանաչողական բնույթ: Նրան Արեւելք են գործուղել մի քանի առեւտրականներ՝ տեղի շուկան ուսումնասիրելու, եւ Պարսկաստանում Արեւելահնդկական Ֆրանսիական Ընկերության վիճակին ծանոթանալու նպատակով:

Ժան Ստրյուիսը հոլանդացի նավաստի է՝ արկածախնդիր մի անձնավորություն, որի ուղեգրությունը (*Les voyages de Jean Struys, en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes; Lyon. MDCLXXXII*) եւս համեմված է արժեքավոր պատկերներով: Նա իր ճամփորդության մի մասը նույնիսկ որպես ստրուկ է անցել, սակայն դա ամենեւին չի խանգարել, որ ուղեգրությունն ունենա բազմաթիվ հրատարակություններ եւ դառնա ժամանակի շատ տարածված եւ աղմուկ հանած գրքերից մեկը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ժոզեֆ Պիտոն դը Տուրնըֆորի ուղեգրությունը (*Relation d'un voyage du Levant, Ams-*



terdam M. DCCXVII), որը կազմված է նամակների ձեռով եւ ուղղված է Ֆրանսիայի վարչապետ կոմս Պոնչարտրենին: Տուրնըֆորն ինքը բուսաբան էր, բժշկական գիտությունների դոկտոր եւ իր ժամանակի ամենահայտնի գիտնականներից մեկը, որը ղեկավարում էր Փարիզի տարբեր համալսարանների ամբիոններ, սակայն մշտապես լինելով փնտրտուքի մեջ, ճանապարհորդում էր տարբեր երկրներ: Ֆրանսիական արքունիքը եւ գիտությունների ակադեմիան կարեւորում են նաեւ նրա ղեպի Արեւելք ճամփորդությունը: Նշենք միայն, որ այստեղից նա բերում է 1356 նոր տեսակի բույսերի անուններ, որոնք հայտնի չէին Եւրոպայում: Շատ արժեքավոր են նաեւ նրա ղիտարկումները Նոր Զուղայի հայ գաղթօջախի մասին:

Ջեմելլի-Կարերի (Voyage du tour du monde, traduit de l'italien de Gemelli Careri, Paris, 1719) իտալացի ազնվական է, իրավաբան: Նրա տարբեր ճամփորդություններն են, նա շրջում է ողջ Եւրոպան, Արեւելքը (Թուրքիա, Պարսկաստան Հնդկաստան, Չինաստան, Ֆիլիպիններ) եւ հասնում մինչեւ Հարավային Ամերիկա: Աշխարհի շուրջը ընդհանուր առմամբ հինգ տարի եւ հինգ ամիս ճամփորդության ընթացքում նա շատ հետաքրքիր եզրահանգումներ է անում ճամփորդության մեթոդների, մաքսատները հեշտությամբ անցնելու, ինչպես նաեւ տեղագրական բնույթի հետաքրքիր գիտողականությամբ ժամանակի հանրությունն է ներկայացնում նոր ազգություններ ու նոր աշխարհամասեր: Այս տեսանկյունից հետաքրքիր են նաեւ նրա Նոր Զուղայի մասին բավական սովոր տեղեկությունները:

Հեղինակների հաջորդ խումբը հիմնականում հոգեւորականներ են, որոնք 17-րդ դ. ընթացքում իրենց միաբանությունների կողմից գործուղվել են մեզ հետաքրքրող տարածաշրջանը: Նրանք պատկանում են տարբեր ազգությունների եւ տարբեր հոգեւոր առաքելությունների (Հիսուսյաններ, Դոմինիկյաններ, Ավգուստինյաններ, Վեղարավորներ, Բոկոտն Կարմելիտներ, Ֆրանցիսկյաններ, եւն): Բացի նրանց ճանաչողական բնույթի պրպտումներից, նրանք լուրջ առաջադրանք ունենին այսպես կոչված «հերձվա-

ծող» քրիստոնյաներին կաթոլիկ եկեղեցու հովանու տակ ներգրավելու, «եկեղեցիների միութիւնն ապահովելու» ուղղութիւնով<sup>4</sup>:

Կաթոլիկ եկեղեցու նշանավոր քարոզիչ ու եւրոպական հայագիտության հիմնադիրներից մեկը՝ Կղեմես Գալանոսը<sup>5</sup> 1660 թ. դեկտեմբերի 14-ին, տեսնելով որ իր «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» աշխատության վերջին հատորի տպագրությունը տարուց աւելի ընդհատված էր (տպարանը չէր աշխատում Հռոմում ժանտախտի պատճառով), Հավատասփյուռ ժողովի քարտուղար Alberici-ին ներկայացնում է մի ընդարձակ գրություն. «Տեղեկություններ Հայ ազգի օգուտի մասին, գրված Հայր Գալանոսի կողմից» վերնագրով: Տեղեկություններ տալով Հռոմում իր կողմից նոր հիմնած Հայոց վարժարանին հուզող խնդիրների մասին եւ անդրադառնալով իր կատարած առաքելությանը գրում է.

«Նախկինում (Հռոմի) ս. քահանայապետերը շատ ջանքեր թափեցին Հռոմի եկեղեցուն միացնելու համար այս ազգը, որ արեւելքի մյուս քրիստոնյա ազգերից ամենից նշանավորն է, ամենից ունեւորը, ամենից տարածվածը, ջերմեռանդն ու բազմամարդը (...): Հիշյալ քահանայապետերի ջանքերն ու աշխատանքները գրեթե միշտ արդյունաբեր եղան, որովհետեւ շատ անգամ հաջողեցին նրանց դարձնել կաթոլիկության եւ միացնել մեր սուրբ եկեղեցուն, սակայն հաջորդաբար նրանք դարձան իրենց նախկին (հավատքին) երկու պատճառով: Առաջին. նրանց ձեռքը թողեցին մի շարք մոլո-

4 Չմոռանանք, որ դրան էր միտված Հռոմի աթոռի կողմից 1622-ին ստեղծված Հավատասփյուռ ժողովի եւ Փարիզի արտաքին միսիաների գործունեությունը (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria Rerum, 1622-1972, vol I/1 1622-1700, Roma Freiburg, Wien, 1971. Գատկապետ՝ J. Metzler-ի, J. Guennou-ի, եւ A. Eszer-ի հոդվածները և այլ մոլոպաճոյում):

5 Կղեմես Գալանոսի տպագիր աշխատությունները հետեւյալներն են. ա. Բերական եւ տրամաբանական ներածություն (տպ. Ուրբանյան, Հոմ, 1645). բ. Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ (հտ. 1, հտ. 2, մաս 1-2, տպ. Ուրբանյան, Հոմ, 1658-1661): Աշխատության մի մասը Հռոմում վերահրատարակվեց 1690-ականներին:



րական գրքեր, որոնք լցված էին վարդապետական ավելորդապաշտություններով, Քաղքեղոնի եւ Ս. Լեւոն պապի դէմ սուտ պատմություններով, առանց տալու (նրանց) ուրիշ գրքեր, ուր իրենց լեզվով հերքվեր իրենց սխալներն եւ սուտ պատմությունները: Երկրորդ. թողեցին որ շարունակվի նրանց մեջ նույն սովորական տգիտությունը, առանց հաստատելու մի հայկական վարժարան, ուր սովորեն գիտության եւ առաքելության ճանապարհը: Անկասկած այս քահանայապետերը այս երկու կետերը կարող էին գործադրել՝ եթե հնար ունենային, սակայն ոչ մեկը եւ ոչ մյուսը գործադրվեցին 1200 տարվա հերձվածի ընթացքում, որովհետեւ չկային լատին պաշտոնյաներ՝ որոնք գիտական կերպով ճանաչեին նրանց լեզվի բոլոր բառերը, դասական եզրերը, որոնք հարկավոր են հերքելու համար նրանց սխալները: Անցյալում երբեք հրապարակի վրա չդրվեց հայերեն քերականություն կամ բառարան, որ իրենց տար այդ ուսումը: Այս վերջին շրջանում, երբ Աստված իր ողորմությամբ ուզում է հաստատուն կերպով դեպի իրեն դարձնել այս ազգը, իրագործվեց առաջին կետը ու Հայաստան ուղարկվեցին մի շարք գրքեր՝ ուր բացատրվում է իրենց սխալները եւ ցույց է տրվում իրենց խաբված լինելը: Եւ արդէն տեսնվում է, թէ նրանք որքան օգուտ են քաղում եւ այն բոլոր կրոնավորները (monacci, իմա՛ վարդապետ), որ կարդում են՝ դարձի կզան եւ կորոշեն գալ այստեղ սովորելու համար գիտության հետ հավատքի ճշմարտութիւնը: Ու բոլորն ասում են թե պետք է հիշյալ գրքից մեծ թվով ուղարկել Հայաստան, թե ցանկություն կա բոլորին դարձի բերելու: Ուստի հարկ է որ (գրքերով) երկու սնդուկ ուղարկել, մեկը Հալէպի ֆրանսիական հյուպատոսին, մյուսը՝ Ջմիւռնիայի ֆրանսիական հյուպատոսին՝ որպեսզի գոնե ծախեն, եթէ չհաշվենք նվիրել այն հայերին՝ որոնք փնտրում են (նման գրքեր), ու լսածիս համաձայն՝ նրանք բավական շատ են:

Երկրորդ կետը (իմա՛ Հայոց վարժարան ունենալը) որ պետք էր կատարել՝ կատարվեց(...)<sup>6</sup>: Եթէ այս վարժարանի աշակերտները գինվեն գիտությամբ եւ առաքելությամբ, մեկնելով (իրենց հայրենիքը), պիտի գտնեն անթիվ աշակերտներ՝ որոնք պիտի ուզեն սովորել իրենցից, ու այս կերպով քիչ ժամանակի մեջ Աստուծով պիտի վերաշահվի Հայաստանը, պիտի մնա անխախտ եւ հաստատուն իր դարձի մեջ, որովհետեւ հիմքերը գիտութեան վրա են»<sup>7</sup>:

Հատորում ընդգրկված յուրաքանչյուր հոդեւոր գործչի աշխատությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում իր գործունեության տարբեր փուլերի, Հայոց հոգեւոր եւ աշխարհիկ խավերի՝ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի եւ տրամադրվածության վերաբերյալ:

Սույն հրատարակության առաջին հատորի առաջաբանում մանրամասն անդրադարձ է կատարված կաթոլիկ հոգեւորականության գործունեության սկզբունքայնության վերաբերյալ՝ առանց նրանց աշխատությունները քննելու: Այս հատորը մասամբ տալիս է այդ հնարավորությունը, ակնկալելով, որ 3-րդ հատորի հրատարակությամբ կամբողջանա պատկերը հանձինս «չուրջ կես դար Սպահանում իր պրոֆեսիոնալ գործունեությունը ծավալող, Ֆրանսիայի, ինչպես նաեւ Պարսկաստանի արքայական վերնախավի լիակատար վստահությունը վայելող, Վեղարավորների միսիայի գլխավոր տեսուչ Ռաֆայել դյու Մանի»<sup>8</sup>, որի անձնավորությունը բանալի է հանդիսացել թէ՛ հոգեւոր միսիաների շատ ներկայացուցիչների, թէ՛ դիվանագետների, թէ՛ ճանապարհորդների ու վաճառականների համար՝ այդ թվում ժան Բատիստ Թավերնիեի եւ ժան

6 Նկատի ունի Հոռմում 1660 թ. իր հիմնած Հայոց վարժարանը, որ սակայն 1-2 տարվա կյանք ունեցավ:  
7 St'u Archivio della S. Congregazione de Propaganda Fide (այսուհետև AP), Scritture Originali riferite nelle Congregazioni Generali (այսուհետև SOCG), vol. 223, f. 76:  
8 Թաշիրյան Է., Նոր Զուղայի հյալ գաղթօջախը 17-18-րդ դդ. եւրոպական աղբյուրներում, մաս I, Երևան 2012, էջ 11:



Շարդենի, որոնց եւս կանդրադառնանք մեր հաջորդ հրատարակութեան էջերում:

Այս ժամանակաշրջանի հայ մատենագրութեան մեջ եւս ընդգծված վերաբերմունք է առկա Արեւելքի վերաբերյալ արեւմտյան հրատարակութուններին: Դա ամենեւին տարօրինակ է, քանի որ հայ վաճառականական եւ մտավորական վերնախավի բազմաթիվ անդամներ իրենց մասնագիտական գործունեութեան առիթով, նաեւ կրթութեան ստանալու նպատակով հաճախ էին լինում արտասահմանյան տարբեր երկրներում, եւ նրանց մոտ ինչ-որ չափով քննական վերաբերմունք էր ձեւավորվում Արեւելքի մասին Արեւմուտքի գիտական, իմացաբանական, ուղեգրական հրատարակութունների վերաբերյալ:

Հայ թարգմանիչ, լուսավորիչ եւ վաճառական Մարգար Շեհրիմանյանի 18-րդ դարի վերջին քառորդում անգլերենից կատարած թարգմանութունները (հրատարակված Մխիթարյանների տրիեստյան տպարանում), թույլ են տալիս պատկերացում կազմելու վերջինիս առաջադիմական աշխարհայացքի մասին եւ նպատակասլաց կերպով հայ ընթերցողին ծանոթացնելու արեւելյան ազգերի պատմութեան ու բարքերի մասին եւրոպական գրականութեան, իր տեսանկիւնից, առավել լուրջ աշխատութուններին՝ ա. Լուդովիկոս Քոմսեանց: Թուղթք զՉինաց: Տրիեստ, տպ. Մխիթարեան, 1783: Բեզովպոս: Առակք: Տրիեստ տպ. Մխիթարեան, 1784: Գ. Պրաման: Տնօրէնութիւն մարդկային կենաց: Տրիեստ, տպ. Մխիթարեան, 1784: Դ. Բէթիսէ Տելլա Քոսչէ: Պատմութիւն Ճէնկիզ խանի: Տրիեստ, տպ. Մխիթարեան, 1788:

Այս գրքերից միայն առաջինում է, ուր թարգմանչի կողմից գրված առաջաբանում Մարգարը հաղորդում է որոշ կենսագրական տեղեկութուններ, միաժամանակ ցուցադրելով տպագիր խոսքի հանդեպ իր խիստ գիտա-քննական անաչառութունը եւ Արեւելքի վերաբերեալ գիտելիքների ընկալումների կերպը Արեւմուտքում:

Այսպես, հայերեն թարգմանելով Ֆրանսիացի հիսուսյան կրօնաւոր Louis Le Comte-ի (1655-1728) «Memoirs and remarks geogra-

phical, historical, topographical... the empire of China» (London, 1738), անգլերեն թարգմանութունը, հեգնելով եւրոպական մի շարք հրատարակութուններ Արեւելքի մասին, Մարգարը շարունակում է.

«Ես զամս 40 շրջեցայ յարեւելեան Հնդկաստանի ի մէջ զանազան ազգաց հեթանոսաց, զանազան աղանդաւորաց, նաեւ մահմէտական ազգաց, եւ առ այս իշխեմ ասել առանց երկբայութեան, զի ի միջոցի այնց 40 ամաց ոչ ճանաչեմ զայր մի յազգէն մէրմէ, որ այնքան պանդխտութեամբ շրջեալ իցէ ի ծովու եւ ի ցամաքի որպէս ես շրջեցայ եւ ելումուտս արարի ի մէջ զանազան աղանդաւոր հեթանոսաց, զորոց զհամարն անհնարին է ինձ ի միտ բերել. նաեւ մտերիմ բարեկամ եղէ ընդ գիտաց, ընդ գլխաւոր արանց ընթերցողացն եւ ընդ ոմանց աստղաբաշխ բահմանց այսինքն Քրմաց նոցա եւ հանապազ հարց փորձ առնէի նոցա վասն հաւատոց, սովորութեանց եւ արարողութեանց նոցա՝ որչափ կարօզ եղէ. այժմ աւաղեմ զանձն իմ, զի զոր ինչ հմտացայ ի նոցանէ ոչ եղի ի թղթի, որով գիրք մեծ կարէր լինել, քանզի յայնս որոց ես հմուտ էի, եւ յայնս զոր ընթեռնուի ի մէջ պատմութեանց Անկլիզաց, Ֆրանսէզաց, եւ Փօռթուկէզաց, ամենամեծ զանազանութիւն եւ առասպելաբանութիւն գտանէի, եւ մնայի ի մէջ մեծի տարակուսանաց, մինչեւ յամի փրկութեան մերոյ 1766 ի լոյս ածաւ երկու հատոր ընդհանրական պատմութիւն Հնդկաստանի ի ձեռն քաջ թարգմանչին Ալէքսանդր Դօվ կոչեցելոյ յազգէն Անկլիզաց. զոր եւ աստուծով յեղի ի մեր լեզու, նովաւ տարակուսանք իմ բարձաւ, նաեւ նովաւ ամենայն սխալանքն հեղինակաց անցելոց կարէ ցուցանիլ. քանզի, որպէս ի վեր անդր յիշեցաք, պատմաբանքն եւրոպացւոց միայն զոր ինչ ներկայ աշօք տեսանեմ, եւ ականջօք լսեմ, բաւական համարիմ ի շարադրել զպատմութիւն. ի միոջէ կողմանէ պատմագրօղն եւ ի միւս կողմանէ տպագրօղն զգանձ ժողովրդոցն ի շտեմարանս իւրեանց ժողովեմ. ոչ է փոյթ նոցա սուտն եւ հաւաստիմ. նաեւ ժողովուրդքն եւրոպացւոց այնքան ընթերցասէրք եմ, եւ այնքան հետաքրքիր, մինչգի եւ ի պարապ ժամանակի իւրեանց զգիրս ինչ կալեալ ի ձեռն ընթեռնուն, եւ նովաւ զքօսնուն, եւ անցուցանեմ զժամանակն. ոչ է նոցա



փոյթ հաւաստին եւ սուտն. դեռ եւս ամենայնի հաւատան, եւ յորժամ պատահին առն միում, որ տեղեակ եւ ականատես լեալ է, վիճեն ընդ նմա. թէ հեղինակն այն, որ գրեաց պատմութիւնն, գոր ինքն ընթերցեալ է, նշմարիտ գրեաց, եւ ոչ գոյ սխալանք ի նմա (ընդգծումը մերն է - է. Թ.):

Առ այս կամիմ պատմել զիր ինչ, որ ի ժամանակս իմ պատահեցաւ ի Հնդկաստան, յամի 1743, ինկլիզաց լեզուաւ պատմութիւն մի անին, զոր ես ընթերցայ: Արդ անդր ի մէջ գրքին էր պատմութիւն կենաց եւ պատերազմաց, նաեւ մեծամեծ յաղթութեանն ի վերայ թուրքաց, եւ այլ ազգաց մեծ հսկային Շահնատըրայ. ասէին ի պատմութեան անդ, թէ Հսկայն այն էր եւրոպացի ծնեալ ի քաղաքին ըՍտրասպուրկ. նաեւ բազում վկայս բերէին առ այն:

Պատճառ գրելոյ զայսպիսի յայտնի ստութիւն ըստ իմ կարծեաց այն է, նախ՝ զի զփառս այնքան գործոց քաջութեան զոր Շահն գործեաց. որպէս յայտնի իսկ է ամենեցուն. վասն նախանձու եւրոպացիք կամին մերժել յազգէն Պարսից. երկրորդ՝ զի այնու գիրս կազմեն, վաճառեն, եւ զզանձս ժողովրդեան ի շտեմարանս իւրեանց ժողովեն, ապա թէ ոչ՝ յայտնի իմն է, զի Շահնադըն էր ծնեալ ի գեօղն Բաւարդ, ի գաւառին Խորասանու թագաւորին Պարսից: Ահա զայսպիսի անկարգութեան բանս հազարաւորս կարեմ ցուցանել ի պատմութեանց հեղինակաց եւրոպացւոց...»<sup>9</sup>:

Այնուամենայնիւ, եւրոպական ուղեգրութիւններում պահպանված տեղեկությունները, քննական մոտեցման դեպքում, շատ հաճախ անզնահատելի արժեք ունեն հատազոտողների համար իրենց ազգագրական, տեղագրական մանրամասներով ու օտարի հայացքով արված դիտարկումներով, որոնք չեն հանդիպում տեղական բնագրերում: Լիովին կարելի է կիսել Ռուզի Մաթյոյի հետեյալ

9 Տե՛ս Լուդովիկոս Քոսթեանց. *Յիշատակք եւ դիտողութիւնք տեղագրականք, սաթէմաթիքականք, մեքենականք, բնականք, քաղաքականք, եւ եկեղեցականք. Օտորջ զկայսերութեամբ Չիմաց*: Թարգմանեալ նախ ի Գաղղիացոց ի լեզու անգլիական, եւ ապա անտի ի քայ բարբառ, յազմուական Աղայ Մարգարէ Շահրիմանեանց Ջուղայեցոյ, Թրեստ, 1783, էջ 9-11:

թեզը. «Եւրոպացի ճանապարհորդների, որպես կողմնակալ օտարների ... աշխատություններում պարունակվող տեղեկատվությունը արժեքավոր է իր ազգագրական մանրամասներով, առանձնանում է իր ճշգրտությամբ եւ երբեմն եզակիությամբ, քանի որ առկա է այլ աղբյուրներում: 17-րդ դարի Իրանի վերաբերյալ արեւմտյան գրությունները շարունակում են համարվել կարեւոր վկայություն այդ ժամանակաշրջանի կենսակերպի եւ հասարակության մասին: Դրանք նաեւ ցույց են տալիս եւրոպացիների պատկերացումը Իրանի, ինչպես նաեւ սեփական մշակույթի եւ հասարակության մասին: Որպես այդպիսին, այս ուղեգրությունները շարունակում են տեղեկացնել եւ հիացնել մեզ»<sup>10</sup>:

10 Matthee Rudi. *Safavid Iran through the Eyes of European Travel*.- "Harvard Library Bulletin. From Rhubarb to Rubies: European Travels to Safavid Iran (1550-1700), The Land of the Sophi: Iran in Early Modern European Maps (1550-1700), Spring-Summer 2012, Vol. 23: N° 1-2, pp. 10-24.



ԳԱՐՍԻԱ ԴԵ ՍԻԼՎԱ ՖԻԳԵՌՈՍ

Գարսիա դե Սիլվա Ֆիգեռոս (1574-1628) ծնվել է Բադախոսում (Իսպանիա) դուքս Ֆերիանների հայտնի ընտանիքում: Ուսումնառությունը հետո ծառայել է Ֆիլիպ 2-րդի արքունիքում, ապա անցել է զինվորական ծառայության եւ մասնակցել Ֆլանդրիայի դեմ Իսպանիայի մղած պատերազմին: Իր ծառայությունների դիմաց որպես պարգևատրում ստացել է առեւտրական մի ընկերություն: Օժտված լինելով դիվանագիտական հմտություններով՝ պաշտոնավարել է պետական քարտուղարությունում, զանազան առաքելություններ է ղեկավարել արտասահմանյան արքունիքներում:

Երբ Շահ Աբասը, ցանկանալով առեւտրական հարաբերություններ ստեղծել Իսպանիայի հետ, իսպանական արքունիքին առաջարկում է դեսպանություն ուղարկել Պարսկաստան, Մադրիդի արքունիքը որպես դեսպանորդ ընտրում է Ֆիգեռոսին: Վերջինս 1614 թ. հասնում է Գոա, սակայն որոշ քաղաքական արգելքների պատճառով Սպահան է հասնում միայն 1618 թ. ապրիլին: Պարսկական արքունիքը բարձր մակարդակով է ընդունում նրան: Շահը նույնիսկ հյուրընկալվում է նրա կացարանում, եւ բազմիցս ջերմորեն հյուրասիրում նրան: Այնուամենայնիվ, երկու հարցում հրաժարվում է ընդառաջել դեսպանին. նա չի համաձայնվում Հորմուզը հանձնել իսպանացիներին, ինչպես նաեւ չի ոգեւորվում Ֆիգեռոսի առաջարկից՝ թույլ չտալ օտարազգիներին առեւտրով զբաղվել Պարսկաստանում:

Ֆիգեռոսն Սպահանից մեկնում է 1619 թ. օգոստոսին՝ Գոայի ճանապարհով, սակայն փոթորիկների պատճառով Իսպանիա է հասնում միայն 1624 թ.: 1628 թ. հեղինակն արդեն կենդանի չէր:

Ժամանակակիցները, այդ թվում նաեւ Ժան Շարդենը, բարձր են գնահատել Ֆիգեռոսի ճամփորդական ուղեգրությունը՝ նշելով դրա ճշգրտությունն ու հատկապես Պարսկաստանի մասին նրա տեղեկությունների արժեքավոր բնույթը:

Ֆիգեռոսի ուղեգրության ֆրանսերեն թարգմանությունը հրատարակվել է Փարիզում 1667 թ. մի մարդու կողմից, ով ուղեկցել էր նրան ճամփորդության ընթացքում<sup>11</sup>:

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. *L'Ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, contenant la politique de ce grand empire, les mœurs du Roy Schach Abbas, & une relation exacte de tous les lieux de Perse & des Indes, ou cet Ambassadeur a esté l'espace de huit années qu'il y a demeuré. Traduite de l'Espagnol par Monsieur de Wicqfort. Chez Jean du Puis, Paris, MDCLXVII (1667).*

Գարսիա դե Սիլվա Ֆիգեռոսի դեսպանագնացությունը Պարսկաստան

/193/ (Զենդերուդ գետի) կամրջի վրայի մի քանի գեղեցիկ տեսարաններից զատ, շատ ավելի հաճելի մի տեսարան կա՝ գաղթօջախների (colonies) տեսարանը: Թավրիզեցիների գաղթօջախն առավել մոտ է քաղաքին եւ բնակեցված է Թավրիզից այստեղ բերված մարդկանցով: Ոմանք կարծում են, որ դա Մեդիայի հնագույն մայրաքաղաք է կրատանն է: Բնակիչները հիմնականում վաճառականներ են, որոնք ժամանակին այդ քաղաքում մեծ գործունեություն էին ծավալում: Գետի մյուս կողմում գտնվող, սրան դիմաճայաց հաջորդ գաղթօջախը Նոր Զուլփան է (Zulpha): Արվարձանն այդպես է կոչվում Մեծ Հայքի մայրաքաղաքի անունով, որն ամբողջապես ավեր-

11 St'u Biographie Universelle, ancienne et moderne..., par Michaud L. G., (այսուհետ՝ Michaud L. G.), 1815, t. 14, p. 521; Alonso Carlos, *D. Garcia de Silva y Figueroa. Embajador en Persia*: Depto. de Publicaciones de la Diputación Provincial, Badajoz, 1993; Alonso Carlos, *Due lettere riguardanti i primi tempi delle missioni Agostiniane in Persia*, - "Analecta agustiniana", vol. XXIV, 1961, pp. 152-201. Turley J. S., Souza G. B., *The commentaries of D. Garcia de Silva y Figueroa on his Embassy to Shāh 'Abbās I of Persia on Behalf of Philip III, King of Spain*. Brill, 2017. *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIII Centuries* (այսուհետ՝ A Chronicle). Vol. I, London, 1939, pp. 155, 208-209, 214, 224-226, 237-244.



վել է Շահ Աբասի կողմից: Նրա հարուստ բնակիչներին վերջինս գաղթեցրել է այստեղ, ուր նրանք շարունակել են առեւտրով զբաղվել: Նրանց մեծ մասի համար, իհարկե, վիճակը խիստ անբարենպաստ է, սակայն նրանց մեջ այնպիսի մեծահարուստներ կան, որ կարող են միտքարկել աքսորի պատճառած վնասներից: Գետի երկու կողմերում գտնվող այս գաղթօջախներում շատ գեղեցիկ եւ շատ մեծ առանձնատներ կան, որոնց մի մասը կառուցվել է հարուստ բնակիչների կողմից, մի մասն էլ, մեծ ծախսերով, սուլթանների, նախարարների եւ արքայի այլ ծառայողների կողմից՝ հաճախ նաեւ որպես բարեհաճութուն միապետի հանդեպ, քանզի զիտեին, որ նա մեծ հաճույք էր ստանում այդ գործն ավարտին հասցնելու մտքից: Իրականում այստեղ է աշխարհի ամենագեղեցիկ վայրն ու ամենագեղեցիկ տեսարաններից մեկը: Այս պատճառով էլ վերահիշյալ արվարձանները բուն քաղաքից (Սպահանից) ավելի են արժեւորվում իրենց առավել գեղեցիկ փողոցներով ու առանձնատներով:

Նոր Զուղայի բնակիչները ծագումով հայ քրիստոնյաներ են՝ հավատքի այն արտոնություններով, որոնք պահպանել են Պապի թուլյությունները: Իսկ եթե իրականությունն ասենք՝ /194/ շատ քչերն են ենթարկվում կամ ընդհանրապես ճանաչում Պապին: Համարյա բոլորն ամենայն սրբությունը դավանում են իրենց սեփական հնագույն կրոնը: Մինչդեռ շատ հաճախ նրանց ազգի եպիսկոպոսներից կամ վարդապետներից ոմանք Եւրոպա են գնացել կամ իրենց երկրի այս ու այն կողմում տիրող խոր աղքատության, կամ թուրքերի պատճառած եւ մինչեւ օրս էլ ճնշող, անտանելի հալածանքների պատճառով, որոնց նրանք ենթարկվում են թուրք-պարսկական անվերջանալի պատերազմների ընթացքում, նշված հոգեւորականներից ոմանք ստիպված են եղել ենթարկվել Հռոմեական եկեղեցուն: Սակայն վերջնական որոշումն ընդունելու ժամանակ հրաժարվել են ճանաչել այն եւ համառորեն միայն իրենց պատրիարքին են ցանկացել ենթարկվել՝ հավատարիմ մնալով իրենց առաջին հաղորդությունն ու հնագույն պաշտամունքին: Այս ամենով հանդերձ, Նոր Զուղայի բնակիչներից շատերը (՝) հարում են լատին եկեղեցուն:

5933

Այդպես է նաեւ Մեծ Հայքի Երեւան քաղաքից (որին Պաղոմեսը *Ierua* անունն է տալիս, եւ որն ինչպես առաջներում այնպես էլ հիմա ողջ Հայաստանի մայրաքաղաքն է) երկու օր հեռավորության վրա գտնվող Նախիջեւան (*Maxivan*) քաղաքի ենթակայության տակ գտնվող տասներկու գյուղերում<sup>12</sup>: Այս գյուղերից մի քանիսում նույնիսկ Դոմինիկյան միաբանությանը պատկանող եկեղեցիներ կարելի է տեսնել, որոնք Հռոմեական եկեղեցու կանոններով են ծես կատարում: Նույն միաբանությունից հայազգի մի կուսակրոն եպիսկոպոս<sup>13</sup> էլ կա, ով պատարագում եւ նույն աղոթքներն է ասում, ինչ սովորաբար ասում են հիշյալ միաբանության ներկայացուցիչները Եւրոպայում: Պատերազմները տարիներ շարունակ հալածել ու դեռ ճնշում են այս գավառի խեղճ բնակչությանը, որն արդեն վարժ է այս աղետալի իրավիճակի շարունակականությանը: Հայերը, որոնց

12 Նկատի ունի Նախիջեւանի գավառի, 14-րդ դարից Հռոմի կաթոլիկ եկեղեցուն հարած, հայկական Ապարաներ, Ապրակունիս, Քոնա, Ծափուկ, Սալթաղ, Խոշկաշեն, Մեծշեն, Գանձակ, Ծափապունիք, Ղարաղուշ, Կեծուկ, Արտազ բնակավայրերը (Նախիջեւանի հայ կաթողիկե համայնքի վիճակագրությունն ըստ Ազարիա Ֆրիդմանի (1604 թ.), Ա. Մ. Չիտտադինի (1616 եւ 1617 թթ.) տե՛ս *Carlos Alonso*. O.S.A., *Angel Maria Cittadini*. O.P., *Arzobispo de Naxivan* (+1629). *Una iniciativa de Propaganda Fide en favor de Armenia*, Roma, 1970 (Studia Ephemerides "Augustinianum" 6), pp. 231-232: Հմտ. Մ. Կարապետեան, *Հայ կաթողիկե թեմը եւ էթնոազգային գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII դարերում*, - Լ. Սահակ Ծեմենեան, *Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը*, Վենետիկ-Ս. Ղազար, 2000, էջ 6-21):

Ընդհատ այդ տարիներին Նախիջեւանից Եւրոպա ուղարկված 12 հայկական գյուղերի բնակչության մասին զեկուցագրերի մի փաթեթի հրատարակությունը տե՛ս *Carlo Longo* OP. *Relazioni d'Armenia (1583-1640)*, - "Archivium fratrum praedicatorum", 1997, vol. LXVII, pp. 173-226: (Նկատենք, որ չնայած հեղինակի բարեխղճությանը, երբեմն հրատարակված փաստաթղթերում առկա են ցավալի բացթողումներ: Այսպես, 1622 թվակիր "*Relazione dello stato e dei conventi dell'Armenia Maggiore*" փաստաթղթի (doc. 7a, pp. 205-206) հրատարակման ժամանակ, ցավալի վրիպմամբ արխիվային փաստաթղթից (SOCC, vol. 382, ff. 194r-195v) բաց են թողնվել Սալթաղ գյուղին վերաբերվող տեղեկությունները):

13 Ամենայն հավանականությամբ նկատի ունի Մատթեոս արքեպիսկոպոս Էրագմուսի, որ Նախիջեւանի հայ կաթողիկե համայնքի առաջնորդն էր 1607-1627 թթ. (տե՛ս *P. Leonardus Lemmens* O.F.M., *Hierarchia latina orientis*. 1622-1922, Pars I, Roma, 1923, p. [11] 235 (Orientalia Christiana, Vol. I-5, Num. 5):



հռոմեական, կաթոլիկ հավատքին հարելու շնորհիվ Ֆրանկ են անվանում, այնքան փոքրաթիվ են, որ չեն կարծում, որ հազարից անցնեն թե՛ սեռական եւ թե՛ տարիքային առումով:

Երբ դեսպանը հասավ Սպահան, մեկ տարի էր, ինչ պապն այնտեղ էր ուղարկել Եղբ. Պողոս Մարիա<sup>14</sup> անունով դոմինիկյան մի հոգեւորականի՝ գիտուն անձնավորութուն, /195/ օրինակելի վարքով, ով ըստ իր հավատամքի կրկին վերականգնել եւ վերաբաշխել էր լատին եկեղեցու այն բոլոր ծիսակարգերը, որոնք ժամանակի ընթացքում աղճատվել ու վերացել էին: Այս հայերը հռոմեական դավանանքին են հարել Պարսից արքա Ուզուն Հասանի ժամանակներից ի վեր: ... Դոմինիկյան միաբանութունից մի սուրբ հոգեւորական՝ Եղբ. Բարդուղիմեոս Բոլոնիացին, շուրջ 150 տարի առաջ՝ Հովհաննես XXII պապի օրոք, լատինական եկեղեցու գիրկն է ներքաշել վերոհիշյալ գյուղերի բնակչությանը<sup>15</sup>: Այդ միաբանության հոգեւորականներից մեկը, եւրոպացի այլ կրոնավորների հետ միասին, այս փոքրիկ վանքերի հիմնադիրն է. ուստի նրանք, Նախիջեւանի թեմի առաջնորդի տիտղոսով, մինչ այժմ խնամքով պահպանում են դրանցից մի քանիսը՝ հարեւանութամբ գտնվող քաղաքի անունով: Սա մի պաշտոն է, որի նկատմամբ մեր հոգեւորականներն առանձնապես մեծ ակնկալութուն չունեն, քանի որ այդ թեմի եպիսկոպոսն այնպիսի ծայր աղքատության մեջ էր ապրում եւ այնպիսի մշտական հալածանքների էր ենթարկվում, որ տանջվում էր ինչպես թուրքերի, այնպես էլ պարսիկների կողմից<sup>16</sup>:

14 Եղբայր Պողոս Մարիա դոմինիկյան հոգեւորականը Պողոս V պապի համաձայնարարությամբ 1616 թ. Պարսկաստան եկավ մի շարք միսիոներների հետ միասին: Այս միսիայի մասին Գրա գեկուցագրերը Պողոս V պապին տե՛ս Fontana V. M., *Monumenta dominicana*, Roma, 1675, an. 1607-1632. pp. 590-622:

15 Կարապետեան Մ., Հայ կաթողիկէ թեմը ... Նախիջեւանում XVII-XVIII դդ., էջ 6-21 (այնտեղ էլ տե՛ս համապատասխան գրականությունը):

16 Նախիջեւանի գավառում բնակչության վիճակի եւ հարստահարությունների մասին աւելի մանրամասն տե՛ս Carlos Alonso. O.S.A., *Angel Maria Cittadini*, Op. cit., նաեւ Հ. Սահակ Մեմենեան, *Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հոմը*, աշխատությունները:

Թավրիզի եւ Ջուղայի այս գաղթօջախները եզդիների, գորերի եւ կեռմանների գաղթօջախների հետ միասին շուրջ տաս հազար տուն են կազմում, սակայն պարտեզներն ու մրգատու այգիները նրանց այնպիսի փուլած տարածք են վերագրում, որ թվում է, թե շատ ավելի խիտ բնակչութուն ունեն, քան իրականում: Բացի այդ, այստեղ տներն ավելի մեծ են ու քաղաքի շինութուններից ավելի լավ կառուցված եւ գտնվում են մեծ ու զեղեցիկ փողոցի վրա: Այս տարածքին պարսկերեն Շարաբաշ (Չարբախ) են ասում, այսինքն՝ չորս պարտեզներ, քանի որ երբ այս անունը դնում էին, միայն չորս պարտեզ կար այստեղ:

[258/ Օգոստոսի 11-ին Դորաթաբադում դեսպանն ընդունել էր կաթոլիկ արքայի Միմոն Բարբուլթոն<sup>17</sup> անունով լրաբերին, ով ծագումով Հայ էր եւ տարիներ շարունակ ապրում էր Իսպանիայում: Նրան այնտեղ էր ուղարկել Դաուլթ կամ Դավիթ<sup>18</sup> անունով Հայ պատրիարքներից մեկը: Նա նամակներ էր տարել Իսպանիայի արքային, որպեսզի վերջինս իր շահերը պաշտպանի Պարսից արքայի առջեւ պատրիարքութունն ընդունելու համար՝ ընդդեմ մի այլ հոգեւորականի, որի անունը Մելքիսեդեկ<sup>19</sup> էր: Սրա մասին առավել մանրամասն այլ տեղում կխոսենք:

[282/ Առաջին հերթին անդրադառնանք այս թաղամասերում ապրող հայերի կրոնին, որովհետեւ այն իրականում ամենաճիշտն է, եւ իր էությունը հենց այն է, ինչ քրիստոնյաները դավանում են: Բայց կասկածելով, որ մյուսը Պարսկաստանում փոքր-ինչ ավելի հին է, որոշեցինք այստեղ հայկականի մասին խոսել:

Հայերը մեր Տիրոջ Ծնունդը նշում են ըստ հին տոմարի՝ առանց տասը օրերի հավելման, այնպես որ այն համընկնում է մեր տոմարի հունվարի 3-ին: Նրանք սովորութուն ունեն նույն օրը տոնել նաեւ

17 Simón Baibórtula-ի մասին տե՛ս Floristán Imízcoz J. M., *Armenios en la corte de Felipe III de España (1598-1621)*, in REArm, N°32 (2010), p. 165-199.

18 Իմա՛ Դավիթ IV Վաղարշապատեցի, ամենայն հայոց կաթողիկոս՝ 1590-1629 թթ.:

19 Իմա՛ Մելքիսեթ Գառնեցի, ամենայն հայոց կաթողիկոս՝ 1593-1626 թթ.:



Ջրօրհնեքը (*l'Eau-beniste*), որի համար լատին եկեղեցին հատկացրել է Ջատկի չորեքշաբթին՝ երեկոյան ժամերգության ընթացքում նույն ձևով հիշատակելով Ս. Հովհաննեսի կողմից Մեր Տիրոջ մկրտության արարողությունը: Այդ օրը բոլոր հայերը, նույնիսկ նրանք, ովքեր քարվանսարաններում կամ Սպահանի այլ թաղերում են բնակվում, ինչպես Երեւանի գաղթօջախի կամ Ջենդերուղ գետի մյուս կողմում գտնվող Ջուղայի թաղի բնակիչները, հավաքվում են այստեղ՝ առաջնորդի եւ պատրիարքի նստավայրում<sup>20</sup>:

Սպահանի հոգեւորականների միջոցով հայերը դեսպանին եւս խնդրեցին մասնակցել Ջրօրհնեքի արարողությանը, պատարագին եւ այլ ծիսակատարությունների, ուր հրավիրված էին նաեւ օտարազգի հոգեւորականներ՝ ասելով, որ դա իրենց համար մեծ պատիվ կլինի: Չնայած չափազանց ցրտին, դեսպանը տեղում պետք է լիներ արեւածագին: Նա խոստացավ անպայման գնալ, մանավանդ երբ իմացավ, որ Շահ Աբասը չափազանց նախանձախնդիր է իր ենթակաների՝ քրիստոնյա թագավորների հետ նամակագրական կապին՝ թեկուզ դա լինի հոգեւոր դաշտում: Նա դժգոհ էր եւ վստահ, որ այդ սոսկ երեւակայական ենթակայությունը նվազեցնում եւ թուլացնում էր իր հպատակների հարգանքն ու հնազանդությունը, ուստի այս երկրային կյանքում նա անդադար պահում էր նրանց իր վերահսկողության տակ:

20 Հայոց մեջ որոշ վայրերում սովորություն է եղել այս արարողությունը գետի, լճի կամ ծովի վրա կատարել, չնայած Մ. Օրմանյանի դիտողությամբ այսպիսի սովորությունը առավելապես հույներին էր հատուկ (տե՛ս Մ. Օրմանյան, *Ծիսական քառարան*, Երեւան, 1992, էջ 38):  
Ջենդերուղ գետի վրայ այս արարողության կատարման մասին են վկայում բոկոտն կարմելիտները՝ 1620-ին (*A Chronicle of the Carmelites in Persia...*, London, Vol. 1, 1939, pp. 245-246), հմմտ. Յ. Քիրտեանը, *Ջուղայեցի իօճայ Նազար եւ իր գերդաստանը*, - «Հայրենիք», 1943, թի 4 (Յուլիս-Օգոստոս), էջ 77-78), Ժ. Բ. Տավերնիեն՝ 1632 թ. (տե՛ս J. B. Tavernier, *Les six voyages...*, Paris, t. I, 1692, pp. 502-503), Գ. Շինոնը՝ 1650 թ. (տե՛ս G. de Chinon, *Relations nouvelles du Levant*, Lyon, MDCLXXI (1671), pp. 296-297), Ջեմելի-Կարերին՝ 1694 թ. (տե՛ս Gemelli-Careri, *Voyage Du tour du monde*, Paris T. II, 1719 p. 144-145), Լը Բրյուիենը (*Voyages de Corneille le Brun, par la Moscovie, en Perse et aux Indes Orientales...*, Amsterdam, 1718, IV, p. 86-88) եւ ուրիշներ:

Առավոտյան շատ վաղ դեսպանը տնից դուրս եկավ հոգեւորականների եւ միաբանության մյուս անդամների ուղեկցությամբ: Նրան արդեն սպասում էին ավելի քան կես լյո՝<sup>21</sup> տարածք զբաղեցնող դաշտում, որն ընկած էր Ջուլֆայի ու գետի արանքում եւ լի էր մեծ բազմությամբ: Այս տոնակատարությունը մասնակցում էին ոչ միայն հայերը, այլեւ հակոբիկյանները, նեստորականները, վրացիներն ու պարսիկները՝ ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք: Նրանց այստեղ էր հավաքել Ջերմեռանդությունը, գուցե նաեւ՝ հետաքրքրասիրությունը՝ տեսնելու, թե ի՞նչ է կատարվելու այս մեծ հավաքի ընթացքում: Հայերի պատրիարք Մելքիսեդեկը բացակայում էր<sup>22</sup>. պատարագիչը պատկառելի մի ծերունի էր՝ նույն Ջուղայի արվարձանի եպիսկոպոսը: Նա հազել էր դիպակե շուրջառ, որն աչքի էր ընկնում իր հնությունը եւ ուներ թանկագին քարերով զարդարված ոսկե լանջակալ: Նրա հանդերձանքը Ս. Բարսեղյան միաբանության համագգեստն էր (սա Արեւելքի բոլոր հոգեւորականների միակ միաբանությունն է): Նա շրջապատված էր շուրջառ հագած (եւրոպացի դպիրների շուրջառների նման) բազմաթիվ եպիսկոպոսներով ու քահանաներով, որոնց շքեղ հանդերձանքն ավելի կարճ էր,

21 1667 թվականից առաջ 1 փարիզյան լյոն = 3,898 կմ:  
22 Կաթողիկոսի բացակայության պատճառն, անկասկած, Էջմիածնի Մելքիսեդեկ կաթողիկոսի եւ շահի միջեւ ձեռնարկված բարդ հարաբերություններն էին: Տեղին է բերել Հ. Փափազյանի հետեւյալ դիտողությունը. «Այդ ժամանակ տարուց ավելի էր, որ շահը ձերբակալել էր Մելքիսեթ կաթողիկոսին եւ կապանքների մեջ պահելով միշտ տանում էր իր հետ տեղից տեղ: Նա պահանջում էր նրանից միանվագ վճարել 300 թուման տուգանք: Ըստ Դավրիժեցու այդ տուգանքը մա պետք է վճարեր «վասն երից յանցանաց: Նախ՝ վասն ճշխարաց սրբուհույ կուսին Հոփիսիմեայ, որ թոյլ տալովն Մելքիսեթի տարան ֆրանկքն, գոր բազումք ասեին թե վասն կաշառացն՝ գոր էտո Մելքիսեթն թոյլ ետ: Երկրորդ՝ վասն դառնալոյն ի մեծ սորգունէն, որ առանց հրամանաց շահին դարձա՛ եւ եկեալ Էջմիածին վարեր զիշխանութիւն կաթողիկոսութեանն, եւ այն եւս առանց հրամանաց շահին: Երրորդ՝ յորժամ շահն ընկեց ի կաթողիկոսութեանէ զՄելքիսեթն, եւ առաքեաց յԱսպահան, համարէր շահն զմա թե ի կալանս կայ, բայց Մելքիսեթն լընդարձակի կալով վարէր զիշխանութիւն կաթողիկոսութեան, եւ այն եւս առանց հրամանաց շահին» (Դավրիժեցի, էջ 218) (տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, II (1601-1650), կազմեց Փափազյան Հ., Երեւան, 1959, էջ 167):



քան շուրջառնները: Նրանք արծաթե թեփուկներով գլխարկներ ունեին, մեծ մասամբ՝ ոսկեզօծ, որոնց կենտրոնում նույն մետաղից փոքրիկ խաչեր էին ամրացված: Նրանցից ոմանք բուրվառներ եւ արծաթե սկիհեր էին բռնել, իսկ մեծ մասը՝ վառվող մոմեր:

/284/ Քահանաներին հետեւում էին բազմաթիվ այլ հոգեւորականներ, ջահընկալներ ու լուսարարներ իրենց շապիկներով, գոտկավոր եւ մյուս հոգեւորականների նման արծաթե գլխարկներով: Ջահընկալներից ոմանք կրում էին ափսեի լայնության արծաթե երկու ծնծղաներ, որոնք բռնիչներ ունեին, եւ հարվածելով իրար՝ զանգի դեր էին կատարում: Պղնձե ծնծղաներ եւս կային: Մյուսները կրում էին խաչեր, ինչպիսիք Իսպանիայում են պատրաստում եւ օգտագործում արարողությունների ժամանակ: Սրանք գուցե մի քիչ փոքր էին, բայց արծաթից էին ու ոսկեզօծ: Ասում էին, որ ամբողջովին ոսկուց ձուլվածներ նույնպես հանդիպում են: Խաչերի ձեւը թույլ էր տալիս մտածել, որ դրանք շատ հին էին՝ մոտավորապես այնպիսին, ինչպիսին կարելի էր տեսնել մի քանի հին նկարներում: Թեւերն ու հենքը մարմնի մեծության էին եւ գլխամասում ու թեւերի վրա ավարտվում էին եռանկյունով: Շատերը երկտակ էին. արտաքին թեւերն ավելի կարճ էին քան ներքինները՝ մոտավորապես այնպես, ինչպես նկարում էին խաչերը գյուղական տոնակատարությունների ժամանակ: Դրանք Մադրիդի կանանց մոտ ժամանակին մեծ տարածում ունեին: Կարելի էր զարմանալ, թե այս խեղճ հայերը ինչպես էին փրկել այս բավականին արժեքավոր հարստությունը: Այդ խաչերը հարյուրից ավելի էին. ամենազասարակն արծաթյա էր: Նույն մետաղից սկիհները եւս քիչ չէին, եւ սա չնայած այն բանին, որ նրանք այնքան հաճախ էին կողոպտվել աշխարհում ամենաազաւ հեւ ամենաշահամուլ երկու ազգերի՝ թուրքերի ու պարսիկների կողմից:

Ջրօրհնների արարողությունը տեղի ունեցավ զետեղերից: Բազմաթիվ մարդիկ՝ մինչեւ գոտկատեղն ամբողջովին մերկ՝ դեռ լուսաբացին մտել էին ջուրը: Այս առիթով հարկ էր եղել շատ տեղերում կոտրել սառույցը: Մառցաշերտն այնքան հաստ էր, որ հազիվ էին հայտնաբերում ջուրը. ցուրտն այնքան սաստիկ ու խիստ

էր: Հայերը գտնում են, որ այս ապաշխարությունն ամենադաժաններից մեկն է: Իրականում այն այնքան խիստ էր, որ չէր կարող թողություն չտալ նույնիսկ ամենամեծ մեղքին: Թվում էր, որ նա, ով փորձում է այս ձեւով ապաշխարել, հազիվ թե /285/ կարողանա կենդանի մնալ:

Երկար ժամանակ ծախսելով սաղմոսներ եւ շարականներ երգելու վրա (համարյա նույն տոնայնությամբ, որ վեղարավորներն են կատարում)՝ թափորը սկսեց շարժվել դեպի մեծ եկեղեցին կամ եպիսկոպոսանիստը: Խաչերը տանում էին առջեւից՝ միշտ նույն տոնայնությամբ երգելով, ապա իրենց ծնծղաներով մեծ աղմուկ հանելով՝ քայլում էին ջահընկալները: Ընդ որում, եւրոպացիները մեծ հուզմունքով էին դիտում արարողությունը: Նրանք այս պարզ ու կոպիտ արարողություններում տեսնում էին պրիմիտիվ եկեղեցու անմեղության շորշոփները:

Ամենուրեք մեծ թվով պարսիկներ կային՝ թե՛ գյուղում ու փողոցներում եւ թե՛ հայերի տների պատշգամբներում ու պատուհաններից: Տները, որոնք մեծ մասամբ շատ գեղեցիկ էին եւ հրաշալիորեն կառուցված, ներսից նկարագարված էին, ոսկեզօծ պատերով: Դարուղան (Daroga)<sup>23</sup>, քաղաքի աշխարհիկ եւ քրեական դատավորը, անգլիացիների հետ այդ պատշգամբներից մեկն էր զբաղեցրել: Նրանք զարմացել էին՝ տեսնելով, որ դեսպանը՝ գլխաբաց այդ սաստիկ ցրտին, մեծ ջերմեռանդությամբ մասնակցում է արարողությանը, ինչպես կմասնակցեր Իսպանիայում ամենահանդիսավոր արարողություններից մեկին:

Հայ կանայք, պարսկուհիների նման, գրեթե չեն երեւում հասարակության մեջ, իսկ եթե դուրս են գալիս փողոց, անճանաչելիորեն

23 Այսպես էր կոչվում սվյալ վայրի ոստիկանապետը, որ ակտիվ մասնակցություն ուներ բնակչությունից գանձվող հարկերի հավաքման գործում: Արքունի դիվանատան դարուղան կոչվում էր «դարուղե-յե դաֆթարխանե» (դաֆթարխանեի դարուղա) կամ «դարուղա-յե դաֆթարդարի» (դաֆթարդարի դարուղա), որն ամմիշպպես ենթարկվում էր «մուսթուվֆի-ուլ-մամալիքիմ» (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. պրակ երրորդ (1652-1731) կազմեց Կոստիկյան Ք., էջ 190):



ծածկվում են իրենց շղարչներով եւ, ամուսնացած կամ ոչ, միայն խմբերով են ման գալիս ու նրանց բոլորի դեմքերը բաց են: Ամուսնացած կանայք մանրակրկիտ ձեռով ծպտված են մորթիներով զարդարված հաստ հանդերձների մեջ: Նրանց այս հագուստը նման է Կաստիլիայի գեղջկուհիների հագուստին կամ լայնաթեւ բանկոններին: Գլխաշորը կապում են այնպես, որ ծածկում է բերանը՝ բաց թողնելով դեմքի մյուս մասը՝ Իսպանիայի ծայրամասերի (*l'Estremadure en Espagne*) գեղջկուհիների նման: Օրիորդների գլխաշորերը նման են ամուսնացած կանանց գլխաշորերին: Դրանք այնպես են անցնում նրանց կզակի տակով, որ մազերի մի մասը երեւա: Պարսկուհիների եւ վրացուհիների պես, ունեն գյուղական վերաբերուներ ու վարտիքներ, բայց՝ առանց հատուկ զարդարանքի, ինչպես ասում են, առանց պճնանքի, քանի որ հայուհիները, չնայած Ասիայի կանանց մեջ ամենագեղեցիկն են, մեծ մասամբ շատ անխնամ են<sup>24</sup>:

Թափորը մինչեւ եկեղեցի ուղեկցելուց հետո դեսպանը սկսեց հետեւել՝ հետաքրքիր ինչ է տեղի ունենում: Կառույցը շատ մեծ էր

24 Յ. Տէր-Յովհաննէսը այս կապակցությամբ գրում է. «Տարագ զգեստուց արդի արանց Ջուղայու է ըստ ամենայնի մամուռութեան պարսկական հանդերձից, այլ ըստ պատկերացն վկայելոյ՝ նախնիք շուղայեցոյ ունեցեալ են զհանդերձս այլատարագ քան զպարսկականն, զի մամուռութիւնն ունին զգեստը մոցա Գուռջի կամ Վրացի զգեստուց. զգօտի հաստ ի մէջս, եւ զփակեղ ունելով ի գլուխ: Տարագ կանացի զգեստուցն ըստ բազմաց վկայելոյ մոյն է զոր բերին ի Հայաստանայ: Վերին հանդերձ կանացի կոչի թակալայ, որոյ լամբն եւ գոգ բաց է, եւ քղանցք կամ վերին գոգ ծածկեն գայն: Ծածկեալ են գլուխը մոցա չորիւք փաթութանօք, որոյ վերայ դնեն զկօտ, կապեն զքթնակալ, արկանեն զլամբածածկոցն՝ որ մանդիլ կոչի, եւ յամստան՝ թօռն, եւ շղարշապատեն զգլուխն» (Աշվ. աշխ., հտ. 2, էջ 289): Այս մասին տե՛ս նաեւ Հացունի Վ., *Պատմութիւն հին հայ տարագին*, Վենետիկ, 1923, էջ 276-279, Լը Բրյուիւն, Աշվ. աշխ., IV, էջ 234: Ժակ Վիլլոտի հաղորդմամբ հայ կանանց բնորոշ է այն, որ «փաթաթուած իրենց քողերով նրանք ոչինչ չեն ցուցադրում իրենց հագուստների հարուստ արդուարդից ո՛չ փողոցում եւ ո՛չ իսկ եկեղեցում: Միայն տանն են հանում քօղը՝ մերկայանալով իրենց ողջ փայլով, Աշելու համար, որ հաճոյանում են միայն իրենց ամուսիններին, որով էլ լաւ դաս են տալիս մեր եւրոպացի կանանց» (տե՛ս Villotte J., *Voyages d'un missionnaire de la compagnie de Jesus*, Paris, 1730, p. 496; *Suite du voyage de mr. Thevenot au Levant*. Amsterdam, T. III, 1727), p. 320; Gemelli-Careri, op. cit., p. 139):

եւ շատ գեղեցիկ՝ /286/ կենտրոնում գմբեթով, ինչպես մեր եկեղեցիներում (հատկապես՝ վերջերս կառուցված): Սրբապատկերների նկարչությունն այնքան հրաշալի էր, որ ակնհայտ էր դառնում դրանց բազմադարյան հնությունը: Չնայած Ջուլֆայի այս գաղթօջախը տասը-տասներկու տարվա պատմություն ուներ, այդուհանդերձ եկեղեցական հարդարանքը եւ սպասքը շատ հին էր: Հայաստանից գաղթելով՝ այս քրիստոնյաներն իրենց հետ տարել են ամբողջ զարդարանքը, ընդ որում՝ մեծ քանակութամբ արծաթյա լամպարներ (ջահեր): Այս եկեղեցին տեսնելով՝ կարելի էր պատկերացնել նաեւ մյուս եկեղեցիների հարդարանքը<sup>25</sup>:

Հրաժեշտ տալով հայ հոգեւորականներին եւ մի քանի հարուստ վաճառականների, որոնք եկել էին իրեն պատիվ տալու, դեսպանը մի քանի օրհնված մում նվեր ստացավ. ասում էին՝ դրանք այս բարի եպիսկոպոսը Երուսաղեմից էր բերել: Դեսպանը դրանք մեծ ջերմեռանդութամբ ընդունեց, կարգադրեց լավ պահպանել եւ թանկարժեք ողորմություն բաշխեց մոմերը բերող լուսարարներին: Նշանավոր հայերից այնտեղ էին խոջա Ջաֆարի<sup>26</sup> (*Iapher*) եղբայ-

25 Նոր ջուղայի բոլոր եկեղեցիների ու նրանց արձանագրությունների մասին տե՛ս Տէր Յովհաննէսն Յ., *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հտ. Բ, Նոր Ջուղա, 1880, էջ 154-252; Garswell J., *New Julfa* (Documenti di architettura armeni, 21), Venezia, 1991; Մինասեան Լ., *Իրանի հայկական վանքերը*, Թեհրան, 1971, Նոր Ջուղա, 2003:

26 Հավանաբար հեղինակը նկատի ունի խոջա Սաֆարին՝ Ծափխասեանց կամ Սաֆրազյան գերդաստանից խոջա Խաչիկի (Հին Ջուղայի քալանթար) որդուն: Սաֆարը քալանթարի պաշտոնում է եղել 1605-1618 թթ., իսկ Նազարը՝ 1618-1636 թթ.: Նազարից հետո՝ նրա որդին՝ խոջա Սարֆրազը քալանթարի պաշտոնում է եղել 1636-1656 թթ.: Այս մասին մանրամասն տե՛ս Տէր Յովհաննէսն Յ., *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հտ. առաջին, Նոր Ջուղա, 1800, էջ 78-79: Քիրտեան Յ., *Ջուղայեցի խօջայ Նազար եւ իր գերդաստանը*, - «Հայրենիք», 1943, թ. 4 (յուլիս-օգոստոս), էջ 72-82; թ. 5 (սեպտեմբեր-հոկտեմբեր), էջ 63-73; թ. 6 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 69-87: Նույնի վերանայված հրատարակությունը տե՛ս Քիրտեան Յ., *Ջուղայեցի խօջայ Սաֆար եւ խօջայ Նազար եւ իրենց գերդաստանը*, - «Բազմավեպ», 1975, թի 3-4, 379-396; 1976, թի 1-2, էջ 52-73; թի 3-4, էջ 375-395: Հմմտ. Խաչիկյան Ծ. *Նոր Ջուղայի հայ վաճառականությունը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ*, Երեւան, 1988, էջ 29-30:



րը եւ որդին: Խոջա Ջաֆարը, որն այս արվարձանի վաճառականներին ամենահարուստն էր, մի քանի օր առաջ էր վախճանվել, եւ նրա որդին ժառանգել էր ողջ ունեցվածքը, իսկ եղբայրը ստանձնել էր Նոր Զուղայի աշխարհիկ դատավորի պաշտոնը: Մի պարսիկ էլ իրավասու էր քրեական, ինչպես նաեւ այն գործերի համար, որոնք կարող էին հետաքրքրել արքային:

Ասացինք, որ Հայոց պատրիարք Մելքիսեդեկը ներկա չէր արարողությանը, ուստի ավելորդ չի լինի նկատել, որ նա արքունիքում էր՝ թախանձելով պատրիարքական պաշտոնը ստանալ Դավթի հետ միասին, որն իրենից առաջ էր ընտրվել: Դավթի իրավասություններն առավել հիմնավոր էին, քանի որ նրա ընտրությունն ավելի կանոնակարգված ձևով էր անցկացվել, քան Մելքիսեդեկինը: Այնուամենայնիվ վերջինս (իմա՝ Մելքիսեդեկը) չհրաժարվեց գործընթացից, մանավանդ որ ուզում էր օգտագործել Պապի եւ կաթոլիկ արքայի երաշխավորությունը եւ, բացի այդ, թագավորին ու նրա նախարարներին բավականին մեծ գումար էր տվել իրեն ընտրելու համար:

[287] Արքան սովորություն ուներ ճաշել խոջա Ջաֆարի տանը վերջինիս կենդանություն օրոք: Նա մեծ հաճույք էր ստանում այս ընտանիքի հյուրընկալությունից եւ այստեղ էր մնում օրեր շարունակ՝ իր մոտ բերել տալով արվարձանի բոլոր գեղեցիկ կանանց ու աղջիկներին: Սա դուր չէր գալիս նրանց ամուսիններին ու հայրերին, սակայն հրաժարվելու իրավունք չունեին: Նույնը տեղի ունեցավ նաեւ նախորդ ամառ, երբ գեսպանը Սպահանում էր: Արքան ցանկացավ, որ իր մոտ բերեն խոջա Ջաֆարի որդուն, որը հոր անունն էր կրում եւ շատ գեղեցիկ ու հրաշալի երեխա էր, ինչպես նաեւ արվարձանի բոլոր ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին, որոնք իրոք բազմաթիվ էին, եւ որոնց խնամքով թաքցնում էին նրանց ամուսիններն ու հայրերը՝ վտանգելով իրենց վերջին ունեցվածքը, ինչպես նաեւ կյանքը:

## ՀԱՅՐ ՖԻԼԻՊ

Հ. Ֆիլիպը (1603-1671)՝ Բուկոտն Կարմելիտյան Ս. Երրորդության ուխտից, ծնվել է Ավինյոնի բնակավայրերից մեկում: 18 տարեկանում դառնալով հոգեւորական եւ Փարիզում ավարտելով ուսումնառությունը՝ 1626 թ. մեկնել է Հռոմ՝ կարդինալ Բարբերինի առաջարկով Պարսկաստանի առաքելությանը նախապատրաստվելու նպատակով: Տիրապետում էր պարսկերենին եւ արաբերենին:

1629 թ. նա սկսել է իր ճամփորդությունը (Նեապոլ, Իսկենդեբուն, Հալեպ, Բասրա) եւ նոյն տարվա օգոստոսի 19-ին հասել է Սպահան, ուր ինն ամիս մնալուց հետո մեկնել է Բասրա: 1631-ին նա Գոալում էր: Այստեղ անցկացրել է 9 տարի՝ դասավանդելով աստվածաբանություն եւ փիլիսոփայություն: 1664 թ. Պարսկաստանի, Միջագետքի, Լիբանանի, Սուրբ Երկրի եւ Իսպանիայի վրայով վերադարձել է Փարիզ: Ֆրանսիայում գլխավորել է Կարմելիտյան ուխտի մի շարք վանքեր: 1665 թ. ապրիլին Հռոմում ընտրվել է Կարմելիտյան միաբանության ընդհանրական փոխանորդ եւ այս պաշտոնում այցելել է Հոլանդիա, Գերմանիա, Լեհաստան, Իտալիա: 1671 թ. փոթորիկի ընթացքում խեղդվել է նավաբեկության ժամանակ, Կալաբրիայի ափերի մոտ:

Լատիներենով նրա ուղեգրությունն առաջին անգամ լույս է տեսել Լիոնում 1649 թ., իսկ ֆրանսերեն թարգմանությունը՝ 1652-1669 թթ.: Հետագայում այն բազմիցս հրատարակվել է նաեւ եւրոպական այլ լեզուներով<sup>27</sup>:

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. *Voyage d'Orient du R. P. Philippe de la très-sainte Trinité Carme Déschaussé, ou il decrit les divers succez de son Voyage, plusieurs Regions d'Orient ...*, Lyon, MDCLXIX (1669):

27 St'au, Michaud L. G., op. cit., t. 34, 1823, p. 181-183. *A Chronicle*. Vol. I, London, 1939, p. 279, 320.



Յ. Ֆիլիպի Ուղեգրությունից

Գիրք Առաջին

§ 7

136/ (1629 թ. օգոստ. 19-ին Սպահանում գտնվելուց - է.թ.) Հազիվ մի քանի օր էր անցել, երբ Հայերի Մովսես անունով գերաշնորհ պատրիարքն<sup>28</sup> այցելեց մեզ եւ վկայեց այն մեծ ուրախութեան մասին, որ տածում էր մեր գալստյան առիթով: Մենք հստակ տեսանք նրա մեծագույն ուրախութունը, ինչպես նաեւ իրական հարգանքը, որ բացահայտվեց մեր երկարատեւ զրույցի ընթացքում: Հրաժեշտ տալիս նա մեզ հրավիրեց այցելել իր վանքը: Մենք ընտրեցինք մի շաբաթ օր, որը նրանց մոտ ջերմեռանդութեան արտահայտման օրերից էր եւ գնացինք հայերի քաղաքը՝ Զուլֆա՝ Սպահանից երկու մղոն հեռավորութեան վրա եւ շատ քաղաքակիրթ ընդունելութուն գտանք 137/ թե՛ պատրիարքի ու թե՛ բոլոր հոգեւորականների կողմից, որոնք թվով քսանն էին, եւ որոնք հետո մեզ ուղեկցեցին եկեղեցի՝ հրաշալի պատարագ լսելու:

Եկեղեցի մտնելուն պես քահանան հագավ Սուրբ Հանդերձանքներ: Շուրջառի թեւերը հարկ էր ծալել արարողութունն անցկացնելու համար: Գլխարկը հիշեցնում էր պապական թիարան, որը գուցե եւ երեք թագով զարդարված էր, սակայն կերպասի արանքներից ոսկեկար եւ արծաթակար զանազան գեղեցկութուններով էր պանդխտված ու գագաթին փոքրիկ խաչով էր ավարտվում: Սարկավազը մասնակցում էր պատարագին միայն շապիկ հագած եւ անընդհատ երգում էր քահանայի ետեւում: Վերջինս, մեկ ընդ մեջ դառնալով ժողովրդի կողմը, օրհնում էր նրան, եւ երբ գալիս էր Ընծայման աղոթքի պահը, իր հավատակից հոգեւորականների հետ պտտվում էր խորանի շուրջը, որը մեծ մատուռի տակ էր: Նրանցից

28 Իմա՝ Մովսես Տաթևացի կամ Սյունեցի, ամենայն հայոց կաթողիկոս՝ 1629-1632 թթ. (կենսագրությունը եւ մատենագրական վաստակի մասին մանրամասն տե՛ս Հ. Ներսէս Վ. Ակիմեան, Մովսէս Գ. Տաթևացի Հայոց Կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936 (Ազգային մատենադարան, ԸԼԹ):

երկուսն ունեին գավազաններ, որոնց վրա ամրացված էին զանգակներով շրջապատված տափակ շրջանակներ (իմա՝ քշոց<sup>29</sup>): Հատկապես Ընծայման աղոթքի (Offertoire) եւ Օծման (Consecration) ժամանակ դրանք թեթեւորեն թափահարում էին քահանայի գլխի վրա: Ուրիշներն իրենց ձեռքին արծաթե ծնծղաներ ունեին եւ շատ ներդաշնակորեն նվագում էին դրանցով: Մեկն էլ բուրվառն էր բռնել, իսկ մնացածները երգում ու երգեհոն էին նվագում:

Նվագազույնը երկու ժամ տեւող պատարագից հետո մեզ առաջնորդեցին մի սրահ, որը վանքի մուտքին մոտ էր գտնվում: Այստեղ փոքր-ինչ սպասելուց հետո ականատես եղանք բոլոր հոգեւորականների, ինչպես նաեւ այլ անձանց հանդիսավոր երթին՝ գեղեցիկ երգեցողութեամբ ու նվագակցութեամբ: 138/ Մեզ հասնելով՝ նրանք շրջվեցին, պատրիարքի հետ միասին մեզ էլ վերցրին, եւ մտանք եկեղեցի: Այստեղ ամեն ինչ արդեն պատրաստ էր Ոտնլվայի (à laver les pieds) արարողութեան համար: Պատրիարքը թույլ տվեց մեզ նստել եւ ծնկի գալով՝ անձամբ սկսեց մեր ոտքերը լվալ՝ մինչ մյուսները Սուրբ Գրքից տաղեր ու սաղմոսներ էին երգում: Երբ նա ավարտեց խոնարհութեան ու գթասրտութեան այս արարողութունը, մեր ոտքերը լվացած ջուրը ցանեց ներկա գտնվող ժողովրդի վրա՝ սաղմոսերգութեամբ ասելով՝ եթե չեմ սխալվում «Իբրեւ զի՛ գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան եւ աւետարանչացն բարութեան»<sup>30</sup>: Ի վերջո նա մեր գլուխներն օծեց

29 «Քշոցները եղած են մետաղեայ ու մանր սերովբեներ, շուրջանակի յաւելուածական մասերով ու բոժոժներով մեծցած ու զարդարուած, եւ փայտէ երկար կոթերու վրայ ամրացած: Ծարժած ատեննից ատելի նուագարանի քան թէ քշոցի ծառայութիւն կ'ընեն, եւ իրօք ալ նշանատր ու խորհրդատր պահերուն քշոցները կը շարժուին ու բոժոժները կը հնչեն: Իսկ սրբագործեալ տեսակները մեր մէջ «Առէք կերէք»-էն ետքն ալ կը գործածուին, եւ «ի սուրբ ի սուրբ»-էն ետքը ժամարարը ձեռուրները բաժակին վրայ կը բռնէ եւ այնպէս ճանգերէ կը պահպանէ: Քշոցներուն ուրախութեան նուագարան դարձած ըլլալը՝ Մեծ Պահքին մէջ զգործածուելովն ալ կը հաստատուի» (Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Միսակամ բարարան, Անթիլիաս, 1979, էջ 194-195):

30 Հոռն. Ժ 15:



վարդաջրով եւ սրանով ավարտեց այս զթասրտութեան ու հյուրընկալութեան ջերմեռանդ արարողութիւնը:

Քիչ անց մեզ ուղեկցեցին սեղանատուն: Սկզբում բոլոր արեւելցիների նման նրանք գետնին նստած ընդունեցին կերակուրը, ապա մեր հոգեւորականների պէս երկու կողմից սեղաններ զցեցին, մեկն էլ ուղղահայաց՝ մեծավորների համար, ու մի գրակալ զրեցին: Սեղանն օրհնելուց հետո միայն միասին ճաշեցինք: Սեղանը կառավարողը, մի կտոր հաց վերցնելով, հրամայեց բոլորին. յուրաքանչյուրը վերցրեց իր բաժինը: Հիմա այսքանով բավարարվենք՝ հետագայում կրկին նրանց անդրադառնալու ակնկալիքով:

(Ինը ամիս մնալուց հետո թուրք-պարսկական պատերազմների ականատեսն է լինում - Թ. Է.):

/105/ (Պարսկաստանը) շատ քաղաքներ ունի, որոնց մեջ առաջինը եւ ամենաազնվականը Սպահանն է (Aspahan)՝ կայսրութեան մայրաքաղաքը եւ պարսից թագավորների արքունի նստավայրը: Սկզբնական շրջանում փոքր բնակավայր էր: Աբաս արքան այն մեծացրեց՝ Կազբինից այնտեղ փոխադրելով արքունիքը եւ գրավալ քաղաքների բնակչութեանը կամ գոնե դրա մեծ մասին: Նրանք հատկապէս տեղափոխվել էին Թավրիզում եւ Զուլֆայում բնակեցվելու նպատակով:

Այս տարածքը շատ տարողունակ է՝ ողողված բազմաթիվ մեծ ու գեղեցիկ պարտեզներով: Այն բազմաթիվ գետակներով ոռոգվող լայնածավալ մի դաշտում է:

Շատ գեղեցիկ բաներ կան տեսնելու: Քաղաքի ծայրին կա շուրջ երեք մղոն երկայնքով շատ լայն մի ճանապարհ՝ երկու կողմից հիասքանչ բարձր չինարներով զարդարված: Այն սկսվում է արքայի պալատից եւ ուղիղ գծով գնում է ավարտվելու նրա հիասքանչ ու ընդարձակ պարտեզներում: Այս ճանապարհի մեջտեղում քարե մի ջրանցքով գետակ է հոսում, որը ժամանակ առ ժամանակ լայնանում է՝ լցնելու համար սրբատաշ քարերով շինված գեղեցիկ շատրվանները: Ճանապարհի մեջտեղում կա շատ երկար, բարձրարվեստ, աղյուսաչեն կամուրջ, /106/ որի տակից հոսում է վերահիշյալ

գետը: Այն ճմռանը վարարում է ձյան ու անձրեւների ջրերից: Այս ճանապարհի երկու կողմերում՝ իրարից քառասուն քայլ հեռավորութեան վրա, շատ գեղեցիկ տներ կան, որոնք նույնիսկ արտաքինից ոսկեգօծ են ու նկարազարդ: Դրանք շրջապատված են շատ մեծ ու գեղեցիկ պարտեզներով:

(Արքայական պալատի մոտ գտնվող մզկիթի եւ Պալատի Ակարագրութիւնները - Թ. Է.):

/107/ Մզկիթի ներքեւի կողմում գտնվող հրապարակից մի փողոց է դուրս գալիս, որը բոլոր կողմերից շրջապատված է պարիսպներով: Գիշերներն այն փակվում է, քանի որ այնտեղ գտնվող խանութներում պահվում են ամենաարժեքավոր ապրանքները: Հրապարակը շրջապատող երկհարկ կամարները վանական քառանկյուն ճեմասրահ են հիշեցնում: Ներքեւում ճեմուղին է, եւ կամարները արեւից ու անձրեւից պաշտպանվելու համար են նախատեսված: Իսկ վերեւի կամարների մեջ կառուցված սենյակները ծառայում են որպէս վաճառականների եւ այլոց օթեւաններ: Այս հրապարակում օրվա ընթացքում հավաքվում են անհամար բազմութեամբ վաճառողներ ու գնորդներ:

Քաղաքն ունի բազմաթիվ մզկիթներ՝ իրենց աշտարակներով, նաեւ՝ վանական քառանկյուն ճեմասրահների ձեւով կառուցված բազմաթիվ գեղեցիկ ու հարմարավետ օթեւաններ վաճառականների համար: Դրանք պարսկերենով քարվանսարա են կոչվում: Այստեղ շատ եւրոպացի վաճառականներ կան. անգլիացիներն ու հոլանդացիներն իրենց գործակալներն ունեն, իսկ ֆրանսիացիները, իտալացիները, պորտուգալացիները եւ այլք ամեն օր գալիս են այստեղ: Կա նաեւ երեք հոգեւոր միաբանութիւն՝ Ավգուստինյանները, Բոկոտն Կարմելիտները եւ Վեղարավորները: Ավգուստինյանները մեզնից մի քանի տարի առաջ են եկել Արեւելյան Հնդկաստանից: Ահա թե ինչու են նրանք ընդունվել որպէս Պորտուգալիայի արքայի դեսպանորդներ: Քառասուն տարի է, որ Կղեմես VIII-ը մեզ ուղարկում է այստեղ, եւ մենք Պապի դեսպանորդներն ենք: Իսկ վեր-



ըին տարվա ընթացքում /108/ վեղարավորներն էլ ընդունվեցին որպես ամենաքրիստոնյա արքայի դեսպանորդներ:

Այն դաշտում, ուր Սպահանն է գտնվում, փոքր գյուղերի մի անվերջութուն կա, սակայն հակիրճութունը, որ ինձ պարտադրել էմ, թույլ չի տալիս անդրադառնալ այն ամենին, ինչ գտնվում է այդ քաղաքի շուրջը: Սպահանից հազիվ մեկ մղոն հեռավորության վրա մի քաղաք կա, ուր հայերը բերվել եւ բնակվում են իրենց հայրենիքի՝ Ջուլֆայի գրավումից հետո. Այն բավականին մեծ է՝ բազմաթիվ գետակներով, գեղեցիկ առանձնատներով, ուր բնակվում են հարուստ վաճառականներ: Ունի վեց կամ ավելի եկեղեցի<sup>31</sup>, սակայն կա մի վանք՝ Սուրբ Անտոնը, որի հոգեւորականները մեզ շատ նման են իրենց կենցաղով. հաճախ են պաս պահում, մսեղենի նկատմամբ ժուժկալ են, անդադար երգեցողությամբ են զբաղվում եւ տաղավար տոների նախօրեներին (ճրագալույց), սեւ վերարկու են կրում՝ դրանով սովորաբար նմանակելով Ս. Անտոնին: Նրանց վեղարը ավարտվում է սրությամբ՝ գլխի ետեւում: Նույնիսկ ամռանը նրանք տակից կաշվե հագուստ են կրում: Մազե գոտին նրանք շարունակ մեջքին են կապում, այդուհանդերձ բոկոտն չեն եւ խնամում են իրենց մորուքը: Նրանց խցերը նման են գերեզմանահորի. հազիվ են տեղավորվում դրա մեջ: Քնում են գետնին՝ խաբրի վրա: Նրանք մեզ շատ են հարգում մեր եւ իրենց կարգապահության նմանության պատճառով եւ հատկապես՝ մսեղենի նկատմամբ ժուժկալության համար: Պատարագ հազվադեպ են մատուցում, սակայն երբ մատուցում են՝ շատ մեծ հանդիսավորությամբ: Այս նույն քաղաքում հայ հոգեւորականների մի վանք էլ կա, որ կոչել են Ս. Թերեզայի անունով՝ ի նշանավորումն մեր նկատմամբ ունեցած մշտական հարգանքի:

31 Նոր Ջուղայի եկեղեցիների մասին տե՛ս աստ, Ճագոթ. 24:

## ԱՂԱՍ ՕԼԵԱՐԻՈՒՍ

Գերմանացի աշխարհագրագետ, արեւելագետ, պատմաբան, մաթեմատիկոս Աղամ Օլեարիուսը (1599-1671) ծնվել է Սաքսոնիայում: Սովորել է Լայպցիգի համալսարանում՝ ստանալով փիլիսոփայության մագիստրոսի աստիճան: Հմտացել է աշխարհագրության, պատմության, արեւելագիտության եւ ճշգրիտ գիտությունների մեջ:

Օլեարիուսն ընտրվել է առեւտրական հարաբերությունների հաստատման նպատակով Ֆրիդրիխ 3-րդի կողմից (վերջինս ցանկանում էր իր ձեռքը վերցնել հում մետաքսի ցամաքային առեւտուրը) Ռուսաստան եւ Պարսկաստան ուղարկված 37-հոգանոց դեսպանության քարտուղար, քանի որ ազատ տիրապետում էր այդ երկրների լեզուներին: 1635 թ.՝ 2-րդ դեսպանության (90 հոգի) ընթացքում, նա նաեւ դեսպանի խորհրդականն էր: 1636 թ. Մոսկվայում լավ ընդունելութուն ստանալուց հետո դեսպանությունը ճանապարհվել է Սպահան: 1637 թ. օգոստոսի 3-ին հասնելով այնտեղ՝ մնացել է մինչեւ դեկտեմբերի 20-ը: Վերադարձին 1639 թ. հունվարին նրանք կրկին անցել են Մոսկվայով: Միխայիլ Ֆեոդորովիչ Ցարը Օլեարիուսին առաջարկել է մնալ արքունիքում՝ աստղագետի եւ հոգագետի պաշտոնում, սակայն մերժում է ստացել:

Հոլլանդացի դեսպանությունը (1633-1639) այդպես էլ չի կարողացել իրականացնել Ռուսաստանի վրայով պարսկական մետաքսի ներկրման վերաբերյալ պայմանագրեր ստորագրելու իր առաքելությունը. դժվար էր մրցակցության մեջ մտնել օվկիանոսային եւ ծովային պետությունների կապիտալների հետ:

Օլեարուսի «Ուղեգրությունը», որը հարկ է դիտարկել որպես դիվանագետ-ճանապարհորդի աշխատություն, առաջին անգամ հրատարակվել է Շլեզվիգում 1647 թ.: Այն առավելապես ղեկուցազրերի բնույթ էր կրում: Հետագայում հեղինակը լրացրել եւ կատարելագործել է ուղեգրության տեքստը, որը բազմաթիվ հրատարակումների է ենթարկվել:



րակութուններ է ունեցել տարբեր լեզուներով: Ռուսերենով առաջին անգամ հրատարակվել է 1869-1870 թթ.:<sup>32</sup>

Թարգմանութունը կատարվել է ըստ հետեւյալ հրատարակության. *Relation du voyage de Moscovie, Tartarie et de Perse, fait à l'occasion d'une ambassade envoyée au Grand-Duc de Moscovie et au Roy de Perse, par le Duc de Holstein, depuis l'an 1633, jusques en l'an 1639, traduite de l'allemand du sieur Olearius, ... par L.R.D.B. [le Résident de Brandebourg, Abraham de Wicquefort]. Deux lettres du sieur de Mandeslo au sujet de son voyage des Indes. Publication: Paris: G. Clouzier, 1656. Ձեռքի տակ ունեցել ենք նաև ռուսերէն հրաշալի թարգմանութունը. Подробное описание путешествия Голштинскаго Посольства въ Московію и Персію въ 1633, 1636 и 1639 годах, составленное секретаремъ Посольства Адамом Олеариум, Москва, 1870.*

### Ադամ Օլեարիուսի դեսպանագնացությունից

Գիրք IV, Գլուխ XL

1661/ Սեպտեմբերի սկզբին ուժեղ շոգերը Սպահանում աստիճանաբար նվազեցին, եւ այնպիսի ցուրտ գիշերներ սկսվեցին, որ տաք անկողին չուները չգտնեցին: Սաստիկ զգում էին զրա պակասը:

Այդ օրերին մեզ այցելեց հայերի կառավարիչ Սեֆրազ Բեկն իր երկու եղբայրների հետ՝ ցանկանալով ծանոթանալ պարոնների դեսպանորդների հետ: Սրանք վերին աստիճանի բարեհամբույր եւ բարեսիրտ մարդիկ էին: Նկատելով սա՛ դեսպանորդ Բրուզմանը<sup>33</sup>

32 ըստ *Подробное описание путешествия Голштинскаго Посольства въ Московію и Персію въ 1633, 1636 и 1639 годах, составленное секретаремъ Посольства Адамом Олеариум, Москва, 1870* հրատարակության թարգմանիչ Պավել Բարսուլի առաջարանի (էջ I-XIV):

33 **Brüggemann Otto** (1600-1640) - Ֆրիդրիխ 3-դ Հոլշտեյն-Գոտտորպ դուքսի առևտրի գծով խորհրդական, Հոլշտեյնյան դեսպանության անդամներից: Մեղադրվել է դեսպանագնացության ընթացքում պաշտոնական դիրքի չարաշահման մեջ եւ դատապարտվել մահվան 1640 թ. մայիսի 5-ին (Löwenberg, All-

(ի պատիվ նրան պետք է ասեմ, որ բնավորությամբ միշտ առատաձեռն էր, հատկապես՝ այդպիսի մարդկանց հանդեպ) անմիջապես երկու մեծ եղբայրներին՝ յուրաքանչյուրին մեկական հիանալի հրացան նվիրեց, իսկ փոքրին՝ զույգ ատրճանակներ, ինչը նրանց շատ հաճելի եղավ: Որպես շնորհակալության եւ երախտագիտության արտահայտություն նրանք սեպտեմբերի 18-ին դեսպանորդներին իրենց բոլոր ուղեկիցներով շքեղ ճաշկերույթի հրավիրեցին: Մի քանի հայտնի վաճառականների հետ նրանք ձիեր ուղարկեցին՝ իրենց մոտ ուղեկցելու համար: Մեզ հետ եկան նաև երկու իսպանացի հոգեւորականներ՝ ավագերեցը եւ Հ. Հովսեփը (Joseph)՝ մեր գլխավոր թարգմանիչը:

Մեզ ուղեկցեցին Ջուլիֆա արվարձանը, որտեղ Սեֆրազ Բեկն<sup>34</sup> տունն էր<sup>35</sup>, սակայն նախ այցելեցինք եկեղեցի՝ նրանց պատարագին մասնակցելու համար: Եկեղեցին բավականին գեղեցիկ էր նկա-

*gemeine Deutsche Biographie, 3, 1876, s. 407): Подробное описание путешествия... op. cit., p. 1035-1038.*

34 Սաֆրազ բեկը (1636-1656) Նոր Ջուղայի Օսմիխասենց կամ Սաֆրազյան գերդաստանից Նազարի որդին էր (տե՛ս Տէր Յովհաննէանց Յ., Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հտ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 88-91):

35 Նոր Ջուղայի խոջայական տների եւ նրանց ներքին հարդարանքի մասին տե՛ս Հակոբյան Հ. Հովհաննիսյան Ա., *խոջայական արարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII-XVIII դդ.)*, Երևան, 2007: Նաև Le Brun C., *op. cit.*, IV, p.224:

Պուլեի կողմից հայտնվել են մի քանի նկատառումներ, կապված նոր Ջուղայի հայերի բնակարանի վերաբերյալ: Ըստ նրա, տները բոլորը հողից են, ինչպես Սպահանում եւ ավելի գեղեցիկ, քան քաղաքում, քանի որ համամասնությունը ավելի լավ է պահպանված: Բուխարիկը պատի մեջ 2,5-3 ոտնաչափ լայնք ունեցող շրջանաձեւ՝ ներս ընկած խորաքանդակ է: Ապակու փոխարեն լուսամուտներին 2 մատ հաստությամբ փայտե ճաղեր են, որոնց արանքից դուրսը լավ է երեսում: Որոշ տներ ապակի էլ ունեն, եւ դրանք դրված են տան ներսում, ինչպես Երոզայում: Տների վրա դրսից երեսացող գմբեթները ներսից համարյա չեն երեսում եւ կառուցված են այնպես, որպեսզի ապահովեն անձրեաջրերի հոսքը, որը կվնասեր այս տներին եւ նրանց հողե ծածկը: «Ես վստահաբար կարող եմ ասել, որ Փարիզի շրջակայքում այս գաղութի տեսարանները գերազանցող ոչինչ չեք գտնի եւ այս ամենը ավելի քան գերազանցում են Պարսկաստանում եղող ամենագեղեցիկ տեսարանները...»,- անելացնում է Պուլեն (տե՛ս Pouillet. *Nouvelles relations du Levant*. Paris, II partie, 1668, p. 237):



րազարգված, հատակը ծածկված էր գորգերով, իսկ պատերի տակ բոլորաձեւ նստարաններ էին շարված մեզ համար: Պատարագում էր ինքը՝ պատրիարքը<sup>36</sup>: Եկեղեցական հանդերձանքը արծաթակար կերպասից էր՝ ոսկյա ծաղիկներով ու մարգարիտներով, եպիսկոպոսական խուլբը եւս այդպիսին էր: Երգասացությունների արանքում փոքրիկ երգեհոնն (positiv) էր նվագում, որն ավելի շատ ունում էր, քան ներդաշնակ ձայներ հանում: Պատարագն ավարտվելուց հետո բոլորս միասին գնացինք հյուրատուն, ուր մեզ բարեհամբույր եւ ուրախ տրամադրությամբ ընդունեցին եւ գեղեցիկ կամարակապ միջանցքով ուղեկցեցին /662/ շատ գեղեցիկ, պարսկական ձեւով զարդարված այգի՝ հանգստանալու, եւ հրավիրեցին նստել հատակին ծալապատիկ: Ոսկեկար կերպասից պատրաստված սփռոց փռեցին, որի վրա դրեցին բազմազան մրգեր ու անուշեղեններ: Առաջին բաժակը, որ հյուրասիրեց Սաֆրազ Բեկը շատ լավ պատրաստված եւ թանկարժեք օղի էր (aqua vitae): Անուշեղեններից հետո փռեցին հնդկական ծաղկավոր գուլյնգուլյն սփռոց, որն արժեքավոր է համարվում, եւ բերեցին շատ լավ պատրաստված բազմաթիվ ուտելիքներ՝ տավարի մսից, աղած մսից, ոչխարի մսից, հավից եւ այլն: Կշտանալու չափ կերանք եւ դեռ ճաշերը մնում էին սեղանի վրա: Ապա բոլորիս կանչեցին եւ մի այլ գեղեցիկ կահավորված սենյակի միջով հրավիրեցին պարտեզում գտնվող բացօթյա մի մեծ սրահ: Այդ սրահը վարպետորեն էր կառուցված՝ գմբեթարդ ոսկեզօծ տանիքով: Պատերին զանազան նկարներ էին կախված, որոնք պատկերում էին տարբեր տարազներով կանանց: Սրահի կենտրոնում մարմարե շատրվան կար, որի մեջ ծաղիկներ էին նետված, իսկ եզրերին դրված էին զինով լի ոսկյա, արծաթյա եւ ապակյա սափորներ: Հատակին՝ շուրջբոլորը, գեղեցիկ գորգերի վրա ոսկեթելով ու արծաթաթելով ծաղկազարդված բազմազույն բարձեր էին դրված, որոնց

36 Այդ թվականին Նոր Ջուղայի առաջնորդն էր Խաչատուր Կեսարացին (1620-1646), իսկ կաթողիկոսը՝ Փիլիպոս Աղբակեցին էր (1633-1655) (տե՛ս Միգասեան Լ., Սպահանի հայոց թեմի առաջնորդները 1606-1996, Նոր Ջուղա, 1996: Նույնի, Նոր Ջուղան անելի քան մէկ եւ քառորդ դարում, Ս. Էջմիածին, 1999, էջ 85):

վրա էլ մեզ հրավիրեցին նստել: Կրկին հյուրասիրեցին անուշեղեններ ու մրգեր, ինչպես նաեւ երաժիշտներ ու պարողներ եկան:

Այս ուրախության ընթացքում երկու եպիսկոպոսների եւ մի քանի այլ հոգեւորականների հետ եկավ նաեւ պատրիարքը: Նա ծիրանագույն այծենու կերպասից կապալով (պարեգոտով) էր, իսկ մյուսները՝ սեւ երկար վերարկուներով, գլխներին՝ կնդուղներ: Նրանք մեր կողքին նստեցին եւ ուրախ ու բարեկամաբար զրուցում էին մեզ հետ: Կառավարչի եղբայրները դեսպաններին հաճույք պատճառելու համար իրենք սկսեցին նվագել, եւ միջին եղբայրը՝ Եղիա Բեկը<sup>37</sup>, ուրախ անձնավորություն, որի համար էլ Շահը նրան լավ էր ընդունում եւ համոզել էր թլպատվել, (այս մասին մենք այլ տեղում կխոսենք), սկզբում նվագում էր պարսկական վինի վրա (tamera), հետո, յոթ հախճապակե բաժակներ վերցնելով, դրանք ջրով լցրեց եւ վինի նվագակցությամբ երկու փայտիկներով սկսեց նվագել դրանց վրա: Ավագ եղբայրը՝ Սաֆրազ Բեկն, ասաց, որ այլ երաժշտություն նվագեն, վեր կացավ եւ պատվիրեց երկու մեծ փայտե սկուտեղների վրա բազմաթիվ բյուրեղապակյա բաժակներ բերել: Այդ /663/ սկուտեղներով երկու պատանիները հյուրերին էին մոտենում, իսկ Սաֆրազ Բեկը նրանցից յուրաքանչյուրին զինի էր առաջարկում՝ Շահ Սեֆիի կենացը խմելու համար:

Այսպիսի ուրախ մթնոլորտում անցկացնելով օրը՝ մայրամուտին մնաս բարով ասացինք տանտերերին, սակայն նրանք, մեզ ուղեկցելով, առաջնորդեցին այգու մեջ մի այլ զվարճանքի տեղ, ուր կրկին սեղաններ էին բացված եւ դրանք լի էին տապակած հավերով, խաշված ու տապակված ձկներով, ձվածեղներով, մրգերով ու բանջարեղենով եւ այլ համեղ ուտելիքով: Այս անգամ սակայն սրահի զարդարանքը գլխավերելում՝ երկար ճոպանների վրա կախված բազմաթիվ լամպարներն էին, իսկ այգու տարբեր կողմերում

37 Եղիա կամ Էլիազ Բեկը (մահ.1644 թ.) Նոր Ջուղայի Ծափխասեանց կամ Սաֆրազյան գերդաստանից Նազարի երկրորդ որդին էր, կրտսեր որդու անունը Հայկազ էր (տե՛ս Տէր Յովհաննես Թ., Գշվ. աշխ., հտ Ա., էջ 91-92, Խաչիկյան Թ., Գշվ. աշխ., էջ 31):



զբված էին բազմաթիվ ջահեր ու մոմեր, որոնք ամեն կողմից լուսավորում էին ինչպես սրահը, այնպես էլ ողջ այգին<sup>38</sup>: Չնայած մենք այստեղ էլ սեղան նստեցինք, բայց քանի որ անոթի չէինք, ուտելիքի մեծ մասը մնաց: Երբ վերջապես կուշտ, նույնիսկ շքեղ հյուրասիրութունից հետո ձիերով վերադառնում էինք՝ մինչև դեսպանատուն մեզ ուղեկցում էր Եղիա Բեկը՝ մի քանի ծառաներով եւ բազմաթիվ լապտերներով ու ջահերով: Նշեմ, որ տանը բավականին խնդիրներ ունեցանք տաք ու քաղցր օդու պատճառով:

Այսպիսով այս օրը մեր նկարագրած տեղում մեզ այնպիսի ուրախ հյուրասիրությամբ պատվեցին, որ նախկինում երբեք չէինք տեսել, նույնիսկ՝ Շահի մոտ՝ ճաշկերույթի ժամանակ:

Գլուխ XLI

Հայերի հարսանիքի, մկրտության եւ հաղորդության մասին

/667/ Նույն օրը ես գնացի Ջուլֆա, նույն արվարձանը, ուր մենք արյունալի բախում ունեցանք հնդիկների հետ եւ այցելեցի հայկական եկեղեցի: Տեսնելով, որ հայերն ուղեկցում են մի փեսացուի՝ գնացի նրանց ետեւից եւ տեսա Ս. Պսակի արարողութունը<sup>39</sup>:

38 Նոր Ջուղայի խոջայական տների գերքին հարդարանքի մասին տե՛ս Հակոբյան Լ., Հովհաննիսյան Ա., Գշվ. աշխ.: Ստեփանյան Ա., Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, Երեւան 2000:

39 Նոր Ջուղայում հայոց մեջ վաղ ամուսնութունների մասին եւ վկայում մի շարք երոպացի հեղինակներ: Այսպես, ըստ Գ. Օիմոնի «հայերը եւ հատկապես ջուղայեցիները սովորություն ունեն շատ վաղ ամուսնացնել իրենց երեխաներին, այդպիսով պահելով նրանց եւ արգելք հանդիսանալով, որ նրանք չցրվեն թուրքերի մեջ» (G. Chiron, op. cit., p. 274): Համաձայն Ժ. Բ. Տաւերնիեի վկայության «հայերը սովորաբար իրենց երեխաներին ամուսնացնում են առանց երկու կողմերն իրար տեսնելու եւ նույնիսկ առանց հայրերի եւ եղբայրների իմացության: Հարկ է, որ ամուսնացողները կատարեն իրենց ծնողների կամքը... Յաճախ ծնողները երեխաներին ամուսնացնում են դեռ 2-3 տարեկանում եւ նույնիսկ եթե երկու ընկերուհիները միաժամանակ հղիանում են՝ նրանք պայմանավորվում են ամուսնացնել նրանց, եթե աղջիկ եւ տղա ծնվեն: Այս պայմանավորվածությունից հետո, նրանց ծնվելուց հետո, անմիջապես պսակում են նրանց» (Tavernier J.B., op. cit., p. 505): Թեւրճոյի հաղորդմամբ «Հայերն իրենց երեխաներին հաղորդություն են տալիս շատ փոքր հասակում, քահի որ նրանց ամուսնացնում են շատ վաղ տարիքում: Հաճախ ծնողները նրանց

Առջեւից քայլում էին թմբկահարները եւ պղնձե ծնծղաներով տղաները, որոնց հետեւում էր մոմով մի պատանի: Հետո ձիու վրա գնում էր փեսացուն՝ գեղեցիկ գուլնզգուլն հանդերձանքով՝ երկու նույնպես հարուստ հագնված տղամարդկանց ուղեկցությամբ: Նրանց հետեւում էին եւս երկուսը: Վերջում քայլում էին մի քանի հոգի՝ ուտելիքներով, զինով եւ խնձորներով լի երկու սկուտեղով:

Մտնելով եկեղեցի՝ փեսացուն իր հյուրերի հետ միասին նստեց: Նրանց առջեւ զբված էին ուտելիքներն ու մրգերը, որոնցից օգտվում էին հյուրերը, բայց ոչ փեսացուն: Մնացյալ ուտելիքը քահանային պետք է տրվեր: Բոլորը հերթով զինի խմեցին: Ընդ որում՝ փեսացուն վեր կացավ, աջ կողմում պատանու, իսկ ձախ կողմում տարեց մի տղամարդու ուղեկցությամբ, մոտեցավ ինձ, ողջունեց, անձամբ զինի լցրեց եւ առաջարկեց խմել, սակայն ինքը չխմեց:

Այդ ընթացքում ժամանեց նաեւ հարսնացուն՝ մի աղջնակի եւ տարեց մի կնոջ ուղեկցությամբ՝ բոլորը քողերով ծածկված: Հոգեւորականը խորանի առջեւ երկար կարդում էր նորապսակների համար եւ օրհնում էր նրանց: Այդ ընթացքում երիտասարդները

Գշտում են ծնվելուց անմիջապես հետո եւ պսակում 7-8 տարեկան հասակում: Չնայած քահանան կատարում է պսակի արարողությունը, երիտասարդներն ամուսնանում են տարիքը հասնելուն պես» (Thevenot J., op., cit., T. III, p. 392): Համաձայն Գ. Օիմոնի հաղորդման «ամուսնացողին տալիս են թագավոր անունը, որը հարսանիքի նախորդ օրը, հարսանիքին հրավիրված բազում երիտասարդների հետ միասին, որոնցից յուրաքանչյուրին նա մեկական բաճկոն էր նվիրել, եթե այդ հնարավորությունն ուներ, ձիերով գնում են քաղաքից դուրս գրոսանքի՝ իրենց թմբուկներով, դափերով: Ուշ երեկոյան՝ վերադարձին, կանգ են առնում կառավարչի (քալանթարի) դռանը եւ ողջունում նրան: Ապա հարսանիքի թագավորը, ինչպես նրան կոչում են, իջնում է իր ձիուց, իր շքախմբի անդամներից մեկի հետ մտնում է խոջայի տուն եւ համբուրում նրան ձեռքը: Խոջան նրան ամեն տեսակ օրհնանքներ ու մաղթանքներ է տալիս, որպեսզի երջանկանա իր զույգի հետ միասին: Ապա մի թեթեւ հյուրասիրում է նրանց, որից հետո նորապսակը միանալով իր ընկերներին՝ վերադառնում է տուն» (տե՛ս G. Chiron, op. cit., p. 274-276). Իսկ Տաւերնիեի սրամիտ ակատողությամբ, նորապսակների զլխին դրվող Ավետարանը «հաճախ բավականին ծանր էր լինում...» (Tavernier J.B., op. cit., p. 506): Տե՛ս նաեւ Le Brun C., IV, p. 224-232.



միմյանց ձեռք էին բռնել եւ գլուխներն իրար մոտեցրել այնպես, որ փեսացուի գլուխն ավելի բարձր լինի: Նրանց երկուսի գլուխների վրա հոգեւորականը բռնել էր խաչը, որի տակ էլ նրանք պսակվում էին: Այս վիճակում՝ խաչի ներքո, նրանք միմյանց հնազանդության եւ փոխադարձ սիրո երդում տվեցին: Հետո հոգեւորականը նրանց հաղորդութուն տվեց՝ օրհնված գինու մեջ թաթախված մի փոքրիկ կտոր նշխար (*hostia*):

Այդ օրհնված հացն այնպիսին է, ինչպիսին ռուսների եւ հույների մոտ՝ թթխմորով. այն առանց թթխմորի է, կլոր, մի քիչ հաստ, բայց /668/ ռեյսսթալերից քիչ մեծ: Ս. Հաղորդության ընդունումը ուղեկցվում է երգասացությամբ եւ ծնծղաների (քչոցներ) խաղով, որը հայերեն կոչվում է Համբարձում (*hambartzon*): Հաղորդութուն ստանալու ընթացքում եւ պատարագի ժամանակ հայերի մոտ սովորութուն է ծնծղաների օգտագործումը, քանի որ նրանք ասում են, որ Քրիստոսը նախքան 4000 մարդկանց կերակրելը, գնացել էր լեռները եւ, այնտեղ աղոթելով իր Երկնային Հորը, իբր զոհաբերութուն էր արել. այնտեղ երկու հրեշտակներ նման ծնծղաների վրա էին նվազում: Այսպիսի երաժշտութունից հետո հարսնացուին ու փեսացուին, ինչպես նաեւ վերջինիս ընկերոջը օձեցին վարդաջրով: Ինձ եւս օձեցին վարդաջրով եւ միրգ հյուրասիրեցին: Այլ, շատ ուրիշ արարողութուններից հետո, հարսնացուն իր ձեռքին շղարշ կապեց, որով էլ փեսացուն նրան եկեղեցուց դուրս հանեց: Ապա նորապսակները ձիերով, նույն հանդիսավորությամբ գնացին իրենց հարսանեկան բնակարանը: Առաջին երեք օրը հարսն ու փեսան չեն կարող միասին քնել: Այդ սովորություն Լեհաստանի հայերն այնքան էլ մեծ նշանակութուն չեն տալիս:

Դրանից հետո ես մի ուրիշ եկեղեցի գնացի, որտեղ զանգակատանը, զանգերի փոխարեն (որոնք հայերը չեն կախում, քանի որ վախենում են պարսիկներից), կախված էր հաստ գերան. մուրճով հարվածում են դրան՝ հրավիրելով պատարագի:

Այս եկեղեցում տեսա, թե ինչպես են հայերը երեխային մկրտում<sup>40</sup>: 18 տարեկան մի տղա հոգեւորականի առջեւ մի երեխա էր գրկել: Եկեղեցում ոչ ոք չկար, բացի տղայից եւ մի մեծահասակ կնոջից, ով երեխային փաթաթել ու եկեղեցի էր բերել: Այդ կինը կանգնած էր հեռվում եւ չէր ուզում կամ չէր համարձակվում մոտիկ գալ: Տղան հետո ի՛նքը պիտի նրա մոտ տաներ երեխային: Հոգեւորականը կես ժամից ավելի կարդում, աղոթում եւ այլ արարողութուններ էր անում, հաճախ դիմում էր պատանուն, որը պատասխանում էր նրան: Հետո նրանք գնացին մկրտարան, որտեղ պատի մեջ ամրացված քար կար տակառի ձեւով մի արմունկաչափ երկայնքով եւ կես արմունկաչափ լայնությամբ, այդ քարի մեջ էլ (մկրտարան) հոգեւորականը օձեց ջուրը՝ այնտեղ սուրբ յուղ լցնելով (մյուռոն - հեղինակի մոտ՝ մուռա) /669/ եւ այդ ամբողջ ժամանակ երգում էր իր օգնականի հետ միասին: Հետո հոգեւորականը վերցրեց մերկ երեխային, նստեցրեց նրան վերոհիշյալ քարի մեջ՝ կարծես մկրտարանի մեջ՝ օրհնեց նրան ավետարանով ու խաչով, երեք անգամ օրհնված ջուր լցրեց նրա գլխին՝ հանուն Հոր, Որդու եւ Ս. Հոգու, հետո լվաց երեխայի ամբողջ մարմինը եւ ավարտեց նրանով, որ ճակատը օձեց մյուռոնով: Այսպիսի արարողութուններ մենք տեսել էինք նաեւ Շամախիում՝ մի երեխայի կնունքի ժամանակ: Հայերն իրենց երեխաներին չեն կնքում 8 օրականից շուտ, գուցե երեխան հիվանդ է: Եթե երեխան մահանում է կնքվելուց առաջ, ապա նրան սուրբ չեն համարում եւ գերեզմանատանը չեն թաղում: Գերեզմանում չեն թաղվում նաեւ նրանք, ովքեր մեկ տարի հաղորդութուն չեն ստացել:

40 Հայերի մոտ մկրտության ծեսին անդրադարձել են Բամարյա բոլոր երոպացի ուղեգիրները (տե՛ս C. Le Brun, op. cit., IV, p. 228-229; Chinon G., op. cit., p. 272-273; Tournierfort J.P., op. cit., p. 165, Gemelli-Careri F., op. cit., p. 143-145, եւ այլն):



Գլուխ XLIII

1674/ Ճաշից հետո մեհմանդարը<sup>41</sup> մեզ (դեսպանորդներին) տարավ գիշերելու որսատեղից քիչ հեռու գտնվող բնակավայրերը: Այս երկու բնակավայրերի բնակիչներն իրենց կոչում էին Դիզակ (Desach) եւ Վարանդա (Verende), Երեւանից (Iravan) ոչ հեռու գտնվող այն բնակավայրերի անուններով, որտեղ ժամանակին ապրել էին, եւ որտեղից նրանց այստեղ էր գաղթեցրել Շահ Աբասը, եւ նրանք հայեր էին<sup>42</sup>: Իմանալով, որ մենք քրիստոնյաներ ենք, չգիտեին՝ ինչպես 1675/ Հյուրասիրել մեզ. նվիրեցին հիանալի մրգեր ու թանկարժեք գինի: Հայ կառավարիչը՝ Սեֆրազ-Բեկը, մի քանի մեծանուն մարդկանցով նույնպես այցելեց այստեղ՝ դեսպանորդներին եւ շատ նվերներ ու ընծաներ տվեց նրանց՝ կարգադրելով, որ բոլորը Սպահան ուղարկվեն:

Գլուխ XLV

1683/ Նոյեմբերի 19-ին էէթեմադ-ուդ-դովլեն (Eahtemad döwlet)<sup>43</sup> կամ Պետական Կանցլերը մեր դեսպանորդների պատվին մեծ ճաշկերույթ տվեց շքեղ 1684/ մի սրահում, որտեղ հենց մուտքի մոտից հրաշալի մի տեսարան էր բացվում: Նախասենյակի կենտրոնում մի մեծ շատրվան կար, որը բավականին մեծ խողովակներով ջուր էր ցայտեցնում մարդահասակ բարձրությամբ: Գլխավոր դահ-

41 Իմա՝ mehmandār-bāši Պարսից աղբյուրի արարողակարգում հյուրընկալության հարցերով զբաղվող պաշտոնյա (տե՛ս Willem Floor, *Foreign Affairs, administration and ministry հոդվածը Encyclopædia Iranica*-ում - <http://www.iranicaonline.org/articles/foreign-affairs>):

42 Ծախ Աբասի կողմից կազմակերպված հայերի տեղահանության փուլերի, աշխարհագրական ընդգրկման եւ Իրանում նրանց տեղաբաշխման մասին ավելի մանրամասն տե՛ս Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երեւան, 1978:

43 Eahtemad döwlet (էէթեմադ-ուդ-դովլեն) - Այսպես էր կոչվում պետության առաջին վեզիրը, որ կոչվում էր նաեւ «Մեծ վեզիր» («Վեզիր-ե Ազամ»): Նա վերահսկում էր երկրի բոլոր վարչական եւ ֆինանսական գործերը, փաստորեն կատարելով միեւնոս - նախագահի եւ արտաքին գործերի միմիատրի ֆունկցիաները (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. պրակ երրորդ (1652-1731), կազմեց Կոստիկյան Ք., Երեւան, 2005, էջ 191):

լիճի պատերի վերեւի մասերում, ինչպես Սաֆրազ Բեկի տանը, տարբեր ազգութիւնների տարազներով կանանց եւրոպական կտավներ էին կախված, իսկ ներքեւի մասերում՝ տարբեր չափերի մի քանի հարյուր հայելի: Դրանք պատերի մեջ այնպես վարպետորեն էին ազուցված, որ սրահի կենտրոնում կանգնելիս սեփական անձը միաժամանակ մի քանի տեղ եւ բոլոր կողմերից կարելի էր տեսնել: Նմանատիպ հայելազարդ սրահներ կային նաեւ արքունի հանդստասենյակներում՝ կանանց մոտ:

1686/ (Նոյեմբերի) 29-ին մեզ ծանոթ երկու եղբայրները՝ Սեֆրազ Բեկը եւ Եղիա Բեկը, այցելեցին դեսպանորդներին, ընդ որում՝ պատմեցին մեզ, որ չնայած իրենք վայելում են ներկայիս Շահ Սեֆիի բարեհաճութիւնը, եւ նույն բարեհաճութիւնն էին վայելում նաեւ նրա հանդուցյալ հոր՝ Շահ Աբասի օրոք, սակայն Շահ Սեֆիի հետ կատակելը վտանգավոր է, եւ պետք է լավ մտածել, թե ի՛նչ էս խոսում նրա հետ: Մի օր լավ տրամադրութիւն մեջ, ցանկանալով ցույց տալ իր բարեսրտութիւնը Եղիա Բեկի նկատմամբ, ասել էր նրան, որ եթե թլպատվի եւ մահմեդականութիւն ընդունի, կրկնակի լավ կվերաբերվի նրան: Եղիա Բեկը կատակելով պատասխանել էր, որ զուցե մի օր այդպես էլ լինի, բայց առայժմ դրա մասին մտածելը վաղ է: Հարցն առժամանակ այդպես էլ մնացել էր: Սակայն ավելի ուշ, երբ Ռուզուֆ Ստադլերի<sup>44</sup> դատն էր գնում, եւ նրան կյանքը փրկելու ու արքայական ներման արժանացնելու համար առաջարկել էին մահ-

44 Գերմանացի 33-ամյա Ռուզուֆ Ստադլերը Յուրիխից էր եւ տարիներ շարունակ բնակվում էր Սպահանում: Նա շահի անձնական ժամագործն էր: Գերմանական դեսպանության հետ ցանկանալով վերադառնալ հայրենիք՝ շահին խնդրում է ազատել իրեն պարտականություններից: Ծախը, չցանկանալով բաց թողնել մասնագետին, խոստանում է նրան 400 ռեյխսթալեր վճարել, եթե ևս երկու տարի մնա Պարսկաստանում: Այնուամենայնիվ, ժամագործը որոշում է մեկնել: Սակայն դեպքերն այլ ընթացք են ստանում. Ստադլերը սպանում է իր տուն մտած պարսիկ կողոպտչին և հայտնվելով բանտում՝ դատապարտվում է մահվան: Ծախը խոստանում է ազատ արձակել նրան, եթե մահմեդականություն ընդունի: Ժամագործը գերադասում է մահը: Նրան մահապատժի են ենթարկում Սպահանի հրապարակում (տե՛ս *Подробное описание путешествия ... Адамом Олеариемъ*. Москва, 1870, IV, стр. 670-673):



մեղականություն ընդունել, Շահը հիշել էր եւ մարդ ուղարկել նաեւ Եղիա Բեկի մոտ, որպեսզի վերջինս իր կատակով տրված խոստումը կատարի եւ թլպատվի: Երբ Եղիա Բեկը չէր համաձայնվել, նրան բռնություններ թլպատել էին: Այդուհանդերձ, հոգում նա իսկական քրիստոնյա էր մնացել: Եվ չնայած փորձում էր, իր սովորություն համաձայն, ուրախ երեւալ, նրա ուրախությունն այլեւս առաջվա նման սրտագին ու անբռնազբոս չէր:

Գիրք V, Գլուխ VI

[731] Սպահան քաղաքն ունի վեց խոշոր արվարձան, որոնցից կարեւորագույնը եւ ամենագեղեցիկը Զուլֆան է՝ 3000 տներով ու 12 մզկիթներով: Դրանք կառույցների հարստությունը չեն զիջում քաղաքում գտնվողներին: Այդ արվարձանի բնակիչները բացառապես հայ հարուստ վաճառականներ են, որոնց Շահ Աբասը տեղահանել է Մեծ Հայքից: Նրանք շահին տարին 200 թուման հարկ են վճարում, որ պետք է հավաքեն մեզ ծանոթ Դարուղան՝ Խոսրով Սուլթանը եւ Բալանթար Սեֆրագբեկը:

[733] Չնայած ամռանը, հատկապես՝ հունիս եւ հուլիս ամիսներին Սպահանում շատ շոգ է լինում, սակայն այդ անհարմարությունն զեմ բնակիչներն ունեն դմբեթարդ, զով սենյակներ, որոնց միջով ջուր են անցկացնում, եւ որոնք ամեն կողմից բաց ու օդավետ են: Բացի սրանից, նրանք սառույցով մառաններ ունեն, որտեղ հովանալու համար ամբողջ ամառվա ընթացքում սառույց են պահում: Ընդհանրապես այստեղ ձմեռն ու ցրտերը խիստ չեն, եւ սառնամանիքի դեպքում սառույցը հազիվ մեկ մատ հաստություն է բռնում, իսկ կեսօրին հիմնականում հալչում է: Չնայած դրան այստեղի բնակիչները կարողանում են արհեստական ձեւով մի արմունկաչափ սառույց ստանալ: Այն պատրաստվում է հետեւյալ ձեւով. սառը տեղում, որը դեպի հյուսիս է նայում, քարերով մի քառանկյունի խորություն են սարքում: Դրա մեջ ողջ գիշեր, երբ ցուրտ է, ջուր են լցնում: Մեկ գիշերվա ընթացքում հազիվ կես արմունկաչափ սառույց է բռնում, ցերեկվա ընթացքում դրա վրա

տանիք են սարքում, որպեսզի հնարավորինս քիչ հալչի, իսկ հաջորդ գիշեր շարունակում են ջուր լցնել: Երբ այս ձեւով սառույցը բավականին հաստանում է, այն բաժանում են կտորների, պահում են մառաններում եւ ամռանը շատ էժան գնով վաճառում ցանկացողներին:

Գլուխ XVIII

[791] Ընդհանրապես համարվում է, որ նայած տարի, Պարսկաստանում հավաքվում է տարեկան 10-20 հազար հակ մետաքս (մեկ հակը = 216 ֆունտ = 94 կգ): Միայն Գիլանը լավ տարիներին տալիս է 8000 հակ, Շիրվանը՝ 3000 հակ, Խորասանը՝ 3000, Մազանդարանը՝ 2000, Ղարաբաղը՝ 2000, չհաշված Վրաստանը, որը նույնպես հարուստ է մետաքսով, եւ այլ բնակավայրեր: Այս քանակից օգտագործելու համար Պարսկաստանին պետք եղածը չի գերազանցում 1000 հակը: Մնացածը վաճառվում է Հնդկաստանում, Թուրքիայում, Իտալիայում, նաեւ՝ անգլիական եւ հոլանդական նավերին: Վերջիններս իրենց երկրներից բերում են անագ, պղինձ, անգլիական, հոլանդական ու ֆրանսիական կերպասներ, որոնք, պարսիկների կողմից բարձր են գնահատվում եւ թանկ արժեն, քանի որ նրանք բուրդը լավ մշակել եւ կերպաս արտադրել չգիտեն. այնպես որ, մի արմունկաչափ կերպասի համար Սպահանում վճարում են 8, 10, 12 ռեյխսթալեր:

Պարսկաստանի ամենաբազմաթիվ ու հարուստ վաճառականներն ու առեւտրի մարդիկ հայ քրիստոնյաներն են, որոնք երկրում եւ երկրից դուրս ամեն տեղ գնում են, քանի որ Պարսկաստանը ազատ ու բաց է, այլ ոչ թե մեկուսացած (փակ), ինչպես ռուսական պետությունը: Պարսկաստանի բնակիչները եւ այլազգիները կարող են գալ ու գնալ այստեղ, առեւտուր անել ու արտադրել ինչպես ուղում են, միայն թե պետությունը ստանա նրանցից իր հարկերն ու եկամուտները:

[792] Պարսիկներն ու թուրքերը պայմանագիր են կնքել, որ առեւտրականները թե՛ պատերազմական եւ թե՛ խաղաղ ժամանակ



անարգել ճամփորդեն եւ միմյանց հետ առեւտուր անեն երկրում ու նրանից դուրս, որպեսզի նրանց քարավաններն անարգել կարողանան երթեւեկել. դա հավասարապես կարեւոր է երկու երկրների ժողովուրդների համար:

Պարսիկներն իրենց առեւտրից կարող էին շատ ավելի մեծ եկամուտներ ստանալ, եթե մեծ նավեր կառավարելու փորձ ունենային եւ ընդհանրապես նավագնացութեան մեջ հմտանային: Սակայն այս արվեստը նրանց համար օտար է:

Գլուխ XXX

/852/ Հազիվ Շահ Աբասը մի խաղաղ տարի ապրեց Սպահանում, երբ լուր ստացավ, որ Թուրքիայի Սուլթանը նոր, մեծ ուժերով շուրջ 500.000-անոց զորքով, պատրաստվում է հարձակվել Պարսկաստանի վրա: Շահ Աբասը եւս անմիջապես հավաքեց մեծ զորք եւ Թավրիզում ամրանալով սպասեց թշնամուն: Միեւնույն ժամանակ Թուրքիայի սահմանի վրա գտնվող բոլոր քաղաքների ու գյուղերի բնակիչներին հրամայեց իրենց ողջ ունեցվածքով դուրս գալ այդտեղից եւ գնալ դեպի երկրի խորքերը, որպեսզի թշնամին մթերք չգտնի իր համար:

Գլուխ XXXIII

/882/ Այն աղջիկները, որոնք դուր էին գալիս Շահ Սեֆիին, պետք է 18 տարեկանից մեծ չլինեին: Շահը սովորութուն ուներ ժամանակ առ ժամանակ հետախուզել Սպահանի հայերի տները եւ խլել ամենագեղեցիկ աղջիկներին, տանել նրանց իր հարեմը դեռ 12 տարեկան հասակում, որպեսզի վստահ լինեք նրանց կուսութեան հարցում: Այս պատճառով էլ քրիստոնյա հայերը, ցանկանալով պահել իրենց գոնե փոքր-ինչ գեղեցիկ աղջիկներին, նրանց ամուսնացնում էին ամուսնական տարիքին հասնելուց շատ ավելի վաղ:

Գլուխ XXXV

/889/ Շահի տարեկան եկամուտները հասնում են հսկայական չափերի, մեր հաշվարկով՝ շուրջ 8 միլիոն ռեյխսթալերի<sup>45</sup>. ոչ միայն գավառների ու քաղաքների վճարած հարկերն են բավականաչափ շատ, այլեւ մեծ գումար են կազմում մաքսատուրքերն ու ապրանքահարկը (նաեւ նվերներից գանձվող): Միայն հարուստ Կանդահար գավառը մաքսային եւ այլ հարկերով մոտ մեկ միլիոն ռեյխսթալեր է վճարում, Երեւանն ու Բաբելոնը միասին՝ մի փոքր ավելի քիչ: Ըստ Defter-ի կամ Գրասենյակի հաշվարկների՝ Սպահանի արվարձաններն ու շրջակայքի բնակավայրերը տարեկան մուծում են 40.000 ռեյխսթալեր, իսկ նման արդյունաբերութեամբ այդպիսի բնակավայրեր պետութեան մեջ բազմաթիվ են:

Շահ Թահմասպի իշխանութեան ընթացքում բավականաչափ մաքսատներ՝ գավառների հետ միասին, անցել էին թշնամու ձեռքը: Շահ Աբասը կրկին վերադարձրեց դրանք Պարսկաստանին, իսկ Սեֆին, նորերը զբաղվելով, դրանց թիվը մեծացրեց: Ոչ միայն սահմանների վրա, այլեւ երկրի ներսում՝ առեւտրական կարեւորագույն քաղաքներում, շատ բնակավայրերում, ուր անցումներ ու կամուրջներ կան, բոլոր բնակիչները՝ ինչպես տեղաբնակները, այնպես էլ արտասահմանցիները, պետք է տուրք վճարեն: Ապրանքները, հատկապես՝ մետաքսը, մեծ եկամուտ են բերում. երկրում արտադրված մետաքսի յուրաքանչյուր հակից Շահը ստանում է 10 ռեյխսթալեր, /890/ իսկ Գիլանն, օրինակ, տալիս է 8000 հակ, Մազանդարանը՝ 2000, Շիրվանը՝ 3000, Վրաստանն ու Հայաստանը՝ 5000, Ղարաբաղը՝ 2000 հակ, չհաշված Խորասանը եւ այլ բնակավայրեր, որոնք գուցե եւ ո՛չ այդքան, բայց լավ արտադրանք են տալիս:

Յուրաքանչյուր ձիու կամ ջորու վաճառքից Շահը ստանում է մեկական արասի տուրք: Ավանակի վաճառքից՝ դրա կեսը, ցուլն արժե քառորդ թալեր կամ 6 գրոշ, իսկ ոչխարի վաճառքից (որից

45 1 ռեյխսթալերը 1566 թ. = 25.98 գ մաքուր արծաթի: 1750 թ՝ 16, 704 գ մաքուր արծաթի:



այս երկիրը տասնյակ հազարներով ունի) ստանում է 9 պֆենիգ կամ մեկ կազբեկի: Քարվանսարաները, որտեղ բնակվում են վաճառականները, տալիս են 50.000 ունյասթալեր. միայն Սպահանում 24 քարվանսարա կա, եւ յուրաքանչյուրը վճարում է 2-3 թուման: Բոլոր տեսակի առք ու վաճառքների հարկը հայտնի է: Ձկնաշատ Գիլան գետը տալիս է 20.000 ունյասթալեր: Նավթահորերը՝ 4000 ունյասթալեր: Բաղնիքներն ու հասարակաց տները տոննայից ավելի ոսկի են բերում: Այգիները ոռոգելու համար 40x30 արմունկաչափ տարածքի համար վճարվում է 9 աբասի: Միայն Սպահանի Զենդերուդ գետը բերում է 16.000 ունյասթալեր: Հայ քրիստոնյաները, որոնք երկրում մի քանի հարյուր հազար են, յուրաքանչյուրը տարին վճարում է երկու ունյասթալեր: Նույնիսկ տասմերերից հարկ է դանձվում: ...

## ԳԱԲՐԻԵԼ ԴԸ ՇԻՆՈՆ

Գաբրիել դը Շինոնը (1610-1660)՝ Ֆրանսիացի Վեղարավորների (capucin) միաբանությունից, 1640 թ. ուղարկվել է Սպահան, ուր քսան տարուց ավելի հոգեւոր գործունեություն է ծավալել՝ լավագույնս տիրապետելով պարսկերենին, հայերենին, թուրքերենին՝ եւ արեւելյան այլ լեզուների: Մեծ հեղինակություն է ձեռք բերել արքունի շրջանակներում եւ որոշ հաջողություն է ունեցել հայ ունեւոր խավի կաթողիկոսման գործում, ինչն էլ զայրացրել է Նոր Զուղայի հոգեւոր վերնախավին: Վերջինս կարողացել է արտաքսել նրան Նոր Զուղայից: Շինոնն իր հոգեւոր գործունեությունը շարունակել է Վրաստանում, Քրդստանի լեռներում, ապա՝ Հայաստանում<sup>46</sup>:

Երեւանի խանը, որի երեխաներին նա աստղաբաշխության դասեր էր տալիս, նրան մատուռ կառուցելու արտոնություն է տվել: Զգալի չափով նրան հովանավորել է նաեւ Ազարիա Ավագը<sup>47</sup>: Ի դեպ Ազարիա Ավագին 1660 թ. կաթողիկոսական հավատքին էր ներգրավել հենց Գաբրիել դը Շինոնը: Վերջինս, Ֆրանսուա Պիկեի հետ միասին, միջնորդել էր, որպեսզի նա ուսումը շարունակի Հռոմի Հավատաստիյուռ ժողովի Ուրբանյան վարժարանում<sup>48</sup>:

Երեւանը եւ նրա շրջակայքը Շինոնի հոգեւոր գործունեության եւ մանավանդ հավատացյալների կաթողիկոսման համար ամենեւին նպաստավոր վայր չէին՝ կաթողիկ հայերի բացակայության պատճառով: Նրա կառուցած մատուռը քարկոծվել ու ավերվել է Հայ հոգեւոր խավի եւ հավատացյալ ժողովրդի կողմից, իսկ

46 St'au Michaud L. G., op. cit., t.16, 1816, p. 220; Thomas D., Chesworth J., *Christian-Muslim Relations. A Bibliographical History*. Vol. 9, Western and Southern Europe (1600-1700), Brill, 2017, p. 529-538. Մեմենեան Հ. Ս., *Նախիջեւանի հայոց վարժարանը*, Վեմետիկ, Ս. Ղազար, 2000, էջ 139-145:

47 Ազարիա Ավագի մասին տե՛ս Kevorkian R. H., *Diplomatie et Mouvement de liberation arménien de la guerre de Candie au siège de Vienne (1683)*, - Moyen Orient et Océan Indien, VI, 1989, pp. 21-23.

48 Նույն տեղում, 7a հավելվածը, էջ 40:



Շինոնն ինքը Հալաթանքների ու Ֆիզիկական ծեծի է ենթարկվել ու մահացել 1660 թ.:

Նրա մահը մեծ աղմուկ է բարձրացրել Եւրոպայի աշխարհիկ եւ հոգեւոր շրջանակներում, բազմաթիւ նամակներ են ուղղվել Պարսկաստանի իշխանութիւններին: Երեւանի խանը սպառնալիքներով դիմել է Հայ հոգեւոր իշխանութեանը՝ պնդելով, որ Շինոնի հուղարկւածութիւնը հոգեւորականին վայել խորհրդով կատարվի. այլապես սպառնում էր ավերակի վերածել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանքը՝ քարը քարին չթողնելով: Գաբրիել դը Շինոնին հուղարկւածութիւնը են հայկական ծեսով եւ թաղել երկու հանգուցյալ եպիսկոպոսների հարեւանութեամբ: Նրա տապանաքարին գրված էր հետեւյալը. «Այս է տապան պատուականագոյն հոգեւոր Հօրն մերոյ Պազրէ Գաբրիէլին դա Շինոն Քարոզողին ի Քարուչիւնից կարգէն, երկրորդ առաքելոյն եւ լուսաւորչի Հայոց ազգին. վերափոխեցաւ ի յայս կենացս լի արդեամբ եւ առաքինութեամբ, ի թիւ Տեառն 1668»<sup>49</sup>:

Թարգմանութիւնը կատարվել է հետեւյալ հրատարակութիւններից. [P. Gabriel de Chinon], *Relations nouvelles du Levant, ou traités de la Religion, du gouvernement et des coütumes des Perses, des Arméniens, et des Gaures...*, et donnée au public, par le sieur L. M. P. D. E. T. [Louis Moreri prêtre, docteur en théologie] [P.G.D.C.], Lyon, MDCLXXI (1671):

Գաբրիել դը Շինոնի Ակարագրութիւնից

Գիրք երկրորդ. Հայերի կրոնի, կառավարման եւ սովորոյթների մասին... /250/

Այս ազատատենչ ազգը ծայրահեղ դժվար է կառավարել. նա ազատութիւնը գերադասում է ամեն տեսակ տիրապետութիւնից, նույնիսկ չի ուզում ապրել մեկ թագավորի իշխանութեան տակ, եւ շատ հաճախ ապստամբել է իր իսկ արքաների դեմ եւ այդ ապս-

49 Michel Febure, *Théâtre de la Turquie*, ..., Paris, 1682, p. 142.

տամբութիւնները մեծ գլխացավանք են պատճառել իրեն: Սա էլ առիթ է հանդիսացել պարսիկներին նրան ենթարկել իրենց եւ այս միջոցով նրանք տիրացել են Հայերի երկրին, նրանց դարձրել Հպատակ, ինչպես որ մինչեւ այժմ ապրում են:

Այս ազգը, եթե խնամքով վարժեցվի, գենքի գործածութեան մեջ շատ հմուտ է: /251/ Հայերը շատ ուժեղ են, լավ կազմվածք ունեն, եւ կազմվածքի նմանութեամբ մոտ են զվիցերացիներին: Ըստ որոշ պատմաբանների՝ դրանք նույն ընտանիքին են պատկանում եւ արեւնակից են: Նրանք ապացուցում են, որ այս վերջիններս մի ժամանակ Ասիայից անցնելով Եւրոպա՝ բազմացել են եւ մեծ հեղինակութիւն են ձեռք բերել իրենց գենքի ուժով: Ինչ էլ որ լինի, չենք կարող ժխտել, որ Դարեհի՝ Ալեքսանդրի դեմ մղած պատերազմում նրա ամենալավ ուստիկանախումբը Հայերից էր բաղկացած:

Սրանք այսօր առավելապես հետեւակ են, քան հեծյալ: ...

Սպահանի մոտ՝ Ջուլֆայում ապրող Հայերը, գուցե իրենց ազգի ամենաազնւագարմ այրերի ժառանգները չեն, այդուհանդերձ այսօր շատ աշալուրջ են եւ շատ ավելի հարուստ, /252/ քան Պարսկաստանի ու Թուրքիայի տարածքում սփռված բոլոր մյուս հայկական համայնքները: Նրանք նաեւ այնպիսի մեծ հեղինակութիւն են ձեռք բերել իրենց առեւտրի եւ կուտակած հարստութեան շնորհիւ, որ հույսը դնում են միայն իրենց վրա: Եվ նույնիսկ նրանց պատրիարքը, որի նստավայրը Երեւանի մոտ է, ընտրվելուց հետո սովորաբար այստեղ է գալիս ներկայանալու՝ որպէս Հայոց եկեղեցու ամենաազնւական եւ գլխավոր թեմ: Հնարավոր է, որ սա արվում է նաեւ շահադիտական նպատակներից ելնելով: Սովորաբար նա Ջուլֆայից վերադառնում է նվերներով, որոնք տալիս են վաճառականները՝ ի վկայութիւն իրենց երախտագիտութեան ու մեծարանքի:

/253/ Մեծ գավթիչ եւ առավել մեծ քաղաքագետ Շահ Աբասը Թուրքերի ձեռքից Երեւանը, ինչպէս նաեւ նրանից ոչ հեռու գտնվող Հին Ջուլֆան գրավելուց հետո, իմանալով, որ Կոստանդնուպոլսից մի մեծ բանակ է գալիս դեպի Երեւան ու Թավրիզ՝ այդ տարածքները գրավելու նպատակով, արդեն լավ վաճառականների



Համբավ ունեցող Զուլֆայի բնակիչներին փրկելու պատրվակով տեղափոխում է՝ հույս ունենալով /254/ նրանց միջոցով Հարստացնել իր երկիրը: Ստիպում է նրանց լքել իրենց հին բնակարանները՝ խոստանալով ավելի լավերը տրամադրել իր երկրում, գուցե եւ՝ առավել վստահելի, համենայն դեպս՝ զորքով պաշտպանված. նրանք գտնվելու էին իր արքայական քաղաքում, ուր նրանց պաշտպանելու էր իր սեփական ժողովրդի պես: Նա այդպես էլ անում է. նրանց մի գեղեցիկ տարածք է տրամադրում Սպահանից կես լյո հեռավորության վրա, ուր նրանք իրենց Նոր Զուլֆան են կառուցում: Այստեղ այժմ նվազագույնը չորս հազար տուն կա, եւ առեւտրի շնորհիվ բնակիչների հարստանալուն զուգընթաց, դրանք համալրվել են նոր կառույցներով:

Այս փոքրիկ հանրապետության կառավարումը Շահը հանձնում է Հայի՝ խոջա Սաֆարին, ապա խոջա Նազար<sup>50</sup> անունով նրա եղբորը, ով Զուլֆայի այժմյան կառավարիչների հայրն է<sup>51</sup>: Եվ որպեսզի հավաստիացնի, որ նրանց վերաբերվում է որպես լիիրավ քաղաքացիների, այլ ոչ որպես ստրուկների՝ կիսով չափ պակասցնում է այն հարկը, որ նրանք տալիս էին Մեծ Տիրոջը<sup>52</sup> վերջինիս իշխանության տակ գտնվելու տարիներին՝ բավարարվելով տարեկան հինգ հարյուր թումանով, /255/ որը, առանց պարսիկների միջամտության, հայերն իրենք էին հավաքում: Նրանց վեճերը եւ դատական գործերը հսկելու համար մի դարուղա (Derogha) է տրամադրում, որը բավականին հեղինակություն ուներ երկրում: Սակայն նա Զուլֆայում չէր նստում: Խոջան բոլոր գործերն ինքն էր

50 Ծաֆիխասենց կամ Սաֆրազյան գերդաստանից խոջա Խաչիկի (Հիմ Զուղայի քալանթար) որդիները՝ Սաֆարը (քալանթարի պաշտոնում՝ 1605-1618 թթ.) եւ Նազարը (քալանթարի պաշտոնում՝ 1618-1636 թթ.): Նազարից հետո՝ նրա որդի՝ խոջա Սարֆրազը (քալանթարի պաշտոնում՝ 1636-1656 թթ.): Այս մասին տե՛ս Խաչիկյան Ծ., *Աշխ.*, էջ 29-30:  
51 Նոր Զուղայում հայ քալանթարների իրավա-քաղաքական կարգավիճակի մասին մանրամասն տե՛ս Барсегов Ю. Г., *Консульские учреждения в истории Армении.* - «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 69-79; 1983, № 1, էջ 43-57:  
52 Իմա՝ Օսմանյան Սուլթանից:

անում, վեճերն ինքն էր հարթում եւ դարուղայի<sup>53</sup> մարդկանց ծառայեցնում էր իր բարապանների պես. հրամայում էր անել այն, ինչ ինքն էր ցանկանում: Եվ եթե պատժի կամ տուգանքի արժանի դեպք էր պատահում, նա դարուղայի սպաներին թույլ էր տալիս զբաղվել դրանով՝ առանց պատահական գանձումներ անելու:

Նրանք (հայերը - է. թ.) պարտավորված էին նաեւ տարեկան հիսուն թուման վճարել դարուղային, որը սերտ հարաբերությունների մեջ էր խոջայի եւ նրա մարդկանց հետ: Նույնիսկ սպան այնքան էր հարգում նրան, որ նրա ներկայությամբ երբեք չէր նստում, միայն եթե վերջինս ձեռքով նստելու նշան էր անում: Որքան ջուղայեցիները հարստանում էին առեւտրի շնորհիվ, /256/ այնքան Շահ Աբասը բարեհաճությամբ էր լցվում նրանց հանդեպ: Նա այնպիսի հարգանք էր տածում այժմյան կառավարչի հոր նկատմամբ, որ նրան վերաբերվում էր ավելի շուտ որպես հավասարի, քան որպես ենթակայի, եթե չասենք պատերազմի ընթացքում գերեվարվածի: Նրանք հաճախ միասին էին ճաշում եւ միմյանց լավ խոսքեր էին ասում, ինչը մեծ հաճույք էր պատճառում արքային: Նույնիսկ ասում են, որ Շահ Աբասը նրան կույր էր անվանում, որովհետեւ մի քիչ շիլ էր: Իսկ խոջան նրան պատասխանում էր, որ կույրը արքան է, քանի որ ծնվել է կույր հորից, ով նախանձից կուլրացրել էր նաեւ իր երեխաներից մի քանիսին: Եվ նրանք այսպես հաճելիորեն շարունակում էին իրենց կատակաբանությունները:

Մի օր արքան ծիծաղելով հարցնում է, թե ինչու խոջա Նազարը եւ նրա ազգակիցները մահամեղականություն չեն ընդունում վստահեցնելով, որ իրենց հավատին մնալով երբեք դրախտ չեն ընկնի: «Միր, - պատասխանում է վերջինս, - հայերն այնքան ընդդիմադիր են պարսիկներին, /257/ եւ նրանց հավատքն այնքան է իրենց հեռացնում Մուհամմեդի կրոնից, որ ամենեւին չի հետաքրքրում, թե մահից հետո ուր կգնան, միայն թե նրանց չհանդիպեն: Դժոխքը, ուր նրանց ընկերակցությունից ազատ կլինեն,

53 Դարուղայի մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 22:



նրանց ավելի հաճելի կլինի, քան դրախտը, ուր կլինեն այդ մարդկանց հետ»։ Պատասխանը չափազանց ուղղակի էր արքային ծիծաղ չպատճառելու համար։ Վերջինս մեծ հաճույք էր ստանում այդ հեզնական շեշտից եւ առավել սաստիկ էր համակրում խոջային, որին խելացի էր համարում։ Նա լավ խորհուրդներ էր տալիս իրեն, երբ դիմում էր նրան պետական խնդիրներով։

Հայ Կառավարիչն այնքան անկաշկանդ ու ազատ էր Շահ Աբասի հետ իր հարաբերություններում, որ իրենց տաղավար տոններից Վարդավառի (Vartivover) ժամանակ, որ Տիրոջ վերափոխման տոնն է եւ որի ընթացքում մեծ զվարճություններ են կազմակերպում ու սովորություն ունեն ջուր ցանել իրար վրա, Արքան Հյուրընկալվում է խոջա Նազարի տանը։ Վերջինս կանչել է տալիս /258/ վարտիք-շապիկ հագած մի խումբ երիտասարդների, ինչպես որ նրանք այդ օրը հագնվում էին, իրար թրջելու եւ Նորին Գերագանցությունը զվարճացնելու համար։ Շահ Աբասին շատ է դուր գալիս այս խաղը, եւ իր իշխանավորներից մի քանիսին թրջելուց հետո հրամայում է անցնել խոջա Նազարին ու նրան դեցիլ ավազանի մեջ, ինչը հաճույքով անում են։ Արքան նրան ծաղրում է՝ այդպես թրջված տեսնելով, իսկ խոջան իրեն հատուկ համարձակություններ, որ վստահ էր՝ հաճելի է արքային, նույն մարդկանց հրամայում է ջուր ցանել Շահ Աբասի վրա, ինչը նրանք առանց երկյուղելու անում են։ Արքան սկսում է ծիծաղել։ Երբ թիկնապահներից ոմանք անբարեհաճ վերաբերմունք են ցույց տալիս այդ իրողությունը, արքան բարձրաձայն նկատում է, որ հայերը մեծ հավատքով են լցված իրենց սուրբ արարողությունների նկատմամբ եւ այն տարածում են անխտիր բոլորի վրա. եթե չէին ուզում թրջվել, ուրեմն չպետք է /259/ գային այս տոնակատարությունը։

Հայերը մեծ շքեղությամբ են տոնում նաեւ Աստվածահայտնություն օրը եւ Հիսուս Քրիստոսի մկրտությունը։ Շահ Աբասը նրանց հաճույք պատճառելու համար երբեք չէր բացակայում այս արարողություններից, եթե Սպահանում էր լինում, եւ համբերությամբ մասնակցում էր երկուսից երեք ժամ տեւող արարողության։

նր։ Այնուհետեւ նրանց ձեռքից խմիչք էր վերցնում եւ համտեսում էր գետեզրին իր համար պատրաստած մսեղենը։ Օրվա մնացած մասը հաճախ անց էր կացնում խոջայի տանը։ Չգիտեմ, թե ի՞նչ սնտախապաշտական զգացողություն էր ունենում նրա տունն այցելելով, սակայն հայերը նկատել էին, որ Կանդազարի եւ Բաղդադի գրավման նախօրեներին, որոնք նրան հեշտությամբ էին տրվել, նա գիշերել էր խոջայի տանը եւ նույնիսկ վերջինիս ասել էր, որ այդպես է անում, /260/ որովհետեւ նկատել է, որ դա նրան հաջողություն է բերում։

Սրանից կարելի է դուրսբերել եզրակացնել, որ Պարսկաստանի խաներն ու մեծավորները, իմանալով արքայի՝ նրա հանդեպ ունեցած եւ ամեն առիթով ցույց տրվող բարեհաճությունը, իրենք ե՛լս հարգում էին խոջա Նազարին։ Հայերն այսպիսով պարսիկների կողմից որեւէ վատ վերաբերմունքի չէին արժանանում, քանի որ պաշտպանվում էին այդպիսի հզոր իշխանավորի կողմից։ Նրանք օգտվում էին ամեն տեսակի, այդ թվում նաեւ կրոնի ազատությունից։ Ասում են, որ երբ ուզում էին եկեղեցի կառուցել Ջուլֆայում, արքան նրանց մոտ էր ուղարկում իր թմբկահարներին եւ շեփորահարներին՝ բանվորներին ոգեւորելու համար, հատկապես որպեսզի բոլոր մյուս ազգերի նման, չմոռանան խմել արքայի կենացը։ Ահա անկասկած արքաներից մեկի բարի կամքի մեծ արտահայտությունը։ Նա պաշտպանում էր հայերին՝ թույլ չտալով իր հավատակիցներին անբարյացկամորեն վերաբերվել նրանց։

Պատմում են, որ մի օր հայերից մեկը պարսիկ է սպանում, /261/ հանգուցյալի ծնողները բողոքում են Շահ Աբասին, ով վեճը հարթելու համար կաշառքի միջոցով փորձում է լուեցնել նրանց։ Սակայն վերջիններս մերժում են՝ ցանկանալով օրենքի ուժով վրեժխնդիր լինել հանցագործից։ Արքան նպատակադրվել էր փրկել վերջինիս, որը նույնիսկ ինչ որ տեղ նեղացրել էր խոջա Նազարին։ Ասում է նրանց, որ իրենց օրենքով մարդկային արյունը գին ունի, բայց խոսքն իրենց պես հավատացյալի արյան մասին է։ Իսկ անհավատ հայերի արյունն ավելի բարձր գին ունի, քանի որ ավելի



մեծ մեղք է սպանել անհավատին, որը բազմաթիվ պարտքեր ունի տալու Աստծուն իր անհավատություն պատճառով, քան՝ հավատացյալին, ով այսպես թե այնպես դրախտ է գնալու: Արքան ասում է նրանց, որ եթե իր ցանկացած գումարը տան, քրիստոնյային նրանց ձեռքը կտա՝ վրեժխնդիր լինելու համար: Սակայն գումարն այնքան /262/ մեծ էր, որ նրանք բավարարվում են քչով, եւ այս ձեռով Արքան փրկում է հայի կյանքը՝ սրանով ավելի ջերմացնելով նրանց իր ազգակիցների հետ:

Ինձ վստահեցրին նաեւ, որ Շահ Աբասը արգելել էր ծխախոտի օգտագործումը՝ մի քաղաքականություն, որ բնական էր նրա համար: Մեղավորները խստիվ պատժվում էին՝ կրակի վրա հրկիզվելով կամ փորը բացելով: Շատերն արդեն պատժվել էին այս հրամանին հակադրվելու համար: Մի հայ քահանա մեղադրվեց, եւ Սպահանի դատավորները նրան հրկիզման ներկայացրին: Արքան Սպահանում չէր, եւ խոջա Նազարը նրան գտավ Կազբինում՝ խնդրելով կյանք շնորհել քահանային: Արքան պատասխանեց, որ օրենքին չի կարող հակառակվել, խստորեն պատժել է շատերին, նույնիսկ իր մեծավորներից մեկի՝ Ղզլբաշի թիկնապահին է մահվան դատապարտել: Սակայն, որպեսզի /263/ դոհացնի խոջային, խոստացավ կարգադրել, որ դատավճիռը Ջուլֆայում իրականացվի, ուր հեշտ կլինի քահանային փրկել դահճի ձեռքերից: Դատավճռի իրականացման օրը խարույկը վառվեց Ջուլֆայի հրապարակում, եւ դատավորները քահանային ուղեկցեցին այնտեղ: Խոջա Նազարը կանանց կարգադրել էր մոտերքում լինել եւ դատավորներին դազանակածեծ անելով՝ փրկել քահանային նրանց ձեռքից, ինչն էլ հաջողություն բերեց: Չնայած նրանք հայհոյում էին արքային, սակայն համարվեց, որ հայերը դժվար կառավարվող ազգ են, ու նրանց համար թանկ է իրենց քահանայի պատիվը բարձր պահելը եւ, ամեն հնարք կգործադրեն, որպեսզի չտեսնեն նրան խարույկի վրա այրվելիս:

Արքան ընդգծված բարեհաճություն ուներ հայերի նկատմամբ, եւ հատուկ երախտադիտություն պաշտպանում էր /264/ թե՛ նրանց ունեցվածքը, թե՛ մարդկանց: Ավելին՝ նրանց թույլ էր տա-

լիս մնալ իրենց հավատքին, եւ կարծես դժգոհ չէր, որ նրանցից եւ ոչ մեկն իր հավատքը չի լքում մահամեղադանություն ընդունելու համար: Նա կարող էր դա քաղաքական նպատակներից ելնելով անել, սակայն հասկանում էր, որ հայերը, որպես քրիստոնյա, ազատ ու հեշտ մուտք ունեն Ֆրանսիա՝ իրենց առեւտուրն իրականացնելու նպատակով, ինչն այնքան էլ հեշտ չէր իր ազգակիցների համար: Իր ազգեցությունն ուներ նաեւ խոջա Նազարին չնեղացնելու հանգամանքը. վերջինս շատ բարեպաշտ էր իր հավատքի մեջ: Հակառակ դեպքում ձեռքի թեթեւ շարժումով ողջ Ջուլֆայի բնակչությունն իր դեմ կարող էր հանել:

Մի օր մեկը, դժգոհելով, կամ գուցե գաղտնի շահ հետապնդելով, եկավ Շահ Աբասի մոտ՝ ցանկանալով մահամեղադանություն ընդունել: Քաղաքագետ արքան հարցրեց խոջա Նազարին, որն այդ ժամանակ իր մոտ էր գտնվում, թե ո՞վ է այդ մարդը, որ ուզում է փոխել հավատքը: Խոջան պատասխանեց, որ նա մի ոչնչություն է, եւ ապավինելով մահամեղադանությունը՝ ավելի ազատ կրոն է փնտրում: /265/ Ուստի Արքան, դիմելով յուրայիններին, ասաց. «Նրանք, ովքեր իրենցից ոչինչ չեն ներկայացնում, դերվիշներ են: Հայերի խեղկատակները՝ պետք է մեզ մոտ հայտնվեն, կարծես մահամեղադանների կրոնը խելապակասների օթեւանն է: Հարցրեք այդ անպիտանին երկու թուճման ունի՞ ինձ տալու՝ այն մեծ շնորհը ստանալու համար, որով ակնկալում է մեր հավատքին միանալ»: Խեղճ մարդը, որ մտածում էր պարսիկների մեջ հենարան ու վայելք գտնել, տեսնելով, որ իրենից փող են ուզում՝ ամոթահար փախավ եւ այլեւս երբեք չխոսեց մահամեղադանություն ընդունելու մասին: Այս օրինակներին անդրադարձա՝ ցույց տալու համար, թե որքան երջանիկ են հայերն այս երկրում հաստատվելուց հետո՝ Շահ Աբասի տիրապետության ներքո, ով, քնքշորեն սիրելով նրանց կառավարչին, շարունակաբար շնորհվող պատիվներով նրան տիրակալ է դարձնում:



/266/ Երբ խոջան վախճանվեց, կառավարչի պաշտոնում նրան փոխարինեց որդին՝ խոջա Սաֆրագը<sup>54</sup>, սակայն ոչ լիակատար իշխանությամբ, որովհետեւ Ջուլֆայի բնակիչները, որոնք ավելի, քան զվիցերացիները սաստիկ նախանձախնդիր էին իրենց ազատության հարցում եւ Շահ Աբասի տիրապետության շրջանում դժվարությամբ կրեցին խոջա Նազարի իշխանությունը, որի թիկունքում կանգնած էր Շահը, տեսնելով, որ խոջա Նազարի մահից հետո նրա որդին ուզում է հոր քաղաքականությունը վարել, որոշեցին խաղ խաղալ նրա գլխին եւ նվազեցնել այն իշխանությունը, որ նրանց անտանելի մեծ էր թվում, այն էլ՝ այնպիսի մեկի կողմից, ով ոչ մի առավելություն չուներ իրենց հանդեպ, բացի պաշտպանված լինելուց եւ փողից: /267/ Ժամանակի ընթացքում նրա դեմ դրեցին իրենց ներկայացուցչին, որը քսան հազար թուման հարստություն ուներ: Նրա հայրն այս գումարը նրան էր ժառանգել իրենց խանութը վաճառելուց հետո:

Նա իր դրամով հնարավորն արեց նպատակին հասնելու համար՝ այս խոջային պաշտոնանկ անելով եւ դրավելով նրա տեղը: Ծիշտ է, այդ պաշտոնը նա կարողացավ պահել ընդամենը երկու տարի: Դրանից հետո մեկ ուրիշը, ով պահպանել էր իր հարստությունը եւ, ի տարբերություն այս մեկի, խելացի լինելու շնորհն ուներ, անցավ իր պարտականություններին, սակայն՝ ոչ նախկին իրավասություններով: Ջուլֆայի ամենակարող անհատները քաղաք հրավիրեցին դարուղայի տեղապահին, ով կարողացավ նրանց օգնությամբ եւ նրանց միջոցներով այնպես անել, որ կառավարչի իրավասությունները բավականաչափ նվազեն: Եթե այս խոջան կարողանար կաշկանդել իր տրամադրությունները եւ (իր ենթակաների հետ) առավելապես զբաղվեր ազգային գործերով, /268/ այլ ոչ թե իշխեք նրանց վրա որպես ստրուկների, սիրված եւ հարգված կլինեք եւ ոչ ոքից չէր վախենա ինչպես ողջ Պարսկաստանում, մանավանդ իրեն պաշտպանող արքայից: Սակայն եթե տրամադրու-

թյունները չկարողանա հաղթահարել եւ նվաստացնի իր պաշտոնը, ինչպես որ սկսել էր անել իր կառավարման առաջին իսկ օրերից՝ դեռ հոր կենդանության օրոք, ստիպված կլինի այնքան շատ տառապել, որ վար կգնի պարտականությունները:

Ընդդիմադիր ջուղայեցիները այնքան համոզված էին, որ կառավարիչը չի վերադառնա իր նախկին իրավասություններին, որ երբ իմացան, որ արքան խոստացել է նրան հյուրընկալել, կանխեցին այդ իրադարձությունը՝ մեծամեծներին նվերներ ուղարկելով (կաշառելով), որպեսզի վերջիններս համոզեն արքային փոխել իր մտադրությունը: Այս անտակառություն պատճառն այն էր, որ նրանք իրենց նախկին համոզմունքին չէին, ինչպես իրենց լիակատար միություն ժամանակ: Նրանք շատ լավ գիտեին, որ իրենց (հասարակությունը) քանդվում է, եւ իրենք արհամարհված են դառնում պարսիկների կողմից, որոնք ահաբեկում են իրենց Ջուլֆայում, հատկապես այժմ, /269/ երբ արդարադատությունն առավել ինքնուրույն են իրագործում: Ուստի, չնայած իրենց կառավարչի եւ նրա գործունեության հանդեպ ունեցած հակակրանքին, գերադասեցին զիջել, քան տեսնել նրան տիրոջ պես իրենց իշխելուց: Այս մասնատվածության պատճառով ժողովուրդը շատ է տառապում եւ շատ կուզեր ավելի շուտ առաջին վիճակի մեջ գտնվել, որտեղ առավել մեծ ազատություններից էր օգտվում: Այս խոջան, իր ուզածի նման չկարողանալով կառավարել, բավարարվում էր այն արտոնություններով, որոնք իրեն տրված էին: Նրա տունն, արքայի պալատից հետո, անկասկած երկրի ամենագեղեցիկ տներից մեկն էր եւ լավագույնս կահավորված էր: Բացի դրանից, ասում են, որ նրա հարստությունը տասներկու հազար թուման էր, եւ իր գործակալների միջոցով՝ շրջանառության մեջ էր գտնվում: Նրա թշնամիները հաճախ խանդարում էին նրանց (իրենց պարտականությունների կատարման մեջ), քանի որ առաջվա պես չէին վախենում նրանից: Իսկ Պարսկաստանի ավագանին նրա նկատմամբ համարում ուներ եւ մեծ հարգանք:

54 Իմա՝ խոջա Նազարի որդի խոջա Սաֆրագը (քալսմթարի պաշտոնում՝ 1636-1656 թթ.), որի «Հայոց թագավոր» էիմ կոչում (Տե՛ս Խաչիկյան Ը., Գշվ. աշխ.):



/266/ Երբ խոջան վախճանվեց, կառավարչի պաշտոնում նրան փոխարինեց որդին՝ խոջա Սաֆրազը<sup>54</sup>, սակայն ոչ լիակատար իշխանություններ, որովհետեւ Զուլֆայի բնակիչները, որոնք ավելի, քան զվիցերացիները սաստիկ նախանձախնդիր էին իրենց ազատության հարցում եւ Շահ Աբասի տիրապետության շրջանում դժվարություններ կրեցին խոջա Նազարի իշխանությունը, որի թիկունքում կանգնած էր Շահը, տեսնելով, որ խոջա Նազարի մահից հետո նրա որդին ուզում է հոր քաղաքականությունը վարել, որոշեցին խաղ խաղալ նրա գլխին եւ նվազեցնել այն իշխանությունը, որ նրանց անտանելի մեծ էր թվում, այն էլ՝ այնպիսի մեկի կողմից, ով ոչ մի առավելություն չունեւ իրենց հանդեպ, բացի պաշտպանված լինելուց եւ փողից: /267/ Ժամանակի ընթացքում նրա ղեմ գրեցին իրենց ներկայացուցչին, որը քսան հազար թուման հարստություն ուներ: Նրա հայրն այս գումարը նրան էր ժառանգել իրենց խանութը վաճառելուց հետո:

Նա իր դրամով հնարավորն արեց նպատակին հասնելու համար՝ այս խոջային պաշտոնանկ անելով եւ զբաղելով նրա տեղը: Ծիշտ է, այդ պաշտոնը նա կարողացավ պահել ընդամենը երկու տարի: Դրանից հետո մեկ ուրիշը, ով պահպանել էր իր հարստությունը եւ, ի տարբերություն այս մեկի, խելացի լինելու շնորհն ուներ, անցավ իր պարտականություններին, սակայն՝ ոչ նախկին իրավասություններով: Զուլֆայի ամենակարող անհատները քաղաք հրավիրեցին դարուղայի տեղապահին, ով կարողացավ նրանց օգնություններ եւ նրանց միջոցներով այնպես անել, որ կառավարչի իրավասությունները բավականաչափ նվազեն: Եթե այս խոջան կարողանար կաշկանդել իր տրամադրությունները եւ (իր ենթակաների հետ) առավելապես զբաղվեր ազգային գործերով, /268/ այլ ոչ թե իշխեր նրանց վրա որպես ստրուկների, սիրված եւ հարգված կլինեւ եւ ոչ ոքից չէր վախենա ինչպես ողջ Պարսկաստանում, մանավանդ իրեն պաշտպանող արքայից: Սակայն եթե տրամադրու-

թյունները չկարողանա հաղթահարել եւ նվաստացնի իր պաշտոնը, ինչպես որ սկսել էր անել իր կառավարման առաջին իսկ օրերից՝ դեռ հոր կենդանության օրոք, ստիպված կլինի այնքան շատ տառապել, որ վար կդնի պարտականությունները:

Ընդգրիմադիր շուղայեցիները այնքան համոզված էին, որ կառավարիչը չի վերագառնա իր նախկին իրավասություններին, որ երբ իմացան, որ արքան խոստացել է նրան հյուրընկալել, կանխեցին այդ իրադարձությունը՝ մեծամեծներին նվերներ ուղարկելով (կաշառելով), որպեսզի վերջիններս համոզեն արքային փոխել իր մտադրությունը: Այս անտակտություն պատճառն այն էր, որ նրանք իրենց նախկին համոզմունքին չէին, ինչպես իրենց լիակատար միություն ժամանակ: Նրանք շատ լավ գիտեին, որ իրենց (հասարակությունը) քանդվում է, եւ իրենք արհամարհված են դառնում պարսիկների կողմից, որոնք ահաբեկում են իրենց Զուլֆայում, հատկապես այժմ, /269/ երբ արդարադատությունն առավել ինքնուրույն են իրագործում: Ուստի, չնայած իրենց կառավարչի եւ նրա գործունեության հանդեպ ունեցած հակակրանքին, գերադասեցին զիջել, քան տեսնել նրան տիրոջ պես իրենց իշխելուց: Այս մասնատվածության պատճառով ժողովուրդը շատ է տառապում եւ շատ կուզեր ավելի շուտ առաջին վիճակի մեջ գտնվել, որտեղ առավել մեծ ազատություններից էր օգտվում: Այս խոջան, իր ուզածի նման չկարողանալով կառավարել, բավարարվում էր այն արտոնություններով, որոնք իրեն տրված էին: Նրա տունն, արքայի պալատից հետո, անկասկած երկրի ամենագեղեցիկ տներից մեկն էր եւ լավագույնս կահավորված էր: Բացի դրանից, ասում են, որ նրա հարստությունը տասներկու հազար թուման էր, եւ իր գործակալների միջոցով՝ շրջանառության մեջ էր գտնվում: Նրա թշնամիները հաճախ խանդարում էին նրանց (իրենց պարտականությունների կատարման մեջ), քանի որ առաջվա պես չէին վախենում նրանից: Իսկ Պարսկաստանի ավագանին նրա նկատմամբ համարում ուներ եւ մեծ հարգանք:

54 Իմա՝ խոջա Նազարի որդի խոջա Սաֆրազը (քալամթարի պաշտոնում՝ 1636-1656 թթ.), որիմ «Հայոց թագավոր» էին կոչում (Տե՛ս Խաչիկյան Թ., Աշվ. աշխ.):



/270/ Ինչ վերաբերում է հոգեւորին, Զուղայի հայերն ունեն եպիսկոպոս, ով չնայած առաջին կարգն է գրավում նրանց եկեղեցում իրենց պատրիարքից հետո, այնուամենայնիվ արքեպիսկոպոսի կոչում էի ստանում, քանի որ պաշտոնը կորցնելով՝ կորցնում է նաև անունը: Նրան մեծապես պաշտում են ժողովրդի մեջ, եւ նա մեծ ազդեցութիւն ունի իր թեմում, ու խստորեն պատժում է, երբ նրանք իրենց պարտականութիւնները չեն կատարում:

Գլուխ III, § I

Մկրտութեան եւ մի քանի հատուկ արարողությունների մասին, որ Գրանք պահպանում են

/271/ Չեմ կարծում, որ աշխարհում կա ժողովուրդ, որ հայերից առավել երկյուղածութեամբ ու հաստատակամութեամբ հավատարիմ է իր սովորութիւններին: Եթե Յրանսիայում ինձ պատմեին այն, ինչ մտածում եմ շարադրել. վստահեցնում եմ ձեզ, սր դժվարութեամբ կհավատայի դրա կեսին անգամ: Այդուհանդերձ, /272/ կխնդրեի վստահել ինձ, քանի որ չափազանցութեամբ տուրք չեմ տվել եւ շարադրել եմ որպէս վկա ամեն ինչը մի քանի անգամ ստուգելուց հետո:

Սկսելով նրանց մկրտութիւնից՝ ասեմ, որ իր ողջ արարողակարգով այն շատ նման է մեր ծեսին: Այս Սուրբ ծեսը նրանք մեծ շքեղութեամբ են տոնում, եւ Սուրբ օծումն (լվացումը) ու ընկղմումը կատարում են միասին: Հետո նրանք անպայման հաղորդութիւն են տալիս փոքրիկ երեխային, որը դեռ նույնիսկ ի վիճակի չէ կուլ տալ, ուստի նրանք Քրիստոսի արյան մեջ թաթախելով նրա մարմինը՝ դրանով շփում են մանկիկի շթունքներն իրենց սովորութիւն համաձայն: Մկրտութեան Սուրբ Ավագանի վրա երեխային գրկում է կնքահայրը, քանի որ այս ժողովրդի մոտ կնքամոր պաշտոնը ընդունված չէ: Մկրտութիւնից հետո կնքահայրը, մի քանի հոգեւորականների ուղեկցութեամբ, սաղմոսներ երգելով, ձեռքերի վրա երեխային տանում է ծնողների տուն: /273/ Կնքահայրը երեսային տալիս է անկողնում պառկած մորը, որը համբուրում է նրա

ոտքը եւ այդ ժամանակից սկսած չի խոսում կնքահոր հետ ու հնարավորինս խուսափում է նրան հանդիպելուց, ինչպես իրենք են ասում՝ հարգանքին տուրք տալով եւ իրենց կնքած հոգեւոր խնամութեան պայմանը հարգելով: Երբ հարցրի, թե ինչն է պատճառը, որ նոր կնքվածի մայրը համբուրում է իր ընտանիքի կնքահոր ոտքը, ոչ ոք չկարողացավ պատասխանել<sup>55</sup>: ...

§ II

Հայերի ամուսնությունը, Գորահարսների լուսությունն ու ստրկությունը

/274/ Հայերը, եւ հատկապէս ջուղայեցիները, սովորութիւն ունեն երեխաներին շատ վաղ հասակում ամուսնացնել՝ նրանց ավելի երկար պահելու եւ թուրքերի (մահմեդականների) առեւանգումներից խուսափելու համար: Փեսացուին անվանում են «թագավոր» եւ /275/ հարսանիքի նախորդ օրը, Ս. Պսակին հրավիրված բազմաթիվ երիտասարդների ուղեկցութեամբ ձիերով, թմբուկներով, հորոյներով ու շեփորներով գնում են քաղաքից դուրս զբոսնելու: Նրանցից յուրաքանչյուրին՝ հնարավորութեան դեպքում փեսան մեկական բաճկոն է նվիրում: Ուշ երեկոյան վերադառնում են իրենց կառավարչի տունը, կանգնում նրա դռան առջեւ եւ շեփորներով ողջունում նրան: Ապա Ս. Պսակի «թագավորը», ինչպէս կոչում են նրան, իջնում է ձիուց եւ իր շքախմբի երեւելիներից մի քանիսի հետ մտնում է խոջայի տուն՝ նրա ձեռքը համբուրելու: Խոջան բազմաթիվ օրհնութեան խոսքեր է ասում՝ նրա ամուսնութիւնն այս հողի վրա երջանիկ տեսնելու եւ գեղեցիկ սերունդ ունենալու ակնկալութեամբ: Թեթեւ Հյուրասիրութիւնից հետո նորափեսան կրկին միանում է իր շքախմբին, որը նրան տուն է առաջնորդում:

Առավոտյան նույն շքախումբը նրան վերցնում է տնից եւ տանում նորահարսի տուն: Վերջինիս ուղեկցում են եկեղեցի, ուր նրանք /276/ պսակվում են շքեղ հանդիսավորութեամբ: Ս. Պսակի վերջին՝ երրորդ օրն այս երիտասարդ տղաներն անցկացնում են մեծ

55 Հեղինակի կարծիքով ավանդույթը վերցված է Ելից, Դ գրքից:



արարողությամբ իրենց սրերով հավերի գլուխներ թոցնելով եւ երեկոյան ընթրիքին այդ հավերը ճաշակելով: Արդեն իր սկեսրոջ տանը գտնվող նորահարսն առավելապես ակնկալում է սպասուհու պաշտոնին, քան տանտիրուհու: Իր ամուսնութեան օրվանից սկսած նա համր է եւ ընդհանրապես չի կարող խոսել: Ինչպես բոլոր ամուսնացած կանայք, նա ծածկվում է քթի ծայրից մինչեւ կզակի տակն այնպես, որ միայն դեմքի կեսն է երեւում: Այսպես համալրելով համբերի շարքը՝ նա ո՛չ կարող է խոսել, ո՛չ էլ հարցերին պատասխանել, այդ թվում՝ իր սկեսրոջ հարցերին: Միայն շարժումներով է բացատրում, ինչը բավականին հաճելի լեզու է իրենց մոտ, եւ իրար շատ լավ են հասկանում:

Մեր Հայերից մեկն ինձ պատմեց, որ մի օր, երբ գնացել է այցելելու հակոբիկյան դավանանք ունեցող մի աղջկա, /277/ ում երիտասարդ հասակից բարեպաշտութեան էր վարժեցրել, եւ որը վերջերս մի հայի հետ էր ամուսնացել, կարծել է, թե նա ամուսնությունից հետո համրացել է: Ցանկանալով խոսել աղջկա հետ սկեսուրի մոտ՝ անակնկալի է եկել, երբ վերջինս նրան նշաններով եւ ծամածռություններով է պատասխանել: Հոգեւորականին թվացել է, թե աղջկան ինչ-որ բան է պատահել ամուսնությունից հետո: Սակայն սկեսուրը բացել է գաղտնիքը՝ բացատրելով, որ նորահարսերին արգելված է բերանը բացել ու հարցերին պատասխանել:

Քանի որ սկեսուրները համարում են, որ այս չխոսկանությունն իրենց նկատմամբ հարգանքի նշան է, հարսներն այն պահում են հնարավորինս երկար: Կան հարսներ, որ տասը տարի ապրում են այս համրութեան մեջ, մյուսները՝ հինգ կամ վեց տարի, որից հետո նրանց լեզուն բացվում է, եւ նրանք կարող են խոսել, բայց սկեսուրի հետ սեղան չեն կարող նստել, ինչն ավելի /278/ տարօրինակ է: Նրանք կարող են ճաշել իրենց ներքի հետ, եթե ապրում են նույն հարկի տակ, կամ երեխաների հետ, որոնք նրանց համար միջնորդ են այլոց եւ նույնիսկ իրենց սկեսուրների հետ հաղորդակցվելու համար, եթե միայն նշաններով չեն կարողանում բացատրել իրենց ուզածը: Այս հարսներն, իրենց կարծիքով, ավելի

մեծ հարգանք են տածում սկեսրարների հանդեպ, որոնց հետ ոչ միայն չեն խոսում, այլեւ նրանց ներկայութեամբ չեն էլ երեւում, զգուշութեամբ խուսափում են նրանցից: Նրանք ազատ կարող են խոսել միայն իրենց ամուսինների հետ, սակայն երբեք սեղան չեն նստում նրանց հետ, եւ այլոց ներկայութեամբ էլ նրանց հետ չեն խոսում: Սա տարօրինակ մի սովորույթ է, որ խստութեամբ պահպանում են նույնիսկ իրենց եղբայրների հետ, որոնց ներկայութեամբ էլ ամուսնությունից հետո իրավունք չունեն ճաշել:

Տարիներ առաջ այստեղ մի հայ վարդապետ կար՝ նրանցից, /279/ որոնց Փրանկ էին կոչում, որն ապրում էր Նախիջեւանում, ուր կաթոլիկություն էր ընդունել: Նա դժգոհում էր այս խստաբարո եւ վայրենի սովորույթից եւ ասում էր, որ այդպես էլ չկարողացավ հասնել այն բանին, որ քույրն իր հետ սեղան նստի: Նա մեզ վստահեցնում էր, որ կանայք կարծում են, որ իրենց պատվից ու հարգանքից ինչ-որ բան կպակասի, եթե խախտեն այդ ավանդույթները, եւ դրանք շատ ավելի հեշտ է շարունակականորեն պահպանել՝ առանց մեծ ջանքեր գործադրելու: Սակայն կա մի բան, որ նրանց պետք է թույլատրվի: Իրենց սկեսրոջ կենդանութեան օրոք նրանք տան մեջ ոչինչ կառավարելու իրավունք չունեն: Մեր կանայք, իշխանությունը պահելու եւ իրենց հարգել տալու համար բոլոր դարակների բանալիները պահում են իրենց մոտ եւ հարսներին թույլ չեն տալիս ինքնուրույն որեւէ բան անել՝ նրանց մշտապես ստրկական վիճակում պահելով: Այս պատճառով էլ վերջիններին մեծ /280/ ցավ չի պատճառում նրանց մահը:

Ձուլֆայի մեծավորներից մեկի տանը տեսել եմ շատ հիվանդ մի ծեր կնոջ, որը բանալիները նույնիսկ մահվան մահճում էր պահում իր մոտ. այնպես որ, տան համար անհրաժեշտ իրերն ունենալու համար նրա՛ն պետք է դիմեին՝ բանալիներն անմիջապես վերադարձնելու պայմանով: Հարսը նվազագույնը քառասունհինգ տարեկան կլիներ, եւ մի քանի ամուսնացած տղա ուներ, որոնք արդեն իրենք ընտանիքի հայր էին: Սակայն այդ տարիքում անգամ նա



պարտավոր էր ենթարկվել սկեսուրին, որի մահը գուցե եւ չորս անգամ արդեն ցանկացել էր:

§ III

Այն մեծ համարումը, որ հայերն ունեն հարգանքի հանդեպ, մանավանդ երեխաների, ում նկատմամբ փոխադարձ հարգանք ունեն

/281/ Հայերը շատ մեծ ակնածանք ունեն հարգանքի հանդեպ եւ կարծում են, որ մեծ անքաղաքավարություն կամ նույնիսկ մեղք կլինի, եթե սովորութի համաձայն չհարգեն այն մարդկանց, որոնց պարտավոր են հարգել: Իմ փորձից ելնելով՝ կարող եմ ասել, որ նրանք շատ են հարգում, օրինակ, հոգեւորականներին եւ մեծ ակնածանքով են ընդունում նրանց խորհուրդները: Նրանք իրենց պատրիարքների կամ իրենց առաջնորդների մասին կատարյալ պաշտամունքով են խոսում եւ, ինչպես նկատեցի, իրենք իրենց են մեղադրում որեւէ հոգեւոր պարտականություն չկատարելու դեպքում: /282/ Այնպես որ, այս ժողովուրդների մոտ հարգված է այն ընդհանուր աքսիոմն ըստ որի. *honor est in honorato, sed non in honorante* (հարգված մարդու մեջ հարգանք կա, բայց ոչ հարգողի մեջ): Ընտանիքի որդիներն իրենց ծնողների հետ չեն խորհրդակցում, չեն զրուցում, չգիտեն նրանց ընդունակությունները, պարզապես նրանց ընդունում են որպես իրենց տիրոջ, որից կախում ունեն: ...

... Եղբայրները եւս միմյանց հանդեպ մեծ հարգանք ունեն, /283/ հատկապես՝ փոքրերը մեծերի նկատմամբ: Փոքրերը երբեք առանց գլուխը շուռ տալու մեծերի ներկայությամբ չեն համարձակվում խմել, ինչը մեծ ակնածանքի կամ մեծարանքի նշան է: Ականատես եմ եղել՝ ինչպես են ամուսնացած մեծ մարդիկ, որոնք երեխաներ ունեն, նման վերաբերմունք ցույց տալիս իրենց ավագներին: ...

§ IV

Հայերի տոները

Հայերի հարսանեկան արարողության մասին խոսելուց հետո, կարծում եմ, /284/ իզուր չի լինի մի քանի խոսք ասել նրանց հյուրասիրությունների մասին, որոնք շատ գեղեցիկ են: Սրանում, ինչպես նաեւ շատ այլ բաներում, նրանք գերազանցում են պարսիկներին: Երբ բոլոր հրավիրվածները հավաքված են եւ ըստ երկրի սովորության գորգերի վրա նստած, նախ հյուրասիրում են որոշ անուշեղեն (*confitures*), ինչպես նաեւ՝ շաքարեղեն կամ շաքարով ու մեղրով պատրաստված խմորեղեն: Հետո հրամցնում են օղի: Ապա բերում են խաշած կամ թերխաշ սառը հավիթներ, նաեւ՝ խաշած, տապակած ու շոգեխաշած հավեր եւ ոչխարի տապակած միս: Ապա բերում են խաշած բրինձ, արգանակ, ամբողջական եփված ոչխարներ կամ գառնուկներ, խոճկորներ՝ այլ մսեղենի հետ միասին: Սեղանակիցներից երկուսը կամ երեքը կտրատում են միսը եւ բաժանում հյուրերին: Ծաշի ընթացքում նրանք քիչ են խմում, գուցե՝ ավելի ուշ: Հետո /285/ մեծ մրգամաններով բավականին մաքուր միրգ են հյուրասիրում:

Այս ճաշկերույթից հետո, որից բոլորը շատ գոհ են մնում, նոր սփռոցներ են փռվում. հարուստներինը հաճախ ոսկեկար եւ արծաթակար կերպասներից են լինում: Հյուրասիրում են ամեն տեսակի մրգեր, եւ այս ժամանակ է սկսվում գինարբուքը՝ ազգային երաժշտական գործիքների մեղեդիների ներքո. նրանք բավականին վարպետորեն են նվագում: Սա հաճախ հինգ-վեց ժամ է տեւում, եւ հարբածներին որոշակի նշանից հետո (որ ձեռքից ձեռք անցնող մրգի կամ երաժշտական գործիքի տեսքով է լինում) տանում են սենյակից: Սեղանապետը խմում է երեք-չորս մեծ բաժակ գինի՝ առանց բաժակը ձեռքից վայր դնելու, եւ այն հանձնում է հաջորդին՝ նույնը անելու համար: Նա, ով հրավիրում է որեւէ մեկին խմելու, առաջինը միշտ ինքն է խմում, ապա լցնելով նույն բաժակը՝ հանձնում է հյուրին: Այս երկրորդ ճաշից հետո /286/ բերել են տալիս անուշահոտությունները, վարդի եւ նարնջի ջրերը, որոնք



նրանք առատորեն քսում են հյուրերի գլխին, մորուքին: Դուրս գալիս հարկ է կանգ առնել հյուրընկալի դռան առջեւ. վերջինս կրկին ուտելիք է բերել տալիս ու հյուրասիրում է, եւ հաճախ դա ժամից ավելի է տեւում: Ասենք նաեւ, որ մեծ անպատվութիւն է հրաժարվել հյուրասիրված բաժակից: Քանի որ հյուրասիրութիւնը երկար է տեւում, հյուրերը կարող են վեր կենալ սեղանից՝ իրենց պետքերը հոգալու համար, եւ դա բնական է: Ի վերջո ջուղահայերը բավականին հրաշալի են իրենց հյուրասիրութիւններում, բայց դրանից դուրս շատ ժլատ են ու շատ համեստ են ապրում:

§ V

Հայերի հուղարկավորությունը, հանգուցյալների հիշատակին մատուցված արարողություններն ու աղոթքները

/287/ Երբ հայերը մահանում են, նրանց երեխաները կամ ժառանգները ողորմութիւն են բաժանում՝ նրանց հիշատակը հավերժացնելու համար: Ծիշտ է, նրանք մեծ ողորմութիւններ են անում աղքատներին, բայց քմծիծաղ է շարժում այն, որ ավելի շատ ծախսում են սեղանի վրա՝ իրենց մխիթարելու եկած հյուրերին հյուրասիրելու համար: Դրա համար էլ իրենց ազգականի մահից հետո առաջին բանը, որ անում են, թափաններն ու շամփուրները պատրաստելն է: Եվ այս սովորույթն այնպես է արմատացած նրանց մեջ, որ չնայած վարդապետների դիմադրութեանը, նրանք շարունակում են այն կիրառել եւ ավելի շուտ տուճը կվաճառեն, քան /288/ կհրաժարվեն դրանից:

Սեղան է դրվում նաեւ մահից հետո յոթերորդ, տասնչորսերորդ եւ քառասունչորրորդ օրը՝ Հանգուցյալի հոգու հանգստութեան համար: Մեծ սեղան է դրվում նաեւ Հանգուցյալի մահվան տարին լրանալուց հետո: Նրանք, ովքեր իրենց ծնողների հիշատակը վառ են ուզում պահել, այս հյուրասիրութիւնները շարունակում են նաեւ իրենց ողջ կյանքի ընթացքում: Կան մարդիկ, որոնք փոքրիկ տներ են կառուցում իրենց հայրերի գերեզմանների վրա, եւ ամեն

տարի անպայման կարգին ճաշկերույթ են տալիս այնտեղ իրենց ազգականների ու ընկերների համար, ինչպես նաեւ կանչում են նվագարկուների, որոնց երաժշտութեան ներքո էլ խմում են հանգուցյալների կենացը: Նրանք հավատում են, որ իրենց ծախսերը շուրջորեն հատուցված են, երբ իրենց սեղանակիցները, բաժակները ձեռքներին, օրհնում են իրենց ծնողների հիշատակը եւ երկնքում ամեն տեսակ երջանկութիւն ցանկանում նրանց:

Առավել խստորեն սուգի շրջանը պահելու նպատակով կանայք /289/ մինչեւ Հանգուցյալի մահվան տարին լրանալը տնից դուրս չեն գալիս: Այս ընթացքում հարկ չկա նրանց համոզել գնալ աղոթելու: Հանգուցյալներն արծաթե խաչ են ժառանգում իրենց եկեղեցուն, մեծ կամ փոքր՝ իրենց ջերմեռանդութեան եւ իրենց հնարավորութիւնների համեմատ: Հանգուցյալի անունը փորագրված է լինում խաչի վրա: Բոլոր տներում հանգուցյալի հիշատակին գիշերները մի լամպ վառ են թողնում: Այս բոլոր արարողութիւններից ու ջերմեռանդութիւնից բացի, որ նրանք անում են մահացածների հիշատակը հարգելու համար, նրանք ունեն նաեւ հիշատակի հինգ օր. իրենց ամենամեծ տոների նախորդ օրը գնում են գերեզմանատուն՝ հանգուցյալների համար աղոթելու: Այս ամենը խորհելու առիթ է տալիս. արդյո՞ք նրանք չեն հավատում Քավարանին եւ այսքան աղոթում են դեռեւս այնտեղ (Քավարանում) գտնվողների համար:

§ VI

Ամուսնացածների եւ հատկապէս քահանաների որոշ սովորույթների եւ այն մեծ հարգանքի մասին, որ ունեն Ս. պատարագին տրված գոհաբերութեան հանդէպ

/290/ Երբ արքան հավաքագրում է հայերի որոշ կանանց, նրանց զեղեցկութեան համար, կամ երբ կինը մահանալուց հետո է ընդունում, նրանց ամուսիններին թույլատրվում է ուրիշի հետ ամուսնանալ: Մի օր ես համարձակութիւն ունեցա այս մասին զրուցել նրանց եպիսկոպոսներից մեկի հետ՝ ասելով, որ դա օրինա-



կան չի կարող լինել, եւ անդրադարձա Սուրբ Գրության տողերին, որոնք հակառակվում էին այս սովորույթին: Նա ինձ բացատրեց, որ սա թույլատրում են առավել մեծ դժբախտութիւնից՝ նրանց մահմեդական դառնալուց խուսափելու համար: Ավելացրեց նաեւ, որ այս հավաքագրված կանայք, կամ այն կանայք, որոնք /292/ իրենց կամքով մահմեդականութիւն են ընդունել, մահացած են համարվում թէ՛ քաղաքացիական եւ թէ՛ հոգեւոր օրենքներով: Հարկ էր բավարարվել այս պատասխանով, քանի որ հնարավոր չէր նրանց հակառակը համոզել:

Ինչպես նկատեցի, քահանաներն ամուսնացած էին: Այդուհանդերձ, քահանայութեան շրջանում նրանք չեն կարող ամուսնանալ, սակայն քահանա կարո՞ղ են դառնալ, եթե ամուսնացած են: Բայց եթե կորցնում են իրենց կնոջը, իրենց սովորույթի համաձայն, ողջ կյանքն այրի են մնում: Տարիքով փոքրերին նույնիսկ թույլատրված չէ խոստովանեցնել: Վարդապետները, որոնք երբեք չեն ամուսնանում, կանանց չեն խոստովանեցնում, միայն՝ տղամարդկանց: Նոր օծված քահանաները նույնիսկ մեկ-երկու տարի եկեղեցուց տուն էլ չեն գնում, եւ այնտեղ ապրում են այնքան ժամանակ, քանի դեռ ամեն օր պատարագում են: Այս ժամկետը լրանալուց հետո /292/ պատարագում են ամեն շաբաթ եւ քանի դեռ նոր քահանա չեն օծվել, իրենց կանանց մոտենալու իրավունք չունեն: Նրանք սովորույթ ունեն բաժանվել իրենց կնոջից Սուրբ պատարագը մատուցելուց մեկ շաբաթ առաջ, ինչը մեծ հարգանքի նշան է, որ տածում են այս կասկածելի շնորհի (mistère) հանդեպ: Նրանք ինձ ասացին, որ պատարագ մատուցելու նախորդ գիշերը հորիզոնական դիրքով չեն պառկում՝ իրենց խոր հանգստի ընթացքում բնական որեւէ սայթաքում թույլ չտալու համար:

§ VII

Ինչ հնարքով եւ ժառանգները գրկվում ծնողների ունեցվածքը ժառանգելուց

Պարսիկները մի շատ հրեշավոր օրենք<sup>56</sup> ունեն, որը մահմեդականութիւն ընդունած քրիստոնյաներին թույլ է տալիս տեր կանգնել ծնողների ողջ ունեցվածքին՝ զրկելով դրանից առավել մոտ կանգնած /293/ արյունակիցներին: Նրանք երկու միջոց էին գտել այս անտանելի հարստահարութիւնից խուսափելու համար, որը կարճ ժամանակի ընթացքում կարող էր վերացնել քրիստոնեութիւնն այս տարածքներում: Առաջինը չհաստատել տվյալ ծնողների ժառանգները լինելու փաստը, ինչն ապացուցելու համար դուրսութեամբ երգվում են: Մահմեդականութիւն ընդունելու պատճառով նրանք կարող են իրենց ծնողներին չճանաչել եւ վարդապետները նրանց վրայից հանում են բարոյական բոլոր պարտականութիւնները: Այս հրաժարումից հետո, հակառակ փաստարկը դատավորի մոտ ապացուցելու համար, նրանք հարյուր հեղինակավոր վկաներ պետք է բերեն: Վերջիններս հարուստ մուսուլմաններ պետք է լինեն, այսինքն այնպիսի կարգավիճակում, որ դատարանը վստահ լինի նրանց անկաշառութեան մեջ:

Երկրորդ միջոցը, որից օգտվեցին հայերն այս սխալ օրենքը շրջանցելու համար նրանց հուշեցին հենց իրենք՝ դատավորները: Դա որոշ երաշխիքի դիմաց իրենց ողջ ունեցվածքի փոխանցումն է որեւէ վստահելի պարսիկի՝ իրենց /294/ ընկերներից: Այսպիսով ունեցվածքի տիրոջից, որը ժամանակավորապես է տնօրինում այն, որեւէ դավանափոխ չի կարող ժառանգութեան ակնկալութիւն ունենալ հանգուցյալի մահվանից հետո, քանի որ այն մահմեդականի

56 Այս օրենքի գործունեության մասին Արեւելյան Հայաստանում տե՛ս Հ. Դ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, - Բանբեր Մատենադարանի, հտ. 3, Երևան, 1956, էջ 88-91; Կարապետյան Մ. Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը եւ արեւելահայերը (17-18-րդ դդ.), ՊԲՀ, 1988, 1, էջ 219-221; Գույնի, Le Diocèse arménien catholique du Nakhitchévan. Formation ethnique et processus ethno-confessionnels aux XVII-XVIII siècles, - Roma-Armenia, sous la direction de Claude Mutafian, Roma, 1999, pp. 322-326.



ձեռքերում է գտնվում, եւ վերջինս կարող է այն տնօրինել Հանգուցյալի կամքի համաձայն: Բայց սրա համար պետք է վատահ լինել ընկերոջ հավատարմութեան վրա, այլապես կարող է վատ վերջանալ, եւ ինձ նույնիսկ ասացին, որ նման դեպք պատահել է վերջերս:

§ VIII

Հայերը խիստ օրինաչափորեն են պահպանում գաղտնի խոստովանությունը եւ պահքի կախվածությունը

Լեվանտի բոլոր քրիստոնյաների մեջ Հայերից բացի չեմ տեսել մի այլ ազգ /295/, որն այդքան օրինաչափորեն պահում է խոստովանության խորհուրդը: Հայերի մոտ մեծ հանցանք է համարվում առանց նախօրոք պատրաստվելու, առանց մեղքերից ազատվելու Սրբություն ընդունել՝ խոստովանել: Ծիշտ է, քչերն են ըստ արժանվույն հատուցում այն, անտանելի ապաշխարություններին ամեն ոք չէ որ դիմանում է: Քահանաներ կան, որոնք որոշ վարձատրութեան դիմաց համաձայնվում են ապաշխարողի փոխարեն իրենք ապաշխարել, եթե նա որոշ խիստ ապաշխարանքներ հարկադրելուց հետո հրաժարվում է: Սա փոքր-ինչ ներելի է, եւ ինչպես իրենք ինձ պատմեցին, որոշ ժամանակ առաջ իրենց եպիսկոպոսներից մեկն ասել է, որ սա արվում է քահանաների եկամուտների սղութեան պատճառով, որոնք բավական անկայուն են եւ հիմնված են ծխականների նվիրատվութեանների վրա, որն ըստ էութեան չի կարող նրանց կարիքներն ապահովել:

Արդեն խոսել եմ պահքի մասին, որ նրանք պահում են տարվա առնվազն հինգ ամիսների ընթացքում: Մոռացա ասել, որ Ջատկից մինչեւ Համբարձման տոնը նրանք բաշխում են բոլոր չորեքշաբթիներն ու ուրբաթները: Երբ մի օր մեր Հայրերից մեկը Հարցրեց պատճառը, նրանք /296/ հաճույքով մեջբերեցին Ս. Ղուկասի ավետարանից այս հատվածը. «Միթէ կարո՞ղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել: Եկեսցեն աւուրք

յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ»<sup>57</sup>:

§ IX

Հայերի տոները

Հարութեան տոնից (Fête Résurrection) հետո Հայերը մեծ շքեղութեամբ Աստվածաշայտնութեան տոնն են տոնում, որին Հիսուս Քրիստոսի մկրտութեան շնորհիվ նրանք Ջորջհեք (Benediction de l'Eau) անունն են տալիս: Ինչպես ասացի մենք էլ ենք նույն օրն այն տոնում: Երբ պարսից արքան Սպահանում է, սովորաբար նա մասնակցում է այս արարողութեանը, որը մեծ շքեղութեամբ է տոնվում: Շուրջ յոթանասուն քահանաներ գալիս են գետափ՝ բոլորը /297/ շատ թանկարժեք շուրջառններով՝ յուրաքանչյուրի ձեռքին ոսկե կամ արծաթե խաչ: Սարկավազներն ու արեղանները եւս գալիս են շապիկներ ու սպիտակ պատմուճաններ հագած՝ յուրաքանչյուրը արծաթակազմ մի պետարան ձեռքին: Ողջ Ջուլֆան մասնակցում է այս արարողութեանը: Եկեղեցում օգտագործվող երաժշտական գործիքների ուղեկցութեամբ նրանք բավական երկար սաղմոսերգում են: Ապա եպիսկոպոսը՝ քահանայապետական հանդիսավորութեամբ զգեստավորված՝ գլխավոր վարդապետների եւ քահանաների ուղեկցութեամբ նստում է այս առիթով պատրաստված մի նավակ եւ անցնում գետի մյուս կողմը, ուր Արքան է գտնվում ողջ արքունիքի հետ: Նրա ներկայութեամբ նավակի մեջ բավական սաղմոսերգելուց հետո եպիսկոպոսը մյուսոնը լցնում է ջրի մեջ, եւ նույնիսկ ջուրն է նետում այն սրվակը, որի մեջ Սուրբ Ջուրն էր: Արքային հաճոյանելու համար բազմաթիվ լողորդներ ջուրն են նետվում այդ սրվակը գտնելու համար: Գտնողը որոշ պարգեւատրում է ստանում արքայից: Նրանք արժանի են ամեն տեսակ պարգեւատրման, տարվա այդ ամենացուրտ եղանակին իրենց առողջութեանը նման ձեւով վտանգելով: /298/ Երբ արարողութեանն ավարտվում է, պատրիարքը հարյուրավոր օրհնանքներ է տալիս արքային, որը օրվա

57 Ղուկ. Ե 34-35:



մնացած մասը Հաճախ անցկացնում է Ջուլֆայի կառավարչի տանը: Լսել եմ եւ նույնիսկ որոշ տեղեր կարդացել եմ, որ Հայերը Տիրոջ Ս. Ծնունդը ամենեւին չեն նշում: Այնինչ Հաստատ է, որ նրանք այն տոնում են Հենց այս նույն օրը, եւ Ս. Ծննդյան պատարագը կատարում են նախորդ օրվա երեկոյից սկսած: Մի անգամ Հարցրի, թե ինչու նրանք այն չեն տոնում Լեվանտի մյուս քրիստոնյաների նման՝ տասնմեկ օր առաջ: Նրանք քահանաներից մեկը բացատրեց, որ իրենք հիմնվում են Ս. Ղուկասի ավետարանի մի հատվածի վրա, ըստ որի Հիսուս Քրիստոսը Ս. Հովհաննեսի կողմից մկրտվեց երեսուն տարեկան Հասակում հավանաբար Ս. Ծննդյան օրը, եւ մենք ավելի քան իրավունք ունենք այն տոնելու նրա կնունքի օրը: Ես նրան պատասխանեցի, որ այս հատվածում մի բառ կա, որը ցույց է տալիս /299/ որ ո՛չ տարիները եւ ո՛չ էլ օրերը բացարձակապես սահմանադատված չեն: Իսկապես Ղուկասի ավետարանում այդպիսի գլուխ կա՝ Հիսուսը մոտավորապես երեսուն տարեկան էր<sup>58</sup>: Այն ինչ ճիշտ համարվեց, նույնիսկ ավետարանում: Ես մտածում էի այս հարցին նայել առավելի գործնական ձևով՝ մի այլ կողմից՝ մտածելով, որ գուցե Հետաձգեն Տյառնընդառաջը եւ մոտեցնեն Ավետման (Annonciation) տոնը: Սակայն իրենց պատասխաններից հասկացա, որ նրանք ունեն ե՛լ մեկը, ե՛լ մյուսը, եւ որ Տեսառնընդառաջը (Purification) տոնում են Տիրոջ Ս. Ծնունդից (Nativité de notre Seigneur) քառասուն օր հետո, ինչպես թույլատրված է Ղեւտացոց (Levitique) գրքում եւ Ս. Ավետման տոնը՝ Տիրոջ ծնունդից ինը ամիս առաջ: Այլ տեղում խոսեցի Այլակերպություն (Fête de Transfiguration, իմա՝ Վարդավառ - է. Թ.) տոնի արարողությունների մասին, այն մերից շատ չի տարբերվում:

Գլուխ IV

/300/ Այն բարեգործությունները, որոնք իրագործել են

58 «Եւ ինքն էր Յիսուս՝ էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ՝ որոց որպէս կարծէր որդի Յովսէփեայն» (Ղուկ. Գ, 23):

միսիոներները Սպահանի եւ Ջուլֆայի հայերի մեջ իրենց այստեղ հաստատման շրջանից մինչ այժմ

IV, I

Միսիայի գործունեության գերազանցությունը (excellence): Ավգուստինյանները հայերի մեջ. Նրանցից շատերի հավատորացությունը եւ հակոբիկյաններից մեկի ամխոհեմ եռանդը:

/301/ ... Խոսենք այն միսիոներների մասին, որոնք կցված էին անհավատների հավատափոխության գործընթացին եւ նրանց գործունեության մասին Սպահանում՝ հատկապես Հերձվածող Հայերի շրջանում: Պարսիկների մեջ աշխատող առաջին ավգուստինյան միսիոներները<sup>59</sup> առիթ ունեցան օգտակար լինել նաեւ այս Հերձվածողներին եւ շատ չարչարվեցին այս մոլորյալ ազգին ճշմարիտ ճանապարհի բերելու ուղղությամբ: Նրանց գալուց քիչ անց, Շահ Աբասը (Հայերի) մեծ բազմություն բերեց իր մայրաքաղաք, ինչի մասին արդեն խոսել եմ: Քանի որ նրանք պատրաստ չէին կորցնել իրենց խաղաղությունը եւ ունեցվածքը՝ նրանք Հենց սկզբից այստեղ ծայրահեղ կարիքի մեջ ընկան: Միսիոներները, որոնք /302/ աշխատելու առիթ էին փնտրում, դեպքերի այս բարեհաջող համադրումն իրենց համար ցանկալի համարելով, այս ազգի թշվառության մեջ ձգտեցին նրանց ընտելացնել ու նրանց հրապուրեցին

59 Ավգուստինյան միաբանության անդամները շուրաֆայ բնակչության կողքին են եղել Օսմ. Աբասի գաղթի օրերից սկսած, որի նկարագրությունը հանդիպում ենք պորտուգալացի ավգուստինյան հոգևորական Անտոնիո դե Գուվեայի մեծարժեք աշխատության մեջ (*Relation des grandes guerres et victoires par le roy de Perse Shah Abbas ... par P. Fr. Antoine de Gouvea*, Rouan, 1646, pp. 341-362), (տե՛ս նաեւ Թաշիրյան Է., ճշվ. աշխ. էջ 6, 99-112): Պարսկաստանում իրենց գործունեությունը ծավալող առաջին (պորտուգալացի) ավգուստինյան միսիոներներից էին Antonio de Gouvicia-ն, Diogo de Santa Ana-ն, Bernardo de Azevedo-ն եւ այլք: Պարսկաստանում Ավգուստինյան միաբանության գործունեության մասին տե՛ս Alonso Carlos, O.S.A., *El Convento Agustiniiano de Ispahan durante el periodo 1621-1671*, Analecta Augustiniana, vol. XXXVI, 1973, pp. 247-308; Flannery J. M., *The Mission of the Portuguese Augustinians to Persia and Beyond (1602-1747)*, by Studies in Christian Mission, vol. 43, Brill, Leiden, Boston 2013.



այն ողորմություններով, որ երկար ժամանակ շարունակում էին անել: Պետք է կասկածել, որ այս միջոցով նրանք շատ ժողովուրդների մոտեցրին Արբուլթյուններին, եւ սրանից օգտվելով ծանոթացրին իրենց պարտականություններին, սովորեցրին իրական երջանկության հասնելու միջոցները:

Առիթը ներկայացել էր, որի շնորհիվ նրանք մտածում էին հոգեւոր ավար ձեռք բերել: Սակայն նրանց ակնկալիքները չիրականացան: Պարսիկների քինախնդրությունն ավերեց նրանց բոլոր նպատակները: Շահ Աբասը խեղճ հայերին գաղթեցնելով այստեղ, եւ տեսնելով այն թշվառությունը, որի մեջ հայտնվել էին, ընակեցումն ապահովելուց հետո ցանկացավ օգտակար լինել նրանց՝ թշվառությունը հաղթահարելու համար: Դրա համար նա ամենաազգասերներին որոշ քանակությամբ մետաքս բաժանեց, /303/ որպէսզի առեւտրի միջոցով կարողանան իրենց ապրուստը վաստակել: Մետաքսը տվեց երկրում ընդունված գնով, պայմանով, որ մի քանի տարի անց վերադարձնեն հիմնական գումարը, իսկ եկամուտը՝ եթե կարողանային քաղել՝ ամբողջովին թողնում էր նրանց: Այդ գումարը արքային վերադարձնելու համար նրանք պատասխանատու էին իրենց սերունդներով: Այն ինչ կարիքն առանց դիտավորության ստիպեց նրանց անել, որոշ ուղղվածություն էր ենթադրում, որն ի վերջո հավատքի կորուստն էր: Հավատափոխների մեծ մասը նույնիսկ չհասկացավ, թե ինչպես կարողացավ գնալ դրան: Եթե լավ գործարարներ լինեին, մետաքսը կարժենար այն գինը, որ վճարել էին: Այսպիսով, եթե վերահաստատվելը չհաջողվեր, նրանց ձեռքին ոչինչ չէր մնում: Արքան նրանց շտապեցնում էր, սակայն ապարդյուն, ումից պահանջում էր, ի վիճակի չէին նրան բավարարել:

Այդ միջոցին այնտեղ գտնվող ավգուստինյան մի եպիսկոպոս<sup>60</sup>, Աստծո Փառքի շնորհով եւ Հավատքի հանդեպ մեծ եռանդով ոգեւորված, որն իր կարծիքով ի դեմս հայերի վտանգված էր

60 Խոսքը հավանաբար Հ. Դիեգո դե Սանտա Անայի մասին է, տե՛ս Flannery J. M., op. cit. pp 135-139.

համարում, /304/ վստահ էր, թե այս առիթով այդ խեղճ մարդկանց փրկելով մահամեղախնդրությունից, նրանց է՛լ ավելի կերջանկացնի Հռոմեական Եկեղեցուն հնազանդեցնելով եւ ցույց տալով, թե ինչո՞վ պետք է վճարեն Աստծուն: Առաջարկությունն ուրախությամբ ընդունվեց եւ նա սկսեց հավաքել հարկ եղած գումարը: Իր կողմից էլ դրեց մոտ հարյուր թուման՝ իր ողջ ունեցածը: Կարմելիտները եւս իրենց կարողացածի չափ դրեցին, եւ ինչ որ պակասեց՝ բոլորը միասին կարողացան հայթայթել եւ տվեցին հայերին՝ արքային հանձնելու համար:

Այս գործընթացը չէր կարող գաղտնի մնալ: Արքան պատկերացնում էր, որ այն կարող է ունենալ շատ ավելի մեծ շարունակություն, որն իր ձախողումը կարող էր նշանակել: Մտածելով, որ Ֆրանկներն այս միջոցով կհաճեն այս ժողովրդի համակրանքը, իսկ ինքը կկորցնի նրանց հնազանդությունը (մի բան որ նրա համար խիստ զայրացուցիչ էր, քանի որ քրիստոնյաները Օրմուզի կողմից իր հարեւաններն էին՝ ի դեմս Իսպանիայի թագավորի, /305/ որն այդ ժամանակ իշխում էր այդ տարածքներին), նա հասկացրեց հայերին, որ փոխանակ իրենց կրոնը Ֆրանկներին վաճառելու, թող իրեն՝ վաճառեն, մանավանդ որ ինքը նրանց օրինական թագավորն է, եւ իր դրամը ավելի վատը չէ քան մյուսներինը, իսկ իր կրոնը շատ ավելի լավն է: Ապա վերադարձրեց իրեն հանձնված դրամը, չեղյալ համարեց պարտքը, եւ հրամայեց, որ բոլորը մահամեղական դառնան, մի բան, որ բռնությամբ իրագործվեց: Շուրջ երկու հարյուր այդպիսի ընտանիքներ կային, որոնց հիմնական մասը սարսափ էր ապրում այս սխալ օրենքի հանդեպ, չէին վախենում պատիժներից, առավել հաստատակամությամբ էին ընդունում մահը, քան քրիստոնեութան ուրացումը: Կարծում եմ, որ Ֆրանկները կորցրին այն դրամը, որ հատկացրել էին այս ծրագրի իրագործման համար: Այս ծրագրի բարեգործությունից օգուտ մնաց միայն հայերի մեջ խառնված մի քանի հակոբիկյան եւ նեստորական ընտանիքների բարեհաճությունը /306/ Ֆրանկների նկատմամբ եւ Հռոմեական Եկեղեցու ավանդություններին հետեւելը, որին նրանք հարեցին:



Նրանց՝ ում հաջողվեց ջուղահայերի շրջանում գործունեություն ծավալել, եւ որոնց մասին դեռեւս մեծ պաշտամունքով են հիշում՝ այն երկու կարմելիտականներն էին, որոնք նախաձեռնեցին նրանց լեզուն սովորել եւ նրանց հետ հարաբերվում էին առավել հանգամանալից եւ կառուցողական սկզբունքներով: Մյուս միսիոներները նրանց միայն պարսկերեն էին քարոզում եւ չէին դադարում նրանց իրենց պարտականությունները ծանուցել Ս. Գրիգորի օրինակով, որպեսզի ենթարկվեն Հռոմեական եկեղեցուն: Փոքր ինչ այլ ձեւով վարվեց եւ իր եռանդով ծրագրի համար որոշ հնարավորություններ ստեղծեց մի դոմինիկյան հոգեւորական, որը Նախիջեւանում հայերեն սովորելով շուրջ տասներկու տարի առաջ եկավ եւ այստեղ բնակվելու ընթացքում ջերմութեամբ շփվեց Ջուլֆայի վարդապետների հետ, որոնք նրան երբեք չեն մոռանում<sup>61</sup>: Այս հիշարժան Հայրը, որն իրոք օժտված էր մեծ եռանդով եւ շատ /307/ խելացի էր, անկասկած մեծ հարգանք ուներ նրանց մոտ, եւ կարողացավ իր եռանդն օգտագործել, չափի մեջ եւ հարմար առիթների դեպքում միայն ցույց տալով այն:

Անընդհատ նրանց հետ էր, նույնիսկ հանրային հրապարակներում, շուկաներում, ուր նրանց խոստովանեցնում էր՝ արձակելով նրանց ամեն տեսակ բանադրանքներից: Ես կարծում եմ, որ նրա եռանդը կրավականացներ այս գործը շարունակելու համար, եթե հրաման չարձակվեր, եւ քաղաքի ուժեղները՝ վարդապետների պնդմամբ վճռել չտային քաղաքից՝ երեխաների ձեռքով բազմիցս քարկոծելով նրան:

61 Իմա՝ Ֆրա Պողոս Փիրոմալի: Նախիջեւանում եւ Նոր Զուղայում Փիրոմալիի միսիոներական գործունեության եւ մատենագրական ժառանգության մասին տե՛ս Հ. Սահակ Մեմեմեան, Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հոմըր, Վեներիկ-Ս. Ղազար, 2000, էջ 86-92, 123-147:

§II

Վեղարավորների միսիան եւ ինչ միջոցներով էին նրանք առաջնորդվում

/308/ Մի քանի տարի է, ինչ մեր Հայրերից մեկը<sup>62</sup> հրաման ստացավ միջոցներ փնտրել Ջուլֆայում հաստատվելու համար, որպեսզի իր առաքինի օրինակով եւ առավել հանգամանալից զրույցներով զբաղի այդ ժողովրդին: Հոգեւորականը, մտածելով, թե ի՞նչ միջոցներով կարող է իրագործել այս հրամանը եւ տեսնելով, որ ուժով չի կարող իր նպատակին հասնել, մանավանդ հիշյալ դոմինիկ-

62 Անկասկած Գլատի ունի Հ. Ռաֆայել դյու Մանին: St'u Francis Richard, *Raphaël du Mans missionnaire en Perse au XVIIe s., vol. I, Biographie. Correspondance.* 318 pp.; vol. II, *Estats et Mémoire*, 403 pp.. Paris: Société d'Histoire de l'Orient, Edition L'Harmattan, 1995 (Moyen Orient & Océan Indien XVIIe-XIXe s., t. 9). «Ծուրջ հիսուն տարի ապրելով Պարսկաստանում, շնորհիվ իր գիտելիքների ու էրուդիցիայի, օժտված լինելով հզոր խառնվածքով ու լեզուների իմացությամբ, նա կարողացավ երկարատե գործունեության ասպարեզ ասպարեզով իր համար: Ղեկավարելով դեռեւս 1628 թ. Հ. Պասիֆիկի կողմից հիմնված Սպահանի միսիան, նրան հաջողվեց նույնիսկ դառնալ պարսից շահերի (Աբաս II, Սուլեյման) անձնական թարգմանը եւ որպէս այդպիսի մասնակցեց համարյա բոլոր երոպական դեսպանությունների կամ անհատ անձանց հետ շահերի բանակցություններին ու գրույցներին: ... Եկեղեցիների միության եւ Արեւելքում քրիստոնյաների պաշտպանության խնդրով Պարսկաստան մեկնած այս հոգեւորականը շուտով դարձավ ոչ միայն Պարսկաստանում, այլեւ ողջ Արեւելքում Կոլբերի ծրագրերի իրականացնող գլխավոր անձը, որին հաջողվեց իր ձեռքում կենտրոնացնել այդ քաղաքականությունն իրագործելու բոլոր թելերը: ... Վեղարավոր Ռաֆայել դյու Մանը անկասկած մեծ ազդեցություն է ունեցել Սպահան այցելած բոլոր երոպացիների վրա: Ֆ. Ռիշարի հավաստմամբ «նա ֆրանսիական իրանագետների նախնին է համարվում իր օգտագործած գունագեղ եւ հումորով լեզվով՝ որպէս Ռիշելյոյի դարաշրջանի մարդ»: Ծատ Երոպացիների ուսումնասիրություններում Պարսկաստանի մասին տեղեկությունները եւ պարսիկ հասարակության Գլխավորությունները վերցված են Հ. Ռաֆայելի մեզ հասած կամ մեզ անձանոթ գործերից: Հայտնի է, որ վերջինս հաճախ էր տալիս իր ուսումնասիրությունները երոպացի հյուրերին (դը Լալեն, Թեյրնո, Թավերնիե, Օարդեն, Պետի դը լա Կրուս, Զոն Ֆրայեր, Էնգելբերտ Կեմֆեր եւ այլն), որպէսզի նրանք դրանց միջոցով ծանոթանան պարսից իրականությանը եւ իրենց հերթին՝ ծանոթացնեն Երոպային» (տե՛ս մեր գրախոսությունը այս հրատարակությանը՝ Թաշիրյան, Է., Կարապետյան, Մ. Կ., Պատմա-բանասիրական հանդես, 1996, № 1-2, էջ 364-369):



յան վարդապետից հետո, որին այդպես հաջողութամբ վռնդել էին, որոշեց խոհեմութամբ հասնել իր նպատակին: Առանց ուրեմն հայտնի դարձնելու, որ ինքն այդտեղ բնակութուն է փնտրում, տասնհինգ օր շարունակ ամեն առավոտ գնաց Ջուղա՝ պատճառաբանելով, որ ուզում է նրանց լեզուն սովորել, որպեսզի վարդապետները չկասկածեն, /309/ որ ուրիշ նկատառումներ ունի, քանի որ նրանց համար շատ ավելի հեշտ կլինեն սկզբնական շրջանում նրան վռնդել, ինչպես վարվեցին մյուսների հետ: Այս ընթացքում նա միշտ զրուցում էր ամենահայտնի մարդկանց հետ, ձգտելով գրավել նրանց համակրանքը՝ ընձեռված նպաստավոր առիթներով տարբեր ծախսեր հոգալով:

Մինչդեռ նա մի փոքրիկ անկյուն էր փնտրում օթեւանելու համար, ծանոթացավ խոջայի փեսայի հետ, որն ուզեց նրան իր աներոջ մոտ տանել, եւ վստահեցրեց բարեխոսել ու մի հարմարավետ տուն տրամադրել նրան Ջուլֆայում: Սակայն Հայրը մտածելով, որ իր համար ձեռնտու չի լինի կառավարչի ձեռքից բնակարան ստանալ, որը կարող էր ժամանակի ընթացքում ետ վերցնել այն կա՛մ վարդապետների, կա՛մ եպիսկոպոսների պահանջով, ուստի նա շնորհակալութուն խնդրեց բարի մարդուց եւ ասաց, որ նման անկարեւոր հարցով չարժե խնդրել աներոջը, եւ որ ինքը մի փոքրիկ անկյուն է փնտրում իրենց լեզվին ծանոթանալու նպատակով:

/310/ Ի վերջո նա միջոց գտավ վարդապետների ատելութունը դիմազրավելու համար՝ ստանալով կաթոլիկ մի հայի բարեհաճ վերաբերմունքը, որի հետ ծանոթացել էր Թուրքիայում: Վերջինս իր տունը տրամադրեց նրան վստահեցնելով, որ ոչ մի դեպքում, նույնիսկ վարդապետների ճնշման տակ, նրան դուրս չի դնի եւ խոստմանը հավատարիմ մնաց: Այս հանդիպման շնորհիվ մի քիչ ինքնավստահութուն ձեռք բերելով, մտածեց, թե ի՛նչ կարող է անել ժողովրդի բարեկամութունը նվաճելու, եւ Սուրբ Աթոռին հնազանդվելու գործընթացի մեջ ներգրավելու համար: Որքան իր նախորդ միսիոներների հետ կատարվածից, նույնքան էլ իր անձնական փորձից ելնելով, ինչպես նաեւ նկատի առնելով հայերի խո-

նարհումները, նա իր հաշվարկներն արեց: Այդ խոնարհումները մի քիչ նման են Իսրայելի երեխաների խոնարհումին, որի մասին Աստված լուր էր տալիս Եզեկիելին՝ ասելով. «Եբաց զբերան իմ, եւ ջամբեաց զմատեանն: Եւ ասէ ցիս, որդի՛ մարդոյ՝ բերան քո կերիցէ, եւ որովայն քո լցցի՛ ի մատենէ այտի որ տուաւ քեզ: Կերա՛յ զայն, եւ եղեւ ՚ի բերան իմ իբրեւ զքաղցրութիւն մեղու»<sup>63</sup>: Նա մտածեց, որ պետք է կուլ տալ /311/ այս Գիրքը, որը քաղցրութամբ լցրեց Մարգարեի բերանը, եւ որն ավելի շատ մտքի քաղցրության կարիքն ուներ, քան հպատակության, խստության, բռնության՝ այս դժվար եւ համառ ազգին նվաճելու համար: Ուստի նա սրտանց որոշեց ամեն ինչ անել բոլորի համար՝ Ս. Պողոսի նման, առանց արհամարհելու փոքրերին ու աղքատներին, պատվել բոլոր կարգի մարդկանց, հասկանալով, որ Աստված խոսում է հենց նրանց բերանով՝ իր Սուրբ Անունը փառաբանելու եւ իրեն ծառայողներին գովեստներ հղելու համար:

Այս նպատակով նա երեկոները հավաքում էր բազմաթիվ երեխաների, որոնք նրա պատմութունները մեծ սիրով էին լսում: Այսպիսով նա թե՛ լեզուն էր սովորում, թե՛ երեխաներին անհրաժեշտ գիտելիքներ էր տալիս: Նա վստահեցնում էր, որ այս նախաձեռնութունն իրեն քիչ չօգնեց սկզբնական շրջանում որոշ հարգանք ձեռք բերելու գործում: Իսկ երեխաները, ինչպես հայտնի է, որպես շեփոր են ծառայում իրենց լսածը հրապարակելու համար, եւ եթե նրանք առաջինն էին, որ նրա համար որոշ խառնակութուն ստեղծեցին, /312/ ապա նաեւ առաջինն էին, որ հարգանք սերմանեցին նրա նկատմամբ: Այս ապստամբ ժողովրդին նվաճելու երկրորդ միջոցը նրանց որպես թշնամի չվերաբերվելն էր, ինչպես անցյալում էին արել, այլ որպես բարեկամ եւ որպես հավատքի սպասավոր՝ ինչպես Ս. Պողոսն է ասում. «Ընդունեք եւ գուլթով վերաբերվեք

63 Եզեկ. Ա 2



Հավատքի մեջ դեռեւս թույլերին, առանց նրանց հետ հակառակվելու եւ վիճելու»<sup>64</sup>:

Նրանց նախ հարկ էր հասկացնել, որ մենք եւս դեմ ենք Նեստորիուսին, որն ուզում էր բաժանել Հիսուս Քրիստոսին՝ նրան որքան մարդկային, այնքան էլ որպես Աստվածային անձնավորութիւն ընդունելով: Եւ այսպիսով մոտենալ նրանց, հասկացնել, որ մենք իրենց հավատից այնքան էլ հեռու չենք, ինչպես իրենք են կարծում, քանի որ մենք չենք բաժանում երկու Բնութիւնները, որոնց հավատում ենք Հիսուս Քրիստոսի մեջ, այլ հավատում ենք դրանց միասնութեանը մեկի մեջ: /313/ ... Ուստի նա մտածեց, որ սկզբի համար հարկ կլինի Հնարավորինս քիչ խոսել այս թեմաներով, տգիտութիւնը, որի մեջ նրանք ապրում են, նրանց, եւ նույնիսկ նրանց քահանաներին, թույլ չի տալիս հասկանալ մեր եւ նրանց միջեւ եղած հակասութիւնները եւ ոչ էլ մեր խորհուրդները: Նա հասկացավ, որ այս գործընթացը վտանգավոր եւ լիովին հակառակ է իր առջեւ դրված նպատակներին եւ նույնիսկ կարող է այն ավերել, ժողովրդի ներկայացուցիչներից մեկին հիշեցնելով, որ վերոհիշյալ դոմինիկյան Հոգեւորականը եկել էր նրանց մոտ քարոզելու, որ երկու Աստված կա՝ մեկը Աստվածային բնութիւնով, մյուսը՝ մարդկային:

Մի օր հայերի գլխավորներից մեկը /314/ բողոքում էր հակոբիկյան Հոր վարվելակերպից, ասելով, որ վերջինս իրենց բանադրում է ու վստահեցնում, որ իրենք քրիստոնյա չեն: Իսկ համայնքի այն դրամագլուխը, որ ամեն տարի տալիս են արքային եւ այն հայհոյանքները, որ նրանք կրում են մահմեդականների կողմից արդյո՞ք իրենց քրիստոնեական կրոնին հարելու հետեւանքը չէ: Ուրեմն ինչու՞ ասել, որ իրենք քրիստոնյա չեն: Այս Հայրը ուզում է, ավելացնում են նրանք, որ Հիսուս Քրիստոսը երկու բնութիւն ունենա, եւ մենք հավատում ենք միայն մեկին: Եթե ուզում է՝ կհավատանք տասներկուսին. ի՞նչ ենք հասկանում Բնութիւն

ասելով: Աստժո անվան տակ նրանք միայն ուզում են մեզնից խլել քրիստոնյայի պատվավոր կոչումը, որ մենք գերադասում ենք աշխարհում ամեն բանից ավելի՝ պատրաստ լինելով այն պահելու համար հազար անգամ մեռնել: Նա ամեն գնով ուզում է, որ մենք Ֆրանկ դառնանք: Չգիտե՞՞ արդյոք, որ մենք ենթականերն ենք մի արքայի, որը նախանձախնդիր է այս հարցում, եւ մեզ հետ կվարվի այնպես ինչպես մի ժամանակ նրանց հետ, որոնք կարիքից դրված ուզեցին նրանց /315/ իշխանութեան տակ լինել: Նա պատասխանեց այդ խելացի մարդուն, որ նրանք հավանաբար ճիշտ չեն հասկացել այդ Հոր նկատառումները, եւ Հնարավոր չէ, որ որեւէ հայ՝ Ֆրանկ դառնա, այնպես ինչպես անհնար է, որ որեւէ Ֆրանկ կարողանա հայ դառնալ՝ քանի որ այս անունները տարբեր ծագում ունեն: Եւ այս անունները չէ, որ մեզ պետք է փրկեն, այլ իսկական կրոնը, եւ այն լավ գործերը, որ արվում են թե՛ մեկի եւ թե՛ մյուսի անվան տակ: Մենք չենք ցանկանում, որ դուք Ֆրանկ դառնաք դրախտ գնալու համար, այլ որ հետեւեք ձեր նախնիների կրոնին, որոնք այնքան հավատարիմ էին Եկեղեցուն եւ Ս. Պետրոսի հետեւորդներին: Բնավ չեմ կասկածում ձեր երջանկութեանը՝ իմանալով այն մեծ ու բարի գործերը, որ ուղեկցում են ձեր հավատքին: Գիտեմ, որ Ֆրանկ անունը կասկածելի է ողջ Լեվանտում եւ սրա հետեւանքով էլ մենք առանձնապես հարգված չենք այս կոչման թշնամիների կողմից, որոնք իրավունք ունեն խուսափելու այս անունը կրողներից, անցյալում նրանց /316/ զենքի, ինչպես նաեւ նրանց քաջութեան փորձն ունենալով:

Այս պատասխանը, որ բավական պարզ էր, որպեսզի հասկանալի լինի այդ խելացի եւ ուժեղ մարդուն, մեր նկատմամբ նրա բարեհաճ վերաբերմունքն ապահովեց ե՛ւ իր, ե՛ւ շատ ուրիշների մտքում, որոնց մասին նա մեծ հարգանքով էր արտահայտվում: Այս Հոգեւոր Հայրն էր, որ դոմինիկյան Հոգեւորականի մեծ հակառակորդն էր, իսկ հետո դարձավ նրա ամենալավ բարեկամը:

Այս փորձը նրան վստահեցրեց, որ սկզբնական շրջանում բավական էր միայն Պողոս առաքյալի խորհրդին հետեւել. «անկեղծ լի-

64 Ֆրանսերեն բնագրում սուրբալային տեքստը ազատ շարադրանքի մեծությամբ է: Հայերեն բնագիրն է՝ «Այլ գտկարացեալն ՚ի Ռաւատս՝ ընկալարու՛ք, մի՛ խղճի երկմտութեանց» (Հոովմ ԺԴ 1):



նել, անսգյուտ (անպարսավ), Աստծո զավակ եւ անբիժ՝ ապականված եւ աղավաղված մի ազգի մեջ, որտեղ պետք է փայլել Աստծո աստղերի նման»։ Եւ սա այն երրորդ միջոցն էր, որով Աստված ոգեւորեց նրան Զուլֆայի հայուլթյան աչքում մեր հավատքն իմաստավորելու համար։ Հասկանալով, որ նրանք իրենց կրոնի ողջ կատարելութունն ու, կարելի է ասել, ողջ հրաշագործութունը դնում են /317/ իրենց պահքի մեջ, որ պահում են անաչառ ձեւով, խստորեն (ինչպես նկատեցի), այս ժուժկալության մեջ հետեւեց նրանց, քանի որ նրա կրոնը նույնպես պարտավորեցնում էր այդ հարցում։

Մեծ թյուրիմացություններից մեկն էլ Նոր Զուղայի հայերի մտածողության մեջ այն էր, որ որոշ միսիոներներ, նրանց հավատափոխ անելու նպատակով, փորձել էին մեղմացնել պահքի խստությունը, նրանց հավատացնելով, որ հիվանդները պահքի ժամանակ կարող են ձուկ եւ մսեղեն ուտել։ Այս հավատամքը նրանց մեջ բազմաթիվ աթեիստներ ծնեց, որոնք չհասկանալով դրա էությունը մտածեցին, որ այս բոլոր ժուժկալությունները կախված են հոգեւորականների քմահաճույքից, եւ նրանք կարող են անպատիժ բաշխել դրանք, եւ հարկ չկա հետեւել Աստվածաշնչի կողմից չթույլատրված բաներին։ Այսպես այդ միսիոներները որոշ մարդկանց իրենց կողմը տրամադրելու փոխարեն նրանց աթեիստ դարձրին։ Այս ժողովուրդն առավել պաշտամունք չունի քան պահքը՝ նրա մեջ դնելով իր ողջ կատարելությունը։ Եւ ես տեսա իրենց ողջ ազգի թշնամանքն ու ցասումը շարժող նրանցից ոմանց մահը /318/։ Ես հավատում եմ, որ Ս. Պողոսի խորհուրդը հակառակ է այս գործունեությանը։ Նա մեզ սովորեցնում է, որ հարկ չկա քանդել Աստծո ստեղծածն այն ուտելու համար, եւ մեզ պարտավորեցնում է մեր կարողությունից չօգտվել՝ եթե չենք կառուցելու՝ այլ ավերելու ենք։ Եւ ի վերջո, մեր գիտելիքները չգործածել, եթե դրանք վիրավորում են տկարամիտներին։ Նա ինքն է բողոքում (երկնչում), որ պատրաստ է ավելի շուտ ընդհանրապես միս չճաշակել, քան իր հաջորդին գայթակղեցնել՝ ինչի համար Հիսուս Քրիստոսը մահացավ։ Այս միսիոներներին կարելի է ասել, որ Աստծո թագավորու-

թյունը ո՛չ խմելն է, ո՛չ ուտելը, եւ նրանց հավատափոխության ու համապատասխան կրթության համար շատ ավելի բարեհաջող եւ առավել նպաստավոր միջոցներ կան։ Եթե ուզում ես նրանց մեջ ապրել եւ մեր երկրի ավանդությամբ հետեւել Մեծ Պահքին, խանգարելով նրանց ժուժկալությունը, որ բնավ էլ խոցելի չէ, այլ նույնիսկ ավելի խստաբարո է քան մերը՝ նշանակում է /319/ տկարամիտներին եւ անտեղյակներին հավատացնել, որ եկել ենք նրանց մոլորեցնելու, քանի որ նրանց սկսում ենք սովորեցնել դադարեցնել իրենց խստաբարո կենցաղը։

.....

Ինչ վերաբերվում է պահքի ընթացքում հիվանդների նկատմամբ նրանց կիրառած խստությանը, որով չի թուլատրվում մսեղեն ուտել, ընդունում եմ, որ ես էլ սկզբնական շրջանում չհամաձայնվեցի դրա հետ, սակայն երբ ուսումնասիրեցի նրանց կենցաղը, հասկացա, որ նրանք դրա համար երկու պատճառ ունեն։

Առաջինը, որ նրանք միշտ իրենց հիվանդներին /320/ ժուժկալությամբ են բուժում։ Բուժման համար այս երկրում ո՛չ մահմեդականների եւ ո՛չ էլ քրիստոնյաների սովորության մեջ հիվանդները միս կամ արգանակ չեն օգտագործում՝ միայն ջերմությունն իջնելուց տաս օր հետո՝ այդ ընթացքում միայն զովացուցիչներ եւ դյուրամարս ուտելիքներ ընդունելով։

Երկրորդ եւ առավել կարեւոր պատճառն այն է, որ այս երկրում, ուր ազատությունն անսահմանափակ է եւ ուր հոգեւորականները համարյա ազդեցություն չունեն, եթե օրենքը թույլ տար պահքի ժամանակ մսեղեն օգտագործել, այս ազատությունից անմիջապես կօգտվեին, նույնիսկ առանց դրա անհրաժեշտությունն ուսումնասիրելու եւ առանց բժիշկների կամ հոգեւորականների արտոնությանը սպասելու։ Այսպիսով պահքը, որ սրբորեն հաստատված մեծ անհրաժեշտություն է քրիստոնեության համար՝ կարհամարհվի։ Եթե այս երկրում մենք բավականաչափ հզոր լինեինք, որպեսզի այստեղ /321/ ապրող քրիստոնյաներին ստիպեինք հետեւել հոմեոպատիկ եղեցու բոլոր ավանդություններին, լավ կլիներ մանրամասնորեն աշխա-



տել վերացնելու այն բոլոր ավանդույթների մեջ եղած տարբերությունները, որոնք, որպես կանոն բաժանում են քրիստոնյաների մտածողությունները՝ եւ առաջինը հենց Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, եւ թույլ է տալիս հավատացյալներին վստահ լինել, որ եթե ավանդույթը տարբեր է, ուստի կրոնն էլ է տարբեր (ուստի իրենք էլ են տարբեր): Սակայն առայժմ, երբ մենք ամենեւին ազդեցություն չունենք հերձվածողների շրջանում, առավել եւս բավականաչափ տառապում ենք նրանց վերաբերմունքից, մեզ հարկավոր է զրավել նրանց հարգանքը, որպեսզի կարողանանք հասկացնել, թե ո՞րն է կարեւորը նրանց երջանկության համար: Կարծում եմ հարկ չկա ժխտելու նրանց ավանդույթները, որոնք այնքան էլ անհավատ չեն, եւ որոնք նրանց պահում են քրիստոնեության մեջ, որից իմ կարծիքով բավական հեռացած են՝ դատելով անհավատների հետ նրանց վիճաբանությունների մակարդակից:

Վերադառնալով Ջուլֆայի միսիայի առաջխաղացման խնդրին /322/ այնտեղ ծառայող Հայրը, վեց ամիսների ընթացքում ի վիճակի եղավ բացատրվելու, եւ սովորելով գրել ու կարդալ նրանց լեզվով, ընդունեց մի խելացի մարդու, որը խնդրեց իր երկու երեխաներին սովորեցնել իրենց լեզուն: Հայրը, որ այս նպատակն ուներ Ջուլֆա գալու նախօրյակին, շատ վտանգավոր համարեց այն՝ միսիայի հառաջացման ու զարգացման համար, եւ հրաժարվեց նման սկզբից, կանխատեսելով, որ այն կարող է խանգարել իրեն՝ լեզուն օգտագործելու համար: Նախ, ասաց, որ վեց ամիսները, որ նրանց հետ էր, բավարար չէին այս պաշտոնը չիարժեք կատարելու համար: Բացի այդ, տեսնում է, որ այդ երեխաները դաստիարակվում են իրենց ուսուցիչների մոտ, որոնք իրականում շատ աղքատ մեթոդներ ունեին երիտասարդներին կրթելու համար, այնքան ձանձրացուցիչ, որ մի քանի օրերի ընթացքում նա ակամա իր մտածածը որոշեց իրագործել:

Երեք ամիսների ընթացքում նրա մոտ երեխաներն այնպիսի դաստիարակություն ստացան, որ Հայրն ուրախություն թափեց /323/ այս մասին խոսում էր զանազան հավաքություններում: Արդյունքը եղավ

այն, որ կարճ ժամանակում այս հոգեւորականին ամենահարուստ վաճառականները խնդրում էին ընդունել իրենց երեխաներին եւ նա դյուրութեամբ հավաքեց քսանհինգ - երեսուն աշակերտ: Նրա դպրոցը ամենահարգվածն էր տեղի մյուս դպրոցների համեմատ, այն պատճառով, որ այնտեղ հաճախողները լավագույն ընտանիքներից էին, բացի այդ բոլոր երեխաները նրան հարգում էին, այնպես որ վարդապետները զգում էին, թե ինչպես նա անկատ կարողացավ զինաթափել Փրանկների դեմ պայքարի իրենց բոլոր միջոցները: Այդուհանդերձ, տեսնելով այն ազդեցությունը, որ ի վնաս իրենց, Հայրն օրեցօր ունենում էր քաղաքում իրենց հոտի մեջ, նրանք չտեսնելու էին տալիս, չհամարձակվելով նրան վշտացնել, նկատի ունենալով, որ հարգված է մեծատունների եւ սիրված՝ երեխաների կողմից: Ի վերջո վիճաբանություններով նա իրենց չէր ձանձրացնում, ինչպես իր նախորդները: Նրան աշխատում էին հարգանքով վերաբերվել եւ տարաբնույթ հանդիպումներում /324/ նրա մասին վայելուչ ձեւով էին արտահայտվում :

Տեսնելով, որ Ջուլֆայի դարպասներն այսպիսով բաց են իրենց միսիայի առջեւ, կարմելիտները որոշեցին գալ եւ իրենց հասանելիք աշխատանքը կատարել այստեղ՝ փնտրելով իրենց երազած պտուղները: Երկու հոգեւորականներն իրենց այստեղ անցկացրած օրերի ընթացքում խստաբարո կենցաղով մեծ օրինակ ցույց տվեցին ժողովրդին: Սրա շնորհիվ խոջաններից մեկը որոշեց բնակարան հասկացնել նրանց, որը բարեհաճորեն ընդունվեց վարդապետների կողմից: Այդ ժամանակ նրանք սուսանձնապես չէին հակառակվում հոգեւորականներին:

§III

Հիսուսյանների հաստատության խափանումը

/325/ Այստեղ հաստատվելուց հետո, այս քաղաք եկած հիսուսյաններն իրենց հայացքը հռեցին Ջուլֆայի վրա՝ որպես Պարսկաստանում մինչ այդ իրենց ներկայացված ամենահարմար շաղա-



խը<sup>65</sup>: Որոշեցին այստեղ տուն գնել եւ եկեղեցի կառուցել: Նրանք արքայից հրաման ստացան իրենց նպատակն իրագործելու համար: Վարդապետները, որ մինչ այդ իրենց համեստության սահմաններում էին պահում, տաղնապետին՝ Զուլֆան տեսնելով ամեն կողմից պաշարված մեծ թվով (օտար) հոգեւորականների կողմից: Նրանք նախ անվստահություն հայտնեցին այն Հորը, որն առաջինն էր մտել իրենց քաղաք, շշնջալով եւ նույնիսկ բարձրաձայնելով, որ նա մատնիչ է, եւ որ իրեն օգնության է կանչել մեծ /326/ թվով մարդկանց: Նրանք որոշեցին սկսել առաջինից՝ որպես այս ողջ իրարարանցման հեղինակի, որից սպասվում էր վտանգը: Փնտրեցին այն անձին, որը նրան իր տունն էր տրամադրել, եւ եպիսկոպոսը հարցրեց, թե ինչու՝ էր համարձակվել Ֆրանկներին Զուլֆա հրավիրել՝ խուրհուրդ տալով շուտափույթ վռնդել հոգեւոր Հորն իր տնից, այլապես նրան կբանադրի: Այդ իսկական բարեկամը անվեհեր պատասխանեց, որ շատ է զարմանում այն անհանդուրժողականության վրա, որ եպիսկոպոսը տածում է մեծավորների կողմից այդքան սիրված հոգեւորականի հանդեպ, եւ չի խանգարի նրա գործունեությանը՝ վախենալով վտանգել իր հեղինակությունը, քանի որ այն պարոնները, որոնց մեծ ծառայություններ էր մատուցել հանձինս իրենց երեխաների՝ թույլ չէին տա նրան վռնդել: Եւ ավելացրեց, որ այն՝ ինչ արել են նրա համար՝ սոսկ փոխադարձումն է այն հարգանքի, որ նա տածել է իրենց նկատմամբ:

Իր մեծահոգությունն առավել եւս ցույց տալու համար, նա հավատացրեց եպիսկոպոսին, որ վեղարավոր հայրը դրամ է տվել

65 Նոր Զուղայում Հիսուսյան միաբանության հաստատման եւ գործունեության, ինչպես նաեւ այդ առաքելության որոշ անդամների մասին սովորուսումնասիրություն ունի Ռաֆայել դյու Մանը, որի քննական հրատարակությունն իրականացրել է ֆրանսիացի պատմաբան Ֆրանսիս Ռիշարը Դյու Մանին նվիրված իր երկհատոր աշխատության էջերում: (Richard Fr., Raphaël du Mans, Missionnaire en Perse au XVII s., II, Etats et Mémoire, Moyen Orient et Océan Indien, XVI-XIX, Paris 1995, vol II, "Mémoire sur les Jésuites, circa 1662", pp. 201-257): Նշենք, որ Դյու Մանի սույն ձեռագիրը (41 էջից բաղկացած տետրը) պահվում է Փարիզի Արտաքին Միսիաների արխիվում (vol. 417, p. 437-477):

/327/ տունը վարձելու համար: Եպիսկոպոսը նրան առաջարկեց վճարել վարձի հատուցումը, որի համար ծաղրի արժանացավ: Վերջինս, տեսնելով, որ իր խնդրանքները, իր նզովքներն ու հեղինակությունը արհամարհված են, սպառնաց այնպես վատաբանել Հորը, որ քրիստոնյաները, վրիժառությունից մղված, նրա բոլոր ապրանքները հափշտակեն: Սակայն այս հարվածն անհիմն էր: Նա հրամայեց իր վարդապետներին գնալ բոլոր այն տները, որոնց երեխաներին Հայրը դաստիարակում էր, որպեսզի նրանք, բանադրանքի սպառնալիքի ներքո, իրենց երեխաներին այլեւս չուղարկեն Հոր մոտ: Սակայն վերջինս, առաջ էր անցել եպիսկոպոսից՝ վստահություն ներշնչելով աշակերտների ծնողներին եւ սովորեցնելով, թե ինչ պատասխան տան այդ առիթով: Նրանք դա արեցին մեծ խնամքով: Եպիսկոպոսը, տեսնելով, որ այս կողմից անդոր է, գնաց բողոքելու կառավարչին եւ խնդրեց նրան վռնդել /328/ վեղարավորին: Սակայն խոջան, որը հարգում էր միսիոներին, քաղաքավարի ձեւով պատասխանեց եպիսկոպոսին, որ Հայրն առավել նրբանկատ էր քան իրենք, քանի որ այդ տունը նա կարող էր վերադարձնել ժամանակի ընթացքում: Նա ավելացրեց նաեւ, որ այն տունը, որ մտածում են ավերել՝ սիրված է բոլորի կողմից, եւ ինքը նպատակ չունի, որեւէ բան ձեռնարկել հոգեւորականի դեմ, մանավանդ, որ դրա առիթը երբեք չի ներկայացել եւ վերջինս միշտ խոհեմությամբ ու մեծ հարգանքով է վարվել իրենց հետ:

Եպիսկոպոսը՝ տեսնելով որ իր հույսերն ի դերեւ են ելնում, եւ նրա դեմ պայքարելու ոչ մի միջոց չկա, իր հալածանքներն ուղղեց հիսուսյանների դեմ, որոնց խոջան տուն էր տվել՝ արքայից ստացած հրամանի համաձայն: Ուստի գնաց բողոքելու նրան՝ այս նորեկներին եւս օթեւանով ապահովելու համար: Խոջան հիչեցրեց արքայական հրամանի մասին: Եպիսկոպոսն առաջարկեց գործուղել /329/ իրեն արքայի մոտ՝ եկեղեցի կառուցելու մասին նրանց ստացած թույլտվությունը բողոքարկելու համար: Սակայն կառավարիչը, չցանկանալով վրդովել Ֆրանկներին, որոնց համակրում էր, երկյուղելով արքայական պատժից, չուղեց ընդունել այս առաջարկությունը:



նր, աշխատեց հանգստացնել եպիսկոպոսի բորբոքված միտքը եւ ֆրանկների նկատմամբ բարեհաճություն սերմանել նրա մոտ:

Եպիսկոպոսը, հակառակը, հասկանալով իր լքյալ վիճակը, որոշեց կառավարչին, հատկապես արքայի մոտ ներկայացուցիչ ուղարկելու դեմ նրա որոշմանը հակառակվել: Ուստի իր մոտ հրավիրեց մարդկանց, որոնք առանձնապես չէին համակրում խոջային եւ կրկնեց վերջինիս արած իր առաջարկը: Այս Պարոնները շոյվելով այն հանգամանքից, որ նա իրե՛նց ազդեցությունն է ակնկալում, դյուրութեամբ ընդունեցին առաջարկը եւ խոստացան նպաստել այս գործի իրականացմանը: Գործուղված անձը նման գործեր գլուխ բերելու ամենեւին հակում չունեւ: Ուստի հասկանալով, որ չի կարող վեղարավորին վնասել, որի նկատմամբ պարտավորություն ունեւ՝ /330/ ետ քաշվեց:

Սակայն եպիսկոպոսը, որ իր ազգականն էր, հույսը միայն նրա վրա էր դրել եւ իր հավատքի բոլոր նրբություններով, ոտքերն ընկնելով աղաչեց նրան իրականացնել այս միսիան, ի փառս Աստծո եւ ի պահպանություն իրենց հավատքի: Վերջինս հասկանալով, որ ուժով եւ իրեն ստիպում, որոշեց չիրագործել այդ պատգամավորությունն առանց կառավարչի գիտութեան, եւ իրազեկեց վերջինիս այս մասին: Խոջան նրան հարցրեց, թե ի՛նչ պատճառաբանություններ պիտի ներկայացնի արքային իր բողոքարկման մեջ, Ջուլֆայում ֆրանկների համար եկեղեցի կառուցելն արգելելու նպատակով, քանի որ Շահ Աբասն ու նրա հաջորդները նրանց նկատմամբ բավական հարգանքով էին լցված, որպեսզի թույլ տան կառուցել իրենց արքայանիստ քաղաքում: Պատգամավորը հասկանալով որ Խոջան առանձնապես չէր ոգեւորված այս գործընթացով, վերադարձավ եպիսկոպոսի մոտ, եւ նրան տեղեկացրեց, կառավարչի հակակրանքն այս ձեռնարկի վերաբերյալ, որը շատ խրթին էր համարում: Սա խիստ զայրացրեց եպիսկոպոսին, որը կրկին եկավ /331/ խնդրելու կառավարչին: Վերջինս չցանկանալով ամբողջութեամբ պարտականություններից խուսափել եւ մտածելով, որ ի վերջո Ջուլֆայի բնակչությունն իր իրավունքներից ելնելով այդ պատ-

գամավորին կուղարկի արքունիք, ինչը տարօրինակ կերեւա իր անձի՝ որպես համայնքի կառավարչի չներկայանալը, այլ պատահական մեկին ուղարկելը, ի վերջո որոշեց գնալ արքայի մոտ՝ կրճատելով եպիսկոպոսի շարադրած բազմաթիվ անհիմն կետերը: Բավարարվեց միայն հիշեցնելով, որ Շահ Աբասը եւ Շահ Սեֆին՝ իր նախորդները, ֆրանկներին ամենեւին չթույլատրեցին Ջուլֆայում եկեղեցի կառուցել, աղաչեց այժմ եւս թույլ չտալ՝ իր ժողովրդի հանգստութեան համար՝ ինչը եւ կարողացավ որոշման տեսքով ստանալ: Քանի որ արքան, իր հրամանագրին հակառակվելով, թույլ չտվեց Հիսուսյաններին իրենց եկեղեցին կառուցել Ջուլֆայում, մինչեւ իրենց Հայրերից մեկի վերադարձը, որն իրեն շատ կարեւոր պատասխան պետք է բերեր: Այս պատգամավորը Ջուլֆայում, եւ հատկապես եպիսկոպոսի կողմից որպես հրեշտակ ընդունվեց: Եպիսկոպոսն այս հրամանից հետո այնքան ձանձրացրեց /332/ Խոջային, որ նա Հիսուսյանների ձեռքից վերցրեց իրենց հատկացված տունը: Այսպիսով Ջուլֆայում մեկ տարի ապրելուց հետո նրանք քաղաք վերադարձան:

§ IV

Ջուլֆայի միակ կաթոլիկ միսիոնների՝ վեղարավորի հալածանքները եւ ինչպես Գրան վոնդեցիմ այդ քաղաքից:

Ջուլֆայում գտնվող երկու կարմելիտական հոգեւորականները Հիսուսյանների դուրս գալուց որոշ ժամանակ անց, իրենց մեծավորի կողմից այլ տեղ ծառայութեան կանչվեցին եւ եպիսկոպոսի պայքարի միակ թիրախը վեղարավոր Հայրը մնաց, որին նույնպես որոշեցին վոնդել: Նրանք շարունակ պնդում էին, որ եթե նրան չքշեն քաղաքից, նա ժամանակի ընթացքում կաշխատի ուրիշ հոգեւորականներ բերել, որոնք ավելի լավ պատրաստված կլինեն, /333/ քան առաջինները, եւ դյուրին չի լինի նրանց վոնդել: Ուստի որոշեցին իրենց ողջ ուժով նրա դեմ պայքարել: Սկսեցին երկու քահանաներից բաղկացած պատգամավորական մի այցով, որոնք համատեղ աղոթքից հետո նրան ասացին, որ եթե գերադասի բնա-



կիչների օգնությամբ ապրել քաղաքում, եպիսկոպոսը կփակի բոլոր եկեղեցիները, որոնք թվով տասներկուսն էին, քահանաներին կարգելի, եւ վարդապետների հետ միասին կգնա պատրիարքին բողոքելու: Իրականում այս վերաբերմունքը (compliment) անակնկալի բերեց միսիոներին, այդուհանդերձ նա մտածեց, որ եպիսկոպոսը նման ծայրահեղության չի հասնի, եւ այս սպառնալիքով ուզում է վախեցնել իրեն: Նա պատասխանեց, որ շատ է հարգում նրանց մեծավորին, որպեսզի նրան զայրացնի, եւ ճանաչելով նրա խոհեմությունը, վստահ է, որ նա չի լքի իր հոտը: Հաջորդ օրը եպիսկոպոսը մարդ ուղարկեց, եւ հրավիրեց նրան իր մոտ: Հայրը համաձայնվեց, սակայն սպասեց, որ վարդապետները, որոնք ներկա էին /334/<sup>66</sup> իրենց մեծավորի հետ, դուրս գան, ապա գնաց նրան տեսնելու: Վերջինս նրան նախ քաղաքավարի ընդունեց, ապա խնդրեց լքել քաղաքը: Սակայն միսիոները հրաժարվելը նրան զայրացրեց, սպառնաց հրամայել, որպեսզի դազանակի հարյուր հարված հասցնեն նրան հրապարակի մեջտեղում եւ քաշքշելով քաղաքից դուրս շարտեն: Հայրը պատասխանեց, որ իհարկե կարող է անել դա, սակայն հնարավոր է որ զղջա եւ, որ Ֆրանսիայի արքան կարող է վրեժխնդիր լինել իր ենթակայի նկատմամբ նման անհարգի վերաբերմունքի համար իր պետության (իմա՝ Ֆրանսիա - է. Թ) մեջ բնակվող հայերից:

Եպիսկոպոսը, հասկանալով որ այս վարմունքը սխալ էր, մի այլ հնարք օգտագործեց: Նա գիտեր, որ Զուլֆայի մեծավորներից մեկը շատ մոտ է Սպահանի վեղարնավորների հետ: Գտնելով նրան, ուղարկեց մեր Հայրերի մոտ, որպեսզի նրանց համոզի իրենց մոտ կանչել այս հոգեւորականին, որն այդքան հոգս էր պատճառել: Վերջինս շտապեց այդ ծառայությունը մատուցել: Սակայն գուցե չընդունելով իր հավատակցի անճշտությունը եւ կամ իրեն աստվազիտություն սովորեցրած /325\*/ այս միսիոներին նկատմամբ ունեցած իր երախտագիտությունը ստիպեց նրան չկատարել հանձնա-

66 Բնագրում 334-րդ էջից հետո Էջադրումը խախտված է եւ կրկնվում է 225-րդ էջից:

րարությունը: Գուցե ի վերջո նաեւ այլ դրդապատճառներ նրան խանգարեցին. նա Հայրերին ասաց, որ նեղություն չկրեն, եւ հարկ չկա Զուլֆայի իրենց հավատակցին ասել, որ լքի քաղաքը, հակառակը, հարկ է նրան հրամայել, որ իրեն լավ պահի: Նրանց վստահեցրեց, որ վերջինս վախենալու ոչինչ չունի, եւ տառապանքներ պատճառողների ուժերը ի դերեւ կելնեն նրա համբերատարության եւ նրա ընկերների շնորհիվ:

Այս ընթացքում Զուլֆայի եպիսկոպոսը, տեսնելով, որ իր հավատակից եղբոր բանակցությունները խոստացված արդյունքը չտվեցին, որոշեց կանանց հանել միսիոների դեմ, քանի որ երեխաները շատ ընկերական էին նրա հետ՝ վերջիններիս նրա դեմ տրամադրելու համար: Նա գտավ մի կնոջ, որը նրանց նախկին տանտիրոջ ազգականուհին էր: Նրան համոզեց, որ այդ բնակարանը իրեն է պատկանում, եւ եթե նա վճարի Հորը, ոչ ոք նրա հետ չի վիճարկի իր սեփականությունը: Իհարկե անբարտապաս այս կինը, շնորհակալություն հայտնեց մեծավորին /326\*/ լավ խորհրդի համար, եւ գնաց պայքարելու իր իրեն պատկանող սեփականության համար: Նա անցավ հրապարակի կենտրոնը՝ ուրիշ կանանց ոտքի հանելու մտադրությամբ, սակայն ապարդյուն, ի վերջո նա միայնակ եկավ միսիոների մոտ: Նրա զարմանքը մեծ եղավ, տեսնելով, որ նման այցելության այստեղ չեն սպասում: Իր նկրտումների ու հավակնությունների համար ծաղրի արժանանալով, եւ տեսնելով որ մենակ է, փախավ այդտեղից: Կեսօրից հետո վերադարձավ իր ծառայողների հետ՝ զգեստները բերելով իր ենթադրյալ տունը, բայց Հայրը փակեց դռները, եւ աշակերտները ծիծաղելով այնպիսի ծաղրանքի ենթարկեցին տիկնոջը, որ նա ստիպված եղավ վերադառնալ: Բացի այդ նրան սպառնացին դիմել օրենքի ուժին, որը նրան ավելի քան վախեցրեց:

Այդուհանդերձ եպիսկոպոսն այնտեղ չբնակվեց: Նրան խնդրել էին մի քանի արեղանների՝ քաղաքի մեծատուններից մի քանիսի որդիներին քահանա ձեռնադրել, որից նա հրաժարվեց, քանի դեռ միսիոներին չէին վճարել: /327\*/ Այս խնդրանքը նրանց թշնամացրեց



եւ նրանք միաբերան պատասխանեցին, որ եթե նա հրաժարվում է հոգեւոր աստիճան տալ իրենց արեղա որդիներին, կուղարկեն լատին եպիսկոպոսի մոտ, որը նրանց կօծի: Այնպես որ ցանկանալով ցույց տալ իր ազդեցութիւնը, եպիսկոպոսը այս հարցում չուզեց ճնշում գործադրել: Տեսնելով, որ այն բոլոր մեթոդները, որ նա մտածել էր, հաջողութիւն չբերեցին, հավաքեց քահանաներին՝ նոր ձեւեր մտածելու եւ նրան վերջնականապես պատժելու համար: Դրա համար նրանց հնարավորինս դադարեց հավաքեց, այնպես որ խոջայի փեսան ոչինչ չիմանա: Քանի որ վերջինս միսիոների բարեկամն էր, մի թուղթ գրեց, որպէսզի զգուշ լինի, եւ իրազեկի իր կառավարիչ աներոջը, որ մտադիր է նրան դազանակի հարյուր հարված տալ, եւ բանադրել նրան այցելողներին: Հայրը սրա մասին իմանալով երեկոյան ժամը ութին, խորհրդակցեց իր ընկերներից մեկի հետ, որը նրան /328\*/ քաջալերեց, եւ որպէսզի ի չիք դարձնի նրա թշնամիների նպատակները, խորհուրդ տվեց հաջորդ օրը վաղ առավոտյան դուրս գալ տնից եւ վերադառնալ միայն երեկոյան:

Նա բարեբախտաբար հետեւեց այդ բարի խորհրդին: Հազիվ դուրս էր եկել տնից, որ երկու քահանաներ եկան նրան եպիսկոպոսի մոտ առաջնորդելու համար, եւ այնտեղ մնացին ողջ օրվա ընթացքում: Երեկոյան նրանցից մեկը բռնելով նրա վերարկուից՝ քաշքշելով տանում էր եպիսկոպոսի մոտ: Միսիոները ներողութիւն խնդրեց: Այդ ընթացքում խոջայի փեսան եւ իր բարեկամը աղմուկից անհանգստանալով զայրացած հայհոյեցին քահանային, սպառնացին օրենքով, եւ առավոտյան այնպես բարձրաձայն բողոքեցին Ջուլֆայի հրապարակի կենտրոնում, որ հայերի մեջ ամենաերեւելիներն անգամ եկան ներողութիւն խնդրելու Հորից այն բռնութեան համար, որ գործադրել էին նրա նկատմամբ: Վարդապետները իրենց կողմը քաշեցին մի երիտասարդի, որին հայրն ուղարկել էր Միսիոների մոտ՝ գիտելիքներ ստանալու համար: /329\*/ Այդ երիտասարդը առանձնանում էր ե՛ւ իր ունեցվածքով, ե՛ւ իր ունակութիւններով եւ կարող էր մի օր Ջուլֆայի կառավարիչը դառնալ, սա էլ մղեց վարդապետներին իրենց մոտ տանել երիտա-

սարդին: Սակայն նրա հայրը, որ ճամփորդութեան մեջ էր պարսիկ մի խանի հետ, իմանալով այդ մասին, իր բարեկամներից մեկին նամակով խնդրեց վերադարձնել նրան վեղարավորների մոտ, մի բան որ մեծ թշնամանք առաջացրեց վարդապետների եւ նույնիսկ եպիսկոպոսի մոտ, որը դժվարացնում էր երիտասարդի ուսուցանումը:

Չկասկածեք, որ այս դեպքը ավելի մեծ զայրույթ չարաջացրեց Հոր դեմ, իսկ նրա եռանդը ամենեւին չնվազեց, որպէսզի հնարավոր լինի նրան վռնդել: Եւ դա շուտ էջր իրադործվի, եթե չպատահեր այն՝ ինչ մի քանի բառով կպատմեմ ձեզ: Սպահանի հիսուսյանները՝ զայրացած, որ իրենց վռնդել էին Ջուլֆայից, մինչդեռ տուն ունեին այնտեղ, հնարավոր ամեն ինչ արեցին կրկին այնտեղ հաստատվելու համար: Հարմար առիթ ներկայացավ՝ նրանք գտան (կաշառեցին) մի հայ դավանափոխի, որը Ջուլֆայում ծախու տուն ուներ եւ պայմանագիր կնքեցին այն գնելու համար: Երբ /330\*/ եպիսկոպոսն իմացավ այս նորութիւնը, տագնապեց: Նա սպառնաց, ապա խնդրեց դավանափոխին, խանդարել տան առուծախը, բայց տեսնելով, որ սպառնալիքներն ու խնդրանքն անօգուտ են, որոշեց հուսահատ քայլի դիմել: Նա փակել տվեց Ջուլֆայի բոլոր, նաեւ Սպահանի հայկական եկեղեցիները, եւ իր քահանաներին արգիլեց՝ ամենահամարձակ պատիժների սպառնալիքով՝ որեւէ արարողութիւն կատարել: Այս գործողութիւնը այնպես զարմացրեց ժողովրդին, որ չիմանալով ինչ անել, նրանք դավանափոխին այնպես ճնշեցին, որ նա չվաճառի իր տունը հիսուսյաններին եւ իրենք գնեցին այն՝ նրանց հետ բանակցութիւնների մեջ չմտնելու համար:

Եպիսկոպոսը, տեսնելով որ այս գործողութիւնը լավագույնս հաջողվեց, ամենեւին բացել չտվեց եկեղեցիները: Հայտարարեց, որ դրանք այնքան ժամանակ փակ կմնան, մինչեւ այստեղ գտնվող վեղարավոր միսիոներին չվռնդեն Ջուլֆայից: Այդ ընթացքում քահանաները ամեն օր բողոքում էին կառավարչին, որ հանգուցյալներ կան թաղելու, եւ երեխաներ՝ կնքելու, բայց /331\*/ արարողութիւններ կատարելու արգելքը թույլ չի տալիս իրենց պարտականութիւնները կատարել եւ նրանք չզիտեն ինչ անել: Խոջան



եպիսկոպոսին համոզում էր, որ բացի՝ եկեղեցիների դռները, սակայն անարդյունք: Նույնիսկ խնդրեց Հորը, որ մի քանի օրով բացակայի Ջուլֆայից, խոստանալով կրկին ետ վերադարձնել նրան եւ իր հավատակից եղբայրներին: Հայրը չառարկեց եւ մի փոքր ապստամբելով հեռացավ հայերից, որոնք նրանից բաժանվեցին արցունքոտ աչքերով, բողոքելով, որ ավելի շուտ կգերադասեն մահը, քան թույլ կտան նրան ընդմիջտ հեռանալ, եւ հուսով են որ շատ շուտով կտեսնեն նրան:

Այսպիսով Հայրը եկավ Սպահան, ուր կարմելիտների մեծավորը նրան այցելեց եւ ասաց, որ նրա Ջուլֆայից հեռանալը շատ է ազդել իր վրա: Եւ հոռմեական եկեղեցու համար մեծ պատիվ է նման միսիոներ ունենալ հերձվածող ժողովրդի ծոցում, ուր այդքան քիչ ժամանակում այդքան մեծ առաջադիմություն էր գրանցվել:

Մենք մեր սիրտը չկորցրինք /332\*/ այս հեռացումից հետո եւ ոչ էլ շուտով Ջուլֆա վերադառնալու հույսը: Մենք գրեցինք Արքունիք՝ մի քանի լատին քրիստոնյաների եւ բարեկամ պարսիկներին, որոնք Վեզիրի մոտ հարգելի անձինք էին, խնդրելով որ նրան ներկայացնեն Ջուլֆայի վարդապետների սարսափելի արարքը, որոնք փակել էին տվել եկեղեցիները, ակնկալելով վրդովել ժողովրդին, եւ խախտել էին արքայական հրամանները: Նրանք նկատեցին նաեւ, որ այս արարքը խախտում էր նաեւ թագավորության օրենքները, խանգարում էր տների առք ու վաճառքին, եւ պարտադրում էր հեռացնել իրենց բնակարաններից նրանց իրական սեփականատերերին: Որ այն պետություն ունեցվածքի դեմ է, քանի որ Ջուլֆայի բնակիչները, որոնք Եւրոպայի հետ առեւտուր անող Պարսկաստանի համարյա միակ վաճառականներն են եւ այնտեղ գործակալներ ունեն, կարող են վատ վերաբերմունքի արժանանալ, ինչպես որ նրանք են վատ վերաբերվում Ֆրանկներին: Վեզիրը լսեց այս ճշմարտացի բողոքները, վարդապետների դժգոհությունների հետ ծանոթացավ եւ խոստացավ մեզ վերահաստատել Ջուլֆայում եւ հատուցել այն բոնությունները, /333\*/ որ իրագործվել էին մեր նկատմամբ:

Այսուհանդերձ մենք ահա ուր էինք՝ հեռու այն եկամուտներից, որ պետք է քաղեինք Ջուլֆայի մեր հաստատությունից՝ շուրջ երեք տարի այնտեղ աշխատելուց հետո: Եթե մեր աշխատանքից այլ հատուցում չստանանք, բողոքելու շատ տեղ կուենանք, եւ մենք դժբախտ վիճակի մեջ կլինենք: Բայց քանի որ սպասում ենք թե՛ այլ ունեցվածքի եւ թե՛ երկարատեւ հատուցման, մենք ամեն ինչ համբերությամբ եւ հնազանդորեն ենք տանում, քանի որ հանուն Աստծո փառքի աշխատելով, հուսով ենք, որ ի խորոց սրտի բավարարված կլինի մեր նվիրումը: Այսպես մենք միշտ ենթակա ենք իր հրամաններին .....



## ԱՆԴՐԵ ԴՈՒԻԵ ԴԵԼԱՆԴ

Դոլիե Դելանդը (1621-1715)

1664 թ. Թավերնիեի 6-րդ ճամփորդության ընթացքում նրա հետ մեկնել է Պարսկաստան՝ հանձնարարություն ունենալով մի քանի առեւտրականներից որոշ ուսումնասիրություններ անելու: Թավերնիեի հետ մի քանի անգամ հյուրընկալվել է Շահ Աբաս II-ին՝ վերջինիս համար շվի (որը մի հայ վաճառական էր հայթայթել) եւ Ֆլեյտա նվագչու պատրվակով: Նա եւ Թավերնիեն նույնիսկ զինի են խմել Շահի ոսկե բաժակից: Արեւելահայկական Ֆրանսիական Ընկերության անմխիթար վիճակը տեսնելով՝ որոշել է վերադառնալ Ֆրանսիա՝ Թավերնիեից բաժանվելով Բենդեր Աբասում (վերջինս պետք է մեկնե՞ր Կանդահար) եւ ընկերանալով Թեւրնոյի հետ: Նրա հետ այցելել է Պերսեպոլիս: Դելանդն այցելել է նաեւ Կոստանդնուպոլիս եւ Ջոյուռնիա՝ 1666-ին վերադառնալով Մարսել:



1673 թ. հրատարակել է «Պարսկաստանի գեղեցկությունները, ...» ներկայացնելով իր ճամփորդությունը Փարիզից Թունիս, ինչպես նաեւ անդրադառնալով Պարսկաստանում հանդիպած հետաքրքրական դեպքերին: Հեղինակն այն նվիրել է «խելացի» ընթերցողներին, որոնք համոզված պետք է լինեն, որ Պարսկաստանի գեղեցկությունները բավականին հետաքրքիր են, սակայն աշխարհում միակը չեն: Հատորը հարստացված է հեղինակի նկարներով եւ փորագրապատկերներով:

Ֆրանսիայում Դելանդը մի քանի տարի վարել է Արեւելահայկական Ֆրանսիական Ընկերության Բորդոյի գրասենյակի տնօրենի պաշտոնը՝ ստանալով Թերեբոնի սինյորի տիտղոսը, ինչպես նաեւ հողակտոր Նոր Ֆրանսիայի (Քեթեքի) շրջանում: Այդ հողակտորը մի քանի տարի անց վաճառել է: Ծամփորդությունից հետո, նա բազմիցս այցելել է Թավերնիեին, որի մոտ էլ ծանոթացել է Ֆիլիպ դը Ջալլիին: Մահացել է կարիքի մեջ 1715 թ.<sup>67</sup>

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. *Les Beautés de la Perse, où ce qu'il y a de plus beau dans ce Royaume est décrit et designé au naturel par le Sieur Daulier Deslandes, Vandomois, avec une relation de quelques aventures maritimes de L[ouis] M[arot] P[ilote] R[éal] - D[es] G[alères] D[e] F[rance]*. — Paris, G. Clouzier, 1673.

## Դոլիե Դելանդի նկարագրությունից

1664 թ.

/13-14/ Գիլանում արտադրվող մետաքսների մեծ առեւտուրը եւ մնացյալ բազմաթիվ ապրանքատեսակները գրավել են մեծ թվով հայերի, որ վարժվել են առեւտրին եւ հանգիստ ապրում են այնտեղ:

/17/ Հողը շատ ավազուտային է, ու շատ շոգ եւ մեծ քանակությամբ գետնանուշ է աճում: Հայերն այստեղ (Կազբինում) վարժվել են եւ մեծ թիվ են կազմում:

/18/ Երկու օրվա ճանապարհ է մինչեւ Քաշան՝ խիտ ընակեցված մեծ քաղաք՝ եւ լի ամեն տեսակ օգտակար բաներով, գլխավորապես՝ լավ գինով, եւ ուշադրություն դարձրեք այս բառերիս, որ Պարսկաստանի սահմանին գտնվող Երեւանից մինչեւ Շիրազ ամեն

67 Michaud L. G., op. cit., t. 10, 1813, pp. 574-575; Kroell A., *Nouvelles d'Ispahan, 1665-1695*, Paris, 1979, p. 9-11; Gulbenkian R., *Philippe de Zagly, marchand Arménien de Julfa, et l'établissement du commerce persan en Courlande en 1696*, "Estudios Históricos", 1, Relações entre Portugal Arménia e Médio Oriente, 1994, pp.15-83.



տեղ կգտնեք Հիանալի (գինի), քանի որ ամենուր այս գործի մեջ հմուտ հայեր կան, որոնք այն պատրաստում են իրենց եւ ճանապարհորդների համար:

/19/ Եւս երեք օրից հասնում ենք Սպահան՝ այս կայսրության մայրաքաղաքը: Դուք այն կնկատեք բավական հեռվից...

Պարտեզների մեծ քանակութունը, որ կա այնտեղ եւ նրա շուրջը ձեզ կստիպեն քաղաքը որպես անտառ ընդունել՝ /20/ մի քանի տներով ու մզկիթներով, որոնց դմբեթներն ու զանգակատները բավական գեղեցիկ տպավորութուն են գործում: Զուլֆայից երկու-երեք լյո հեռավորության վրա գտնվող լեռները բավական բարձր են: Գյուղում այստեղ-այնտեղ երեւացող աշտարակներն աղավիններով լի աղավնատներ են, դրանց կղանքը բավականին թանկ է վաճառվում, քանի որ օգտագործվում է սելս աճեցնելու համար: Այս աղավնատները, չնայած արեւի տակ երկված աղյուսով են շինված, բավականին՝ գեղեցիկ են եւ վերելից զարդարված են փոքրիկ աշտարակներով: Դաշտը, որտեղ գետեղված է Սպահանը, շատ տափարակ է եւ լավ ոռոգված դեպի այնտեղ ուղղորդված մեծ ջրանցքներով: Հողն այնտեղ հրաշալի է: Այստեղ չգիտեն՝ ինչ է սալահատակ ճանապարհը կամ փողոցը, որոնք շատ անհարմար են ամռանն՝ իրենց փոշով եւ ձմռանն՝ իրենց ցեխով:

Հիսպահանը, Սպահանը՝ ինչպես ասում են թուրքերը, եւ Սեֆաոնը՝ ինչպես ասում են պարսիկները, Փարիզից ավելի մեծ է եւ ներառում է նաեւ Զուլֆան, որը հայերի քաղաքն է՝ գետի մյուս կողմում:

/42/ ... Մեյդանից դուրս գալով աջակողմյան դռնից եւ մի քանի փողոց անցնելով՝ մտնում ենք հրաշալի ծառուղին, որ կոչում են Չարբախ, այսինքն՝ չորս այգի, քանի որ երկու կողմերում ու ծայրերին արքայական այգիներն են: Այն ութսուն ոտնաչափ լայնք ունի ու մոտ երկու հազար՝ երկայնք, եւ ծառուղու կեսին հատվում է կամրջով:

Այն սկսվում է մի տաղավարով՝ երեսուն-քառասուն քայլ քառակուսի տարածքով, որը երկհարկանի է եւ որքան վերելում,

նույնքան էլ ներքելում ունի բազմաթիվ մեծ լուսամուտներ՝ շատ գեղեցիկ փակ փեղկերով: /43/ Սա կամարակապ շատ մաքուր շինութուն է, իսկ ներսի որմնանկարները մավրիտանական ձևով են արված՝ ոսկով ու լաջվարդով (azur):

Այս ծառուղու երկու կողմերը շատ բարձր շինարների շարքեր են, եւ բացի այս ծառերից ու պարտեզի պարիսպներից, հետիոտների համար՝ սրբատաշ քարերով շինված ճանապարհ կա: Այս տաղավարի տակից դուրս եկող առվակը հոսում է ճանապարհի ողջ երկարությամբ՝ փողոցի կենտրոնով, երկու ոտնաչափ քարապատ մի ջրանցքով: Ջրանցքի երկու կողմի ակերը մոտ երեք ոտնաչափ լայնք ունեն եւ անցորդների համար որպես ճանապարհ են ծառայում: Ջրանցքի եւ ծառերի միջեւ եղած ճանապարհը երկու կողմերից սալահատակ է. շատ կեղտոտ է ձմռանը եւ շատ փոշոտ՝ ամռանը ...

Առվակն այստեղ թափվում է երեսուն ոտնաչափ տրամագծով գեղեցիկ ավազանի մեջ, որի շուրջը լավ եղանակին շատ մարդիկ են լինում, ծխում ու սուրճ են խմում՝ նստած /44/ այնպիսի աթոռների վրա, որոնցից մենք օգտվում ենք Փարիզում քարոզների ժամանակ: Զախ կողմում առաջինի նման եւս մի տաղավար կա, որի մեջտեղում՝ լայնատարած կամարակապ դահլիճն է իր ավազանով:

Այնտեղ գնում են սուրճ խմելու: Սա մի ըմպելիք է, որն այժմ բավականին հայտնի է: Այն Արաբիայից են բերում, եւ ջրով եռացնում են: Բոլոր արեւելցիները օգտագործում են սա եւ շատ տաք են խմում: Պարսիկները, բացի այդ ըմպելիքից, նաեւ հայտնի ծխոզներ են, նույնիսկ կանայք ու երեխաներն են մասնակցում դրան: (Նարգիլեի բացատրութունը): Բաղաքում սրա համար նախատեսված բազմաթիվ մեծ սրահներ կան, /45/ ուր լավ հավաքություն են կազմակերպվում<sup>68</sup>: ...

Այս տաղավարից մինչեւ կամուրջը ծառուղին ձգվում է գառլվայր եւ երկու հարյուր քայլից հետո հատվում է մի ճանապարհով,

68 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Matthee Rudi, *Coffee in Safavid Iran: Commerce and consumption*, - " Journal of the Economic and Social History of the Orient", Vol. 37, No. 1 (1994), pp. 1- 32.



ինչպես առաջինը, որ դուրս է գալիս ձախ կողմի պարտեզների վրա: Այս ճանապարհի տակ մի մեծ առու է անցնում, որը հատում է ծառուղին՝ աջից ու ձախից, եւ երկու հարյուր քայլի վրա ավարտվում է Ջուլֆայի կամրջով, որի նկարն այստեղ ունեք:

Կամուրջը կառուցված է լավ աղյուսից՝ միակցված սրբատաշ քարերով: Այն շուրջ քառասուն ոտնաչափ երկարությունն եւ տասն ոտնաչափ լայնությունն ունի: Նրա տակով անցնող գետը Ջենդերուղ անվանումն ունի եւ խորունկ չէ. երկու օրվա հոսքից հետո իր արագությունը կորցնում է տարբեր վտակների պատճառով, որոնք ուռգում են հողերը: Այս կամուրջը միատարր է՝ ծայրերը ավելի բարձր չեն, քան կենտրոնը: Յուրաքանչյուր կողմում յոթ-ութ ոտնաչափ լայնությամբ տաղավարներ կան, որոնք ձգվում են /46/ ծայրից ծայր՝ կապված երեսուն ոտնաչափ բարձրությունն ունեցող կամարներով, ընդ որում զրանց մի մասը լուսամուտներ ունեն, իսկ մյուսները՝ ոչ: Իսկ այն կամարները որոնք պահում են կամուրջը բազմաթիվ են, սակայն փոքր են ու ցածր: Կամրջի երկայնքով ձեռքով շարված քարերի վրայով կա մի նեղ ճանապարհ, որն անցանելի է, երբ ջուրը ցածր է: Կամրջի վրայից կարելի է իջնել պատի վրա շինված աստիճաններով, աստիճաններ կան նաեւ տաղավար բարձրանալու համար: Աջ կողմում, քառորդ լյո հեռավորության վրա, նույն գետի վրա մի այլ կամուրջ էլ կա, բայց՝ շատ հասարակ եւ նույն երկարությամբ: Այն կոչում են Շիրազի կամուրջ, քանի որ (Շիրազի) ճանապարհին է գտնվում: Այն առավել գեղեցիկ է քան առաջինը, քանի որ կենտրոնում վեց կողմերից տեղ ունի, որտեղ գետը գեղեցիկ կասկադով է թափվում՝ համապատասխան շինված աստիճանների շնորհիվ: Ջուլֆայի կամրջից դուրս գալիս գտնում եք ձեր ծառուղին, որը եւս ութ հարյուր քայլ շարունակվում է, ինչպես տեսնում եք նկարում: Կենտրոնով անցնող առավելը գալիս է հարեւան լեռներից: Շուրջ չորս հարյուր քայլ անելուց հետո բարձրանում ենք տասը-տասներկու ոտնաչափ, ապա շարունակում գետի արքայի պարտեզը, որը կոչվում է Հազարջերիբ՝ այսինքն

հազար արպան<sup>69</sup>: Ջուլֆա քաղաքը տարածվում է աջ կողմում՝ գետի երկայնքով:

Այս քաղաքն այդպես է կոչվում քանի որ կառուցվել է հին Ջուլֆայի հայերի կողմից: Այն գտնվում է Հայաստանում Արագ գետի ափին եւ այժմ ամբողջովին ավերված է: Շահ Աբասը գաղթեցրել է բնակչությանը: Սկզբում նրանք բնակվում էին Սպահանում: Բայց որպեսզի կրոնական տարբերությունները նրանց եւ պարսիկների լավ հարաբերությունները չխաթարեն, նրանց տրվել է այս տարածքը, որտեղ ոչ միայն իրենք են լավ հարմարվել, այլեւ նրանց օրինակով այստեղ բնակություն հաստատելու են եկել նաեւ այլ հայեր, ինչպես երեւանցիները, թավրիզեցիները, որոնք ամեն մեկն իր թաղը անվանակոչեց հին բնակավայրի անունով:

Ի վերջո այս քաղաքն այնքան է ծաղկել, /48/ որ նույնքան մեծ է որքան Թուրը (Ֆրանսիայում) եւ նույն տեսքն ունի: Նրա երկայնքով երկու գլխավոր փողոցներ են ձգվում, որոնցից մեկը յուրաքանչյուր կողմում չինարներ ունի: Դրանք ուռգվում են փոքրիկ առվակով, որը բոլոր փողոցներով հոսում է եւ ուռգում է նաեւ բոլոր տների պարտեզները: Այնպիսի փողոց չկա, որ գոնե մեկ կողմից չինարների շարքով պատված չլինի: Տներն այստեղ նման են Սպահանի տներին, նրանց մեջ կան նաեւ շատ ավելի մաքուրներ:

Ջուլֆայի բնակիչները արքայից ստացել են առանձնաշնորհ. ոչ մի մահմեդական իրավունք չունի այնտեղ բնակվելու: Այսպիսով՝ այնտեղ բոլորը հայեր են, եւ այդ անունը նաեւ իրենց հավատքն է մատնանշում, այլ ոչ թե երկիրը, որը մասամբ պատկանում է թուրքերին, մասամբ էլ՝ պարսիկներին: Նրանք ունեն քսանից ավելի եկեղեցիներ՝ հրաշալի կառուցված գմբեթներով, շատ մաքուր ու սրբապատկերներով զարդարված, որոնք հայ վաճառականները եւրոպայից են բերում: Միայն մեկ խորան ունեն եւ օրական՝ ընդհամենը մեկ պատարագ, իսկ որոշ տոների ժամանակ այն միայն կիրակի օրն է կատարվում: /49/ Նրանց պատարագը շատ եր-

69 Հին ֆրանսիական չափի միավոր. 1 արպանը = 58,47 մ:



կար է եւ երգեցողությունն էլ արտակարգ է: Նրանք զանգեր չունեն եւ օգտագործում են տախտակե մի գերան, որի վրա ուժգնորեն հարվածելով՝ քրիստոնյաներին հրավիրում են աղոթքի, ինչում նրանք շատ պարտաճանաչ են: Զուլֆայում մի եպիսկոպոս ունեն, որին մեծապես պաշտում են: Նրանց ոչ կուսակրոն քահանաներն ամուսնացած են եւ այնքան էլ հարգված չեն: Նրանց հոգեւորականները Սուրբ Բարսեղի միաբանությունից են, ամուրի են ու շատ խստաբարո, շատ հարգված են, կրոնական կարգերին լավ են տիրապետում, եւ ոչ կուսակրոն քահանաները նրանց որպես սպասավոր են ծառայում: Որքան նրանց աստիճանը բարձրանում է, այնքան նրանք խստաբարո են դառնում: Ունեն նաեւ մի քանի մայրապետներ, որոնց նկատմամբ օրենքը շատ խիստ է:

Այս քրիստոնյաները հերձվածող են եւ ենթարկվում են մի պատրիարքի, ով մնում է Երեւանին մոտ գտնվող Երեք Եկեղեցիների գյուղում<sup>70</sup>: Նրանք խառնված են իրենց հերձվածի, աղանդի, ավելորդապաշտության, առասպելական ավանդութիւնների եւ այն աստիճան տգիտության մեջ, որ եթե նրանց զրկես հաճախակի, խիստ ու անհրաժեշտ պահքերից /50/ ու երկար աղոթքներից, նրանց քրիստոնեությունից կմնա միայն մկրտությունը, պատարզը, Մուհամմեդի նկատմամբ նրանց ատելությունը, քանի որ աստվածաբանություն չունեն:

Նրանք ազատ են Պարսկաստանի ողջ տարածքում, կարող են իրենց ուզածի պես հագնվել, ինչը չեն կարող անել Թուրքիայում, ուր թանկարժեք կերպասներն ու կանաչ գույնը նրանց համար արգելված է:

Զուղահայերի առավելությունն այն է, որ կարող են հեշտությամբ խոսել երեք լեզվով (ի դեպ իրարից շատ տարբեր)՝ պարսկերենը, որ երկրի լեզուն է, թուրքերենը, որ առեւտրի լեզուն է, հայերենը, որ իրենց մայրենին է ու հավատքի լեզուն: Այն երկու տեսակ է՝ գռեհիկ լեզուն, որով բոլորն են խոսում եւ զրականը, որը պաշ-

տամունքի լեզուն է, եւ միայն հոգեւորականներին է հասու: Բացի դրանից, նրանցից շատերն իտալերեն էլ են խոսում եւ նույնիսկ ֆրանսերեն, հատկապես՝ պատանիները, որոնք մեր հիսուսյան հայրերի մոտ են սովորում: Վերջիններս այնտեղ շատ գեղեցիկ կացարան ունեն:

/51/ Ժամանակին հայերն օգտվել են հունական տառերից, սակայն չորս հարյուր տարի է<sup>71</sup>, ինչ ունեն իրենց սեփականը, գրում են ձախից աջ, ինչպես մենք:

Այս մարդկանց զբաղմունքը առեւտուրն է, որ ծավալում են ողջ աշխարհով: Նրանք այն իրագործում են շատ մաքուր ձեւով իրենց մեծ համբերության եւ երբեք չվհատվելու շնորհիվ, ինչպես նաեւ՝ իրենց երկաթյա առողջության, որի շնորհիվ կարող են ամեն տեսակ ճամփորդություններ ձեռնարկել նույնիսկ բավականին մեծ տարիքում: Եթե փառասիրությունը նրանց չչփացներ, Զուլֆայում շատ մեծահարուստներ կուներնային: Այս քաղաքը կառավարվում է իրենց հավատակից մի զատավորի կողմից, ում նշանակում է արքան:

Եթե Զուլֆայից մի քառորդ լյո հեռանաք դեպի լեռը, շատ գեղեցիկ մի գյուղ կտեսնեք, որ բաղկացած է երկար փողոցից, այն կոչվում է Գերբարազ...

70 Իմա՝ Էջմիածին:

71 Հայոց գրագիտության ստեղծման ժամանակի վերաբերյալ հեղինակի դատողությունները աչքի են ընկնում իրենց անգիտությամբ:



ԺԱՆ ԴԵ ԹԵՒԵՆՈ

Ժան դը Թեւընոն (1633 - 1667), ով 17-րդ դարում Պարսկաստան ճանապարհորդած երեք ամենաՀայտնի ֆրանսիացի ճամփորդներից մեկն էր (Թավերնիեի եւ Շարդենի հետ միասին), գուցե եւ չի ունեցել այն մեծ հեղինակութիւնը, ինչ նրա երկու Հայրենակիցները, սակայն մասնագետների կողմից հենց նա՝ է արժանացել Homo Viator (մարդ-ճանապարհորդ) կոչմանը: Թեւընոյի հիմնական արժանիքն այն է, որ նա, դիտելուց, նկարագրելուց եւ կրթելուց բացի, ոչ մի այլ նպատակ չի հետապնդել, ի տարբերութիւն Թավերնիեի, Շարդենի կամ Ռաֆայել Դյու Մանի, Հայր Պասիֆիկ դը Պրովանսի, որոնց հատուկ էին միսիոներական, քաղաքական, շահեկան մտահոգութիւնները (վերջիններս եւս Հուշագրութիւններ են թողել Ասիայում անցկացրած շրջանի վերաբերյալ):



Թավերնիեի եւ Շարդենի պես, Թեւընոն եւս փարիզցի է, ծնվել է 1633 թ. հունիսի 7-ին: Ստացել է ժամանակի համար բավականին լավ կրթութիւն: Նա ժառանգել էր մի ունեցվածք, որը կրավարարելի կատար անկախ կենցաղ վարելու համար, ինչը շատ կարեւոր էր ճամփորդութիւններ ձեռնարկելու մտադրութիւն ունեցող պատանու համար: Թեւընոյի հորեղբայրը Մելքիսեդեկ Թեւընոն էր (1621-1692)՝ ճանապարհորդութիւնների մեծ սիրահար, բազմաթիվ ուղեգրութիւնների հեղինակ ու հրատարակիչ, ով տիրապետում էր բազ-

մաթիւ լեզուների: Նրան մշտապես շրջապատում էին ժամանակի Հայտնի մտավորականներն ու ճանապարհորդները: Իսկ 1684 թվականից նա Արքայական Գրադարանի մատենապետն էր (ի դեպ, նրա անձնական գրադարանի երեք Հայերեն ձեռագրերը՝ «Սաղմոսարան, [1653-1673]», «Մաշտոց ձեռագր, [1572 թ.]» եւ «Բարոյական ասացուածք, [17-րդ դ. սկիզբ]», նրա մահից հետո փոխանցվել են Ս. Ժերմեն դե Պրեի արքայութեան, իսկ հեղափոխութիւնից հետո՝ Արքայական Գրադարանի համալրածուին: Այժմ պահպանւում են Յրանսիայի Ազգային գրադարանի արեւելյան ձեռագրերի եւ գրականութեան 43, 122, 287 համարների տակ<sup>72</sup>:

Թեւընոյի առաջին ճամփորդութիւնը 1652 թ. էր դեպի Անգլիա, Հոլանդիա, Գերմանիա, Իտալիա, Մալթա, Դարդանել, Գալիպոլի, Կոստանդնուպոլիս, ապա Անատոլիա՝ Բուրսա, Իզմիր, Բողրում, Ռոդոս, Ալեքսանդրիա, Կահիրե, Սուեզ, Սինայ եւ Սուբր Երկիր: 1662 թ. ապրիլին Թունիսով վերդարձել է Լիվոռնո: Այս ճամբորդութիւնից հետո հրատարակել է «Relations d'un voyage fait au Levant dans laquelle il est curieusement traité des estats au Grand Seigneur et des singularitez particulieres de l'Archipel, Constantinople, Terre-Sainte, Egipte, pyramides, mummies, déserts d'Arabie, La Meque, et de plusieurs autres lieux de l'Asie et de l'Afrique outre les choses mémorables arrivées au dernier siège de Bagdat, les cérémonies faites aux réceptions des ambassadeurs du Mogol et l'entretien de l'auteur avec Pretejan, où il est parlé des sources du Nil. Par Monsieur de Thévenot». Paris, MDCLXV (1665) ուղեգրութիւնը:

«Իր ուղեգրութիւնը շարադրելիս Թեւընոն երկու նպատակ է հետապնդում. ա) օբյեկտիվ շարադրել, բ) գրել այնպես, որ շարադրանքն օգտակար լինի: Ուղեգրութիւնները ժամանակին գիտական գրականութեան արժեք էին ստանում: Այս տեսանկյունից 17-րդ դ.

72 St' u Kevorkian R. H., Ter-Stépanian A., Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue, Paris, 1998, pp. X-XI.



մեծ ճամփորդությունների մասին զբաղանդությամբ օրինակ էր ծառայում, ճանապարհ էր բացում, ընտրություն էր առաջարկում»<sup>73</sup>:

Մեզ առավել հետաքրքրող երկրորդ ճամփորդությանը թեև ընդհանուրապես է հղել արդեն 1663 թ. հոկտեմբերին: 1664 թ. հունվարին Մարսելում նավ է նստել՝ այս անգամ մտադրվելով հասնել մինչև Հնդկաստան: Անցնելով Ալեքսանդրիա, Դամասկոս, Հալեպ, Մոսուլ, Բաղդադ՝ Պարսկաստան է հասել Մենդելիի ճանապարհով, որը նրան Համազան է ուղղորդել: Հինգ ամիս մնալով Սպահանում՝ թեև ընդհանուր հյուսիս էր շարժվել և Վեդարավորների միսիայի հիմնադիր Հայր Ռաֆայել դյու Մանին, հանդիպել է թավերին, Շարդենին, Դուլին Դելանդին:

Ճամփորդելով Հնդկաստանի բազմաթիվ դավառներով՝ 34-ամյա թեև ընդհանուր 1667 թ. նոյեմբերի 28-ին մահացել է հյուսիսային ուստեղից վերադարձի ճանապարհին՝ թավերից արեւելք գտնվող Միանեհ քաղաքում (Ատրպատական), որտեղից պատրաստվում էր ուղեւորվել դեպի արեւմտյան կողմերը<sup>74</sup>: Նրա ուղեգրության մեծ

73 Sté J. Boissel, *Le voyage en Perse de Jean Thévenot*, - "Cahiers de l'Association internationale des études française", 1975, vol. 27, N 1, p. 115.

74 Այս մասին ախտասանքով վկայում է նաև ֆրանսիացի հայտնի միսիոներ Ռաֆայել դյու Մանը՝ 1668 թ. ապրիլի 3-ին Հալեպում Ֆրանսիայի արքայական խորհրդական, հյուսիսային Ֆրանսուա Բարոնին. «... Նրա օրագրությունը շատ բան կարող է պատմել Հնդկաստանի եւ Պարսկաստանի ներքին կյանքի վերաբերյալ, որին նա տեղյակ էր իր սեփական փորձով: ... Թավերից սպասում եմ նրա իրերի հասնելուն, որոնք իր ձեռքով գրված կտակի համաձայն, պետք է ուղարկեմ Փարիզ, եղբորը՝ Պարոն Թեւրնոյին ... Տիրությունը սեղմում է սիրտս այս հմտագույն անձնավորության (vertueuse personne) կորստի առիթով: Նրան ինձ մտ հյուրընկալելով երկու անգամ՝ շուրջ վեց ամիս, բավականաչափ ճանաչեցի նրա արժանիքները» (տե՛ս Richard Fr., *Raphaël du Mans, missionnaire en Perse au XVII s., T. I., Biographie. Correspondance*, Paris, 1995, pp. 220-222):

Նշենք, որ Ռ. դյու Մանն իրագործում է կտակը, ուղարկելով Թեւրնոյի իրերը Ֆրանսիա: Այդ իրերի մեջ էին նաև հեղինակի բազմաթիվ բուսաբանական հավաքածուներով տետրակները՝ համապատասխան նշումներով, նաև մի շարք (այդ թվում նաև պարսկերեն) ձեռագրեր, որոնք պահվում են Փարիզի Ազգային Գրադարանի համապատասխան բաժնում (տե՛ս Richard Fr., նշվ աշխ. էջ 221, ծանոթ. 206): Թեւրնոյի «Կտակի» հրատարակությունը տե՛ս Heller M., *Le testament olographe de Jean de Thévenot*, in XVII siècle, 167, n° 2 (avril-juin

մասը, հրատարակության է պատրաստել նրա կտակարարը՝ հիմնվելով հեղինակի ճանապարհորդական նոթերի վրա, իսկ հրատարակել է արքունի թարգմանիչը՝ արեւելագետ Ֆրանսուա Պետի դը Լա Կրուան<sup>75</sup>, որի կնքահայրն էր Թեւրնոն: Թեւրնոյի «Ուղեգրությունն» ունեցել է բազմաթիվ հրատարակություններ՝ մի քանի լեզուներով, որոնք այսօր էլ ուսուցողական բնույթ են կրում: Նշենք, որ նա առաջին ճանապարհորդն էր, որ սուրճ էր բերել Ֆրանսիա:<sup>76</sup>

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. *Suite du voyage de Mr. de Thévenot au Levant, dans laquelle, après plusieurs remarques très singulières sur des particularitez de l'Égypte, de la Syrie, de la Mésopotamie, de l'Euphrate et du Tygre, il est traité de la Perse et autres estats sujets au roy de Perse et aussi des antiquitez de Tchehelminar et autres lieux vers l'ancienne Persepolis, et particulièrement de la route exacte de ce grand Voyage,*

1990), p. 227-234: Այս մասին տե՛ս նաև Dirk Van der Cruyisse, *Chardin je Persan*, Paris, 1998, pp. 104-106: Նշենք, որ դյու Մանի մտ հյուրընկալությունը շատ օգտակար է եղել Թեւրնոյի համար: Վեդարավոր հայրը նրան բավական ծանոթացրել է Պարսկաստանի ներքին կյանքին: Թեւրնոյի աշխատանքը ինքնուրույն եւ անձնական դիտողականության վրա հիմնվելով հանդերձ, շատ տեղերում կրում է Ռաֆայել Դյու Մանի «Etat de la Perse» (1660) աշխատության ազդեցությունը: Դա հատկապես երեւում է բնակարանների, արհեստների, մայրաքաղաքի նկարագրության, ինչպես նաև կրոնական թեմաներով նրա շարադրանքում:

75 François Péris de la Croix (1653-1713), 1695 թվից Ֆրանսիայի արքունի արեւելյան լեզուների թարգման էր, որն այդ պաշտոնը ժառանգել էր հորից եւ հետագայում ժառանգեց որդուն՝ Ալեքսանդր Լուի Մարիին: Երիտասարդ հասակում Կոլբերը նրան ուղարկել է Արեւելք լեզուների մեջ հմտանալու նպատակով, որ վերջինս անցկացել է 10 տարի, որից երկուսը (1674-1676) Սպահանում, ծանոթանալով տեղի քաղաքական, մշակութային եւ հասարակական (այդ թվում նաև բարձրաշխարհիկ) անցողարձին: Ունի բազմաթիվ թարգմանություններ եւ տրակտատներ, այդ թվում նաև հայերեն մի բառարան: Մինչ իր մահը նա Ֆրանսիայի Արքայական Քոլեջի արաբագիտության ամբիոնի վարիչն է եղել (նրա մասին տե՛ս Richard Fr., *Raphaël du Mans, missionnaire en Perse au XVII s., T. I., Biographie. Correspondance*, Paris, 1995, p. 42, 61, 104, 22; Kroell A., op. cit., p. 25):

76 Sté J. Leclant J., *Le Café et les cafés à Paris (1644-1693)*, Annales, 1951, /1/, pp. 1-14; Michaud L. G., op. cit., t. 45, 1826, p. 383-385.



*tant par terre, en Turquie et en Perse, que par mer, dans la Méditerranée, Golfe Persique et Mer des Indes. Troisième Edition, Tome Troisième, Amsterdam MDCCXXVII, (1727)*

Ժան դը Թելընոյի Տեղեկություններից

/262/ Սպահան հասանք հինգշաբթի՝ 1664 թ. հոկտեմբերի մեկին, գիշերվա երկուսին եւ օթեւանեցինք վեղարավոր հարգարժան Հայրերի մոտ: Մեծարգո Հայր Ռաֆայել դյու Մանը, որը հոգեւորական էր եւ որի առաքինութիւնն ու կարողութիւններն ընդհանուրից շատ բարձր էին եւ կյանքն ինքը՝ օրինակելի, վանքի մեծավորն էր: Նա երկու հոգեւորական օգնականներ ուներ՝ Հ. Վալանտեն դ'Անժերը<sup>77</sup> եւ մեծարգո Հ. Ժան Բատիստ դը Լոշը<sup>78</sup>:

77 Valentin d'Angers - Սպահանի առաքելությունում ամենափիմ վեղարավոր հոգեւորականը 1631 թվականից: Տիրապետում էր արեւելյան լեզուների: Ակտիվ գործունեություն էր վարում հայ բնակչության շրջանակներում: 1660-ից արդեն վատառողջ էր: Վախճանվել է 1665 թ. հոկտեմբերին՝ 45 տարի ծառայելով վեղարավորների միսիային, որից 35-ը՝ Սպահանում: Հավաստաւոր ժողովի ներկայացուցիչներին, գանազան ճանապարհորդներին եւ այլ միսիոներներին ուղղված նրա մամակները հետաքրքիր նյութեր են պարունակում Սպահանի եւ Նոր Զուղայի հայոց աշխարհիկ եւ հոգեւոր իրադարձությունների մասին: Նրա տապանաքարը դեռեւս պահպանվել է Սպահանի հայոց Մեծ Գերեզմանատանը (տե՛ս Richard Fr., op. cit, p. 22-34, 48, 55, 61, 58, 118, 137-142, 161, 162):

78 P. Jean-Baptiste de Loches - վեղարավորների միսիոներական առաքելության մեջ էր 1660-ականներից: Ըստ Հավաստաւոր ժողովի մի զեկուցագրերի (SOCG., vol. 236, fol 57-80v.) նա եկել էր Մոսուլ՝ միսիա հիմնադրելու նպատակով, սակայն շուտով ուղարկվում է Բաղդադ՝ արեւելյան լեզուների մեջ հմտանալու եւ Պարսկաստանի միսիայում իր աշխատանքը շարունակելու համար: Լոշի Սպահան գալու ճիշտ թվականը հայտնի չէ: Զանազան մամակներից իմանում ենք, որ նա համարյա ամեն օր լինում էր Նոր Զուղայում՝ ակտիվ միսիոներական գործունեություն վարելով հայ բնակչության մեջ: Այստեղ, 1664 թ. դեկտեմբերի 11-ին, նա նույնիսկ մի գիսաստղ է հայտնաբերում (comète), որը ցույց է տալիս նրա զարգացածության աստճանը: 1666 թ. նա մեկնում է Բաղդադ, 1669-ից Բաղդադի միսիայի մեծավորն էր: 1672-ից նրա անունը դադարում է երեւալ միսիոներական գրագրություններում (տե՛ս Richard Fr., op. cit., p. 21, 61, 65, 117, 153, 156, 166, 182):

Գիրք II

/263/ Սպահանում տեսածներս գրելուց առաջ, չեմ կարծում, որ ավելորդ կլինի ընթերցողին ընդհանուր գաղափար տալ Պարսից երկրի մասին եւ ասել, որ այս մեծ թագավորութիւնը շրջապատված է բարձր լեռներով եւ կուսական անապատներով, որոնք նրան պաշտպանում են ամենահզոր թշնամիների հարձակումներից: Եւ իրականում այն ուժերը, որոնք դրա համար են նախատեսված ... կամ բանակները, որ ոտքի են հանվել մեր օրերում թուրքերի եւ այլ հզոր պետութիւնների դեմ, երկրի մեծութիւնը համեմատ այնքան աննշան են, որ չենք կարող Պարսկաստանը դիտել հզոր պետութիւնների շարքում:

Այս թուլութիւնը պատճառը երկրում շրջանառվող քիչ դրամն է, որը չի բավարարի մեծ բանակ ոտքի հանելու եւ առաջիկ եւս այն պահելու համար: Դրամի այս սակավութիւնը պարսիկների իրագործած փոքր ապրանքաշրջանառութիւն արդյունքն է, քանի որ արտահանելու համար սեփական ապրանքի փոքր անսականի ունեն՝ մի քանի մետաքսատեսակներ, որոնք արտադրվում են Գիլանում եւ Մազանդարանում, գորգեր ու դիպակներ եւ համարյա ոչ մի նշանակալից այլ բան: /264/ Այնպես որ, Պարսկաստանի մասին կարող ենք ասել, որ այս երկիրը նման է կամրջի վրա գտնվող մի քարվանսարայի, որտեղով անցնում են կերպասներն ու համեմունքները՝ Եւրոպայից եւ Թուրքիայից դեպի Հնդկաստան, իսկ Հնդկաստանից՝ դեպի Թուրքիա եւ Եւրոպա: Եւ այս կամրջի շնորհիվ Պարսկաստանը մի փոքր դրամական շահ է ունենում: ...

/268/ Սպահանն ունի մեծ արվարձաններ, որտեղ արժանավոր շատ մարդիկ են բնակվում: Ամենից լավ, գեղեցիկ ու հարուստ կառուցված է /269/ Ջուլֆայի արվարձանը, որը գտնվում է Ջենդերուզ գետի մյուս կողմում եւ որի պարտեզների ցանկապատները գետեզերքին են շինված: Այս բուրգում կամ արվարձանում են բնակվում հայերը, որոնց Շահ Աբաս I-ը այստեղ է գաղթեցրել Բարձր Հայքում նույնանուն քաղաքն ավերելուց հետո: Նրանք նոր բնակավայրին ցանկացել են իրենց հին քաղաքի ու ծննդավայրի անու-



նը տալ՝ հիշատակը պահելու համար: Ուստի մյուսներից տարբերելու համար այստեղի բնակիչներին կոչում են Ջուլֆալու՝ այսինքն՝ Ջուլֆայի բնակիչ: Ջուլֆայի շուրջը կան նաև լավ կառուցված բազմաթիվ այլ արվարձաններ (կանտոններ), ուր ինչպես գաղթական շատ հայեր, այնպես էլ այլազգիներ են ապրում: Այդ արվարձաններից են Երեւանը, Նախչեւանը, Շաքսաբանը, Սիրու-Կայնանը, Գավրը, Սիչանը, Մեհրիգանը եւ այլն: Թավրիզ Աբադ կամ Աբխ. Աբադ կոչվող Թավրիզլուի արվարձանը, որը Ջուլֆայի դիմաց՝ Սպահանի կողմից գետի մյուս կողմում է գտնվում, գեղեցիկ է է եւ ո՛չ էլ լավ է կառուցված: Արվարձաններում գտնվող հարուստների տները մեծ պատշգամբներ ունեն որոնց առջեւ՝ պարտեզի մեջտեղում, ջրով լի ավազաններ կան, իսկ պարտեզները լի են երկու երեք տեսակ ծաղիկներով, ինչպես օրինակ՝ հնդկական մեխակները եւ այլն, որոնք տարվա մեջ ամիսներ շարունակ ծաղկած են ու շատ տպավորիչ: Այս պատշգամբներում պարսիկները զովանում են ու իրենց ծխամորձը ծխում: Սա նրանց համար ամենահաճելի զբաղմունքն է, երբ տանն են լինում: ...

/270-272/ Սպահանի Մեյդանի Ակարագրությունը:

/309/ Պարսիկների մոտ շատ է ընդունված նարգիլե (ղեյլան) ծխելը, ինչպես նաև նարգի կամ ճատրակ խաղալը եւ այս հարցում հայերը նրանց շատ են ընդօրինակում:

/320/ Հայ կանայք տանը դեմքի մի մասը ծածկում են քողով, որը փակում է քիթն ու իջնում մինչև կզակն ու կուրծքը: Միայն այդ ազգի երիտասարդ աղջիկներն են մինչև ամուսնանալը տանը միայն կզակը փակում: Պետք է զարմանալ, որ կանայք այսպես քողարկված են, քանի որ ողջ Պարսկաստանում, ինչպես նաև Թուրքիայում, նրանք այնպիսի ջերմեռանդությամբ են պահպանում տղամարդկանց մոտ իրենց ցույց չտալու սովորույթը, որ նույնիսկ տղամարդն ամուսնանալիս իր կնոջը տեսնում է միայն հարսանիքի (պսակի) գիշերը<sup>79</sup>: Կաթոլիկները եւս հետեւում են այս

79 Պարսկահայ կնոջ տարազի մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 23:

սովորույթանը: Իմ այնտեղ եղած ժամանակ Շիրազի կարմելիս Հայերը մի այրի վրացուհու /321/ ամուսնացրին Շիրազում ծնված մի կաթոլիկի հետ, որը Սինյորա Մասնի Զիոերիդայի՝ Սինյոր Պիետրո դելլա Վալլեի<sup>80</sup> առաջին կնոջ ազգականն էր: Իրականում շատ զարմացա՝ այս կնոջն ամբողջությամբ քողարկված տեսնելով իրեն ամուսնացնող հոգեւոր Հոր առջեւ, սակայն նա այս ձեւով պսակվեց: Չեմ կարծում, որ այս հանգամանքը տեղ կգտնի Ֆրանսիայի մեր կանանց զիտակցության մեջ, որոնք այնքան են չարչարվում իրենց ցույց տալու համար, որքան պարսկուհիները՝ իրենց քողարկելու:

/322-323/ Քուրսիի նկարագրությունը:

/323/ Նրանք ամենեւին մոմակալներ չեն գործածում. բոլորը, այդ թվում նաև արքան, լամպեր են օգտագործում, որոնց մեջ կտոր-կտոր ճրագու են դնում, իսկ ինչ վերաբերում է նավթի յուղին, որը Կասպից ծովի մոտերքից է բերվում, օգտագործում են միայն ջնարակման արվեստում:

/323-331/ Ուտեստները եւ դրանց պատրաստման ձեւերը պարսիկների մոտ:

80 Pietro Della Valle (1586-1652) - Իտալացի գանապարհորդ, բանաստեղծ, երաժիշտ, ծնվել է Հոմոնում: Ծամփորդել է Միջին Արեւելքի տարբեր երկրներում, եղել է Հնդկաստանում: Հակաթուրքական լիգայի ստեղծման նպատակով 1616-1617 թթ. մեկնում է Պարսկաստան եւ հյուրընկալվել է Օսման: 1620-1621 թթ. նա Սպահանում է: Վերդառնալով Իտալիա, նա Արեւելքի հարցերով Պապի եւ տարբեր հոգեւոր միսիաների խորհրդական է նշանակվել: Նրա աշխատությունը 1-ին անգամ իտալերեն լեզվով լույս է տեսել Հոմոնում 1650 թ., իսկ «Voyages de Pietro della Valle, gentilhomme romain, dans la Turquie, l’Egipe, la Palestine, la Perse, les Indes Orientales et autres lieux» ֆրանսերեն լեզվով՝ Փարիզում 1661-1663 թթ.: Այն ունեցել է տարբեր լեզուներով բազմաթիվ հրատարակություններ, ինչպես նաև տպագրվել է հատվածաբար՝ զեկուցագրերի ձեւով: Թեւեռնոն իր ուղեգրության 1-ին հատորում մեջբերել է Վրաստանի մասին Դելլա Վալլեի Պապին հասցեագրված զեկուցագիրը: (Նրա մասին մանրամասն տե՛ս Michaud L. G., op. cit., t. 47, 1827, pp. 359-362.: Ջուլյան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ երոպացի հեղինակների, XIII- XVIII դդ., գիրք Ա, Երեւան, 1990, էջ 36-38):



/323-325/ Հատուկ խոսվում է բրնձի պատրաստման եղանակների մասին:

/325-326/ Պարսկաստանում ընդունված է ճաշակել ոչխարի կամ գառան միս եւ, նայած եղանակային պայմաններին (սեզոնին), հավի կամ աքլորի միս, որը վերջերս է մտել նրանց խոհանոցային ավանդույթի մեջ: Ընդհանրապես այս մաստեսակները նրանք խաշած են ճաշակում, ոչ թե տապակած: Իսկ եթե փորձում են այլ ձեւով եփել՝ ապա փոքր պատառներով: Իսկ ամբողջական ոչխարը կամ գառը նրանք եփում են մի տեսակ փոքրի մեջ, որոնց բերանը վերելում է (թոնիր - է. Թ.): Փուռը լավ տաքացնելուց հետո կենդանուն կախում են փուր մեջ եւ տակը մի աման են դնում, որպեսզի ճարպը ծորա դրա մեջ: Այն եփվում է բոլոր կողմերից: Եփվելուց հետո, մատուցում են կտորներով: Բազմաթիվ կրպակներում վաճառում են համարյա բոլոր ձեւերով եփված այս մսեղենն այնքան, որքան ցանկանում եք, եւ իհարկե, շատ լավ են պատրաստում:

Հայերը ուրիշ ձեւով են պատրաստում ամբողջական ոչխարը: Այն մորթազերծ անելուց հետո, կրկին փաթաթում են իր իսկ մորթով եւ դնում հանգած ածուխների վրա, ապա վրայից ու տակից լավ ծածկում են նույն հանգած ածուխներով, որպեսզի ամեն կողմից լավ եփվի, իսկ մորթին թույլ չի տալիս, որ այրվի:

/327-328/ Նրանք շատ են օգտագործում հախճապակյա ամանեղեն, որը շատ գեղեցիկ է, հիմնականում գեղեցիկ ջնարակի պատճառով, որով պատում են դրանք: Այն պատրաստվում է Քերմանում (Kermān), եւ ինձ մատահեցրին, որ այստեղից են հուլանդացիները վերցրել իրենց կեղծ հախճապակու արտադրությունը, որին մենք «հուլանդական հախճապակի» անունն ենք տալիս:

/328/ Խոսում է մածուկի մասին (yogourt), որը հեղինակը սիրում է ուտել մանր կտրատած սամիթով:

/342/ Պարսկաստանի մետաքսը պատկանում է (իրենց) ավագանուն, այս արհեստով զբաղվող յուրաքանչյուր արհեստանոցից որոշ գումար էր գանձվում: Բազմաթիվ հողեր էին վարձով տրվում գյուղացիներին, որոնք խնամքով դրանք վարում էին ու ցանում,

եւ եկամուտի մեկ հինգերորդը, իսկ որոշ տեղերում նույնիսկ կեսը տալիս էին թագավորին: Մուլաներից մեկն ինձ մի օր ասաց, որ ինքը երբեք չի աղոթի արքային պատկանող այդ հողերի վրա, որովհետեւ դրանք «հարամ» են: Արքան դրանք չի գնել, այլ ուժով է վերցրել, ուղղակի հափշտակել է խեղճ ժողովրդից:

/343/ Թեֆենքչիները<sup>81</sup> գյուղերից հավաքված՝ հիմնականում ուրացյալ հայերից բաղկացած մարդիկ են, վճարվում են գուլամներին նման (հավատափոխ վրացիներ)՝ հինգից-ութ թուման եւ համարվում են հեղինակազրկված գյուղացիներ: Նրանք /344/ իրավունք ունեն հրացան կրել եւ հեծյալ են, իսկ մարտերի ժամանակ հետիոտն են: ... Այս զինվորների երեխաները յոթ տարեկանից սկսած ստանում են թոշակ, որը տարիքի հետ ավելանում է:

/351/ Գոյուլթյուն ունի նաեւ քալանթարի (ամենամեծի) պաշտոնը: Այն նույնանում է հռոմեացիների ժողովրդական Տրիբունի, կամ մեր՝ վաճառականների «դատավորի, վերակացուի» պաշտոնի հետ: Այն կոչված է պաշտպանել ժողովրդին կառավարիչների բռնություններից, հարստահարումներից, լուծելու նրանց միջեւ եղած զանազան վեճերն ու անհամաձայնությունները: Այս պաշտոնյան բավական շատ է վճարվում, քանի որ նրանք, ովքեր ուզում են որոշ հարցեր լուծել, մեծ նվերներ են տալիս նրան, որպեսզի իրենց պաշտպանի խանի մոտ: Բոլոր քաղաքներում արքան է նշանակում քալանթարներին<sup>82</sup>:

81 Թոֆանգչի աղասի - Պետության հեմապուներ կոչվող արքունի չորս ամիրներից մեկն էր: Նա միսրաշիների, յուզբաշիների, ջաղչիների ու բոլոր հրացանակիրների պետն էր: Թոֆանգչի - հրացանակիր (տե՛ս Մատեմադարանի պարսկերեն վավերագրերը. հրոպարտակներ. պրակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Պ. Կոստիկյանը, Երեւան, 2005, էջ 192):

82 Քալանթար էին կոչվում Նոր Ջուղայի քաղաքագլուխները, որոնք զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով եւ հետեւում էին քաղաքի հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի մեծահարուստ վաճառականների կամ խոջաների շարքից: (Տե՛ս Կոստիկյան Ք., ճշվ. աշխ., պրակ. IV, էջ 111: Նոր Ջուղայի քալանթարների ցանկը հետեւյալն է ըստ Ծ. Խաչիկյանի. Սաֆար (1605-1618 թթ.)



/361/ Ինչ վերաբերում է ժառանգության իրավունքին, նրանք մի շատ անարդար օրենք ունեն, որը ստեղծված է Մուհամմեդի օրենքի բարգավաճման համար: Եթե քրիստոնյան ընդունում է Մուհամմեդի օրենքը, նրա ոչ մահմեդական ազգականներից որեւէ մեկի մահվանից հետո, վերջինիս ողջ ունեցվածքն անցնում է իր մահմեդականացած ազգականին՝ ի վնաս առաջինի երեխաների, չնայած կարող է նրանց հետ հինգերորդ աստիճանի ազգակցական կապ ունենալ: Նա ով հաստատել է այս օրենքը, հավատացրել է, որ այն թույլատրված է եղել տասներկու Իմամներից մեկի՝ Ջաֆարի<sup>83</sup> կողմից եւ Ջաֆարն էլ վստահեցրել է, որ իրեն այդ մասին հայտնել է Աստված: Այդուհանդերձ այս դժբախտությունն անբուժելի է, քանի որ մահմեդական դատավորները հասկանալով այս օրենքի անարդարությունը, հնարք էին գտել այն շրջանցելու: /362/ Մահա-

Նազար (1618-1636 թթ.)  
Սարֆրազ (1636- 1656 թթ.)  
Աստվածատուր Միրիթեցի (ճիշված 1671 թ.)  
Աղափիրի (ճիշված 1671 թ.)  
Ղուկաս (ճիշված 1687 թ.)  
Ավետ որդի Խաչիկի (ճիշված 1691 թ., որն ընդունեց մահմեդականությունն եւ կոչվեց Մահմատ Հուսեյն բեկ)  
Ղուկաս (հավանաբար 1687 թ. ճիշված Ղուկասն է, որ կրկին քալանթար է դարձել)  
Ստեփան Մուսաբեկեցի (ճիշված 1708 թ.)  
Ջաքար (ճիշված 1709 թ.)  
Խաչիկ (որը 1722 թ. գլխատվեց աֆղանների կողմից)  
Ամիրջան որդի Դավությանի (ճիշված 1739 թ.)  
Նազար (ճիշված 1743-45 թթ.)  
Ավետ որդի Սարգսի (ճիշված 1747 թ.)  
Սարգիս (ճիշված 1750-51 թթ.) (տե՛ս Խաչիկյան Շ., նշվ. աշխ., էջ 29-30: Հմմտ. Aslanian S. D., *From the Indian Ocean to the Mediterranean e Global Trade: Networks of Armenian Merchants from New Julfa, Univers. of California Press, 2011, pp. 144-169, 185-189; Барсегов Ю. Г., указ. соч.; Ghougassian V., The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century. Atlanta, 1998, p. 294.*

<sup>83</sup> Իմամ Ջաֆարի անունով գործադրվող այս օրենքի մասին տե՛ս ծանոթագրություն 56:

մերձ քրիստոնյաների ունեցվածքն իբր վաճառում էին նրան շատ մոտիկ մարդկանց, որոնք էլ կտակի միջոցով ամբողջությամբ վերադարձնում էին տերերին: Եւ կեղծ գնորդները վկայում էին արդարադատության առջեւ, որ գոհ են հանգուցյալի թողած ունեցվածքից, որն իրենք գնել են: Դատավորները հեշտությամբ ընդունում էին գործարքը, քանի որ դրանից որոշակի շահ էին ակնկալում, որից անշուշտ կզրկվեին, եթե որեւէ մահմեդական ժառանգեր այդ ամենը:

/364-368/ (Մուկոպյան դեսպանների անքաղաքավարի կեցվածքն ու պարսկական արքունիքի կողմից նրանց վատ ընդունելությունը:)

Իմ կարծիքով նրանց (իմա՝ պարսիկների - է. Թ.) անիմաստ սնոտիապաշտությունն այն է, որ երբ նրանց տունը հրդեհվում է, նրանք չեն հանգցնում կրակը: Այնտեղից դուրս են բերում այն, ինչ կարող են փրկել, եւ թողնում են, որ կրակը կուլ տա այնքան բնակարաններ, որքան կարող է՝ մինչեւ ուրիշ՝ այլադավան մարդիկ՝ /374/ հանգցնեն այն: Նրանք քրիստոնյաներին թույլ չեն տալիս մզկիթ մտնել (ինչպես նաեւ իրենց բաղնիքները), քանի որ նրանք անմաքուր են համարվում եւ եթե հանկարծ բռնեն որեւէ մեկին, ստիպում են մահմեդականություն ընդունել կամ էլ, եթե հնարավորություն ունի, մի կլորիկ գումար տուգանք մուծել, իսկ եթե ոչ՝ նա ենթակվում է դաժան դազանակածեծի: Նրանք վիրավորվում են, երբ քրիստոնյաներն իրենց հետ վիճում են հոգեւոր թեմաներով, մինչդեռ Թուրքիայում դա մահապատժի արժանի ոճիր է համարվում:

/390/ Այժմ խոսենք Հայերի մասին, որոնք Սպահանում ապրող ազգությունների մեջ նշանակալի թիվ են կազմում: Այս քաղաքում նրանց թաղը Ջուլֆան է եւ նրա շրջակայքը: Նրանք տարեկան թագավորին հինգ հարյուր թուման են վճարում: Նրանց կառավարիչը Հայ է, որին /391/ կոչում են Քալանթար, այսինքն՝ գլխավոր, եւ արքա՛ն է նրան նշանակում կամ հանում՝ իր հայեցողությամբ:



Նրանք բոլոր գործերով ու խնդիրներով քալանթարին են դիմում եւ նա՛ է հարկում այն հինգ հարյուր թումանը, որ ամեն տարի վճարում են թագավորին: Բայց, քրեական հանցանքները պարզելու համար քալանթարից բացի թագավորի կողմից մի սպա է կարգված, որը դարուղա<sup>84</sup> (Déroga) է կոչվում:

Վստահ եմ, որ հայերի մեջ շատ են լավ մարդիկ, բայց մի մեծ մասն էլ, եթե բացառենք նրանց քրիստոնեական վարքը, ավելին չարժեն, քան անհավատները, եւ առհասարակ նրանք նվազ վստահուցիւն են վայելում: Ինչ վերաբերվում է կրոնին, կարող ենք ասել, որ այժմ նրանց հավատքի հիմքում պահքերն են ընկած, կամ գոնե դրանք են ամենակարեւոր եւ ամենազգայուն կետը: Երբ որեւէ հայ խոստովանում է, որ ինքը գողութիւն է արել, սպանել է, կամ նման հանցանքներ է կատարել, խոստովանահայրը նրան ասում է, որ Աստված ողորմած է: Բայց երբ նա մեղադրվում է չորեքշաբթի կամ ուրբաթ, եւ կամ պահքի այլ օրերին կարագ ուտելու մեջ, օ՛, նրա համար դա դարչելի ոճիր է, եւ խոստովանահայրը նրան խորհուրդ է տալիս մեղքը քավելու համար մեծ ապաշխարութիւններ անել, ինչպես օրինակ՝ մի քանի ամիս պաս պահել, վեց ամիս չմոտենալ կնոջը կամ այլ զրկանքներ կրել: Նա այլեւս /392/ միս, ձու, ձուկ, ինչպես նաեւ կաթնեղեն, ձեթ եւ կարագ չպետք է ուտի չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին:

Մյուս բոլոր արեւելյան քրիստոնյաների նման, նրանք շաբաթ օրը կարող են միս ուտել: Նրանք Մեր Տիրոջ մկրտութիւնի հիշատակին՝ Խաչի մկրտութիւնն ունեն եւ տոնում ե: այն Աստվածահայտնութիւն օրը (ըստ Հին օրացույցի, որին իրենք հետեւում են): Բազմաթիւ աղոթքներից հետո մի խաչ են ընկղմում ջրի մեջ, ապա իրար հըմշտելով, յուրաքանչյուրն իր համար մի քիչ ջուր է վերցնում անոթի մեջ՝ տուն տանելու համար:

Նրանք բոլոր երեխաներին՝ նույնիսկ մինչեւ մեկ կամ երկու տարեկան, հաղորդութիւն են տալիս (հացով եւ գինով): Նրանց

84՝ Ռարուդայի մասից տե՛ս աստ՝ ծանոթ. 22:

շատ վաղ են ամուսնացնում, պատահում է, որ նրանց ճակատագրերը կապում են նույնիսկ ծնվելուց անմիջապես հետո, եւ հաճախ ամուսնացնում են յոթ-ութ տարեկան հասակում: Սակայն ինչ արարողութիւն էլ հոգեւորականը կատարի, նրանք սպասում են պետք եղած ժամանակին ամուսնութիւնն իրականացնելու համար:

Նրանց կարծիքով՝ վերջին օծումը պետք է կատարել մահից հետո, չնայած նրանց մեջ գտնվել են ոմանք, որ մերժել են այս արարողակարգը: Սովորաբար նրանք միայն հոգեւորականներին են այն տալիս:

Նրանք ամենեւին պարտավորվածութիւնն չունեն կիրակնօրյա կամ Տաղավար տոների արարողութիւններին ներկա գտնվելու: Շատ սնտրիապաշտական վերաբերմունք ունեն մահմեդականների հանդեպ: Այդուհանդերձ, նրանց մեջ էլ կան այնպիսիք, /393/ որոնք շնորհին անմաքուր են համարում եւ ձեռք չեն տալիս այդ կենդանիներին:

Սուրբ Շաբաթ օրը նրանք ավարտում են Մեծ Պահքը՝ երեկոյան կարագ, պանիր, ձու եւ պահքի ընթացքում արգիլված այլ ուտեստներ համտեսելով: Սակայն միս ուտում են միայն Ս. Զատիկի օրը, եւ հարկ է, որ անասունը մորթված լինի այդ նույն օրը, քանի որ վստահ են, որ պահքի ընթացքում մորթված անասուն չի կարելի ճաշակել:

Նրանք չեն ընդունում Քավարանը՝ չնայած աղոթում են հանգուցյալների համար՝ ասելով, որ դատապարտվածները նախ դժոխք են գնում, բայց մյուսներն էլ դրախտ չեն գնում, ուր ոչ ոք չի գնում վերջին դատաստանից հետո: Նրանք գնում են մի տեղ, ուր մի փոքր տառապում են, եւ այն աղոթքները, որ նրանց համար արվում են, թեթեւացնում են նրանց տառապանքները (որտեղից էլ տեսնում ենք, որ նրանք անուններով են վիճում): Իսկ Քավարանը չեն ընդունում հռոմեացի կաթոլիկներից տարբերվելու համար:

Նրանք Մեր Տիրոջ վերաբերյալ հարյուրից ավելի պատմութիւններ կամ առակներ ունեն, որ կոչում են Փոքր ավետարան, ինչպես օրինակ՝ Սալոմեն իր հղի քրոջը՝ Սուրբ Կույսին մեղադրում



է պատահական մարդու տրվելու համար: Արդարանալու համար վերջինս նրան խնդրում է /394/ ձեռքը դնել իր փորին՝ հասկանալու համար, թե ի՞նչ պտուղ է ինքը կրում: Սալոմեն հնազանդվում է, եւ այնտեղից կրակ է դուրս գալիս, որն այրում է նրա ձեռքի կեսը: Ապա, հասկանալով իր սխալը, Ս. Կույսի խորհրդով կրկին դնում է ձեռքը եւ ետ քաշում ողջ ու առողջ: Նրանք ասում են նաեւ, որ երբ Ս. Կույսը Մեր Տիրոջը դպրոց է ուղարկել հայերեն սովորելու, ուսուցիչը ցանկացել է նրան արտասանել տալ հայոց այբուբենը: Հիսուսը չի ուզել արտասանել առաջին տառը, որը գրվում էր այսպես՝ Ս: Նրա հարցին, թե ինչու՞ է այդ տառն այդպես գրվում, բացատրութուն չտալով, ուսուցիչը պատժել է նրան: Տերը վիրավորվելով՝ կամացուկ ասել է, որ ինքը կարող է բացատրել, եւ որ Սուրբ Երրորդության խորհուրդն է դրված այդ տառի մեջ: Սրանից հետո, անակնկալի եկած ուսուցիչը վերագարձել է նրան իր մորը՝ ասելով, որ երեխան իրենից առավել գիտելիք ունի: Այս պատմութունը ավելի քան ծիծաղելի է, քանի որ չորս հարյուր տարի չկա, որ իրենց այբուբենը հայտնագործվել է<sup>85</sup>: Դրանից առաջ նրանք օգտագործում էին հունական տառերը: Եւ իրոք, Փարիզի Արքայական գրադարանում կա մեծ ու հաստափոր հայերեն մի գիրք, որտեղ նշվում է նրանց տառերի պատմութունը եւ թե ու՞մ կողմից են դրանք հայտնագործվել<sup>86</sup>:

/395/ Ասում են, որ Հուդան մեր Տիրոջն ուրանալով եւ ներման հույս չունենալով, որոշում է կախվել, քանի որ գիտեր, որ Տերը պետք է գնար Լիմբ (Limbes<sup>87</sup> - իմա՝ դժոխք)՝ թողութուն տալու

85 Հայոց գրանշանների ստեղծման ժամանակի վերաբերյալ Ռեդիանկի անգիտությունը ոչնչով չի տարբերվում Դուլիե Դելանդի Աույանման ակնարկից (տե՛ս աստ ծանոթ. 70): Ամենայն հավանականությամբ կամ Աույան աղբյուրից են օգտվել կամ միմյանցից:

86 Stéu Kevorkian R. H., Ter-Stépanian A., *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue*, Paris, 1998, p. X-XI.

87 Limbes - դժոխք («սահայետաց եւ անկնիք մամկանց, ըստ աստածաբանից») տե՛ս Նորայր Բիզանդացի, *Բնագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն*, Կ.Պոլիս, 1884, էջ 749:

այնտեղ գտնվող բոլոր հոգիներին, եւ ինքն էլ կհամալրեր դրանց շարքերը: Հայերի համար Լիմբը եւ դժոխքը նույնանում են: Սակայն սատանան, նրանից խորամանկ գտնվելով, կանխատեսել է դա, պահել է նրան մեղավորների ձեռքով, մինչեւ Տերն անցել է Լիմբով, որից հետո նրան հանձնել է սատանաներին:

Հայերը հավատում են Հիսուս Քրիստոսի մեկ ընությանը: Նրանք հավատում են, որ Սրբությունը եւ մարդկային Բնությունը միանում են Սուրբ մարդու մեջ, ինչպես մարդու մեջ միանում եւ այսպիսով նույնանում են հոգին ու մարմինը: Այս պատճառով նրանք դատապարտում են Քաղկեդոնի ժողովը:

Նրանք ասում են, որ Հիսուս Քրիստոսը ո՛չ ուտում էր, ո՛չ էլ խմում, եւ երբ նրանցից ոմանց ասացի այն, ինչ բազմիցս գրված է ավետարանի մեջ, որ նա կերել ու խմել է, ինձ պատասխանեցին, որ նա ուղղակի տպավորութուն է ստեղծել, /396/ իրականում չի կերել եւ չի խմել: Նրանք Պապին չեն ընդունում որպես իրենց պատրիարքի վերագաս, գուցե միայն՝ Հռոմի պատրիարքը: Չնայած նրանց մեջ կան նաեւ այնպիսիք, որ ընդունում են Պապի՝ բոլոր եկեղեցիների մեծավորը լինելու հանգամանքը:

Ընդհանուր առմամբ նրանք մեծապես թշնամի են Ֆրանկներին եւ բոլոր նրանց, ովքեր Հռոմեական կաթոլիկ եկեղեցուն են դավանում: Չնայած այս ամենին նրանք մեղ նման ընդունում են Սուրբ Հաղորդության խորհուրդը: Սա հզոր փաստարկ է եւրոպական Հերետիկոսների դեմ, նրանց՝ որպես արեւելյան քրիստոնյաներ դիտարկելու համար, որոնք հնագույն ժամանակներից ի վեր Հռոմեացի կաթոլիկների հայտարարված թշնամիներն են՝ նկատի ունենալով Սրբություն Սրբոցը եւ Ս. պատարագը՝ ինչպես հակոբիկյանների, այնպես էլ նեստորականների եւ այլոց մոտ, որը ցույց է տալիս, որ պատարագը նոր չի հայտնագործված:

Հատոր IV, Գիրք III

/415/ Հինգ ամիս Սպահանում մնալուց հետո, մտածեցի մեկնել: Եւ 1665թ. փետրվարի 24-ին միացա մի քարավանի՝ բաղկացած հի-



սուև ջորիներից, որոնց մեծ մասը Ժ. Բ. Թավերնիեին էին պատկանում, իսկ մնացածը՝ Հայերին: Վերջիններս օգտվել էին մեր մեկնելու առիթից:

1485/ Բենդեր Աբասում յոթ օր մնացի, որից հետո ստիպված էի ետ դառնալ՝ հնարավորություն չտեսնելով նավ նստել Հնդկաստան մեկնելու համար եւ մեծ ռիսկ համարելով այստեղ ավելի երկար հարմար առիթի սպասելը: Առայժմ միայն վեց նավ կար, որոնք պետք է Հնդկաստան մեկնեին, որոնցից չորսը հոլանդական էին, մեկը՝ հայկական եւ մեկն էլ՝ մավրիտանական: Հոլանդական նավերի մասին 1486/ պետք է մտածել, որովհետեւ նրանք երգվել են ոչ մի Ֆրանկի նավ չվերցնել եւ չփոխադրել: Եւ սա Ընկերություն շուտափույթ հրամանի համաձայն, քանի որ ըստ նրանց, Ֆրանկներն իրենց նավաստիների հետ զրուցելով՝ իմանում են այն ամենն, ինչ վերաբերում է առևտրին (traffic) եւ բացահայտում միայն իրենց հասու բոլոր գաղտնիքները: ... Մավրիտանական նավը շատ վատն էր եւ ի զորու չէր դիմադրավել փոթորիկներին, առավել եւս ծովահենների հարձակումներին, որոնք այդ ժամանակներում շատ սպասելի էին: Մոգոլի վասալ իշխաններից մեկը՝ ոմն Սիվաթի (Sivagy) Ռաջան<sup>88</sup>, երկու տարի առաջ ապստամբելով, ամբողջությամբ կողոպտել էր Սուրաթը եւ դրանից հետո զբաղվում էր այս ծովերի ասպատակություններով: Նա նույնիսկ իր տրամադրությունն արտահայտեց ծովային նավատորմ ունենալու, որն, ասում էին, բաղկացած էր հարյուր առաջատանավից (galiotes)<sup>89</sup>: Նա կողոպտում էր իրեն հանդիպած ամեն ինչ, բայց ոչ հոլանդացիներին, որոնց չէր համարձակվում ձեռք տալ՝ վախենալով իր դեմ ուղղել այդ հզոր Ընկերության զայրությունը:

Իսկ հայկական նավի վրա տեղ չկար: 1487/ Նույնիսկ շատ հայեր տեղ չգտան այնտեղ: Այս նավը հայր գնել էր հոլանդացիներից եւ այն դեռ հոլանդական դրոշ էր կրում, ինչն էլ ինձ ստիպեց այս

88 Իմա՝ Օիվաթի (Օիվաջի) Մահարաջա (1630-1680):

89 Galiote-ը XVII դարում հոլանդական առևտրական երկկայմ առագաստանավ էր (50-300 տ տարողությամբ):

նավի մասին եւս մոռանալ: Նավապետը եւ նավավարը հոլանդացիներ էին, եւ նրանց կառավարիչը՝ ոմն Վանվիկ, Պ. Թավերնիեին ասել էր, որ չի վերավորվի եթե բարձրանամ նավ: Այս պարոններն իմ մասին շատ վատ կարծիք էին կազմել, (ինչն իրենց ուղեղին մեծ դժվարություն չէր պատճառում): Նրանք երեւակայել էին եւ մի քանի հոգու պատմել, որ իրենց հայտնի է՝ իբր իմ ծնողները հիմնական շահագրգիռ անձերն են Հնդկաստանի հետ Ֆրանսիական ընկերության առևտրում, եւ իբր ես լրտես եմ ու դալիս եմ ծանոթանալու տեղանքի հետ: Չգիտեմ՝ ի՞նչ հիմքով էին այս երեւակայությունն իրենց ուղեղը գցել, քանի որ երբ մեկնում էի Ֆրանսիայից, այդ հաստատությունն մասին դեռ չէին էլ խոսում, եւ իմ ազգականներից ոչ ոք դրան չէր անդամակցում: Այդուհանդերձ, այդ երեւակայական գաղափարը կարող էր իմ կյանքն արժենալ:

Այստեղ ես հասկացա, որ ոչ միայն երեք ամիսների ընթացքում, այլեւ տասներկու ամիս շարունակ Բենդերի օդը մահացու է այն բոլոր Ֆրանկների համար, ում հետաքրքրասիրությունը դեպի Հնդկաստան է տանում: Եւ եթե 1488/ ինչ-որ բանից պետք է վախենան, հատկապես՝ նրանք, ում առևտուրն է ուղղորդում այնտեղ, ապա փորձը ցույց է տալիս հակառակը: Սա որպես օրինակ կամ խորհուրդ պետք է ծառայի նրանց համար, ովքեր, հետաքրքրությունից դրդված, կուզեն ճամփորդել այս երկրում, պարզ ցանկություն թող ունենան սովորելու, թե ինչպես եմ ես դա արել: Նրանք պետք է հավատացած լինեն, որ ոչ միայն հոլանդացիները, այլեւ բոլոր նրանք, ովքեր առևտուր են անում Հնդկաստանում, ի՞նչ ազդություն էլ պատկանեն, նույնիսկ եթե լինեն իրենց հայրենակիցները, համաձայն չեն լինի, որ ուրիշները քիթը խոթեն իրենց գործերի մեջ ու վերադառնալուց հետո պատմեն մյուսներին: Նրանք զգուշ պետք է լինեն եւ հատկապես խուսափեն այն վայրերից, ուր տիրում են հոլանդացիները:

Ինձնից երկար ժամանակ չպահանջվեց որոշում ընդունելու համար՝ որքան հնարավոր է արագ ու անփորձանք վերադառնալ մի



տեղից, ուր ես բավականաչափ, բայց ապարդյուն աշխատեցի, քանի որ Բենդերում միայն հոլանդացիներն էին իշխում:

1556/ ... Հոլանդացիներն ամեն ինչ անում էին, որպեսզի բոլոր վաճառականներն իրենց դրամը փոխադրեն հոլանդական, այլ ոչ թե մահմեդականների նավերով: ... Ամեն տեղ արդեն հայանի էր, որ Ֆրանսիացիներն առեւտրական կապեր էին հաստատում Հնդկաստանի հետ, եւ հավատացած էին, որ բոլոր մեր (Ֆրանսիական) նավերը ծովահեններ էին, այն պատճառով, որ երեք տարի առաջ երկու Ֆրանսիացի ծովահեններ եկել էին Մոկկա ճիշտ այն ժամանակ, երբ Մոկկայի նավահանգստից այնտեղ բերված ապրանքների դիմաց միայն դրամով բեռնված նավեր էին ծով դուրս գալիս դեպի Սուրա: Օգոստոսի վերջին Ֆրանսիացիները գրավել էին բոլոր նավերն ու հեռացել: Եթե նրանք այդ ծովերի վրա մի քիչ ավելի փորձառութուն ունենային, կարող էին ավելին անել, կարող էին դալ Պարսից Ծոց եւ հոկտեմբերի վերջին սպասել Բասրայից եկող նավերին, որոնք այդ ժամանակ միլիոններով հնչուն դրամ էին բերում՝ Հնդկաստանում առեւտուր անելու նպատակով եւ դյուրությամբ դրանց տերը կդառնային: Այդ նավերի վրա միայն հնդիկներ էին լինում, որոնք ամենեւին չէին դիմադրում: Սրանից հետո նրանց համար ավելի հեշտ էր լինելու վերադառնալ (եւ քաշվել), սակայն այդպես չարեցին: Ի վերջո այնպիսի սարսափ էին տարածել ծովերի վրա 1557/, որ հենց Ֆրանսիացիների մասին խոսք էր գնում՝ բոլորը դողում էին:

Գիրք IV

1593/ Բասրայում նավ նստեցի նոյեմբերի վեցին: Նավը պատկանում էր մի հայի եւ կշռում էր երկու հարյուր վաթսուներեք տոննա կամ հինգ հազար երկու հարյուր քիլոգրամ<sup>90</sup>: Կոչվում էր «Օփսել» (անգլերեն՝ գունդ, globe): Նավը գինված էր տասնութ թնդանոթներով: Անձնակազմը բաղկացած էր երեսունմեկ նավաստիներից,

90 1 քիլոգրամ = 100 կգ (ցենտներ)

որոնցից քսանվեցը բանյաններ էին (banians)<sup>91</sup>, մյուս հինգը՝ մահմեդականներ: Նավի վրա միայն նավապետն էր ֆրանկ. նա Լիվոնոյից էր, իսկ հրամանատարը ծագումով Թուրոնից էր: Երկու նավաստիներից մեկը վենետիկցի էր, երկրորդը հուլյն էր՝ Կանդիայից: Նավն անգլիացիներն էին կառուցել, եւ պատկանել էր Սուրաթի անգլիացի կառավարչին, ով բացի սրանից ուներ եւս երեքը: Մինչեւ այժմ նավն ուներ քսանութ թնդանոթ: Բայց քանի որ անգլիացիների եւ հոլանդացիների միջեւ պատերազմ էր սկսվել, կառավարիչը, տեսնելով, որ 1594/ չի կարողանում դիմադրել հոլանդացիներին, որոնք Հնդկաստանում բազմաթիվ նավեր ունեին, իրենները վաճառել էր հայերին:

Խոջամինասը (իմա՝ խոջա Մինաս - է. Թ.)<sup>92</sup>, որի մասին արդեն խոսել եմ, գնել էր դրանցից երկուսը, որոնցից մեկը սա էր: Անգլիացուց այն գնել էր տասնվեց հազար ուլփիով, կամ ութ հազար պիաստրով եւ վրան դրել հայկական դրոշը: Նավապետը թե՛ պորտուգալական անձնագիր ուներ, թե՛ անգլիական եւ թե՛ հոլանդական: Այս նավը երկար տարիներ կառավարվել էր կանդիացի մի հուլյնի կողմից, որին կոչում էին կապիտան Ուսկոլո: Նա այս ծովերում բավական փորձված էր եւ շատ լավ էր կարողանում բարձրութուններ (իմա՝ ալեկոծութուն - է. Թ.) հաղթահարել, բայց վախճանվել էր Բասրայում այս տարվա (1665 թ.) սեպտեմբերին: Հայերը նրա փոխարեն նշանակել էին Բեռնարդո անունով մի լիվոնացու, որն այս նույն նավի վրա նախկինում աշխատել էր որպես նավաստիների վերակացու, երրորդ նավաստիապետ (contre-maitre):

91 banians - պորտուգալական անվանում է, (սանսկրիտ լեզվից՝ vāṇiyo), որը 16-րդ դ. վերջին տրվում էր Գուջարաթի առեւտրական կաստայի անդամացուցիչներին:

92 Խոջա Մինասի եւ խոջա Մինասեցի առեւտրական ընկերության մասին մանրամասն տե՛ս Տէր Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան Բ. Ա. Նոր Ջուղա, 1880: Խաչիկյան Ծ., Գշվ աշխ., էջ 81-100: Aslanian S. D., From the Indian Ocean to the Mediterranean e Global Trade: Networks of Armenian Merchants from New Julfa, Univers. of California Press, 2011. Սույն հրատարակության մեջ տե՛ս նաև գերդաստանի տոհմաձայն եւ դրա քննությունը (էջ 106-108):



Նա առաջատարների շատ լավ պատասխանատու էր եւ հսկում էր նավակայմի առաջատարները, սակայն քարտեզից օգտվել չգիտեր, եւ ոչ էլ բարձրութիւններ էր հաղթահարել, նույնիսկ գրել կարգալ չգիտեր: Այս ծովերի վրա մի քանի ճամբարներու ժամանակացի-լով մի քիչ փորձ էր ձեռք բերել: Հայերը նավապետի պաշտոնում ցանկացել էին անգլիացու դնել, որը վարժ էր /595/ բարձունքներ հաղթահարելու մեջ եւ դեկավարել էր նմանատիպ նավեր: Սակայն քանի որ անգլիացիների եւ հոլանդացիների միջեւ պատերազմական գործողութիւնների սկիզբն էր, եւ հոլանդացիներն ասել էին, որ պատերազմի ժամանակ նավին հանդիպելիս, վստահ չեն, որ գերի չեն վերցնի անգլիացի կապիտանի պատճառով, ուստի այս պաշտոնից անգլիացին հրաժարվել էր: Բացի նավապետից երկու մահ-մեղական նավավարներ եւս կային (pilotes): Մեկը մեզ պետք է ուղեկցեր մինչեւ Չարեք (Carek)<sup>93</sup> կղզին, իսկ մյուսը՝ մինչեւ իր հայրենի Սուրաթ:

Նավը բեռնված էր լեղակով ու հնդկական ապրանքներով, որոնք չէին վաճառվել Բասրայում եւ որոնք Պարսկաստան փոխադրելու համար պետք է բեռնաթափելինք Carek-ում: Այն բեռնված էր նաեւ մեծ քանակութեամբ արմավով, տասը ձի կար, ապակու կտորտանքներով լի մի քանի արկղեր, մի քանի վենետիկյան մեծ հայելիներ եւ հնչուն դրամով լի մեծաքանակ պարկեր:

Բասրայից Սուրաթ ճամփորդելու համար վճարում էին քառասուն արասի, որ մարդագլուխ տաս պիասար ունի էր կազմում: Մահմեդական նավերի վրա ուղեվարձը միայն տասնհինգ արասի էր: Բասրա-Սուրաթ ճամփորդութեան համար քառասուն արասիով նավի հրամանատարից ինձ համար մի փոքրիկ խուց վերցրի թնդանոթների պահեստամասերի պահեստի (sainte-barbe) մոտ՝ անկյունում: /596/ Այն վեց ոտնաչափ երկարութիւն ունեւր եւ նույնքան բարձրութիւնն եւ չորս կամ հինգ ոտնաչափ լայնութիւն: Բավական հարմարավետ էր, տախտակե մի մահճակալ կար՝ գետնից եր-

կու ոտնաչափ բարձր: Բոլոր իրերիս համար բավականաչափ տեղ կար: Այստեղ կարգալ-գրել կարող էի միայն օրվա ընթացքում. լույսը մի փոքրիկ լուսամուտից էր ընկնում: Իսկ գիշերը պետք է քնեի, քանի որ արթուն մնալ չէի կարող, պահեստի հարեւանութեամբ աշտանակ չէր կարելի օգտագործել: Ես հետս կես ոտնաչափ բարձրութեամբ մի կարաս էի բարձրացրել նավ, որը լավ ջրով էի լցնել տվել: Ով լսում է սա չպետք է մոռանա, ես մի փայտե կափարիչով ծածկեցի դրա բերանը, եւ կախվող մի կողպեքով կնքեցի այն: Սա ծառայում էր այն ժամանակ, երբ նավի վրա ջրի պակասութիւն էր զգացվում: Յուրաքանչյուրն օգտվում էր իր կարասից: Եւ չնայած նավապետը մթերքի մեծ պաշար էր վերցրել, մենք կարող էինք մաս հունենալ դրանից, քանի որ նավի վրա շատ մարդ կար, ինչպես նաեւ՝ տասը ձի, բազմաթիւ ոչխարներ, այծեր, հավեր: Վերցրել էի նաեւ պաքսիմատի որոշ քանակ եւ կյանքի համար անհրաժեշտ այլ ուտեստներ, մնացած ժամանակ սնվում էի կապիտանի եւ մյուս երեք ֆրանկների հետ, որոնք նավի վրա որպես սպա էին ծառայում:

Բասրայից մինչեւ Շաթ էլ Աարաբի գետաբերանը /597/ հասնելու համար մեզ չորս օր էր անհրաժեշտ եւ նոյեմբերի 7-ի ողջ օրը մենք կանգնեցինք Բասրայի մոտ՝ ավարտելով նավի վրա ապրանքների տեղավորումը եւ օդի ըմբռնելով տիրոջ վեքիլի հետ, որը պետք է մնար Բասրայում: Նրան պիտի փոխարիներ մեկ ուրիշը, որին Սուրաթում ի՛ր տերն էր սպասում: Ամբողջ այդ օրը՝ մինչեւ գիշեր, զբաղվեցինք խմելով՝ «սալամաթ ինչալլահ» ասելով, այսինքն Աստծո կամքով՝ բարի փրկութեան համար աղոթելով եւ այս ամենը՝ թնդանոթների աղմուկի տակ:

Այս վաճառականի մեկնելուց հետո, ի վերջո խարիսխը բարձրացրինք, սակայն կարճ ժամանակով, քանի որ տեղատվութիւն էր եւ պետք էր սպասել մակընթացութեանը: ... Մենք ուշանում էինք ոչ միայն բնական արգելքների, այլեւ նավի ուղեւորների անհասկացողութեան պատճառով: Նավապետն ունեւր իր կարծիքը, երկու նավավարներից յուրաքանչյուրն՝ իրը, /598/ ավելին, ամեն մի վաճառա-

93 Ներկայումս Խարգ կամ Խարկ կղզին Պարսից ծոցում:



կան իր կարծիքն էր ուզում թելադրել: Այս ամենը ավելի մեծ խառնաշփոթ էր առաջացնում, քանի որ մեկը հայերեն էր խոսում, մյուսը՝ հինգու, երրորդը պարսկերեն, թուրքերեն, պորտուգալերեն եւ առավել հաճախ իրար չէին հասկանում, ինչը նրանց մեջ խառնաշփոթ էր ստեղծում՝ շատ նման այն բանին, որ Աստված ուղարկեց Բաբելոնի աշտարակը կառուցողների գործը խափանելու համար:

/607/ Չարեք կղզին շատ նեղ է, շրջագիծը հազիվ 3-4 լյո է: Բենդեր Ռեդից հեռու է մոտ 12 լյո, իսկ Բասրայից՝ 50: Այն քիչ լեռնային է եւ բավականին բերքառատ: Այնտեղ ցորեն է աճում, դարի, արմավ եւ լավ խաղող ..... Այս կղզու մոտերքը մարգարիտ են «որսում» նույն ժամանակահատվածում, /608/ ինչ Բահրեյնում, եւ ինձ ասացին, որ որսի ընթացքում՝ մայիս, հունիս, հուլիս եւ օգոստոս ամիսներին, այդ կղզու շրջակայքում հարյուրից ավելի ձկնորսական նավակներ կարելի է տեսնել: Պարսից Արքան է այստեղ տերը եւ որպես տեղապահ մի կառավարիչ է պահում, ով ենթակա է Բենդեր Ռեդի կառավարչին: Կղզիաբնակները բոլորը ձկնորս են եւ սնվում են միայն աղած ձկներով ու արմավով: Բասրա գնացող նավերը սովորաբար մոտենում են այս կղզուն՝ վերցնելու նավավար, որը նրանց կողակցի մինչեւ Բասրա: Չորս ամիս անց, նրան ետ են բերում նույն կղզին: Մենք էլ մեր նավավարին, որին վերցրել էինք չորս ամիս առաջ, այնտեղ թողեցինք:

Բայց սա կղզուն մոտենալու մեր միակ պատճառը չէր: Հիմնական պատճառը խոջա Մինասի ապրանքներն այնտեղ բեռնաթափելն էր: Դրանք բաղկացած էին՝ Հնդկաստանից բերված լեղակից, կերպասներից եւ այլ իրերից, որոնք չէին վաճառվել Բասրայում՝ վեքիլի վատ պահվածքի շնորհիվ: Նա ստիպված էր դրանք կրկին բեռնել նավ եւ ուղարկել Չարեք, այնտեղից Բենդեր Ռեդի եւ ապա Սպահան: Ավելին, այս կղզուն մոտենալով, նրանք ծրագրել էին այնտեղից վերցնել բազմաթիվ հայ վաճառականների, որոնք /609/ այս նավին սպասելով մտադիր էին Հնդկաստան անցնել՝ իրենց հետ բավականաչափ դրամ տանելով: Մի քանի տարի է, ինչ հայե-

րը Կոնգոյում<sup>94</sup> մաքսատուրք չվճարելու համար որոշել են Շիրազից ուղիղ Բենդեր Ռեդի<sup>95</sup> մեկնել, ուր մաքսատուն չկա եւ այնտեղից անցնում են Չարեք կղզի, ուր սպասում են, որ որեւէ անցնող նավ իրենց ու իրենց փողերը վերցնի: Այդուհանդերձ անցյալ նավարկութան ժամանակ Հնդկաստանից եկող մի քանի հայեր Կոնգոյի մաքսատնից խուսափելու նպատակով Բենդեր Ռեդում նավից իջնելով՝ Շիրազում մաքսավորի կողմից հարուցված դատական գործընթացի մեջ ընկան. վերջինս նրանց պարտավորեցնում էր վճարել մաքսը, եւ երեւի այդ գործի համար նրանք ստիպված կլինեին վճարել այն դրամի մի մեծ մասը, որ որպես մաքս պիտի վճարեին Կոնգոյում: Հետագայում մի մաքսատուն էլ Բենդեր Ռեդում էին հաստատելու:

... Խարիսխ գցելուն պես, Հինգ-վեց փոքր նավակներ մոտեցան Պարսկաստանի համար նախատեսված ապրանքները վերցնելու: /610/ Սա երեկոյան Հինգից մինչեւ յոթն անց կես տեւեց: Մեր մարդիկ լավ խաբվեցին հայ վաճառականների առիթով, քանի որ հակառակ իրենց սպասումների, ոչ մեկին չգտան: Սա Մագուլիպատան կոչվող նավի հոլանդացի նավապետի խաբուլթյան արդյունքն էր, որն իր մասնագիտական խաղն էր խաղում: Այս նավը մեզնից մեկ օր առաջ Բասրայից մեկնելով՝ երկու օր շուտ էր հասել Չարեք: Նավապետը, առիթից օգտվելով, մեր նավին սպասող վաճառականներին ասել էր, որ այն այս տարի չի գալու, որին նրանք միամտորեն հավատացել էին ու իրենց փողերով հանդերձ նստել էին նրանց նավը: Այս ամենը վեքիլի սխալի պատճառով էր. նա մնացել էր Բասրայում եւ մեր նավը պետք եղածից տասնհինգ օր ավելի էր պահել այնտեղ, իբր բեռնելու համար մի քանի ապրանք, որոնք այնքան էլ մեծ արժեք չունեին, եւ սրա պատճառով նա բավականաչափ եկամուտ կորցրեց ապրանքի հետ միասին, դրամ եւ ուղեւոր, որոնց կարելի էր վերցնել Չարեքից, Կոնգոյից եւ Կոմբոնից, որոնք նստել էին մեզնից առաջ գնացող նավը:

94 Ներկայումս Բահրայ-ե Կանգամ Գավահանգիստը Պարսից ծոցում:

95 Ներկայումս Հարբոբ Գավահանգիստը Հորմուզի Գեղուցում:



/633/ Կոնգոյում մեր նավի վրա բարձեցին Հայ վաճառականներին պատկանող դրամի բազմաթիվ պարկեր, պարսկական գորգերի Հակեր, ինչպես նաև՝ տորոնի (իմա՝ որդան կարմիր - է. Թ.) բազմաթիվ Հակեր, որոնք Պարսկաստանից, ուր նրանք աճում են, փոխադրում էին Հնդկաստան, որտեղ օգտագործում են կարմիր ներկ ստանալու համար: Փոխադրում էին նաև ծխախոտի բազմաթիվ Հակեր, քանի որ Հնդկաստանում, ոչ ավելի քան Պարսկաստանում, միայն դեյլանն է տարածված: Պարսկական ծխախոտը բավական թանկ արժե Հնդկաստանում<sup>96</sup>: Բեռնեցին նաև Շիրազի գինու բազմաթիվ տակառներ: Նավի վրայի Ֆրանկներն էլ մի քանի պարկ ընկուլզ ունեին, որից ակնկալում էին նվազագույնը հիսուն տոկոս եկամուտ ստանալ, սակայն պետք է Հաշվի առնել, որ այս գործարքը ձեռնտու էր միայն նրանց՝ ովքեր մաքս չեն վճարում, ինչպես օրինակ նավի վրա ծառայող սպաներին կամ նավաստիներին, որոնք իրենց զբաղեցրած պաշտոնի բերումով, սահմանափակ քանակությամբ ապրանք կարող էին ունենալ:

/634/ Բացի այս ապրանքներից այնքան ուղեւորներ վերցրին նավի վրա՝ իրենց պայուսակներով ու կապոցներով եւ այնպիսի մեծ քանակությամբ Հավեր, այծեր եւ ուլիկներ (քանի որ եղանակային այս պայմաններում դրանց միսն ամենահաճելին է, իսկ ոչխարինը պիտանի չէ), որ նավը լեփ լեցուն էր թե՛ վերելում եւ թե՛ ներքելում, եւ ամենուր այնպիսի խճողում էր, որ առանց դժվարության երկու քայլ հնարավոր չէր անել: Դեռ բեռնելու ապրանքներ մնացել էին, բայց նավապետը հրաժարվեց դրանք վերցնել: /636/ Նավի վրա հարյուր տասնվեց հոգի էինք, որից շուրջ ութսունը ուղեւորներ էին: Բացի Սըր Մանուել Մենդեսից՝ իր շքախմբով, եւ ինձնից ու իմ սպասավորից, բոլորը Հայեր էին:

96 Matthee Rudi, *Tobacco in Iran*, - "A Global History of Smoking". Edited by Sandra L. Gilman and Zhou Xun, Published by Reaction Books, London, 2004, pp. 58-67, 369-371.

ԺԱՆ ԱՏՐՅՈՒՒՍ

Ժան Ստրյուլիսը (1630 - 1694) 17-րդ դ. հոլանդացի նավաստի եւ ծովագնաց էր, ով ճանապարհորդել էր Եւրոպայում, Աֆրիկայում եւ Ասիայում: Նրա ուղեգրությունները թարգմանվել են մի քանի լեզվով: Ծնվել է Ամստերդամի մոտ գտնվող Դուրգերդամ բնակավայրում: Առաջին ճամփորդությունը 1651 թ. էր դեպի Արեւմտյան Աֆրիկա, Մադագասկար, ապա Սիամ, Թայվան, Ինդոնեզիա, եւ Ճապոնիա: 1655-1657 թթ. ճամփորդել է Միջերկրական ծովով: Վերջին՝ երրորդ ճամփորդության ընթացքում (1668-1673 թթ.) մի քանի հոլանդացիների հետ միասին, նա ծառայության է մտել Ռուսաստանի ցար Ալեքսեյ 1-ինի մոտ: Եղել է Ռիգայում, Նովոգորոդում, Մոսկվայում, Կազանում: Աստրախանի մոտ անձամբ հանդիպել է Ստ. Ռազինին, որի պարտիզանական պայքարին անդրադարձել է հանգամանորեն: Փախչելով դեպի Դերբենդ, գերեվարվել է Դադստանում եւ տարվել Երեւան (1670 թ.), ուր նրան վաճառել են մի պարսիկի: Վերջինս նրան կրկին տարել է Դերբենդ, ուր վերավաճառվելով՝ ընկել է Շամախի: Այստեղ սեփական կամքով խնդրել է, որ իրեն վերավաճառեն Լեհաստանի դեսպանին: Ի վերջո բազմաթիվ բանակցություններից հետո նա հայտնվել է Սալահանում 1672 թ. հունվարի 19-ին: Մեկ ամիս այստեղ մնալուց հետո Բենդեր Աբասից նստել է Բաթավիա գնացող նավը: 1673 թ. հոկտեմբերին նա արդեն Հոլանդիայում էր: 1675 սեպտեմբերին նա արտոնություն է ստացել հրատարակելու իր «Reyzen»-ը, որը տպագրվել է 1676-ին: Այն նվիրել է Նիկոլաս Վիտսենին (Ամստերդամի քաղաքապետ, վաճառական, գիտնական) եւ Կոնրադ վան Կլենկին (1675 թ. Ռուսիայում Հոլանդիայի ներկայացուցիչ), որոնք նրան մեծապես օգտակար են եղել իր ճամփորդությունների ընթացքում: Ի դեպ, նրանցից միջնորդություն է խնդրել՝ ցարից իր աշխատավարձը ստանալու համար:

Ժան Ստրյուլիսի ուղեգրությունները ժամանակին մեծ հաջողություն են ունեցել, բավական է թվարկել վերահրատարակ-



ությունները՝ 1677 թ., 1686 թ., 1705, 1718, 1720, 1742, 1760 թթ., իսկ 1974 թ.՝ հրատարակվել է կրճատված տարբերակով: 1678, 1679 եւ 1832 թվականներին լույս է տեսել գերմաներեն թարգմանությունը, 1681-ին՝ ֆրանսերենը (որն ի դեպ վերահրատարակվել է 12 անգամ՝ վերջինը 1838 թ.), 1682-ին՝ անգլերեն թարգմանությունը (վերահրատ. 1683 եւ 1684 թթ.): Ռուսերեն թարգմանությունը, որը պարունակում է միայն Ռուսաստանի մասին հատվածը, հրատարակվել է 1935 թ.:<sup>97</sup>

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. *Les voyages de Jean Struys, en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes, et en plusieurs autres Pais étrangers; accompagnés de remarques particulières sur la qualité, la religion, le gouvernement, les coutumes et le négoce des lieux qu'il a vus; avec quantité de figures en taille douce dessinées par lui-même...*, Tome III, Lyon, MDCLXXXII (1682).

#### Ժան Ստրյուկսի երրորդ ճամփորդության շարունակությունը

Գլուխ XVIII

Հունվար 1672 թ.

Ամսի տասնիննի վաղ առավոտյան հասանք Սպահան, եւ իմ առաջին գործը եղավ շնորհակալություն հայտնել իմ Patron-ին ինձ արած բոլոր /2/ լավությունների համար: Նա պատվիրեց սովորականի պես պահել ինձ եւ խոստացավ, որ Սպահանում կընդունի ինձ այնպես ինչպես Շամախիում՝ երբ էլ գնայի իրեն տեսնելու: Ուր էլ ինքը լիներ, վստահությամբ գնում էի այնտեղ: Հետո նա ինձ տարավ հոլանդացիների թաղը, ուր սըր Ֆրեդերիկ Բենտը Ընկերության (Արեւելահնդկական Հոլանդական Ընկերության) առաջին սպան էր<sup>98</sup>: ...

97 Michaud L.G., op. cit., t. 44, 1826, pp. 80-81.

98 Frederik Lambertssoon Bent - 1676-1681թթ. Պարսկաստանում Արեւելահնդկական Հոլանդական Ընկերության տնօրեն:

Գլուխ XXXII

Նույն սյուժեի շարունակությունը: Հիմ պարսիկներից սերած ժողովուրդները եւ հայերի սովորություններն ու ավանդույթները:  
Հունվար 1672

/21/ Սպահանի կարեւոր տեսարժան եւ գլխավոր վայրերի մասին խոսելուց հետո, տեսնենք՝ ինչ գեղեցկություններ կան քաղաքից դուրս: Նախ Զենդերուդ գետով կիսված մի մեծ ծառուղի կա, որը սկսվում է վրանածեւ մի կառույցով եւ միանում արքայական դղյակի ետնամասին: Երկու կողմերում ուղիղ գծով տնկված են չինարի շատ ուղիղ ու սաղարթախիտ ծառեր: /22/ Այս ծառուղին խաչվում է զանազան ավազաններով: Հազար, հազար երկու հարյուր քայլ անցնելով հանդիպում ենք երկհարկանի բացօթյա մի կառույցի, որտեղ սուրճ են ըմպում: Այդ ծառուղու երկու կողմերում արքայական պարտեզներն են, դրանք նաեւ Չարբախ (Tcharbag) են կոչվում՝ այսինքն չորս պարտեզներ եւ բաժանված են աղյուսե ու սրբատաշ քարերով շինված կամրջով, որի կամարները շատ ցածր են: Կամուրջը երեք հարյուր քայլ երկարություն եւ քսան քայլ լայնություն ունի: Երբ ջուրը ծանծաղ է, յուրաքանչյուր կամարի տակից, որոնց վրա դռներ են շինված, կարելի է անցնել այս ու այն կողմ՝ ոտքերը չթրջելու համար դրված քարերի վրայով: Այսպես ամռանը կարելի է մի ծայրից մյուսն անցնել, եւ սա նույնիսկ հաճելի է արտակարգ շոգերին: Զուլֆայի անունը կրող (Zulfa, Ciulfa) այս կամրջից դեպի հարավ /23/ մի փոքրիկ քաղաք կա՝ Սպահանից կես ժամ հեռավորության վրա:

Առաջ ենք գնում չորս հարյուր քայլ, եւ հասնում ենք աստիճանների, որոնք Hezarguerib անունով պարտեզի մուտքն են՝ շուրջ հազար arpent<sup>99</sup> մակերեսով: Այս գեղեցիկ պարտեզը բարձունքի վրա է եւ բազկացած է բազմաթիվ հողապատնեշներից (terrasses), որոնց վրա սակավաջուր ավազաններ կան: Պարտեզի մեջտեղում մի մեծ առու կա, որը ջուր է ստանում Չարբախի ջրանցքից: Տեղ-տեղ գո-

99 Հիմ ֆրանսիական չափի միավոր, 1 արպանը = 58,47 մ:



վացուցիչները ըմպելու համար տաղավարներ են կառուցված: Մեր հիշատակած կամրջից մի քանի հարյուր քայլ հեռու ենք մտնում ենք մի մեծ փողոց, որը տանում է Ջուլֆա, ուր հայերն են ապրում:

Ջուլֆան մի փոքրիկ քաղաք է, ուր կենցաղն առավել հաճելի է քան Սպահանում, տներն այստեղ առավել ծիծաղկոտ են, եւ փողոցների մեծ մասը պատված է ծառուղիներով ու առվակներով, որոնք /24/ զովովթյուն են սփռում: Այստեղ ապրող հայերը սերել են մի համայնքից, որին Մեծ Շահ Աբասը տարհանել է հայկական Ջուլֆա քաղաքից՝ երկիրն անապատի վերածելու նպատակով, ինչպես նաեւ թույլ չտալու թուրքին նրանցից (հայերից) օգտվել եւ անհանգստացնել իրեն: Իրենց գավառից դուրս գալով նրանք նախ բնակվել են Սպահանում, որտեղից, որոշ ժամանակ անց արքան նրանց անցկացրել է գետի մյուս կողմը, եւ նրանց հատկացրած տեղն անվանել է այն բնակավայրի անունով, որտեղից նրանց բերել էր: Իրենց երկիրը լքելիս նրանք շատ անկիրթ էին. Պարսկաստան գալով դարձան շատ հաջողակ (ճարտար) եւ այնքան հառաջացան առեւտրի մեջ, որ համարյա բոլորը գոհ էին իրենց վիճակից: Արքան նրանցից լավ օգուտ էր քաղել մետաքսի առեւտրի ասպարեզում, եւ չէր գտել ուրիշ որեւէ մեկին, որ կարող էր այսքան հաջողովթյուն ունենալ, քանի որ նրանք շատ մաքուր էին առեւտրի մեջ:

Շահ Աբասի ժամանակվանից մինչ այժմ հայերը հնարավորովթյուն ունեին /25/ սեփական հողերն ունենալ: Անօրինովթյուններից խուսափելու համար արքան նրանց թույլ էր տվել ազգի մեծավոր ունենալ, որին Քալանթար էին կոչում: Արքային էր վերապահված նրա նշանակումը եւ նրա հետ էլ համաձայնեցնում էր իր որոշումներն ու հրամանագրերը: Նրանք նաեւ արքեպիսկոպոս ունեն, եպիսկոպոսներ, քահանաներ, բազմաթիվ եկեղեցիներ, ուր իրենց ծեսով են ծառայում Աստծուն, նույն ազատովթյամբ՝ ինչպես Հայաստանում:

.....

/34/ Վերելում ասացի, որ հայերը շատ մաքուր են առեւտրի մեջ, դա նրանից է, որ նրանք շատ չափավոր են կենցաղում եւ ապ-

րում են խնայողովթյամբ: Երբ ճամփորդովթյան են մեկնում, տանում են իրենց բոլոր իրերը, կենցաղային առարկաները, նույնիսկ անկողնային պարագաները եւ այնպես են պահպանում ամեն ինչ, որ նույնիսկ ամենաներկար ճանապարհորդովթյունից հետո վերադարձնում են դրանք: Վաճառականովթյան համար ծնված այս ազգը իր հին հայրենիքում լուկ աղքատ հովիվ էր, որն ապրում էր հողի շնորհած բարիքներով, եւ որը, բացի նրանից, որ դժվարովթյամբ էր /35/ այն մշակում, դժբախտովթյունն ուներ նաեւ թուրքերի ու պարսիկների անվերջանալի սոսնձգովթյուններին դիմակայելու նրանք պատերազմում էին իրենց տարածաշրջանում, քանի որ երկու պետովթյունների սահմանագծին էր գտնվում:

Հայերի առեւտուրն այնքան հեռուներն է ընդգրկում, որ շատերը բազմաթիվ լեզուներ գիտեն, հատկապես թուրքերեն, պարսկերեն, իտալերեն եւ ֆրանսերեն, որոնք նրանց համար այնքան բնական են, որքան իրենց մայրենին, եւ բացի դրանից, նրանք ունեն մի ուրիշը, որը հասու է միայն հոգեւորականներին: Այդուհանդերձ, կանայք խոսում են միայն հայերեն, քանի որ նրանք օտարների հետ առեւտրով չեն զբաղվում եւ համարյա երբեք դուրս չեն գալիս:

Ինչ վերաբերում է նրանց ամուսնովթյանը<sup>100</sup>, այն մշտապես կայանում է միջնորդի միջոցով, եւ հարկ է, որ երկու կողմերը հարգեն ծնողների որոշումը. վերջիններս համաձայնովթյան են գալիս իրենց ուզած ձեւով: Ապա կատարում են նշանադրովթյունը, /36/ որը քահանայի կողմից ավետարանի ընթերցանովթյան ներքո, մի քանի ծերունիների ներկայովթյամբ տղայի կողմից աղջկան մատանի նվիրելու արարովթյունն է: Հարսանիքի նախօրեին երկու կողմերն իրար նվերներ են ուղարկում, եւ հաջորդ օրը վաղ առավոտյան փեսան գնում է հարսնացուի տուն, որտեղից նրանք դուրս են գալիս իրենց ամենագեղեցիկ հանդերձներով: Յուրաքանչյուրը նստում է շքեղ զարդարված ձիու վրա:

100 Ամուսնության մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 38:



Փեսան ծածկված է արծաթյա թիկնոցով, որն իջնում է մինչև գոտկատեղը, իսկ հարսը՝ սպիտակ քողով, որը նրան ամբողջութամբ ծածկում է՝ բաց թողնելով միայն աչքերը: Առջևից գնացող փեսայի ձեռքի երկար գլխաշորի մյուս ծայրից բռնում է հարսը: Մինչև եկեղեցի նրանց ուղեկցում են ծնողները եւ ընկերները՝ ոմանք ձիերով, մյուսները ոտքով՝ /37/ բազմաթիվ երաժշտական գործիքների նվագակցությամբ: Եկեղեցում հարսն ու փեսան ոտքով մտնում են խորանին, ուր քահանան, նրանց գլուխներն իրար միացնելով կարգում է ամուսնության կարգը: Երբ ամուսինները երգում են տալիս՝ ինչպես Եւրոպայում է ընդունված, նրանց համար պատարագ է մատուցվում: Այնուհետև նրանք վերադառնում են հարսնացուի տուն, ուր մի քանի օր բավական շքեղ խնջույք են անում:

Երբ որեւէ հայ է մահանում, նրան լողացնում են մյուսուսով օծված ջրի մեջ, ապա հագցնում են նոր շապիկ եւ ոտքից գլուխ փաթաթում մի մեծ սավանի մեջ: Հետո տանում են եկեղեցի եւ վառվող մոմերով շրջապատված թողնում մինչև հաջորդ օրը: Վաղ առավոտյան մատուցվում է պատարագ, /38/ որից հետո մարմինը տանում են առաջնորդարանի առջև, ուր եպիսկոպոսը, հոգեհանգստյան սաղմոսներ արտասանելով, նրան մյուսուսով է օծում: Թաղման թուղթով թղթում ստանալով՝ մարմինը տանում են գերեզմանատուն, որտեղ փոսի մեջ գնելու ժամանակ եպիսկոպոսը, հող նետելով նրա վրա, ասում է. «Հող էիր, հող դարձիր, մնա այնտեղ մինչև մեր Տիրոջ վերադարձը»: Փոսը լցվելուց հետո վերադառնում են հանգուցյալի տուն, ուր նրա ազգականները հյուրասիրում են ամենքին: Հատկապես լավ են հյուրասիրվում հոգեւորականներն ու աղքատները եւ որքան շատ են ծախսում այս հյուրասիրության համար, այնքան չեն կասկածում հանգուցյալի փառքի համար, եւ նույնիսկ ամենաաղքատներն ամեն ինչ անում են հոգեհացը շքեղ կազմակերպելու համար: Սրանցից ամենահուշակավորը կազմակերպվում է Սուրբ Խաչի նախօրէին՝ ընդհանուր գերեզմանոցում, որտեղ յուրաքանչյուր ընտանիք գնում է գիշերն անցկացնելու /39/ իր հարազատի գերեզմանի մոտ՝ նախ լաց լինելով

եւ ապա մի լավ կերուխում անելով: Եւ այս տոնակատարությունն այնքան հանդիսավոր է, որ աղքատներն անգամ գտնում են իրենց ուտելիքն ու խմիչքը<sup>101</sup>:

Ընդհանրապես հայերը շատ պահպանողական են իրենց ավանդույթներում, եւ նրանց արարողությունները կատարվում են արտաքին մեծ շքեղությամբ ու ակներեւ ջերմեռանդությամբ: Իմ ճամփորդության նախօրէին, առավոտից սարսափելի զբաղված էի, սակայն փողոցում աղմուկ լսելով՝ դուրս եկա, որ տեսնեմ, թե ինչն է առիթ հանդիսացել ամբոխի այս իրարանցմանը: Ասացին, որ հայերը տոնում են Աստվածահայտնությունը: Քանի որ ես նպատակ ունեի ծանոթանալու նրանց ավանդույթներին ու սովորույթներին, ուրիշների նման ե՛ս էլ վազեցի նրանց պես եւ փողոցի ծայրին գտա արքայի սպաներից ոմանց, որոնք կանգնած էին ամենուր, որտեղով թափորը /40/ պետք է անցներ: Այս արարողությունը պետք է որ շատ հանդիսավոր լիներ, քանի որ մի վրացուհի իշխանուհի (Sultane) ցանկություն էր հայտնել մասնակցել դրան: Հարուստ հայ կանայք իրենց շքեղ գորգազարդ պատշգամբներից էին դիտում, իսկ մյուսները գետեզրին էին գտնվում՝ աղեղնավորներով պաշտպանված, որպեսզի ոչ մի տղամարդ նրանց չմոտենա:

Ժամը իննի մոտ երեւացին Ջուլֆայի տասը եկեղեցիների հոգեվորականները: Նրանց հանդերձանքը հարուստ էր, շատերինը՝ ոսկեկար կերպասներից: Պատրիարքի շուրջառը թանկարժեք քարերով էր զարդարված, յուրաքանչյուր քահանա արծաթե խաչ ուներ, որի գլխամասում մեծ ու տափակ գնդեր կային՝ շրջապատված փոքրիկ զանգակներով, որոնք թեթեւ շարժումից ցիմբալի (ծնծղաների) ձայների տպավորությունն էին ստեղծում (եկեղեցական քչոցները - է. Թ.): Հոգեւորականությունը հետեւում էին Ջուլֆայի եւ Չարբախի մեծավորները՝ յուրաքանչյուրի ձեռքին վառվող մոմեր:

/41/ Այս արարողությունը բազմաթիվ ժամեր տեւեց, իսկ կեսօրին ժամանեց Արքան իր երկու նախարարների եւ իշխանավորների

101 St'u C. Le Brun, op., cit., pp. 233-234; Gemelli Careri, op. cit., p.147-149.



ուղեկցութեամբ: Իշխանուհուն պատկանող վենետիկյան կերպասներով զարդարված պատշգամբին դեմ հանդիման քառորդ ժամ մնալուց հետո, նա մի մեծ քսակ ուղարկեց պատրիարքին ու վերադարձավ: Օրվա մյուս մասը ձնառատ էր, ինչն էլ խանգարեց արարողութեանը, բայց սա արգելք չհանդիսացավ հայերին՝ տեր կամ ծառա՝ ողջ գիշեր կերուխումով զբաղվելու:

### ՖՐԱՆՍՈՒԱ ՊԻԿԵ

Ֆրանսուա Պիկեն (1626-1685) ծնվել է Լիոնում բանկիրի ընտանիքում: Նրա երկու եղբայրները Բոկոտն Կարմելիտների ուխտի անդամներ էին, իսկ երկու քույրերը՝ միանձնուհիներ: Ուստի ծնողների նպատակն էր Ֆրանսուային մասնագիտացնել առևտրական եւ բանկային գործերի մեջ, որպեսզի վերջինս կարողանա ապահովել ընտանիքի բարօրությունը: Նրան երիտասարդ տարիքից թույլ են տվել ճամփորդել ողջ Եւրոպայով, հատկապես՝ առևտրական կենտրոններով, ինչպիսիք էին իտալական Լիվոռնոն եւ Ջենովան, ուր նա կարող էր շատ բան սովորել, այցելել է նաեւ Անգլիա: Սակայն երիտասարդ Պիկենն առավելապես գրավում էր Հռոմն իր «Սուրբ վայրերով»:

Վերադառնալով Փարիզ, իր մտավոր զարգացման ու խելացիութեան շնորհիվ կարողանում է ծանոթանալ ժամանակի հայտնի անձնավորությունների հետ, այդ թվում՝ կարդինալ Ռիչելիոյի ազգականուհու, որը մեծ դեր է խաղացել Պիկեի հետագա կարիերայում: Նրա միջնորդութեամբ, ինչպես նաեւ ընտանիքի նպատակներն իրականացնելու որոշակի հեռանկարով, 1652 թ. Պիկեն դեսպան է նշանակվել Հալեպում: Այս նշանակմամբ Ֆրանսիական իշխանությունները նպատակ էին հետապնդում նոր մակարդակի բարձրացնել երկու երկրների միջեւ առևտրական հարաբերությունները: Նշենք, որ տեղի եւրոպացի առևտրական ընկերությունների միջնորդութեամբ Պիկեն ստանձնել է նաեւ Հոլանդիայի դեսպանի կարգավիճակը: Բավական հաջողություններ ունենալով այս ասպարեզում, ինչպես նաեւ բազմիցս եւ անշահախնդիր օգնություն ցույց տալով տեղի միսիոներներին եւ կաթոլիկ բնակչությանը՝ 1660-ին վերադարձել է Եւրոպա՝ Հռոմ, ուր նրան իր գործունեության շնորհիվ բարեհաճություններ էին սպասում: Նա մեծ ընդունելություն է արժանացել Պապի եւ Հավատաստիյուս ժողովի անդամների կողմից:



Ֆրանսիայում ավարտելով կաթոլիկ սեմինարիան 1663 թ.՝ Պապի կողմից ստացել է «առաքելական պրոտոնոտարի» կոչում: 1674 թ. Հավատաստիքի ժողովը նրան առաջարկել է ստանձնել Արեւելքում Բաբելոնի առաքելական փոխանորդի պաշտոնը: 1675 թ. նշանակվելով եւ օծվելով կարդինալ Գրիմալդիի կողմից որպես Կեսարոպոլսի եպիսկոպոս, ինչպես նաեւ Նախիջևանի արքեպիսկոպոսութեան առաքելական փոխանորդ՝ Պիկեն ասպետ Արվիոյի (ով Հետադայում Հանգամանորեն պիտի անդրադառնա Պիկեի կենսագրութեանը) եւ մի քանի քահանաների Հետ ժամանել է իր առաքելութեան վայրը:

1681 թ. Ֆրանսիայի եւ Հռոմի արքունիքների կողմից վերականգնվել է նաեւ նրա ղեսպանական կոչումը: Զանազան նամակների եւ ուղեգրութունների միջոցով ծանոթ լինելով տարածաշրջանում կաթոլիկ բնակչության եւ միաբանութունների վիճակին, 1680 թ. նա ճամփորդութուն է ձեռնարկել Հայաստան: Եղել է Դիարբեքիում, Հրզրումում, Երեւանում: Հանդիպել է Թավրիզի Հայոց պատրիարքին, Երեւանի խանի կողմից շքեղ ընդունելութեան է արժանացել: Նախիջևան հասնելով՝ Իննոկենտիոս 11-րդ Պապի կարգադրութեամբ կազմակերպել է այս Համայնքի արքեպիսկոպոսի ընտրութունը, եւ չնայած Համայնքը միաձայն իրեն էր ընտրել որպես թեմի գլխավոր, նա կրկնակի ընտրութունների միջոցով հասել է նրան, որ ընտրվել է գերմանացի դոմինիկյան Սերաստիան Բնարը<sup>102</sup>, որին Պապն էր առաջարկել: Զմեռն անցկացնելով Ապարաններում՝ 1682 թ. անցել է Ագուլիսով ու Վանանդով, հասել է Թավրիզ, ապա Սպահան: Ծանոթանալով Սպահանի կաթոլիկ միաբանութունների եւ Հայ Համայնքի ներկայացուցիչների Հետ, ուսումնասիրելով նրանց խնդիրներն ու կենցաղը՝ նա միայն

102 Նախիջևանի արքեպիսկոպոս Դոմինիկյան ուխտից: Նրա մասին տե՛ս նաեւ Metzler J., *Nicht erfüllte Hoffnungen in Persien*, in *Sacrae Cingregationis de Propaganda Fide Memoria Rerum*, 1622-1972, vol I/1 1622-1700, Roma Freiburg, Wien, 1971, p. 693, 699; Richard Fr., op. cit., T. I, pp. 49, 68-70, 144, 146-152, 160-, 170-188.

Հաջորդ տարի է կարողացել ղեկանադիտական այց կատարել Շահին: Սակայն քանի որ Շահի Համար նախատեսված Ֆրանսիայի արքայի նվերները դեռ տեղ չէին հասել, ստիպված է եղել եւս մի քանի ամիս մնալ Սպահանում՝ զբաղվելով կաթոլիկ Համայնքի գործերով, չնայած Հայոց եպիսկոպոսի թշնամական վերաբերմունքին: Ավարտելով իր առաքելութունը՝ նա պատրաստվում է մեկնել Բաղդադ՝ իր թեմը գլխավորելու նպատակով, սակայն Համադանում Հիվանդացել է եւ մահացել 1685 թ.:<sup>103</sup>

Թարգմանութիւնը կատարվել է Հետեւյալ Հրատարակութունից. *La vie de Messire<sup>104</sup> Francois Picquet, Consul de France et de Hollande, à Alep. Ensuite Evêque de Cesarople, puis de Babylone, Vicaire Apostolique de Perse. Contenant plusieurs événements curieux arrivés dans les tems de son Consulat et de son Episcopat dans les Etats de Turquie et de Perse, et dans les Eglise de ces deux Empires. Divisée en trois Livres. Paris MDCCXXXII (1732).*

### Ֆրանսուա Պիկեի վկայություններից

#### Գիրք III

/418-419/ Ի վերջո, քառասներկու օր քայլելուց հետո նա եկավ Սպահան հուլիսի 12-ին (1682 թ. - է. թ.): Այստեղ առեւտուր անող Ֆրանսիացիները եւ բազմաթիվ Հայ կաթոլիկներ եկան նրան դիմավորելու քաղաքից մեկ օր հեռավորութեան վրա: Իսկ քաղաքի դարպասների մոտ նրան ընդունեցին արքունի զինվորականների

103 Goyau G., *Un précurseur: François Piquet, Consul de Louis XIV en Alep et Evêque de Babylone*, Paris 1942; Michaud L.G., op. cit., t.34, 1823, pp. 284-289. Նրա մասին տե՛ս նաեւ Hussein I. El-Mudarris ..., *Le consulat de France à Alep au XVII s.: journal de Louis Gedoyn, vie de François Piquet, mémoire de Laurent Arvieux*. Alep, 2009; Richard Fr., op. cit., t. I, p. 109-113 (Հ. Ռաֆայել դյու Մանը հավանություն չի տալիս Պիկեի գործունեությանը: Նա համոզված է, որ վերջինս ամենալիք պատրաստ չէր Պարսկաստանի առաքելությանը):

104 Messire - հմուտ՝ mes, ժամանակակից լեզվով mon (իմ) իմաստի եւ սիր կոչման լեզվաբանական միացումը, որը հմուտ տրվում էր ազնվականության տիտղոս ունեցող անձանց: Այժմ այս կոչումը վերապահված է Ֆրանսիայի վարչապետին:



մեծ բազմություններ եւ այս ողջ թիկնազորը նրան ուղեկցեց մինչեւ Արքայական Գանձարանի կողմից հատկացված այն պալատը, որ մեհմանդարը նախապատրաստել էր իր համար, ուր եւ նա հյուրընկալվեց ու հյուրասիրվեց իր ողջ կեցությունը ընթացքում:

Իսպահանում կամ Սպահանում Շահի կամ պարսից արքայի մշտական նստավայրն է եւ այդ կայսրության մայրաքաղաքը: Ընդհանուր առմամբ նրա շրջագիծը գերազանցում է Փարիզին եւ նրա արվարձաններին: Զենդերուդ (Zenderont) գետը, որի վրա մի կամուրջ կա, հայերի բնակավայր Զուլֆան կամ Զուլֆան բաժանում է քաղաքից: Այս կամրջի ու քաղաքի միջեւ շատ գեղեցիկ ծառուղի կա, եւ երկու կողմերում Շահի պարտեզներն են: Յուրաքանչյուր տուն իր մրգատու այգին ունի. այստեղ գեղեցիկ օր կարելի է անցկացնել, եւ օդն էլ անխռով է:

1423/ Նա հաճույքով իմացավ, որ բազմաթիվ հայեր կային, նաեւ շատ ազնվականներ, եւ Զուլֆայում ամենահարուստը համարվող մի մեծ ընտանիք, որը բացահայտորեն հռոմեական եկեղեցու կողմնակիցն էր<sup>105</sup>: Այս երջանիկ նորույթը նրան մեծ հույսեր ներշնչեց իր առաքելության հաջողության գործում: ...

1424/ Աստծո Սպասավորը հետաքրքրվեց նաեւ Սպահանում Բաբելոնի եպիսկոպոսի ունեցած եկեղեցու եւ հյուրատան վիճակով, եւ ափսոսանքով իմացավ, որ դրանց ավերակները վաճառվել են թուրքերին, եւ ապա վերակառուցվել՝ առանց ետ գնելու որեւէ հույսի: Երկրի օրենքի համաձայն՝ այլ գործածության նպատակով արծաթեղենը եւս վաճառվել է եւ եկեղեցու ունեցվածքից ոչինչ չի մնացել, բացի անգործածելի մի քանի հին զարդաքանդակից: Աղքատության այս վիճակը նրան ստիպեց դիմել միաբանության միջամտությանը եկեղեցին կրկին ձեռք բերելու եւ այն սկիզբներով ու անհրաժեշտ պիտույքներով ամբողջացնելու համար:

1443/ Աստծո Սպասավորն օգտվեց իր ունեցած ազատ ժամանակից կաթոլիկներին այցելելու եւ այս քաղաքում գործող միսիանե-

105 Անկասկած Ակատի ունի Ծեփրիմանյան ընտանիքը:

րի վիճակին առավել մոտիկից ծանոթանալու համար: Հռոմեական հավատքին հարող չորս եկեղեցի կար. առաջինը Ֆրանսիացի վեղարավորների (կապուցիներ) եկեղեցին էր, որոնք արքայի շնորհով էին ձեռք բերել տունը եւ ամենեւին անհանգստանալու կարիք չուներին: Մյուսը պորտուգալացի ավգուստինյաններինն էր, որը ժամանակին Կաստիլիայի արքաների շքեղություններ էր կառուցված, երբ նրանք դեռ իշխում էին Օրմուզի վրա: Երրորդը իտալացի բողոտն կարմելիտներինն էր, որոնք ուղարկված էին Հավատասփյուռ ժողովի կողմից, եւ վերջինը հիսուսյաններն էին, որոնք հաստատվել էին Զուլֆայում:

Բոլոր այս հոգեւորականները լի էին ջերմեռանդությամբ, սակայն հաջողությունն ամենեւին չէր համապատասխանում նրանց աշխատանքներին: Սրտացավության բացակայության պատճառով գործերն իրականացվում էին մեծ սառնասրտությամբ: Արքունիքն ու արքայական քաղաքները, որոնք հակված չէին Աստծո շնորհներն ընդունելու, նրանց բարեպաշտական նպատակներին դիմադրող միակ խոչընդոտը չէին: Նրանք շատ էին տուժում 1444/ առավել նշանակալից արգելքներից:

Հայերի Սպահանում գտնվող Ստեփանոս<sup>106</sup> (Etienne) անունով եպիսկոպոսը, որի բնավորության բացասական գծերում զուգորդվում էին մեծ արհամարհանքն ու կատաղի համառությունը, իրեն ընձեռված բոլոր առիթներով հայտարարում էր, որ դեմ է կաթոլիկ հավատքին: Իր եկեղեցում նա բացահայտորեն թշնամաբար էր արտահայտվում Կեսարոպոլսի եպիսկոպոսի<sup>107</sup> մասին, հորդորում էր բոլոր հայերին ոչ մի առնչություն չունենալ նրա հետ եւ այս արժանավոր հոգեւորականին ներկայացնում էր սարսափելի կերպարով՝ մատնանշելով որպես խաբեբա, որի նպատակը սոսկ նրանց հրապուրելն է: Սրբազան եպիսկոպոսը երբեք չդիմադրեց այս զրպարտություններին՝ թերեւ՝ միայն անհաղթահարելի համբերու-

106 Իմա՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Ջուղայեցի (1683-1696): Տե՛ս Ատե Թաշիրյան Է., Աշվ. աշխ., էջ 65-71:

107 Իմա՝ Ֆրանսուա Պիկե:



թյամբ, չնայած արքունիքում ունեցած հարգանքի շնորհիվ կարող էր դրա դեմն առնել, ինչին եւ արժանի էր: Սակայն նա խնդիրն ուզում էր հաղթահարել իրեն հատուկ քաղցրությամբ եւ այլ բան չէր ասում իրեն լուրեր հաղորդողներին, բացի այն, որ պետք չէ այդ եպիսկոպոսի մասին վատ խոսել, այլ՝ աղոթել Աստծուն նրա համար՝ Հիսուս Քրիստոսի օրինակով, որը խաչի վրա աղոթում էր իր թշնամիների համար:

Այդուհանդերձ, հարկ է ընդունել, որ Ստեփանոսի խոսքերը շատ հայերի հեռացնում էին /445/ մեր Սուրբ Հավատքից, չնայած նա ոչ մի ապացույց չէր բերում իր վատաբանությունները հիմնավորելու համար: Այն խիզախությունը, որով նա դրանք դիմադրավում էր, հարգանք էին ներշնչում տգետ ու պարզամիտ ժողովրդի մոտ: Բավական էր նրանց վատ օրինակ ծառայել եւ կաթոլիկների ողջ գործունեության մասին մի քանի չարամիտ խոսքեր ասել, եւ բոլոր միսիոներների ջանքերն ատելի դարձնելով փոշիացնել: Չնայած դրան, մի նոր պատրիարքի ժամանումը, որ սպասվում էր ամեն օր, եւ որը պետք է շքեղ թիկնախմբով գար, նախանձ էր առաջացնում մյուսների մոտ, ովքեր գիտեին իրականությունը, սակայն չէին կարող բացահայտորեն արտահայտվել:

... Ուստի նա այսպես գրեց միաբանության գլխավոր կարգի-նալին. «... մինչ այժմ նվազ արդյունքներ ունեցանք /446/, սակայն տեղ ունենք ակնկալելու, որ շնորհների օգնությամբ ինչ որ լավ բան կլինի ապագայում, եթե միաբանությունը ցանկանա պետք եղած օգնությունն ուղարկել այս եկեղեցուն, ընդ որում. 1. տեղում ապրող եպիսկոպոսի ներկայություն, 2. որպեսզի հոգեւոր միաբանությունների միսիոներները նրան ենթարկվեն, 3. նոր միսիոներներ, որոնք հայերեն գիտեն, 4. որպեսզի նրանք ապրեն Ջուլֆայի քրիստոնյաների մեջ, այլ ոչ թե քաղաքի կենտրոնում՝ մահմեդականների մեջ, այնպիսի մեծ հեռավորության վրա, որ ոչ ոք չգնա այցելելու արվարձանի քրիստոնյաներին»: Առաջին երկու կետերը իսկապես միսիայի գործերը կարգավորելու համար խիստ կարեւոր միջոցներ են: Այդ գործերը շատ են տուժել հոգեւոր հովվի բացակայության եւ

միսիոներների ստորադասման անկանոնության պայմաններում, եւ վերջին երկուսը եւս օգտակար են ու անհրաժեշտ՝ այն պահանջելու եւ նրանց ունեցած կորուստները ծածկելու համար:

1683 թ.

/449/ Այս պայմաններում տեղի ունեցավ, մի իրադարձություն, որը խիստ ցավ պատճառեց Կեսարոպոլսի եպիսկոպոսին եւ տխրեցրեց բոլոր կաթոլիկներին: Ահա թե ինչ է պատմում նա իր նամակներից մեկում.

«Հայերն ամեն տարի մեծ տոնակատարություն են անում Աստվածահայտնության օրը, երբ նրանք հուլյն եկեղեցու հետ միասին նշում են Մեր Տիրոջ ծնունդը, նրա մկրտությունը եւ մոզերի պաշտամունքը: Իրենց արարողությունների մեջ այդ օրը նրանք ունեն մի շատ եզակի իրադարձություն, որ կոչում են Ջրօրհանք<sup>108</sup> (Kazike-Skuran՝, աղավաղված, հաւանաբար՝ Խաչը ջրից հանել- է. թ.): Լավ եղանակին, շքեղ պատարագից եւ Քարոզից հետո, եպիսկոպոսը Հայտարարում է սրա մասին ժողովրդին: Այդ արարողության համար նրանք՝ եպիսկոպոսը, հոգեւորականները եւ ամեն տարիքի տղամարդիկ, կանայք ու աղջիկներ, իրենց առջեւից տանելով խաչը եւ դրոշները, գնում են գետափ: Տեղ հասնելով՝ եպիսկոպոսը, որի հագին քահանայապետական շքեղ հանդերձներ են, խուլյեր ու պատմուճաններ կրող, ինչպես նաեւ հնարավորինս զարդարված քահաների ուղեկցությամբ օրհնում է գետը (սառույցը կոտրելուց հետո, եթե գետը սառած է)՝ ոչ միայն սովորական աղոթքներ ասելով, այլեւ /450/ երեք անգամ ջրի մեջ մխրձելով եպիսկոպոսական գավազանն ու արարողակարգային խաչը եւ նույնիսկ ջրի մեջ մյուսոսն լցնելով:

Արարողությունը հազիվ ավարտված տեսնում ենք բազմաթիվ տղամարդկանց ու երիտասարդների, որոնք կիսամերկ, մեկը մյուսի ետեւից նետվում են ջուրը, որն այդ եղանակին շատ սառն է, եւ

108 Ջրօրհանքի մասին տե՛ս աստ՝ ծանոթ 19:



իրենց քիթն ու ականջները ողողում են ջրով: Ամենաջերմեռանդները խմում են այն, ոտքերն ու ձեռքերն են լվանում, դեմքը սրբում, մինչդեռ եպիսկոպոսն ու հոգեւորականութունը, Ձենդերոնի ավիին դիտելով այս ներկայացումը, ամբողջ հոգով ծիծաղում է, իսկ երիտասարդ աղջիկները սաղմոսներ ու շարականներ են երգում՝ իրենց եպիսկոպոսին գովաբանելով, երբ մյուսները խմում, պարում եւ այլ անվայելուչ արարքներ են կատարում:

Այս արարողությունը գրավում է քաղաքի մեծ մասին, նույնիսկ արքաները շատ անգամ մասնակցում են դրան: Այսօրվա տոնակատարությունը պետք է մասնակցեին նաեւ արքայի հարճերը, որոնք թվով հինգ կամ վեց հարյուրն են եւ, ըստ Շահի տրամադրության, ժամանակ առ ժամանակ ավելանում /451/ կամ պակասում են: Ուստի հրաման արձակվեց, որպեսզի Ջուլֆայի բոլոր քրիստոնյաները հավաքեն իրենց կանանց ու աղջիկներին եւ ուղարկեն քաղաքից դուրս գտնվող արքայական պալատներից կամ այգիներից մեկն, ուր բազմաթիվ գեղեցիկ շատրվաններ ու ջրեր կան, որպեսզի նրանցից մի քանիսը՝ հատկապես երիցկանայք, որոնց թիվը բավական մեծ էր, հոգեւոր հագուստներ հագած, այնտեղ կատարեն Ջրօրհնքի արարողությունը, այնպես՝ ինչպես քահանաները կամ եպիսկոպոսն են կատարում գետեղրին: Ամեն ինչ արվեց հրամանի համաձայն, քանի որ այս թագավորության մեջ ոչինչ չի կարող արգելք հանդիսանալ արքայի հրամաններն իրագործելու, արքայի, որը գուցե Արեւելքում ամենակարողն է:

Հարկ էր տեսնել Ջուլֆայի այս խեղճ կանանց ու աղջիկների գնալը՝ եկեղեցու ամենագեղեցիկ զարդարանքներով պաճուճված, սակայն՝ լալով որպես բռնի զոհեր, ինչպես նաեւ՝ հայրերն ու մայրերը, որոնք սկսում էին նախազգալ այս ամբարիշտ ներկայացման դժբախտ եզրահանգումը: Շահը, նրանց հաճելիորեն ընդունելով /452/, թույլ տվեց, որ արարողությունը կատարեն իր հարճերի ներկայությամբ: Ապա նրանց ճաշ հյուրասիրեց եւ վերջում փոքր ինչ տարեց կանանց եւ ոչ գեղեցիկ աղջիկներին ետ ուղարկեց՝ բավարարվելով հարյուրի չափ առավել գեղեցիկներին ու երիտասարդներին իր մոտ պահելով, որոնց շուրջըն հյուրասիրեց հինգ-վեց օր, ապա մի երկրորդ ընտրություն արեց՝ հարյուրից զատելով քսանյութին, որոնցից տասնյութը նորահարսեր էին, մի քանիսն էլ՝ նշանված, իսկ մնացածը՝ օրիորդներ: Մյուսներին արձակելով՝ վերջիններս հազցնել տվեց մետաքսե ու դիպակե հագուստներ, իսկ նրանց բերած հագուստները՝ մի քիչ դրամի հետ ուղարկեց նրանց համեմատաբար աղքատ ծնողներին: Անկասկած այս խեղճ աղջիկներն արդեն մահաբազանություն էին ընդունել կամ խաբեություն, կամ էլ բռնություն եւ փակված էին այնտեղ որպես ստրկուհիներ: Նկատենք, այս խեղճ զոհերը հետագայում դահի ակնկալիքով չէ որ փակված էին արքունիքում: Գուցե բացառություն մի քանիսի, որոնք հազիվ երեք-չորսն էին՝ արտակարգ գեղեցկությունով, /453/ մնացած բոլորը կնություն պիտի տրվեին արքայի սպասավորներին՝ ոմանք առաջիններին, իսկ մյուսները՝ վերջիններին՝ մինչեւ իսկ ծառայողների մեջ ամենացածր աստիճան ունեցողներին: Այս միջոցով Շահն ու իր նախարարները մտածում են մեծ արժանիքներ ձեռք բերել Աստոռ առջեւ՝ խաբված լինելով Մուֆտիների կողմից, որոնք այս գործը խիստ աստվածահաճո են համարում իրենց Մուհամմեդ մարգարեին եւ Ալիին:

Այս առաջին դժբախտությունը հետեւում է հաջորդը՝ շատ ծանր այս աղջիկների ծնողների համար. դա նրանց ունեցվածքի կորուստն է, քանի որ նախ, երբ արքայի սպասավորը, գուցե եւ իր ընտանիքում ամենավերջինը, ամուսնանում է աղջիկներից մեկի հետ, իրավունք ունի ժառանգելու (քրիստոնյա - է. Թ.) ընտանիքի եւ նրա ազգականների ողջ ունեցվածքը: Դա աղքատացման պատճառ է հանդիսանում, եւ ամենամեծ վիշտը, որ հնարավոր է պատկերացնել, քանի որ իրենց ունեցվածքն այս կողոպուտից փրկելու համար նրանք մահաբազանություն են ընդունում, ինչը դիմադրություն միակ ձեւն է ու միակ միջոցը<sup>109</sup>:

109 Տե՛ս աստ, ծանոթագրություն 56:



Ես ճանաչում եմ մի հարուստ վաճառականի, որն ամեն ջանք թափեց իր դստերը պահելու համար՝ նույնիսկ /454/ հազար թուման խոստացավ նվիրել, այսինքն՝ շուրջ տասնհինգ հազար էկյու, սակայն ոչինչ չկարողացավ փրկել: Մի քանի օր անց Արքան իր մոտ կանչեց քաղաքի պատվավոր կանանց, մի բան, որ ժամանակ առ ժամանակ նախաձեռնում էր, դրանք շուրջ երեք հազարն էին՝ ներառյալ իր հարեմի կանայք: Ինչ վերաբերում է քսանյոթ քրիստոնյա կանանց, նրանք մենակ էին, խիստ հսկողություն տակ, եւ որպես վերջին տխուր տառապանք, ամեն օր նրանց փակում էին մի փոքրիկ խցում, ուր զբաղվում էին կարուձեւով եւ ձեռագործով, սակայն ազատություն չունեին, չէին կարող ո՛չ իրար այցելել, ո՛չ խոսել իրար հետ, եթե ներքինին, որը հսկում է նրանց, թույլ չտար, եւ շատ հազվադեպ էր նման բան թույլ տալիս: Դազանակի դաժան հարվածների էր ենթարկում նրանց, երբ փորձում էին իրենց խցերից դուրս գալ, կամ որեւէ այլ սխալ էին թույլ տալիս, հատկապես երբ նրանց բռնում էին խաչակնքվելու ժամանակ, կամ քրիստոնեական ձեւով աղոթելիս: Արդեն հայտնում են, որ Արքան այդ աղջիկների մեծ մասին ուզում է ամուսնացնել իր սպասավորների հետ, որոնք /455/ հետո ազատ կլինեն տիրանալ նրանց ծնողների եւ ազգականների ունեցվածքին»:

Այստեղ ավարտվում է Կեսարուպոլսի եպիսկոպոսի նամակը, որը գրելիս դեռեւս չէր որոշել խնդրել Շահ Աբասին (այսպես էին կոչում իշխող արքային) ազատություն շնորհել այս ունեզրկված աղջիկներին: Օրեր անց, զգացված այն խղճահարույց վիճակից, որի մեջ էին գտնվում այս քրիստոնյա կանայք ու աղջիկները, նա շտապեց ներկայանալ արքային՝ ասելով, որ «(արքան - է. Թ.) իրականում այդ ազգի վրա մեծ իշխանություն ունի, սակայն ինքն ի՛ր արքայի (Ֆրանսիայի - է. Թ.)՝ բոլոր քրիստոնյաների պաշտպանի կողմից խնդրում է ազատություն շնորհել իր ենթականերին եւ չխախտել հին ավանդույթի սահմանները, որոնց իր նախորդը եւ ինքը եւս մշտապես շատ կարգապահորեն հետեւել են»:

Հոգեւորականի խոսքը հաճույքով լսվեց եւ նա կարողացավ հասնել այս երիտասարդ կանանց ազատ արձակելու հրամանի իրագործմանը՝ առանց նրանց ծնողներից ինչ-որ բան զանձեւու: Այս արաքը նրա հանդեպ բոլոր հայերի սերն ու պաշտամունքը հարուցեց:

Այդուհանդերձ, այդ կանանցից չորսին Շահը պահեց, քանի որ ըստ հարստահարության հին ավանդույթի, /456/ որ Պարսից արքաները որպես հարկ դրել էին քրիստոնյաների վրա, նրանք Աստվածահայտնության տոնի օրն ընտրում էին չորս հայ աղջիկների իրենց հարեմը հարստացնելու համար: Գերապայծառ Պիկեն ապարդյուն էր ուզում համոզել անհավատ արքային հրաժարվել այդ սովորույթից: Նա վտանգում էր նաեւ մյուսներին ազատելու գործընթացը եւ կարող էր ամոթալի մերժում ստանալ: Այս չորս քրիստոնյա աղջիկների կորուստը շատ ազդեց խղճմտանքով լի հոգեւորականի վրա եւ մյուսներին բարբարոսների ձեռքից ազատելու հանգամանքն ամենեւին չէր մխիթարում նրան:

Այս իրադարձությունից հետո կարծես նրան մխիթարելու համար Բարձրյալը՝ Արտասահմանյան Միսիաների տնօրենների կարգադրությամբ՝ նրա մոտ ուղարկեց երկու միսիոներների՝ գերապայծառ Ռոշին<sup>110</sup> եւ Սանսոնին<sup>111</sup>: Նրանք օժտված էին այն բոլոր հատկանիշներով, որ կարող էր երազել պրելատը (առաջնորդ): Գերապայծառ Բրիգասիեին<sup>112</sup> գրած շնորհակալական նամակի մեջ

110 Jean Baptiste Roch - Փարիզի արտասահմանյան միսիաների Ավգուստինյան ուխտիմ պատկանող եպիսկոպոս է: Սպահան է հասել 1683 թ. սեպտեմբերին Սանտոնի հետ միասին (Արա մասին մանրամասն տե՛ս Metzler J., op. cit, in Sacrae Congregationis de Propaganda Fide... p..701; Kroell A., op. cit, p.21, 23; Richard Fr., op. cit, vol. I, pp.112, 125, 166 185; Մեր ձեռքի տակ են մատն Արա մամակները, որոնք պահվում են «Փարիզի արտասահմանյան միսիաների» արխիվում:

111 François Sanson-ի մասին տե՛ս ստորև:

112 Brisacier Jaques Charles (գերապայծառ) - Արտասահմանյան Միսիաների սեմինարիայի մեծավորն էր շուրջ 70 տարի: Մահացել է 1736 թ. 94 տարեկան հասակում: Մեծ հեղինակություն ուներ Ֆրանսիայի արքունիքում, սակայն հրաժարվել է քազմաթիվ եպիսկոպոսական պաշտոններից: Հիսուսյանների



վերջինս նշում էր հատկապես նրանց բարի տրամադրվածությունը գործի հանդեպ եւ մանավանդ նրանց հայոց լեզվի իմացությունը: Նրանք տեղեկացրին, որ կարդինալ դ'Էստրեն ծիրանավորների ժողովի ընթացքում հայտարարել է, որ նա ընտրվում է /457/ Բաբելոնի եպիսկոպոս: Այս պաշտոնը թափուր էր գերապայծառ Լուի դյու Շրմենի վախճանից հետո: Այսպիսով՝ նա ղեկավարեց այս եկեղեցին որպես առաքելական տեղապահ, սակայն՝ որպես սովորական հովիվ: Միաժամանակ նա իննուկենտիս XI Պապից եզակի գոհունակություն ստացավ «Հոբելյանը»<sup>113</sup>, որ Պապը հանձնում էր իր տեղապահություն տակ գտնվող բոլոր գավառներին: ... Մեր եպիսկոպոսն այդ Բուլլայի պատճեններն ուղարկեց Բաղդադ կամ Բաբելոն:

մասին բազմաթիվ աշխատությունների հեղինակ է: (St' u Richard Fr., op. cit, vol. I, pp. 166, 185; Jean Guennou, *La fondation de la Société des Missions Etrangère de Paris, in Sacrae Congregationis de Propaganda Fide, op. cit, p 528*):  
113 Հոռնի Կաթողիկե եկեղեցում կանոնավորված որոշակիությամբ մշտն էն Հոբելյանական տարին. երբ ինդուգենցիա է տրվում պապի կողմից այն բոլոր ուխտավորներին, որոնք Սուրբ կամ Հոբելյանական տարվա ընթացքում գալիս են Հոռն եւ այցելում հայտնի սրբավայրերը: Բոնիֆացիոս VIII-ի դեկրետով 1300 թ. մշվեց առաջին Հոբելյանը: Կղեմես VI-ը 1349 թ. այն արձանագրեց յուրաքանչյուր 50 տարին մեկ: Պողոս II-ը՝ 1475 թ. այն սահմանեց յուրաքանչյուր 25 տարին մեկ: Պապը իրավասու է հրամանագրով բացառիկ Հոբելյաններ հայտարարելու (մանրամասն տե՛ս Francesco Gligora-Biagia Catanzaro. *Anni Santi. I Giubilei dal 1300 al 2000*. Città del Vaticano, 1996):  
ԺՂ դարի առաջին քառորդին Հոբելյանական տարվա արարողություններին մասնակցելու համար Հոռն ժամանող եւ տեղի մշանավոր ուխտատեղիներն այցելող հայ ուխտագնացների համար Հոռնում լատիներենից թարգմանվեցին ու հրատարակվեցին հետևյալ աշխատությունները՝  
ա) «Յոթելեան Սուրբ տարի թողութեան, հոշակեցեալ 'ի Հայրապետէն սրբազանէ Բէնէտիքոսէ երեքտասան երորդէ // Il Giubileo dell'Anno Santo, pubblicato dal Sommo Pontefice Benedetto XIII • ի լեզուն հայոց եղև շարադրեցեալ աշխատութեամբ Յօնանու եպիսկոպոսին», Հոռն, տպ. Ուրբանեան, ՌէՄԻԵ-1725,  
բ) Նորագոյն ուղեկցութիւն հրեշտակային հոսմէական եւ մշտատեւ, սակս այց առնելոյ զեկեղեցիս 'ի Աերքս եւ 'ի արտաքս Հոռնայ, ուր հոշակին ուխտք եւ սոնախմբութիւնք: // Nuova Guida Angelica Perpetua Romana. Per visitare le Chiese dentro, e fuori di Roma • եւ 'ի լեզվէ իտալիականէ ամանցեցեալ եւ շարադրեցեալ 'ի հայկական բարբառն, աշխատութեամբ Թօյաթեցոց տնտոն Յօնանու վարդապետին եւ եպիսկոպոսին: Հոռն, տպ. Ուրբանեան, 1725:

րան. Շիրազ, Բասորա, Թավրիզ եւ Վրաստան, սակայն ինքն անձամբ այն ուզում էր հրապարակել Սպահանում:

«Հոբելյանի» բացումը շքեղ արարողություններ կատարվեց Ջուլֆայում՝ հիսուսյան հայրերի եկեղեցում՝ կաթոլիկ մեծ բազմություն ներկայություն: Եպիսկոպոսն այն ուղեկցեց գեղեցիկ ճառով, ուր մատնանշեց, թե որքան պետք է հարգեն այն շնորհը, որ առաքելական փոխանորդն իրենց է ուղարկել «Հոբելյանը», եւ այն պատրաստակամությունը, որ նրանք պիտի ցուցաբերեն «Մեղքերի թողությունն (ինդուլգենցիային)» արժանանալու համար:

... /458/ Այս «Հոբելյանին» հաջորդող բոլոր կիրակիները բարեպաշտ եպիսկոպոսը գնում էր պատարագելու միսիոներների եկեղեցիներից որեւէ մեկում, եւ գլխավորապես՝ Ջուլֆայի եկեղեցում՝ կաթոլիկների հարմարություն համար, որոնց թիվն այստեղ մեծ էր:

... /460/ Նա էլ բավարարվում միայն նրանց հետ խոսելով ու բացատրություններ տալով, այլ նաեւ հավատքի էր բերում հերձվածող հայերին, ինչպես նաեւ լյուծերականներին ու կալվիրիստներին, որոնք այս քաղաքում առեւտուր էին անում:

1684 թ.

/485/ (Պիկեն գալիս է Համադան, որտեղ այդ քաղաքի եպիսկոպոսը եւ մի քանի հայ հարուստներ այցելում են նրան եւ ցանկություն հայտնում զրուցելու նրա հետ կրոնական թեմաներով (է.թ.): Նրանք արդեն մասնակցել էին նրա պատարագներին եւ ծանոթ էին նրանց աստվածաբանական տեսակետներին շնորհիվ գերապայծառ Ռոշի<sup>114</sup>, ով հայերենով բացատրել էր նրանց: Այնուամենայնիվ նրանց արգելում էին որեւէ առնչություն ունենալ կաթոլիկ միսիոներների հետ:

Ստեփանոս եպիսկոպոսը, որի մասին /486/ արդեն խոսեցինք, տազնապաժ նրանց հաջորդություններից եւ զգուշանալով, որ Աստծո սպասավորները շուտով հավատափոխ կանեն Համադանի բոլոր

114 Տե՛ս նաեւ Թաշիրյան է., մշվ. աշխ., էջ 65-71:



Հայերին, բողոքեց քաղաքի փոխարքային, որն այդ ժամանակ Սպահանում էր, եւ նրան տեղեկացրեց, որ Հայերը բոլորը Ֆրանկ կղաւթան, եթե հենց սկզբից չդիմադրավեն Բաբելոնի եպիսկոպոսի (Պիկեի - է. Թ.) ձեռնարկներին:

Նախարարը նախ պատասխանեց, որ ոչինչ չի կարող անել նրա՝ դեսպանի կարգավիճակ ունենալու պատճառով, բայց վերջում, զիջելով թախանձանքներին եւ սիրաշահվելով նրա նվերներով, հրամայեց իր ենթասպային խիստ պատժամիջոցների սպառնալիքի տակ բոլոր Հայերին արգելել գնալ օտար եպիսկոպոսի տուն, ինչ առիթով էլ որ լինի: Այս արգելքը ծայրահեղորեն վշտացրեց բարի քրիստոնյաներին, սակայն չէր կարող բոլորովին արգելել ժամանակ առ ժամանակ այցելել նրան, հատկապես՝ գիշերվա ընթացքում, որպեսզի խոսափեն բանտարկութունից կամ որոշ տուգանքների ենթարկվելուց (ինչը մեծ պատիժ էր այդ խեղճ մարդկանց համար)՝ միաժամանակ չզրկվելով Սրբազան եպիսկոպոսին տեսնելուց: Այս հրամաններն /487/ այնպիսի խստութեամբ էին ի կատար ածվում, որ նույնիսկ բանտարկեցին երկու հիվանդ կանանց, որոնք եկել էին դեղ վերցնելու եպիսկոպոսի բժշկից եւ մի Հայի, ով եկել էր նրան գինի վաճառելու:

... Եւ քանի որ իրադարձութունները զարգացում էին ապրել, նա որոշեց իր կարծիքն ասել այն տարօրինակ վերաբերմունքի առթիվ, որ իր նկատմամբ ցուցաբերվում էր: Այս նախարարը, վախենալով, որ նա կբողոքի էջթեմադ ուղ դովլենին կամ նույնիսկ Շահին, եթե չբավարարի նրա հայցը, իր ենթասպային տեղափոխեց այլ աշխատանքի՝ նրան ասելով, որ երբեք /488/ ոչ մի հարցում չմերժի Ֆրանսիայի արքայի դեսպանին (Պիկեին - է. Թ.) եւ նրան ամեն ինչում սատար լինի: Այս փոփոխութունը համազգային ուրախութեամբ լցրեց բոլոր Հայերի սրտերը: Սրբազան առաջնորդը օգտվում էր այն հնարավորութունից, որ ստեղծված էր իր միսիայի հաջողության համար. գնեց երկու-երեք տուն, որոնք իրար միացրեց՝ նպատակ ունենալով բնակվելու համար առավել հարմար պայմաններ ստեղծել եւ ի վերջո կառուցել մի եկեղեցի, ուր նա

ավելի պատշաճ ձեւով իր պարտականութունները կկատարեր, ինչը եւ հաշված օրերի ընթացքում գլուխ բերվեց, քանի որ այս թագավորութունում քարերով ու կրով չեն կառուցում, ինչպես Եւրոպայում, այլ պարզ՝ արեւի տակ չորացրած աղյուսներով, որ պատրաստում են տարածաշրջանի հողից ու որ հարմար են այդպիսի շինարարության համար: Միայն Սպահանի եւ Կազբինի արքայական պալատներն են կառուցված թրծված աղյուսով:

1685 թ.

/496/ Բաբելոնի գերապայծառին շատ զարմացրեց Համադանի եպիսկոպոսի վարվելակերպը: Սկզբում նա բարեկամական ջերմութեամբ ու հետաքրքրութեամբ էր ընդունել նրան՝ անակնկալի բերելով նույնիսկ կաթոլիկ հոգեւորականին, սակայն երկար ժամանակ պետք չէր հասկանալու համար, որ նա խանդարում է Հայերին նրա մոտ գնալ: Չնայած երբեք բացահայտորեն չէր արտահայտվել նրա գեմ, սակայն բոլոր միջոցներով գաղտնի կերպով դիմադրում էր նրա բոլոր բարի ձեռնարկներին, նույնիսկ սաստում էր բանադրանքներով եւ սարսափելի սպառնալիքներ էր ուղղում այն անձանց, ովքեր կհաճախեն՝ կաթոլիկ մատուռի միջոցառումներին: Այս եպիսկոպոսի դիմադրութունը վախեցրեց մեծ թվով թույլ հոգիների, որոնք մարդկային հարգանքով էին լցված, եւ այս ամենը տարօրինակ տարածայնութուններ առաջացրեց: «Քահանաները, եպիսկոպոսը եւ համայնքի մեծավորները լարվել են մեր դեմ. մինչեւ որ նրանց հասկացնենք իրենց սխալը, նրանք կբաժանվեն մեզանից վերջնականապես»:

/497/ Նա նույնիսկ հանդիպեց Հայերի մեծավորին, որին Darend (իմա՝ քալանթար - է. Թ.)<sup>115</sup> էին կոչում եւ մի քանի ուրիշներին, որոնք այն աստիճան անպատկառ էին իրենց պահում, որ հայհոյում էին Սրբազան առաջնորդին, մինչեւ իսկ վնասեցին նրա հայ

115 Նոր Ջուղայի ինքնավար մարմինների իրավական կարգավիճակի քննությունը տե՛ս Барсегов, Ю. Г., op. cit., էջ. 43-57: Հմմտ. Խաչիկյան Թ., Աշխատք. էջ 33-36:



ընկերոջը եւ նրա ծառայողներից մեկի գլուխը վիրավորեցին: Նա ուրախութեամբ եւ հարգալից երջանկութեամբ կտաներ այս բոլոր տառապանքները, սակայն մտածելով, որ այս ձեռնարկը կարող է վատ հետեւանքներ ունենալ ու հավատքի տարածմանն արգելք հանդիսանալ, ձի նստեց եւ իր ողջ թիկնազորով գնաց գավառապետին բողոքելու: Այս սպան շատ խիստ հրամաններ էր ստացել իր վերադասից՝ խանից ու փոխարքայից, դեսպանին (Պիկեին - է. Թ.) ամեն ձեռով սատարելու վերաբերյալ: Սա թույլ տվեց նրան արդարութիւն իրականացնել եւ պատժել մեղավորներին, սակայն ա՛յն ձեռով, որ բոլորովին դեմ էր առաջնորդի դիտավորութիւններին, քանի որ չբավարարվեց՝ պաշտոնազրկելով քալանթարին, այլեւ նրան դազանակով ձեծի ենթարկեց, ինչպես նաեւ երեք ուրիշ պարսիկների /498/ խստագույն դաժանութեամբ պատժեց՝ նրանց եղունգները տանելով Աստծո սպասավորի մոտ (Պիկեի - է. Թ.): Վերջինս շատ ցավագին ընդունեց այս ամենը:

Չնայած այս բոլոր դիմադրութիւններին, նա իրեն շատ համբերատար պահեց, եւ մանավանդ բարյացկամորեն ցանկանում էր նրանց լավութիւն անել: Ընտրյալ մի բազմութիւն էր գալիս իր մատուռը, ուր շարունակում էին նրանց հաղորդակից անել Աստծո խոսքին: Հետագայում Տերը նրան մխիթարեց բազմաթիւ քրիստոնյաների բերելով ճշմարիտ հավատի, դրանց մեջ նաեւ՝ մի հայ եպիսկոպոսի, որը ապաշխարելով կաթոլիկութիւն ընդունեց: Ահա թե ինչ է գրում նա իր նամակներից մեկում. «Չնայած մենք անօգուտ սպասավորներ ենք, Աստծո ողորմածութիւնն ուզում է օգտվել մեր պաշտոնեութիւնից՝ կորսված խեղճ հոգիներին փրկելու համար անդունդից ու հավիտենական դժոխքից, եւ չգիտեմ՝ Պարսկաստանի մնացած մասերում էլ կարո՞ղ ենք անել այն, ինչ անում ենք այստեղ»:

/522/ Միսիոներներից գերապայծառ Սանսոնն առաքելութեամբ գտնվում էր Ջելալի կոչվող մի գյուղում՝ Համադանից երկու օր հեռավորութեան վրա, ուր մոտ երեք ամիս աշխատում էր հոռոմեական եկեղեցու գիրկը գրավելու հայկական հիսուն ընտանիքների, որոնք

արդեն ութ տարի է հոգեւոր ոչ մի օգնութիւն չէին ստացել: Գերապայծառ Պիկուն<sup>116</sup> եւ գերապայծառ Ռոշը իմանալով, որ մոտ է Սրբազան առաջնորդի վախճանը, անպայման ուզում էին, որ Սանսոնը ստանա նրա օրհնութիւնը (ուստի ցանկանում էին կանչել վերջինիս Համադան, ինչն էլ կարողացան իրագործել - է. Թ.):

/528/ «Եւ ես կարող եմ (ասում է Մոնս. Ռոշը), Լեւանտի բոլոր միսիոներներից հետո վկայել, որ եթե Աստված մի քանի գանձ է պահպանել, այսինքն՝ մի քանի ընտրյալ հոգիներ այս հերձվածող ու բաժան-բաժան եղած երկրում, նա ցանկացել է, որ դա լինի իր

<sup>116</sup> Pidou de Saint-Olon, Louis-Marie, ծնվել է Փարիզում 1637 թ.: 1659 թ. Հոռոմում անդամակցել է Թեաթիզյան ուխտին եւ որպէս միսիոներ ուղարկվել է Լեհաստան: Կղնմէս Գալանոսի հետ միասին 1663 թ. նա Լեոպոլսում էր (Լվով): 1666 թ. Գալանոսի վախճանից հետո, նա մեկնել է շարունակում իր գործունէությունը ավարտելով հայերի միացումը հոռոմեական դավանանքին (տե՛ս «Բռնի Միոթիւն»): Լավագույնս տիրապետելով հայերեւոյն, նա առաջին թեաթիզյան հոգեւորականն է, որն աշխատել է Ռուսաստանի, Կոստանդնուպոլսի, Հայաստանի եւ Տատկապէս Պարսկաստանի միսիոներում: 1687 թ. Իննոկենտիոս XI Պապը նրան նշանակում է Բարբելոնի եպիսկոպոսության մեծավոր, եւ նա հանդիսավորութեամբ իր օժոնը ստացել է Սպահանում 1694 թ. մայիսի 9-ին: Մի քանի տարի անց նրան է վստահվել նաեւ Պարսկաստանում Ֆրանսիայի դեսպանի պաշտոնը: Որպէս մշտական աստավայր ընտրել է Համադանը, որքան հոգեւոր, նույնքան քաղաքական գործունէությամբ առավել մոտիկից զբաղվելու նպատակով: 1712 թ. Պիկուն կրկին Սպահանում էր, եւ առողջական վիճակից ելնելով Ֆրանսիայի Արտաքին Գործերի նախարարութեանն է դիմել իրեն փոխարինող ուղարկելու խնդրանքով: 1715 թ. 80-ն անց, անդամալուծ Պիկուն վախճանվել է Սպահանի բոկոտն կարմելիսների վանքում: Նրա օրոք են իրականացվել Ֆերուրի եւ Միշելի դեսպանագնացությունները Պարսկաստան եւ Մեհմեդ-Ռիզա-Բեգի դեսպանագնացությունը Ֆրանսիա: Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարութիւնում պահվող Պիկուի նամակները հուշում են, որ Պարսկաստանի հայերի մեջ նրա գործունէությունը նույնքան արդյունավետ չի եղել, ինչպէս Լեհաստանում: Նրա «Հայոց պատարագի տարբերակը» Փարիզում հրատարակվել է 1726 թ.: Իսկ Կարապետ Եզեանցի կողմից կատարված Պիկուի աշխատություններից մեկի՝ «Courte relation de l'état, des commencements et des progrès de la mission apostolique aux Arméniens de Pologne, de Valachie et provinces circonvoisines, ...» հայերեն թարգմանությունը («Կարճատու տեղեկութիւնք գարդի վիճակէ գլխաբանէ եւ գծուալմանէ առաքելական քարոզութեանն առ հայս Լեհաստանի եւ Վալախիոյ եւ մերձակայ աշխարհաց») տե՛ս Բռնի միոթիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյ Հոռովմայ, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 1-135):



իսկական սպասավորի՝ Բաբելոնի գերապայծառի պաշտոնեությանը: Այստեղ մեծ թիվ են կազմում նրանք, նույնիսկ այս Համադան քաղաքում, ուր հայերն իրականում առավել ապստամբ են, քան բոլոր մյուս տեղերում»:

Քանի որ որոշ ազդեցիկ անձեր ցանկանում էին տեր կանգնել Բաբելոնի գերապայծառի ունեցվածքին, ստիպված եղան /529/ նրա թաղումը որոշ ժամանակով հետաձգել: Այդ օրը հայերի մի մասը հավաքվել էր մատուռում, մյուս մասը՝ բակում: Մեծ հանդիսավորությամբ պատարագ մատուցվեց եւ Հայր Պիղուն հայերեն լեզվով մահախոսական արտասանեց Սրբազան Հոր համար: Որոշված էր հետո նրա մարմինը փոխադրել գերեզմանատուն, երբ բոլոր հայերը ձայն բարձրացրին՝ պաղատելով միսիոներներին չզրկել իրենց եկեղեցին նման արժեքավոր ավանդից: Այդ Պարոնները նրանց պատասխանեցին, որ արժանի չեն համարել նրանց նախկին պահվածքի պատճառով, սակայն բազմությունն այնքան էր ափսոսում դրա համար, որ, չկարողանալով զսպել նրանց բարձրաձայն դժգոհությունը, ասացին, որ գործը լրջորեն կքննեն եւ կիրառեկեն իրենց որոշման մասին: Նրանցից ոչ մեկը տունը չլքեց այնքան ժամանակ, քանի դեռ քննում էին ժողովրդի խնդրանքը կատարելու հնարավորությունները, չնայած Բաբելոնի գերապայծառի կտակում նշված էր, որ իրեն թաղեն գերեզմանոցում՝ ամենաաղքատ քրիստոնյաների մոտ:

Կտակարարի կամքը նրանց երկար ժամանակ երկմտանքի մեջ պահեց սակայն վերջում /530/ հինգ լուրջ հանգամանքներ թույլ տվեցին բավարարել ժողովրդի ջերմեռանդությունը:

1. Քանի որ թուրքերը (իմա՝ մահմեդականները - է. Թ.), որոնք հավատում են, թե քրիստոնյաները հանգուցյալներին թաղում են նույն ծխակարգով՝ ինչ մուլթանիները կամ կռապաշտ հնդիկները՝ այսինքն հրաշագեղ հանդերձանքով ու մեծ հարստությունով, անպայման կպղծեին գերեզմանը, եթե թաղեին քաղաքից դուրս գտնվող գերեզմանատան մեջ:

2. Քանի որ հայերին չէին կարող մերժել այդ շնորհը, առանց նրանց մտածել տալու, որ արհամարհում են իրենց եկեղեցին, ինչն էլ այդ միսիային մեծ հարված կհասցնեք:

3. Քանի որ հայերի եկեղեցին երեք անգամ կործանվել էր այս քաղաքի կառավարչի թշնամանքի պատճառով, նրանք միսիոներներից Աստոն Սպասավորի մարմինն էին խնդրում որպես հիմնաքար՝ եկեղեցին ապագայում պաշտպանելու նման հարձակումներից. դեսպանի կոչումը, որ ուներ հանգուցյալը, այս երկրում եզակի պաշտամունքի առարկա էր:

4. Աղքատիկ հանդերձանքը, որով ուզում էր թաղվել հոգեւորականը, շատ /531/ ձեւական կթվար քրիստոնյա ամենամեծ թագավորի դեսպանի համար:

5. Եւ վերջին հանգամանքը, որն ամենազորեղն էր. որ թույլ տալով հայերին առաջնորդին թաղել իրենց եկեղեցում՝ նրանք բացում էին այն դուռը, որ մինչ այդ փակ էր իրենց առջեւ: Նրանք նաեւ հարգեցին ժողովրդի ջերմեռանդությունն ու բաղձանքը, որը, ստիպելով նրանց իրեն հանձնել այս արժեքավոր ավանդը, հակվում էր դիմադրություն ցույց տալ մեր հավատքի երդվյալ թշնամի եւ մեր Աստոն Սպասավորին ամենակատաղի հալածանքների ենթարկող իր եպիսկոպոսին: Այս բոլոր հանգամանքները լավ կշռադատելուց հետո նրանք մտածեցին, որ կարող են ընդունել հայերի շնորհը՝ առանց վիրավորելու իրենց խիղճը եւ այն հնազանդությունը, որ տածում էին Բաբելոնի եպիսկոպոսի կամքի հանդեպ:

Ապա գերապայծառ Սանսոնը զնայ նրանց եկեղեցին՝ ընտրելու համար Ս. Սեդանի մոտ ավետարանի կողքին գտնվող սրբազան տեղը: Քահանաները, մատուռ մտնելով բազմաթիվ դրոշներով ու պսակներով (palmes), որոնք կրում էին շապիկ հագած երիտասարդ սարկավազները, կեսօրից հետո ժամը երեքին վերցրին մարմինը: /532/ Միսիոներները սկսեցին կաթոլիկ աղոթքները, եւ հայերը շարունակեցին իրենց հայերեն շարականաններով, որ թույլ տվեցին երգել, պայմանով, որ ոչ մի հերձվածող իմաստ չզնի դրանց մեջ. այդպես էլ եղավ, քանի որ պարոնները նրանց զգուշացրել էին, որ



կզրկվեն վարձատրությունից, եթե նկատեն հավատքին հակառակ որեւէ բան: Ահա ինչ կարգով էր քայլում թափօրը.

Դրոշներ ու պսակներ կրող երիտասարդ սարկավագները քայլում էին առջեւից, ապա տանում էին Բաբելոնի գերապայծառի զարդարված ձին, որի գավակին՝ զարդարված ոսկեկար ձեռագործներով, դրված էր Շահի նվիրած տյուրբանը: Սուլյն արարողակարգը այս երկրում հատուկ սահմանված է դեսպանների համար:

Սրան հաջորդում էր շապիկ հագած սարկավագների մի մեծ խումբ /533/, ձեռքներին ծնծղաններ (քշոցներ), որոնց հնչյունները տակտով ձայնակցում էին շարականներին, դրանք երգվում էին բազմագույն շքեղ հանդերձանքներով քահանաների կողմից: Դրանից հետո բերում էին առաջնորդի մարմինը դադաղի մեջ, որ ծածկված էր սեւ շուրջառով եւ հանգուցյալի սեւ թիկնոցով: Հայերից ամենագլխավորները, իրար հաջորդելով, հարգալից վերաբերմունքով իրար ձեռքից էին վերցնում հանգուցյալի դադաղը: Բաբելոնի եպիսկոպոսի թարգմանը քայլում էր ետեւից՝ տանելով վերջինիս հովվական գավազանը: Նրա ետեւից մի սպասավոր տանում էր նրա խուլը: Միսիոներները հետեւում էին նրանց մանուշակագույն հանդերձաններով, որոնցից սովորություն ունեին օգտվելու դեսպանության արարողությունների ժամանակ: Նրանցից հետո գալիս էին մյուս սպասավորները՝ իրենց պաշտոնական հագուստներով ու մոմերով: Հետաքրքրասիրությունը դեպի այս արարողությունն էր գրավել քրիստոնյա եւ մահմեդական մի ստվար բազմություն. այն բոլորովին նորույթ էր այս երկրում: Բոլոր պատշգամբներն ու փողոցները այնքան լի էին մարդկանցով, որ դժվար էր երեւակայել թե ինչպես կարելի էր կարգ ու կանոն պահպանել այս թոհուբոհի մեջ:

/534/ ... Արարողությունն ավարտելով՝ քահանաներն ու քրիստոնյաները միսիոներներին ուղեկցեցին տուն՝ մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնելով այս մեծ բարեգործության համար:

Միսիոներներից մեկը հաջորդ օրը նրանց եկեղեցում ցանկություն հայտնեց պատարագելու, մի բան որ երբեք թույլ չէին տվել նույնիսկ Բաբելոնի գերապայծառին, ուստի մտածում էր, որ մեծ

դժվարությունների առաջ կկանգներ, սակայն գրկաբաց ընդունվեց այն բոլոր սպասավորների հետ միասին, որոնց իր հետ տարել էր:

Այդ օրը եւս սակավ քրիստոնյաներ չկային եկեղեցում, այս լավ ընդունելությունը նրան առիթ տվեց վերադառնալու մեկ անգամ եւս մի ուրիշ միսիոների հետ միասին, եւ հաճելիորեն զարմացավ, երբ պատարագից հետո նրան հրավիրեցին քարոզելու: Նա ներբողական կարգաց նրանց առաջին առաքյալի՝ Գրիգոր Լուսավորչի վրա: Ժողովուրդն այնքան գոհունակություն ապրեց, որ միսիոներներն ուրախ էին, որ միշտ նույն ազատությունը կունենան /535/, ինչը շատ մեծ հաղթանակ էր իրենց միսիայի համար:

/536/ Մյուս նշանակալից եւ փառահեղ իրադարձությունը Բաբելոնի եպիսկոպոսի հիշատակին կատարվեց նրա վախճանից չորս տարի անց: Ինչպես ասացինք նրա մարմինը թաղվեց Հայոց եկեղեցում: Վերջիններս սկզբում մեծ անհամբերություն ցուցաբերեցին այն ունենալու համար, սակայն ժամանակի ընթացքում նրանց ջերմեռանդությունը մարեց, եւ չցանկանալով ամենեւին առապել միայն Սուրբ մասունքների պատճառով (միսիոներները գնում էին դրանք փառաբանելու իրենց եկեղեցում), որոշեցին, որ պետք է հանել մասունքներն այնտեղից եւ վերաթաղել այն մատուռում, որը գերապայծառ Պիկեն էր կառուցել տվել: Դադաղը բացելուց հետո զարմանքով տեսան, որ նրա մարմինն ամբողջությամբ մոխրացած էր, միայն աջ ձեռքն էր /537/ դեռ մնացել ինչպես կար: Նրա հեանորդ գերապայծառ Պիդուն, ով նրան փոխարինել էր նաեւ Բաբելոնի եպիսկոպոսի պաշտոնում, ամենեւին չզարմացավ, քանի որ նրա մեծագույն գթասրտության վկան էր եղել: Նա միայն բավարարվեց՝ ասելով որ Աստված այս նշանով ուզում է ցույց տալ, թե որքան հաճելի էին իրեն Սրբազանի արած բարեգործությունները, քանի որ պահպանել է ձեռքը՝ դրանք իրականացնող գործիքը: Տեղը նույն ձեռով էր վարվել նաեւ Հունգարիայի գթասիրտ արքայի՝ Ս. Ստեփանոսի ձեռքի հետ:



## ՍԱՆՍՈՆ

Հայեպում Ֆրանսիայի նախկին դեսպան եւ 1674 թ. սկսած Բաբելոնի արքեպիսկոպոս Պիկեն առաջադրանք էր ստացել հիմնել Պարսկաստանի կաթոլիկ թեմը, ուստի նա որպես առաքելական փոխանորդ շրջում է Պարսկաստանի բնակավայրերով: 1682 թ. Պիկեն Սպահանում էր, ուր, որպես Լուդովիկոս XIV-ի դեսպան, ընդունվում է Շահի կողմից՝ հոգեւոր գործունեութուն ծավալելու համար ստանալով համապատասխան լիազորութուններ:

1683 թ. Սպահանում նրան են միանում Փարիզի արտասահմանյան միսիանների երկու հոգեւորականներ՝ Ժան Բատիստ Ռոշը եւ Ֆրանսուա Սանսոնը:

Ֆրանսուա Սանսոնի առաջին գործը եղել է հայերեն, թուրքերեն եւ պարսկերեն լեզուների յուրացումը, համոզված լինելով որ առանց դրա չէր կարող օգտակար լինել իր առաքելությանը: Երիտասարդն առանց մեծ դժվարութիւնների հաղթահարել է այդ խնդիրը: Եղել է Պարսկաստանի բազմաթիվ գավառներում: Նախ ութ ամիս Ղազվինում ուսումնասիրել է տեղի քրիստոնյաների վիճակը, ապա վեց ամիս եղել է հարավային Սիրիայում՝ ուր եւրոպացի ճանապարհորդները հազվադեպ են այցելել եւ նրանց ուղեգրութիւններում այդ տարածաշրջանի մասին քիչ նյութեր կան: Նա երկար է մնացել Պարսկաստանում, եւ կարողացել է ճանաչել պարսից արքունիքը: Համադանում մնացել է շուրջ երեք տարի՝ ունենալով Ֆրանսիայի արքայի հովանավորչական նամակը Պարսից Շահին, որի շնորհիվ նրա համար հնարավորութիւն է ստեղծվել մուտք ունենալ արքունիք, հյուրընկալվել Շահի մոտ եւ իր մշտական տեղն ունենալ հյուրերի շարքում:

1693 թ. օգոստոսին նա արդեն Ֆրանսիայում էր՝ բերելով Շահ Սուլեյմանի նամակը Լուդովիկոս XIV-ին: Ընդունվելով վերջինիս կողմից վերստիվում՝ հանձնարարական է ստացել շարադրել իր «Յուշագրութիւնները» Պարսկաստանի մասին, որոնք Etat présent du royaume de Perse վերտառութիւններ լույս են տեսել 1694 թ.:

## ՍԱՆՍՈՆ

Ըստ մասնագետների դիտարկման՝ «Նիկոլա Սանսոնի մոտ որեւէ նոր վկայութիւն չկա Իրանի մասին, որը չլինէր, ասենք, Ժ. Բ. Թավերնիեի, Ժ. Շարդենի ու այլոց մոտ: Այսուհանդերձ, այս աղբյուրը հաստատում է նախորդ հեղինակների հաղորդած տեղեկութիւնները»<sup>117</sup>:

Թարգմանութիւնը կատարվել է հետեւյալ հրատարակութիւնից. [Sanson]. Etat present du royaume de Perse, Paris MDCXCIV (1695):

### Սանսոնի նկարագրութիւնը

/9/ Նա (Շահ Սեֆին - է. Թ.) սիրում է իր ենթականերին: Հաճախ ծպտված շրջելով մոտիկից է ծանոթանում ժողովրդի կարիքներին եւ հատկապես այն վայրենութիւններին, որ թույլ էին տալիս իր սպաները ժողովրդի հանդեպ: Ոստիկաններին անակնկալի բերելու համար նրան հաճախ գիշերով գյուղացու հագուստներով /10/ կարելի է տեսնել հաց կամ այլ մթերք գնելիս: Իր կտրած զրամի արժեքը ստուգելու համար նա հաճախ է այս հանդերձանքով հայտնվում շուկաներում:

Նա սիրում է քրիստոնյաներին եւ չի ցանկանում, որ նրանց իրենց հավատքի համար անհանգստացնեն, վախեցնեն ու ստիպեն մահամեղախնութիւն ընդունել: Նա եւ դյուրութիւնով թույլ է տալիս վերադառնալ քրիստոնյա հավատքին, երբ բողոքում են, որ ստիպողաբար են հրաժարվել դրանից:

Մի քանի տարի է, ինչ նա հասկացնել է տալիս, որ հավանութիւն չի արժանացնում, քրիստոնյաների թշվառութիւնից օգտվելով, նրանց մահամեղախն հավատքի մեջ ընդգրկելու փորձերը: Լինդեն (Լնջան) գավառի բնակիչները, որոնք հայեր են եւ որոնց ժամանակին Շահ Աբասն է դաղթեցրել, ամեն տարի արքունիքին որոշ /11/ եկամտահարկ էին վճարում՝ որպես քրիստոնյա իրենց իրավունքները պահպանելու համար: Եւ քանի որ տարիներ շարու-

117 Kroell A., op. cit., pp. 20-51. Զուլայան Մ., Աշխ., էջ 49:



նակ հնարավորությունն եւ իրավունք չունենին ամեն տարի ավելացող այս հարկերը չվճարելու, Մեծ Վեզիրը, ստիպելու համար, գործի էր դնում աշխարհագրորդ: Այս խեղճ թշվառներն ի վիճակի չլինելով պարտքերը հատուցելու, զինվորների դաժան խարազանից խուսափելու ելքեր չգտնելով, ինչպես նաեւ հանդիպելով միսիոներների անտարբերությանը (որոնք համենայն դեպս կարող էին ձեռք մեկնել այսպիսի ծանր իրավիճակում), բոլորը միասին գալիս են խնդրելու էէթեմադ ուղ դովլեին, մահմեդականացնել իրենց: Այս խելամիտ նախարարի հարցին, թե ի՞նչն է նրանց ստիպում հավատափոխ լինել, պատասխանում են, որ պատճառն իրենց թշվառությունն է եւ արքունական հարկերը վճարելու անկարողությունը: էէթեմադ ուղ դովլեն (*Etmadaulet*)<sup>118</sup> անմիջապես /12/ այս մասին ղեկուցեցում է Նորին Գերագանցությունը: Նրանց բերում են արքայի մոտ եւ վերջինս այնպես է հուզվում նրանց ողբալի վիճակից, որ շնորհ է անում նրանց եւ պարտքերը չեղյալ համարում: Արգելք է դնում նաեւ նրանց ստիպողական հավատափոխության վրա: .....

Երեք տարի շարունակ արքան աշխատում էր իր դրամի բարեփոխման ուղղությամբ: Հասկանում էր, որ բավարար դրամ չկա ապրանքների նոր տեսականի ձեռք բերելու համար, քանի որ հայերը, նպատակահարմար չտեսնելով /13/ սեվիլյան ունեւերն իր երկիր բերել, Հնդկաստան էին տանում Բասորայի ճանապարհով: Արքան կանչել է տալիս այս ազգի գլխավորներին եւ նրանց վրա հարյուր հազար էկյու տուգանք է դնում, եթե երբեւէ ապացուցվի, որ նրանք շարունակում են իսպանական էկյունները Հնդկաստան տանել: Այնուհանդերձ, քանի որ նրանք Բասորայում արդեն ութ հարյուր հազար Սեվիլիայի էկյու ունեին, Հոլանդիայի դեսպան Վան Լինենը (*Van Leenen*)<sup>119</sup>, որի մասին դեռ կխոսեմ, առաջարկում է

118 Տե՛ս աստ՝ ծանոթ 42:

119 1679-1685 թթ. Գա Հոլանդիայի թագավորության կողմից Գշտակված էր Սումատրայի արեւմտյան ափերի գինվորական հրամանատար: 1689 թ. Գշտակվում է Սպահանում Արեւելահնդկական Հոլանդական Ընկերության դեսպան:

(Հայ վաճառականներին - է. Թ.) բեռնել այդ գումարը մի նավի վրա. որն ուղղակի Հնդկաստան էր մեկնելու՝ առանց պարսկական ջրերում թաթախվելու: Սակայն նա իր խոսքի տերը չի լինում: Նրա նավը խարխիս է գցում Բենդեր Աբասում եւ գլխավոր մաքսապետը առգրավում է հայերի դրամը: Արքունիքում նույն դեսպանը, /14/ որեւէ քայլ չի անում իր մեղքով տուժած հայերին օգտակար լինելու համար: Սա հայերի մոտ արդարացի կասկած է առաջացնում նրա հանդեպ: Սակայն արքան, որ կարող էր գրավված գումարից բացի նաեւ հարյուր հազար էկյուլի վերը նշված տուգանքը վերցնել նրանցից, ոչինչ չի ավելացնում նրանց կորցրածի վրա եւ բավարարվում է միայն առգրավված գումարով:

Արքան հարկ չի պահանջում այն հայերից կամ քրիստոնյա օտարերկրացիներից, որոնք գալիս են իր տիրույթներում առեւտուր անելու, մինչդեռ Մեծ Սենյորը<sup>120</sup> Պարսկաստանի քրիստոնյաներին դաժանաբար վճարել է տալիս, երբ նրանք առեւտրական նպատակներով Թուրքիայի տարածքով Եւրոպա են մեկնում: Ուստի ճշմարտացիորեն կարելի է նկատել, /15/ որ այն քրիստոնյաները, որոնք Օսմանյան կայսրությունում հեծում են դաժան ստրկության ներքո, Պարսկաստանում քաղցր ազատություն են վայելում, եթե արքայի կամքն այս ձեւով հարատեւի:

Արքան միսիոներներին ազատ գործունեություն իրավունք է վերապահել, թույլ է տալիս հաստատվել իրենց ընտրած վայրերում: Վերջիններս, որոնք հանձնարարական ունեին ամենաքրիստոնյա արքայի կողմից, իրավական եւ հողի վարձակալության արտոնություններ են ստացել այն վայրերի համար, ուր նրանք հիմնել են իրենց հաստատությունները:

Այս Արքան քիչ բարություն չի ցուցաբերում նաեւ Փրանսիացի վաճառականների նկատմամբ, որոնց նույնպես միսիոներների

Օաճ Սեֆիի (Սուլեյման) մոտ ընդունելության ընթացքում ստացել է Գաեւ Արտակարգ Խորհրդականի տիտղոս: Տե՛ս **Blussé I.**, *The Dutch Encounter with Asia, 1600-1950*, Univ. of Michigan, 2002, p. 49.

120 Իմա՝ Օսմանյան Սուլթանը:



պես է ընդունում: Հնդկաստանի Ընկերության (Արեւելահնդկական Ֆրանսիական Ընկերության - է. Թ.) Բենդեր Աբասի պատասխանատու Պարոն Մոն Ֆերեն (Mont Ferré), /16/ տասնմեկ տարի առաջ բավականին մեծ գումարի առիթով Մեծ մաքսապետի կողմից ճնշվելով, արքային խնդրեց զեղչել այն: Արքան զիջել է նրան ողջ գումարը, եւ այս Ֆրանսիացին իր վարչապետի շնորհակալություններին էր արժանացել:

1693 թ. փետրվարին իմանալով, որ Ֆրանսիական Ընկերության չորս նավեր են մոտենում Պարսկաստանի ափերին, Արքան թույլատրեց Պարսից ծոցի բոլոր կառավարիչներին պատվով ընդունել նրանց եւ ձրի մատուցել ամեն տեսակ զովացուցիչներ:

/19/ Պարսկաստանի առաջին քահանայապետին, այսինքն գլխավոր քրմապետին սաղը քասա (սաղր-ե խասսե)<sup>121</sup> են կոչում: Նա ողջ կայսրության Հոգեւոր Տերն է: Սակայն զբաղվում է միայն արքայի խիղճը եւ արքունիքը, ինչպէս նաեւ Սպահան քաղաքը կառավարելու խնդիրներով՝ ըստ Ղուրանի օրենքների :.....

/29/ Արքան ունի վեց տեղապահ, որոնցից մեկը՝ վեցերորդը, Քալանթարն է, որը Սպահան քաղաքի վաճառականների առաջնորդն է, եւ օտար իշխանների հետ միասին համարվում է Շահի սեղանակիցը (սեղանավորը՝ - է. Թ.): .....

/97/ Քրիստոնյաների հարկը հողահարկի պես չէ. նրանք /98/ գլխահարկ են վճարում, մինչեւ տասնհինգ տարեկանները՝ յոթ լիվր, տաս սոլ, իսկ քսան տարեկանից բարձր՝ տասնհինգ լիվր:

121 Սաղր - Մուսուլմանական կրոնական բարձրագույն առաջնորդ, հոգեւոր բարձրագույն ատյանի պետ: XVII դ. գլխավոր սաղրերկ երկուսն էին՝ «սաղր-ե խասսե» եւ «սաղր-ե ամմե», այս վերջինը կոչվում էր նաեւ «սաղր-ուլ-մամալիք»: Սաղր-ե խասսեի պարտականությունների մեջ էր մտնում թագավորության խալիսեի գործերի կառավարումը, սաղր-ե ամմեն զբաղվում էր հասարակ ժողովրդի մուքերի հետ կապված գործերով եւ գտնվում էր սաղր-ե խասսեի վերահսկողության տակ (տե՛ս Մատեմադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. պրակ երրորդ (1652-1731), կազմեց Բ. Պ. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 200):

(Այնուհետեւ խոսվում է մաքսատների մասին)

/156-157/ Հոլանդացիները միակն են բոլոր օտարագզիներից, որոնք իրավունք ունեն բողոքել այն անհարգալից վերաբերմունքից, որ նավահանգիստների սպաներն ու հողատերերն արքայական պայմանագրերի եւ արտոնությունների նկատմամբ են ցուցաբերում: Նրանք մետաքսի (արտահանման) վերաբերյալ արքայի հետ դաշնագիր էին կնքել, որով պայմանավորվել էին ամեն տարի դնել երեք հարյուր հակ: Մեկ բեռի համար շուկայական գնից շուրջ հազար լիվր ավելի էին վճարում՝ պայմանով, որ մաքս չվճարեն Պարսկաստանում վաճառվող համեմունքների համար: Այս հաշվարկներն արվել էին վերջին պատերազմներից առաջ, երբ նրանց առեւտուրն այսեղ նշանակալից էր: Սակայն այդ պատերազմների ժամանակ նրանց ունեցած կորուստներն ազդել էին առեւտրի բարգավաճման վրա: Նրանք համեմատաբար սակավ ապրանք էին բերում Պարսկաստան, եւ այն եկամուտը, որ ստանում էին մաքսատանն ունեցած արտոնություններից, /158/ չէր համապատասխանում այն եկամուտին, որ Արքան ստանում էր՝ նրանց մետաքս վաճառելով: Արքունի սպաները նրանց այնքան վատորակ հումք էին տալիս, որ նրանք չէին կարողանում իրացնել, թերեւս միայն որպես իրենց ձիերը կապելու պարաններ էին օգտագործում:

Արդեն չորս տարի է հեղինակություն վայելող մի դեսպան են ուղարկել այս խառնաշփոթը կարգավորելու համար: Van-Leenen-ն արքային հրաշալի նվերներ<sup>122</sup> է ընծայել՝ մետաքսի գնի որոշ իջեցում ակնկալելով: Երեսուկն էկյու իջեցրել են յուրաքանչյուր հակի վրա: Սակայն դա միայն բառեր էին՝ նվերների համար նրանց ափսոսանքը չհարուցելու համար: Այս շնորհը նա երբեք զբավոր ձեւով չստացավ, քանի որ նախարարներին չկաշառեց, Լառում գտնվելու ժամանակ բողոքեց շուկայի դեմ եւ սպառնաց /159/ Բաթավիայից նավեր կանչել Պարսկաստանի նավահանգիստներն ավե-

122 Van Leenen-ն ի պաշտոնե շահին է նվիրել ոսկեզօծ շրջանակով մեծադիր մի հագլի, նապոնական գեղեցիկ իրեր եւ մեծաքանակ չինական հախճապակյա սպասք: Այս մասին մանրամասն տե՛ս Blussé I., նույն տեղում:



րելու համար: Սակայն արքունիքում լավ գիտեին, որ Բաթավիայի նրանց ընկերությունն ի վիճակի չէր դա անել Փրանսիական նավերի պատճառով, որոնք ժամանակ առ ժամանակ հայտնվում էին այդ ծովում:

Հոլանդացիները միակը չեն, որ իրենց ուզած եկամուտը չեն կարողանում ստանալ Պարսկաստանում առեւտուր անելիս: Դրամն այնքան է արժեզրկվել, որ ոչ ոք ապրանք չի ուզում բերել պղնձե դրամով փոխանակելու նպատակով: Այս խարդախությունն պատճառն այն է, որ դրամ կեղծողների փնտրտուքով բավականաչափ չեն զբաղվում եւ կամ բացահայտելու դեպքում բավարարվում են նրանց կողոպտելով: Արդեն տաս տարուց ավելի է, ինչ աշխատում են այս երեւույթի բարեփոխման ուղղությամբ: Արքան Սպահանում, Երեւանում, Դաղիսանում, /160/ Թավրիզում, Արդեբիլում, Համադանում եւ Ավիզայում, որտեղ դրամահատարաններ կան, բազմաթիվ լավորակ տեսակներ է հատել տվել: Սակայն հազիվ նրանք դուրս են գալիս իրենց անկյունից, Հնդիկները, չնայած արքայի՝ նրանց վրա դրած խստագույն արգելքին, Բենդեր Աբասի մաքսատնով անմիջապես անց են կացնում Հնդկաստան: Եւ որքան շատ են դրամ հատում, այնքան քիչ է այն հայտնվում թագավորության մեջ: Այս հարցը կարելի է լուծել որակյալ տեսականու գների բարձրացմամբ, այդ ժամանակ Հնդիկները չեն էլ մտածի այն արտահանել:

Եւրոպական ոսկու եւ արծաթի տեսականու վրա այնպիսի ցածր գին է դրված, որ ոչ մի վաճառական չի բերում դրանք: Վենետիկյան ցեքիններն ու իսպանական էկյունները անցկացնում են Բասորայով՝ Հնդկաստան տանելու համար, եւ քանի որ պարսից Արքան հանքեր չունի, փող չեն գտնում թագավորությունում /161/ նոր տեսակներ հատելու համար: Եւրոպական դրամի արժեզրկումը հղի է երկու անհարմարություններ. առեւտրի կասեցմամբ եւ մաքսատների կորստով. այլազգիները դրանից միայն շահում են:

Արքան մեծ կորուստ չի ունենում մետաքսի առեւտրի կասեցումից, քանի որ այն պատրաստում են Սպահանում, Քաշանում, Թավրիզում եւ Մաշեղում հիմնված մանուֆակտուրաներում, ուր

արտադրվում են շատ գեղեցիկ ու հարուստ դիպակներ: Այդ մանուֆակտուրաներն աշխատում են միայն թագավորության համար, քանի որ մեծ Մոգոլն իր տարածքներում դրա շրջանառության առաջն առնելու նպատակով ենթականերին արգելել է դրանք կրել: Օսմանցիները, ինչպես նաեւ Պարսկաստանի հարեւան մյուս ազգությունները երբեք ոսկեկար կամ արծաթակար կերպասներ չեն կրում. այսպիսով՝ մանուֆակտուրաներն աշխատում են միմիայն թագավորության համար:

Մեծ Մոգոլը, որի տարածքները /162/ հարավում եւ արեւելքում սահմանակից են Պարսկաստանին, նրա ամենամեծ թշնամին չէ ի տարբերություն իր հարեւանի, որն առավել մեծ տարածքներ ունի եւ ավելի մեծ հարստություն: Այս կողմից սահմանները լավ պահպանված են լեռներով եւ Կանդահարի ամրոցով, որը թագավորության միակ ռազմավարական նշանակություն հենակետն է եւ մշտապես լավ պաշտպանված է: Նրանք, ովքեր գրել են այս երկու ժողովուրդների պատերազմների մասին, նշում են այն առավելությունները, որ պարսիկներն ունեն Հնդիկների համեմատ: Պարսիկները հմուտ ռազմիկներ են՝ շատ կարգապահ եւ նրանցից առավել ուժեղ: Մեծն Շահ Աբասը նրանց դեմ միշտ ուղարկում էր կիսով չափ փոքր զորաբանակ: Ասում են, որ ծաղրելու համար նրանց թուլությունը, մի օր իր բանակի հրամանատարությունը հանձնում է կուրտիզանուհիներից մեկին, ով հարձակվելով նրանց բանակի վրա /163/ բազում զինվորներ է սպանում եւ հաղթանակից հետո Հնդիկներին հայհոյելու համար հետեւյալ թեւավոր խոսքերն է ասում. «Մեկ քար է հարկավոր քառասուն ազուավ սպանելու համար»: Այսինքն՝ մի կիսն էլ շատ է ազուավների պես սեւ Հնդիկներին տապալելու համար:

Պարսից Արքան շատ լրտեսներ ունի Մեծ Մոգոլի արքունիքում:



164/ Արքան մի մեծ կայազոր է պահում Կանդազարի գավառում՝ վախենալով բուլղոսների<sup>123</sup> եւ աղվանների հարձակումներից, որոնք, լեռնցիներ են եւ նախամարդու նման վրանների տակ են ապրում: Նրանք ռազմատենչ են եւ շատ լավ են օգտվում աղեղից (նետ-աղեղ - է. Թ.), սակայն նաեւ հայտնի գողեր են եւ օր ու արեւ չեն տալիս քարավաններին: Նրանք ապրում են Սկյութիայում եւ ենթակա են Մոզովին, որը ոչ այնքան օգտագործում, 165/ որքան ծառայում է նրանց: Պարսկաստանը նրանց շատ է խնայում եւ այնքան արտոնություններ ու իրավունքներ է տալիս, որ նույնիսկ կարող է իր բնակիչները համարել, համենայն դեպս՝ նրանց բողոքելու առիթ չի տալիս: Նրանք խաչակնքվում են, սիրում են քրիստոնյաներին եւ մեծ ատելությամբ են լցված մահմեդականների հանդեպ: Վերջիններս (աղվանները) Թուրքոմանիայի եւ Կասպից ծովի շրջակայքում ապրող հայերն են, որոնց Թամբրլանը գաղթեցրել է Սկյութիայում գաղթօջախներ հիմնելու նպատակով<sup>124</sup>:

123 Իմա՝ բելուզներ:

124 Ա.Ֆղանների կովկասյան ծագման մասին հեղինակի վկայությունը, որը համդիպում է նաեւ երոպական այլ աղբյուրներում, իր արձագանքը ունի նաեւ հայ պատմագրության մեջ: Այսպես. Գամձասարի կաթողիկոս Եսայի Հասան Զալալյանը XVIII դ. առաջին քառորդի Պարսկաստանի քաղաքական անցուղարձեղից խոսելիս եզրակացնում է. «Ըստ որում եւ այժմս է տեսանել, եւ զի եղել ի ժամանակս սոյն սուլդան Հիսեյին թագաւորիս, ազգ մի ի կողմանս Խորասանայ եւ Ղանտահարու, գորս Աղուանք անուանեմ. եւ ասեմ վասն ազգիս այսորիկ՝ եթէ եմ բնիկ ի լեռնաքանակացն Կաւկասու եւ յերկրէն այլանաց, որ եմ ազգաւ Աղուանք որ այժմ եւս նախկին անուամբն վերակոչին. եւ լեալ եմ հաւատով քրիստոնէայք. եւ ապա զկնի ժամանակաց Լանկթամուրն կոչեցեալ բռնակալ, զոր տիրեաց յոլով մասին աշխարհիս յաղթութեամբն իրով. զոր պատմութիւնքն վկայեմ զսմանէ եւ ասեմ վտարանտեալ զազգս զայս ի տեղուքէ իրեանց եւ տարեալ զքսան եւ հինգ տունն բնակեցոյց յերկրին այնմիկ: Եւ զկնի ժամանակաց դարձուցեալ եմ ի կրօնս Մահմեդտի. եւ ապա ուռնացեալ եւ բազմացեալ եմ, եւ լեալ իշխանք եւ պետք յիրաքանչիւր մասին. եւ տիրազոյսք միմչեալ ի ժամանակս մեծ Ծահաբաս կոչեցեալ արքային. որոյ յառնուլն զՂանտահար եւ տիրելն կողմանցն այնոցիկ՝ նուանին եւ սոքա ընդ իշխանութեամբն նորին, եւ զկնի որդոց եւ թոռանց նոցին միմչեալ ի ժամանակս այս ի Ռեմ թիս մեր. եւ ապա սկսան աղմկել եւ վրդովել կողմանքն այնոցիկ» (Եսայի Հասան Զալալեանց, Պատմութիւն համասոտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 20):

Նրանք մոռացել են քրիստոնեական հավատքը, բայց այն նվազագույնը, որ հիշում են, բավական է, որ միսիոներները հեշտությամբ նրանց օրինակելի քրիստոնյաներ դարձնեն՝ հերձվածող հայերին հավատափոխ անելու փոխարեն, որոնք սերտորեն կապված են իրենց սխալներին եւ սնոտիապաշտությունը:

187/ Մի խեղճ կաթողիկէ հայ, պատահաբար գտնվելով այն ճանապարհի վրա, որով Արքան պետք է անցներ իր կանանց հետ, դատապարտվեց գլխատման: Արքան իր Ֆավորիտ Բուլբեր Աղասիին՝ արքունիքի չորրորդ մարդուն, ուղարկեց նրա խոշտանգումներին ներկա գտնվելու եւ նրան ազատություն շնորհելու, եթե վերջինս մահմեդական դառնալու պայմանով հրաժարվեր քրիստոնեությունից: Այս քրիստոնյան քաջ գտնվեց ... «Մի սպասեք, - ասաց նա այդ Սենյորին՝ մարտիրոսին վայել քաջությունը, - որ ես երկչոտություն կունենամ լքելու Հիսուս Բրիստոսին՝ մոլորեցնողին հետեւելու համար»: Նրա ցանկությունն ի կատար ածվեց եւ հավատքը հատուցվեց: Նրան գլխատեցին եւ մարմինը նետեցին շների առջեւ: Ես նրա խոստովանահայրն էի եւ իմ խնամակալությունը նրա մարմինը վերցվեց շների առջեւից եւ թաղվեց Ֆրանսիացիների գերեզմանատանը:

192/ Ղուրանն արգելում է վաշխառությունը, սակայն հնդիկներն ու հայերը թույլ չեն տալիս կիրառել այդ օրենքը: Եթե նրանք, օրինակ, մեկ տարով հարյուր էկյու են փոխ տալիս, հաշվում են թե ի՞նչ շահ կարող են ունենալ մեկ տարվա ընթացքում. այն սովորաբար ութ տոկոսից պակաս չի լինում, եւ պարտավորագրի մեջ նախօրոք հիմնական գումարի վրա անպայման նշում են եկամուտը:

Սակայն այս հնարքը ոչնչի չի ծառայում, եթե պարտք վերցնողն անազնիվ է, որովհետեւ ժամկետի ավարտին նա կարող է ասել, որ ոչ մի գումար էլ չի վերցրել, եւ վերադարձնելով հարյուր էկյուն իր պարտատիրոջը՝ նրան կստիպի կորցնել իր ութ էկյու տոկոսը, տասը էկյու՝ դատավորի վարձը եւ դատարանի բոլոր ծախսերը:

Այս դատարանը շատ ծիծաղելի է եւ բավականին անարդար 193/ պարտք տվողի նկատմամբ, քանի որ թույլ է տալիս չեղյալ



Համարել պարտքը՝ հակառակ իր պարտավորագրի եւ հակառակ այն բանի, որ նույն դատավորը ծանոթ է գործին, տեսել է, թե ինչպես է տրվում փողը, եւ պարտավորագրի վրա դրել է իր ստորագրութունն ու կնիքը: Եւ երբ հրապարակայնորեն պարտք վերցնողը հրաժարվում է դրանից, թույլ են տալիս, որ պարտատերն ապացուցի, թե պարտք է տվել եւ վկաներ բերի: Հակառակ դեպքում չեղյալ են համարում պարտատիրոջը տրված երդումը: Այս երկու պայմաններն էլ ծանրատաղտուկ են պարտատիրոջ համար, քանի որ փաստարկելու համար, ըստ նրանց օրենքի, պետք է ներկայացնել վկայութունը յոթանասուներկու վկաների, որոնց պաշտոնը գուցե եւ չի հավասարվում իմամի պաշտոնին, բայց շատ մոտ է դրան... /194/ Քրիստոնյան որպես վկա չի կարող հանդես գալ, առավել եւս՝ հրեան կամ հնդկի, կամ Օմարի սեկտանտը (աղանդավորը): ...

Ուստի ես անհնար եմ համարում, որ պարտատերը կարողանա ապացուցել իր տված պարտքը ... Հավատարմության երդումը չի հուզում մահմեդականներին, երբ խոսքը /195/ վերաբերում է քրիստոնյաներին կողոպտելու հարցերին: Եթե հնարավոր է լինում կեղծ երդման պատժի միջոցով նույնիսկ տված պարտքի կեսը ետ բերել, տասերորդ մասը դատավորն է վերցնում: Եթե պարտատերը հրաժարվում է իր տված պարտքից, պարտք վերցնողը ազատ է երդումն այնպես ձեւակերպել, ինչպես իրեն է հարմար:

Նախիջեւանի դավառում, ուր հայերը կաթուղի են, ահավոր դժկամությամբ եմ հիշում քրիստոնյաներից մեկի երդմանազանցության փաստը: Մի դավանափոխ (rénegat) հայհոյեց այս քրիստոնյային եւ նրանից պահանջեց երկու հազար էկյու, որն ինչպես ասում էր, նրան էր տվել առանց պարտավորագրի՝ հավատարմության խոսքի վրա: Քրիստոնյան, վկաներ չունենալով, տեղի տվեց իր երդմանը: /196/ Դավանափոխը մահմեդականների մի ողջ բազմության ուղեկցությամբ խեղճ մարդուն տարավ եկեղեցի: Եկեղեցու դռնից մինչեւ խորանն ընկած ճանապարհը ծածկելով հացով, նա քրիստոնյային ստիպեց քայլել այդ ճանապարհով՝ երկու շների ուղեկցությամբ, որ դրել էր նրա թեւատակերին եւ այս վիճակում,

հազարավոր հայհոյանքներ եւ անեծքներ տալուց հետո, որոնք զզվանք էին պատճառում, նրա ձեռքը դնել տվեց ավետարանի վրա: Այդ մարդը, որը խելացի վաճառական էր, կուզենար նրան հարյուր էկյու տալ, այս խայտառակութունից իրեն եւ իր եկեղեցին ազատելու համար, սակայն բավական էր, որ տար մեկ սուլ, որպեսզի ստիպված լիներ ողջ գումարը վճարել: Նա պետք է կուլ տար այս սկիհի պարունակութունը, որն ինձ նույնքան դառնութուն պատճառեց, որքան իրեն:

Եթե շատ վտանգավոր է վաճառականությամբ զբաղվել կամ ֆող պարտք տալ, ապա նույնքան վտանգավոր է /197/ հող կամ տուն գնել, կամ այլ ներդրումներ կատարել: Բազմաթիվ նախապայմաններ կան, որ ձեռնարկվում են այս պայմանագրերը լավագույնս իրագործելու համար: Վաճառողը կարող է ժխտել, որ վաճառել է, կամ եթե ընդունում է, որ վաճառել է, ապա կարող է ժխտել, որ դրամը ստացել է, եւ գնողին մի փորձության մեջ գցել, որի ծայրը չի երեւում: Գաղտնիքն այն է, որ պետք է նախահարձակ լինել եւ գնողին փորձության ենթարկել՝ նրան համարելով անարդար սեփականատեր՝ եթե վերջինս լավ նկատառումներով հանդես չի գալիս եւ վերապահությամբ մոտենալ պայմանագրերը շուտափույթ ձեւով իրավապահ մարմիններին ներկայացնելուց: ...

/198/ Այս դատարանը բավական նմանութուն ունի հրեաների Սանհեդրինին: Այնտեղ էլ կրոնի նկատմամբ հալածանքն ու հակառակութունը (անբարշտությունը) առիթ են հանդիսանում պատժելու, կողոպտելու, մահապատժի ենթարկելու Հիսուս Քրիստոսին նրա դավակների՝ քրիստոնյաների անձի մեջ: Այստեղ էլ մարտիրոսի պսակին են դատապարտում քրիստոնյաներին, որոնք ավելի շուտ իրենց կյանքից կհրաժարվեն, քան կհետեւեն Մուհամմեդի դրոշին: Եւ այստեղ է, որ ամենամեծ ապիրատները խուսափում են չարչարանքներից եւ /199/ ժամանակավոր վախճանից՝ ուրանալով Հիսուս Քրիստոսի հավատքը, քանի որ այնպիսի հանցանք չկա, որ չներվի՝ քրիստոնյային, պայմանով, որ նա մահմեդականության պիղծ պաշտամունքին փարվելու համար չուրանա իր հավատքը: ...



Դատարանում են իրագործում Իմամ Ջաֆարի օրենքը<sup>125</sup>, որը քրիստոնյա ընտանիքի ունեցվածքի հանձնումն է ա՛յն զավակին, ով մահամեղական դառնալու նպատակով կուրանա Հիսուս Քրիստոսին: Մյուս զավակները /200/ ժառանգության ակնկալությունն չեն կարող ունենալ, եթե չհետեւեն այդ նենգությանը, որն ամբողջ ընտանիքներ է ներքաշում անհավատարմության մեջ: Ահա թե ի՛նչ է մտածել այս ամբարիշտ օրենսդիրը հայերին դեպի մահամեղականություն ներքաշելու համար: Սա դուր չի գալիս կառավարիչներին, քանի որ կորցնում են քրիստոնյաների հարկերից ունեցած իրենց մասնաբաժինը: Նրանք հնարավորինս հակադրվում են դրան, սակայն օրենսդիր նախարարների ենթադրյալ նախանձախնդրությունը նրանցից վեր է կանգնած:

Դատարանում սաղրը հավատափոխներին թույլ է տալիս վերադառնալ քրիստոնեությունը: Նրանք աղերսագիր են ներկայացնում, ուր ցույց են տալիս, որ չեն կարող իրագործել Մուհամմեդի օրենքը, չեն կարող հարմարվել բոլոր մաքրություններին եւ նրա առաջարկած ազոթքներին, որ քաջությունն չունեն դիմանալու /201/ մահամեղականների Ռամազանի կամ Պահքի խստություններին եւ, ի վերջո, Մուհամմեդի օրենքը նրանց համար անտանելի է: Սաղրը կարգալով նրանց աղերսագիրը՝ շպրտում է նրանց քթին: Քարտուղարը վերցնելով՝ մակագրում է, որ նրանք պիղծ են (անմաքուր, mortettes), աղտոտ, անարժան կրելու այնպիսի սրբություն, ինչպիսին Մուհամմեդի հավատքն է: Նրանց կրկին վերադարձնում են իրենց հոտը եւ նրանք ազատորեն վերադառնում են իրենց եկեղեցուն:

Քրիստոնեությունը վերադառնալու այս հեշտ միջոցը, չնայած իր արհամահամ լինելուն, հայերն օգտագործում են Իմամ Ջաֆարի օրենքից խուսափելու նպատակով: Երբ մի հայ հարուստ տեսնում է, որ իր հարազատներից մեկը մահամեղականություն է ընդունել եւ ըստ այդ օրենքի կարող է տիրանալ իր կարողությունը, թլպատել է տալիս երեխաներից մեկին, որին էլ կտակում է իր ողջ

125 Այս օրենքի մասին տե՛ս Ծանոթագրություն 56:

ունեցվածքը: /202/ Եթե իր հավատափոխ ազգականը մահանում է առանց ժառանգ թողնելու, նա սաղրին աղերսագիր է ներկայացնում, որն անշուշտ ոչ առանց կաշառքի, թույլ է տալիս երեխային վերադառնալ քրիստոնեությունը: Եթե ազգականը չի մահանում, ապա ստիպված են լինում համոզել երեխային, որ նրան թլպատել են իր եղբայրների եւ քույրերի նկատմամբ սիրուց դրդված, քանի որ նրանք ժառանգությունից ոչինչ չեն կարող ակնկալել, եթե միայն վերջինս չցանկանա նրանց զիջել: Այս գարշելի օրենքն ամեն օր հազարավոր հոգիներ է խլում՝ որոնց հնարավոր չէ փրկել:

Օսմանցիները հեռու են հավատափոխի ունեցվածքն իր եղբայրների հետ կիսելու մտքից՝ համարելով, որ նա արդեն բաժանված է (ընտանիքից) իրենց կրոնն ընտրելիս: Քրիստոնեություն վերադառնալու փորձը ուղղակի պատժվում է ողջակիզմամբ:



## ՖԻԼԻՊ ԱՎՐԻԼ

2. Ֆիլիպ Ավրիլը (1654-1698 թթ.) ֆրանսիացի հիսուսյան միսիոներ է: Հինգ այլ հիսուսյան հոգեւորականների հետ Լուզովիկոս 14-րդը 1685 թ. նրան ուղարկել է Չինաստան՝ դեպի այս երկիրը ցամաքային ճանապարհներ հայտնագործելու եւ միսիոներական առաքելությամբ զբաղվելու նպատակով: Հալեպով, Դիարբեքիրով եւ Բիթլիսով հասել է էրզրում, ուր հանձնարարութիւնն է ստացել հիմնել Հիսուսյան միաբանութիւն: Հենց սա էլ կանխորոշել է նրա հետագա ճանապարհը: Եղել է Կարսում, Էջմիածնում, Երեւանում (1686 թ.), ապա Գանձակի, Շամախու եւ հավանաբար Նիզարադի վրայով՝ ծովային ճանապարհով մեկնել է Աստրախան՝ նպատակ ունենալով այնտեղից քարավանային ճանապարհով հասնել Բուխարա եւ Սամարղանդ: Սակայն տեղում արեւելյան վաճառականները նրան խորհուրդ են տվել Հեռավոր Արեւելքի ճանապարհը սկսել Կոստանդնուպոլսից՝ Տրապիզոնի, Սպահանի եւ Սամարղանդի վրայով: Աստրախանում նրան չեն թույլատրել Սամարղանդ մեկնել, եւ նա մի կերպ հասել է Մոսկվա՝ կրկին բացասական պատասխան ստանալու համար:

Ռուսաստանը շահագրգռված չլինելով իր առեւտրական ճանապարհները ֆրանսիացիներին տրամադրել, թույլ չի տվել նրան սահմանը հատել: Լեհաստանում գտնվելու ժամանակ փորձել է ստանալ Յան Սոբիեսկու միջնորդութիւնը Մոսկվայից թույլտվութիւն ձեռք բերելու համար: Այստեղ նրա գլխավոր հովանավորն էր հեթման Ստանիսլավ Յաբլոնովսկին, ում էլ Հ. Ավրիլը նվիրել է իր ուղեգրութիւնը: Այս փորձը եւս անարդէունք է մնացել: 1689 թ. նա Կոստանդնուպոլսում էր, իսկ 1690-ին՝ վերադարձել էր Ֆրանսիա:

1696 թ. երկրորդ անգամ է ճանապարհ ընկել՝ իր եւ իր արքայի ծրագրերն իրագործելու նպատակով: Գոայում երկու տարի մնալով՝ Սուրաթով ճանապարհվել է դեպի Հեռավոր Արեւելք եւ, Ֆորմոզայի մոտ նավաբեկութիւն ենթարկվելով, զոհվել է 1698 թ.: Նրա աշխատութիւնը հրատարակվել է Փարիզում 1693 թ.: Մեզ հետաքրք-

րող հատվածը ճանապարհորդ միսիոներների ուղեգրութիւններին հասուկ ճշրգրտված ներդիր է՝ արժեքավոր մեր ուսումնասիրութիւն շրջանակներում:<sup>126</sup>

Թարգմանութիւնը կատարվել է հետեւյալ հրատարակութիւնով: [P. Ph. Avril] Voyage en divers États d'Europe et d'Asie, entrepris pour découvrir un nouveau chemin à la Chine..., Paris, 1692:

## 3. Ֆիլիպ Ավրիլի ուղեգրութիւնից

Այն մասին, թե ինչ կատարվեց Ջուլիայում 1691 թ. Հոբելյանի հրատարակման առթիվ (Publication de Jubilé)

[383/ Հոբելյանի<sup>127</sup> մեզ հատկացված նամակները Մեր Սուրբ Հայր Ալեքսանդր VIII պապից ստանալուց հետո մտածեցինք, որ հարկ է օգտվել նպաստավոր հանգամանքից Նորին Սրբազնութիւն իշխանութիւնը հնարավորինս ընդունել տալու եւ միաժամանակ մեր Սուրբ Հավատքի բազմաթիվ օրենքները հաստատելու համար մի քաղաքում, որ կարող ենք անվանել հայերի ժնեւը եւ նրանց հերձվածութիւն ամբողջ: Այս աստվածահաճո եւ այնքան շահավետ կաթոլիկ եւ հերձվածող քրիստոնյաների մեջ մեր գործունեութիւնն իրագործելու նպատակով մտածեցինք նախ աշխատել արգենն այստեղ գտնվող բոլոր միսիոներների հետ միասին, սակայն հատկապես Բաբելոնի եպիսկոպոս զերապայծառ Պիդուի<sup>128</sup> հետ, ով [384/ Պարսից թագավորութիւնում որպէս առաքելական փոխանորդ ներկայացնում է Նորին Սրբութիւնը:

Ճիշտ հաշվարկելու համար եւ որպէսզի ամեն ինչ օրենքով լինի՝ վայել այս Սուրբ գործին, մտածեցինք, որ Հոբելյանի հանդիսութիւնը պետք է բաժանել Ջուլիայի երեք եկեղեցիների միջեւ, որոնցից առաջինը եւ ամենահինը մեր ծխական եկեղեցին է եւ բաց

126 Полневктов М. А., Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935, ст. 77-79. Ջուլիայան Մ., Աշխ., էջ 164:

127 Հոբելյանի մասին տե՛ս ծանոթագրություն 113:

128 Պիդուի մասին տե՛ս աստ՝ ծանոթագրություն 116:



է ոչ միայն Ֆրանկների, այլև այնտեղ հաճախող հայերի համար: Երկրորդը Շեհրիմանյանների եկեղեցին է, որոնք հինգ եղբայր են՝ կաթողիկներ եւ երկրի ամենանշանավոր հայերը: Այս եկեղեցին կառուցվել է բոկոտն կարմելիտ հայրերի մեծագույն ջանքերով ու խոհեմությամբ, որոնց մեծավորի (Provincial) իշխանությունը տարածվում է մինչեւ Հնդկաստան եւ նստավայրն այստեղ է: Երրորդը դոմինիկյան հայրերի եկեղեցին է, որը դատարկ էր Ապարաններից եկած հայազգի հոգեւորականի վախճանից հետո: Համադանից եկած միսիոներ պարոն Սամսոն<sup>129</sup> էր ստանձնել այս եկեղեցու խնամքը, մինչեւ հարցը կարգադրվի:

/385/ Որոշումները բոլորի հավանությամբ այս ձեւով ընդունելով, Հոբելյանի բացումը կատարելու համար ընտրեցին Մեծ Պահլի առաջին կիրակին, իսկ փակումը կատարելու համար՝ երրորդ կիրակին: Սակայն առաջին հերթին հայերեն թարգմանեցին Սուրբ Հոր բուլլան, որը բազմացրին երեք օրինակով՝ գեղեցկացնելով այն Նորին Սրբության ոսկյա գինանշաններով հայերի աչքին ավելի եւս հաճելի երեւալու համար: Վերջիններս մեծ պաշտամունք են տածում նման բուլլաների նկատմամբ, երբ նրանք դալիս են Պապի կամ պատրիարքի կողմից եւ դրանց «Օրհնության նամակ» անունն են տալիս:

Հոբելյանի բացումը բնականաբար պիտի կատարվեր Ֆրանկների եկեղեցում, որպեսզի հայերը հասկանան, որ այն գալիս է Հռոմեական եկեղեցուց՝ այն աղբյուրից, որից նրանք պետք է սպասեն իրենց բոլոր իրավունքները: Սակայն Հոբելյանի գլխավոր նպատակն էր հասկացնել տալ հին կաթողիկներին եւ հերձվածողներին, որոնց ուզում էին կաթողիկութուն ընդունել տալ, որ Ֆրանկը եւ հայը Հիսուս Քրիստոսի համար նույնն են, եւ ցանկանում էին հայերին հասկացնել, որ այս հանդիսության բացումը կատարվում է նրանց ծնվող եկեղեցում, եւ փակումը՝ մե՛ր եկեղեցում, այնպես, որ եթե մի /386/ եկեղեցում իրադարձություն է տեղի ունենում, բո-

լոր միսիոներները ներկա են այնտեղ, եւ մեկ կամ մյուս ուխտին պատկանող բոլոր կաթողիկները հավաքվում են մեկ տեղում:

Այսպիսով Մեծ Պահլի առաջին կիրակի օրը, որ մարտի 4-ն էր, Հոբելյանի բացման արարողությունը կայացավ Շեհրիմանյանների հայկական կաթողիկ եկեղեցում, ուր ամեն կողմից ոչ սովորական բազմություն էր հավաքվել՝ ունկնդրելու համար Ընդհանրական եկեղեցու Նորին Սրբազնության Օրհնության նամակը եւ միաժամանակ իմանալու, թե ի՛նչ պետք է անել օգտվելու համար այն շնորհից, որից նա բաժին էր հանում բոլոր քրիստոնյաներին:

Մի կողմից, Բաղդադի գերապայծառ եպիսկոպոսի գլխավորությամբ, ներկայացավ տասներկու միսիոներներից բաղկացած լատին հոգեւորականությունը՝ բոլորը շուրջառնեցով եւ նույնքան էլ մեր Ֆրանկ դպրոցականները՝ բոլորը շապիկներով, իսկ մյուս կողմից ներկայացավ հայ հոգեւորականությունը՝ երեք քահանաներով, չորս կամ հինգ սարկավագներով, այդ եկեղեցու ծառայության մեջ գտնվող բազմաթիվ մանկահասակ երեխաներով՝ երկու վարդապետների գլխավորությամբ, ինչպես նաեւ՝ կաթողիկ արքեպիսկոպոսներ, որոնք որոշ ժամանակ էր, ինչ հայտարարված էին որպես Հռոմեական եկեղեցու սպասավորներ:

Հանդիսությունը սկսվեց մեծ պատարագով, այն մատուցվեց Բաղդադի գերապայծառի կողմից՝ սարկավագի եւ արեղայի հետ միասին, մյուս /387/ միսիոներների եւ մեր դպրոցականների մասնակցությամբ, որոնք այդ առիթով այնպիսի ճշգրտությամբ, հերթականությամբ ու համեստությամբ էին ամեն ինչ անում, ինչպիսին վայել էր միայն Ֆրանսիայի Մայր Տաճարի արարողակարգին: Ընծայման աղոթքի ժամանակ Միքայել արքեպիսկոպոսը<sup>130</sup>, որը Շեհրիմանյանների եկեղեցու մեծավորն է, առաջացավ դեպի Ս. Խորանի կենտրոնը եւ Ս. Հոր Բուլլան ճակատին հպելուց հետո, սկսեց բարձրաձայն այն ընթերցել, ապա հակիրճ բացատրություն տվեց:

129 Նկատի ունի Հ. Ֆրանսուա Սամսոնի:

130 Իր մասին տե՛ս Թաքիրյան Է., Աշվ. աշխ., մաս I, էջ 65, 82, 88:



Հայր Եղիա կարմելիտականը<sup>131</sup>, որը կատարյալ տիրապետում էր հայերենին, շատ գեղեցիկ քարոզ արտասանեց՝ արժեվորելու համար փաստաթղթի կարեւորությունը, միաժամանակ վերջերս կաթոլիկությունն ընդունած հայերին իրազեկելու հորեկյանի էությունը:

Բուլլայի բացատրությունն ավարտելով՝ արքեպիսկոպոսն այն վերցրեց իր ձեռքը եւ, գլխներին դնելով, համբուրել տվեց ողջ բազմությունն ըստ հարգանքի աստիճանի՝ սկսելով հոգեւորականությունից, ապա կաթոլիկ ֆրանկներից, ավարտելով հայերով: Պատարագի այս առաջին հանդիսությունն ավարտվեց Բաբելոնի գերապայծառի կողմից մասունքների օրհնությունով: Հորեկյանի հանդիսությունների մեջ սա ամենափայլուններից մեկն էր՝ որպես անկեղծ եւ անլուծարելի, որ կատարվեց ֆրանկ եւ հայ /388/ երկու եկեղեցիների միջեւ՝ հերետիկոսների սքանչացումով եւ կաթոլիկների ծայրաստիճան ուրախությունով:

Նույն արարողությունը կատարվեց նաեւ մյուս եկեղեցում, ուր արարողության ժամանակ կաթոլիկ օտարազգի հոգեւորականների կողմից որոշ աղոթքներ ու քարոզներ հայոց լեզվով արտասանվեցին:

Հերթական արարողությունից հետո /390/ խոջա Մուրադը, որ Շեհրիմանյանների երրորդ եղբայրն էր, ցանկացավ միսիոներներին ճաշի հրավիրել, ինչպես նախորդ կիրակի իր եղբայր խոջա Մարգարան<sup>132</sup> էր արել: Երկու տոնախմբությունների ընթացքում միսի-

131 Եղիա կարմելիտականի մասին տե՛ս *A Chronicle*... Vol. II, London, 1939, p. 859-866; Ambrosius A. St. Teresia, *Hierarchia Carmelitana*, Roma (s.d.), pp 16-26; Lemmens P. L., *O.F.M. Hierarchia Latina Orientis*, 1622-1922, Roma, (Orientalia Christiana, vol. II, 4, num. 10, 1924, pars II pp. 265-274: Կարմելիտների Հոմի կենտրոնական դիվանում 320e թվի տակ պահվում է Եղիա Եպիսկոպոսի վարքագրական «Vitae P. F. Elia a S. Alberto ...» գործը, շարադրված Հ. Ֆր. Մարիի կողմից: Այստեղ են պահվում նաեւ Եղիա կարմելիտականի եւ Արա խմբի մասկները գրված Սպահանից եւ Նոր Ջուղայից XVII դարի վերջին քառորդում, որոնք կարեւորություն են ներկայացնում նաեւ հայոց պատմության շատ հարցերի լուսաբանման համար: Տե՛ս նաեւ Թաշիրյան Է., *Ազվ. աշխ.*, էջ 72-75:

132 Շեհրիմանյան Սահրատի երեք որդիները՝ Մարգարը, Միքայելը եւ Մուրադը: Այս ընտանիքի մասին առավել մանրամասն տե՛ս Թաշիրյան Է., *Ազվ. աշխ.*

թարականն այն էր, որ սեղանի վրա այս երկու պարոնները խոնարհությունով ու հարգանքով իրե՛նք էին մեզ հյուրասիրում եւ իրենց երեխաների՛ն էին սպասարկել տալիս: Իսկ նրանք այդ քաղաքի գլխավորներն էին եւ իրենց նախնիների՝ գահին արած ծառայությունների դիմաց Պարսկաստանի արքայի կողմից բոլորն էլ ազնվականական տիտղոսների էին արժանացել:

/396/ Այս բոլոր արարողություններն անցան վեհությունով ու շքեղությամբ, որ առանձնապես հուզում էր հայերին եւ նրանց անասելի սիրով լցնում մեր Ս. Հավատքի հանդեսը: Դա նրանց հասկացնել էր տալիս, որ Հոմը տիրուհի է, եւ որ իրենք ոչ մի նման բան չեն տեսնում իրենց մոտ: Ականջալուր լինելով մեր քարոզներին՝ նույնիսկ անկեղծորեն ընդունում էին, որ իրենց մոտ որպես գլխավոր դոկտորներ (աստվածաբանության գիտական - է.թ.) մեծարվող հայ վարդապետները չգիտեն այդպես խոսել: Այսպիսով քիչ-քիչ հեռանալով նրանցից՝ սիրով ու հարգանքով լցված միանում էին մեզ:

... Ի վերջո վկայելու համար, որ հայոց եւ լատին եկեղեցիների միությունը հաստատումը միայն ապրող Հավատացյալների վրա չէ, որ տարածվում է, այլ /397/ պետք է տարածվի նաեւ հանգուցյալների վրա, ողջ թափորով գնացինք գերեզմանատուն հայ կաթոլիկների գերեզմանների վրա եւս աղոթելու: Շեհրիմանյանների կաթոլիկ եկեղեցու հայ քահանաները նույն արարողությունը կատարեցին նաեւ մերոնց գերեզմանների վրա:

... Դոմինիկյան Հայրերի եկեղեցում շաբաթ օրը բազմամարդ էր: Հատկապես կաթոլիկ հայ կանայք դայթակղվել էին հայ կաթոլիկ հայրերի կողմից իրականացվելիք ճոխ պատարագի աղմուկից /398/: Հանդիսությունն իրականացավ նրանց եկեղեցուն հատուկ շատ գեղեցիկ երգեցողությամբ եւ շքեղ արարողությամբ, որ բազմաթիվ անգամ տեսել էի հատկապես էջմիածնում, որը նրանց պատրիարքա-

XVII դ. վերջի Նոր Ջուղայի հայ գաղթօջախի պատմությունից, էջ 65-97: Տե՛ր Յովհաննեսն Թ., *Ազվ. աշխ.*, Խաչիկյան Թ., *Ազվ. աշխ.*, էջ 69-81:



կական եկեղեցին է: Այնտեղ կարելի է տեսնել պատրիարքին որպես պատարագիչ, նրանց արքեպիսկոպոսներին ու եպիսկոպոսներին այնպիսի հանդիսավոր կարգով ու ճշգրտությամբ, որն ամենեւին չի զիջում Ֆրանսիայի եկեղեցիներում կատարվող արարողությունը:

Հոբելյանի փակման արարողությունը շատ մեծ բազմություն հավաքեց: Դեռ վաղ առավոտից, ողջ եկեղեցին լեցուն էր. այնպես որ, հարկ էր աստիճաններ դնել, որպեսզի մարդիկ ամբիոնը (tribune) կամ ազատ տեղերը զբաղեցնեն: Այդ ընթացքում միսիոներները զբաղված էին այս ու այն կողմ խոստովանություն տալով: Պատարագիչներն այնպես շարվեցին, որ լատին հոգեւորականները Ս. Խորանի աջ կողմում էին, իսկ հայ հոգեւորականները երկու վարդապետների եւ մեկ արքեպիսկոպոսի հետ՝ ձախ կողմում: Ե՛լ առաջինները ե՛լ երկրորդները հագնված էին իրենց ազգային հոգեւոր ավանդույթի համաձայն ... /400/: Նախ այս ներկայացումը հիացրեց բոլորին: Պատարագը սկսեցին նախորդներից առավել մեծ հանդիսավորությամբ: Եպիսկոպոսը պատարագեց սարկավազի եւ արեղայի սպասավորությամբ: «Փառք ի բարձունս...» (Gloria in excelsis) շարականը նախ երգվեց լատիներեն եւ ապա հայերեն: Նույն հերթականությամբ երգվեցին նաեւ Ընթերցվածներն ու Ավետարանը:

Մեր «Հաւատամքից» (Credo) հետո հայ քահանաներից մեկը հրաշալի «Հավատոյ դավանութիւն» արեց իր եկեղեցու բոլոր ներկայացուցիչների անունից՝ հնչեցնելով Ալեքսանդր VIII պապի անունը, որին որպես իրենց տեր էին ճանաչում: Դրանից հետո մեր փոքրիկ դպրոցականներն իրենց սաղմոսները երգեցին Ֆրանսերենով: Փոքրիկ հայերն էլ հայերենով պատասխանեցին: Աստծուն զովաբանող երգերի ու սաղմոսների այս ելեւէջները հավատացյալ ժողովրդին ուղեկցեցին ողջ պատարագի ընթացքում: Յուրաքանչյուր մասնակից ուրախությունից փառավորվում էր տեսնելով այս միությունը, որ երբեք տեսնված չէր այս քաղաքում:

Ֆրանկների նկատմամբ իր ատելությունը հայտնի լինելուց բացի, ողջ Հայաստանում այս բնակավայրն ամենահամառն էր իր հերձվածությունը: Իսկ ընդհանրական խոստովանությունը, որն

արվեց իր ժամանակին, հրեշտակահաճ մի ներկայացում էր: /401/ Փոքրիկ հայ եւ ֆրանկ երեխաները սկսեցին մոտենալ Սուրբ Սեղանին, հետո տղամարդիկ եւ կանայք՝ առանձին-առանձին: Այս ողջ ընթացքում հայերեն ու ֆրանսերեն սաղմոսներ էին հնչում: Ո՛չ Ջուլիֆայում եւ ո՛չ էլ ողջ Հայաստանում երբեք այսպիսի ջերմեւանդություն ու այսքան հաղորդություն չէր տեսնված:

Ֆրանկներն ու հայերը գրկախառնվում էին՝ բարեկամության ու անկեղծ միաբանության հնարավոր վկայությամբ: Հասարակական աղոթքներ հնչեցին բոլոր քրիստոնյա արքաների համար, ապա, չնայած հերձվածող վարդապետների դիմադրությունը, որոնք չէին դադարում աղմկել, եւ մեր դեմ քարոզել ու հայտարարում էին, որ մեր հավաքների մասնակիցներին կբանադրեն, երկուսից երեք հարյուր հայ հաղորդություն ընդունեց Հոբելյանի այս առիթով: (Այնուհետեւ նկարագրվում է հոգեւորականների միացյալ երթը դեպի դոմինիկյանների հյուրատան պարտեզը, ուր երթի մտնելուն պես պատվո կրակոցներ են արձակվել հրացաններից):

/404/ Մնացյալն ասենք, որ երբեք այսպիսի բազմություն չէր եղել, ոչ էլ այսպիսի իրարանցում, ինչպես այդ օրը, տեսնելու համար Հիսուս Քրիստոսի փառաբանությունն իր թշնամիների կենտրոնում: Կանայք, որ այս երկրում բացարձակ զգուշավոր են, այս հանդիպմանը կարծես մոռացել էին երկրի սովորույթը: Տարվելով նույն ջերմեւանդությամբ, ինչով Ջախեն էր տարվել՝ բարձրանալով վայրի թզենու վրա, նրանք բարձրացել էին մեր պարտեզը շրջապատող որթատունկերի վրա՝ դիտելու այս փառահեղ արարողությունը, որ երբեք չէին տեսել: Ի վերջո կասեմ, որ ոչինչ չեմ տեսել առավել մխիթարական եւ արտասուքը, որ այս առիթով թափեցի եւ այլ ուրիշ բաներ, ինձ սիպեցին մոռանալ այն դառնությունները, որ կրեցինք անցյալ հալածանքների ընթացքում: (Հոգեւոր արարողությունը եզրափակվեց համեստ տոնախմբությամբ - է. Թ.):

/405/ Ահա թե ինչպես անցավ Հոբելյանի մեր արարողությունը: Համեմատելու համար առանց ստելու կարող եմ ասել, որ Ֆրանսիայում երբեք ավելի լավ չեն իրականացրել այն: Խոստովանողներ



րի եւ Հաղորդութիւնն ստացողների քանակը շատ մեծ էր՝ Հաշվի առնելով այն երկիրն ուր մենք գտնվում էինք: Շատերը մեզ մոտ եկան իրենց մեղքերին թողութիւնն խնդրելու: Նրանք, ովքեր քաղաքական նպատակներով կաթողիկէ չէին, տեսանք, որ իսկապես կաթողիկոսութիւնն էին ընդունել եւ մխիթարվեցինք նրանց Հիասքանչ միավորմամբ: Այն օրեցօր ամրանում էր: Զուլֆայի յոթ վարդապետներից երկուսը Հայտարարել են իրենց կաթողիկէ լինելու մասին եւ երրորդն էլ կաթողիկէ էր հոգու խորքում: Մեր թշնամիները, որոնք սպառնում էին վաճառել մեզ Զուլֆայից, անակնկալի եկան՝ տեսնելով այն օրհնութիւնը, որ Աստված մեզ շնորհեց բոլոր Հալաթանքներից հետո /406/: Տեսնելով մեր աշխատանքը ժողովրդի հետ՝ նրանք խոսք չէին գտնում ասելու: Քալանթարը՝ մեր մահացու թշնամին, սկսում էր փափկել: Այս քաղաքի գլխավոր վարդապետն այլեւս երկար ժամանակ չէր կարող մեզ վնաս պատճառել, եւ մենք հույսներս չէինք կտրում՝ այստեղ Հիսուս Քրիստոսի Արքայութիւնը Հաստատելու: Ի վերջս Հոբելյանի արարողութիւն փակման հաջորդ օրը ... Շեհրիմանյան պարոնները մարդ ուղարկեցին՝ ինձ ասելու, որ ցանկանում են մեզ Համար մի ավելի մեծ եկեղեցի կառուցել եւ իրենք ամեն ինչի մասին Հոգ կտանեն: ...

ԺՈՉԵՖ ՊԻՏՈՆ ԴԸ ՏՈՒՐՆԸՖՈՐ

Պիտոն դը Տուրնըֆորը (1656-1708 թթ.) ծնվել է էքս ան Պրովանսում: Կրթութիւնն ստանալով տեղի Հիսուսյան Հայրերի դպրոցում՝ առաջններից մշտապես նախընտրել է բուսաբանութիւնը եւ դեռ փոքր տարիքից ուսումնասիրել է իր երկրամասի Ֆլորան: Ծնողների հորդորով, որոնք ցանկանում էին նրան Հոգեւորականի պաշտոնում տեսնել, ավարտել է Հոգեւոր սեմինարիան: Սակայն Հոգեւոր կոչումը նրա մեջ չի սպանել բուսաբանութիւն Հանդեպ հետաքրքրութիւնը: Նա նույնիսկ խորութեամբ ուսումնասիրել է ֆիզիկա, քիմիա եւ բժշկութիւն:



1679 թ. Տուրնըֆորը մեկնել է Մոնպելիե՝ բժշկութիւն եւ անատոմիական գիտութիւն մեջ հմտանալու նպատակով: Իր բուսաբանական հետաքրքրութիւններին հագուրդ տալու համար նա շրջել է Պիրենեյան լեռներում, Կատալոնիայում՝ հավաքելով մեծ քանակութեամբ խոտազգիներ ու ծաղկազգիներ: Նրանով հետաքրքրվել են Փարիզում եւ 1683 թ. հրավիրել են այստեղ՝ որպես արքայական պարտեզների գլխավոր բուսաբան: Այգիները ծաղկել ու գեղեցկացել են նրա օրոք: Իսկ դասախոսութիւնների ու գիտելիքների պրակտիկ դասավանդման շնորհիվ դեպի իրեն է գրավել Ֆրանսիացի եւ օտար բազմաթիվ երիտասարդների եւ ուսանողների:

Նա ճամփորդել է Իսպանիայում, Պորտուգալիայում, Անդալուզիայում, ուր Հայտնաբերած Հազվագյուտ բույսերով Հարստաց-



րել է թագավորական այգիները: Եղել է նաև Հոլանդիայում եւ Անգլիայում:

1691 թ. Պիտոն դը Տուրնըֆորը արդեն Ֆրանսիայի ակադեմիայի անդամ էր: Նա մեծ հեղինակություն էր վայելում, երբ հրատարակվեց նրա առաջին աշխատությունը՝ «Բուսաբանության էլեմենտները» (Փարիզ, 1694 թ.): Գիտություն մեջ նշանակալի ներդրման, մասնավորապես դասակարգման նորացման եւ տեսակների սխտեմավորման մեջ նոր մեթոդների կիրառման շնորհիվ 1698 թ. Տուրնըֆորը բժշկական գիտությունների դոկտորի աստիճանով ընդունվում է Փարիզի բժշկական ինստիտուտ: Նույն թվականին հրատարակել է «Փարիզի շրջակայքի բժշկության մեջ օգտագործվող բույսերի պատմությունը», ուր բազմաթիվ դեղագործական պրոցեսներ է բացահայտել:

Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի որոշմամբ եւ վարչապետ, կոմս Լուի դը Պոնշարտրենի (1643-1727) առաջարկով, որը նաև 1690-ականներին զբաղեցնում էր է Արեւելահայկական Ընկերության նախագահի պաշտոնը, Լուդովիկոս 14-րդը Տուրնըֆորին հանձնարարում է ճամփորդել դեպի Արեւելք՝ նրան որպես գործընկերներ եւ ուղեկիցներ նշանակելով հայտնի նկարիչ Օբրիեին եւ դերմանացի բժիշկ-բուսաբան Գյունդելսհայմերին: Նրանք Փարիզից մեկնել են 1700 թ. մարտին: Եղել են Կանդիայում, Կոստանդնուպոլսում, Սեւ Մովի ափերով անցել են Տրապիզոնով, էրզրումով, Կարսով, Թիֆլիսով: Այստեղից Դիլիջանով Տուրնըֆորը գնացել է էջմիածին, փորձել է բարձրանալ Արարատ լեռը<sup>133</sup>, սակայն չի կարողացել հաղթահարել հավերժական ձյունները: Եղել է Թոքաթում, Ամասիայում, Բրուսայում, Զմյուռնիայում, որտեղից էլ վերադարձել է Մարսել:

133 Հայագետների կողմից այս հատվածի հայացումն ու ուշադրության հրավիրումը դեռևս 19-րդ դարում տե՛ս՝ Թուրքոֆոն Գաղիացույն դէպի Մասիս ըրած ճանապարհորդութիւնը, - Մասեաց աղանի, 1864, հունվար, 1, էջ 26-28: (Թարգմանութիւնն, ամենայն հավանականութեամբ, Մսեր Մսերյանցիս է պատկանում): Նաև Քիրտեան Յ., Էջմիածին այցելող Երոպացի ուղեգիրներ ԺԷ, ԺԸ, եւ ԺԹ. դարի առաջին կիսուն, Հասկ, 1957, սեպտ., էջ 331:

Բոլոր վայրերից Տուրնըֆորը նկարագրական նամակներ էր ուղարկում Ֆրանսիա, եւ կարծես թե արքան իրոք սպասում էր զբանց: Նշենք, որ այս ճամփորդության արդյունքում բուսաբանական գիտությունը հարստացել է 1356 նոր բույսերի անուններով: Արշավախումբը պետք է այցելեր նաև Սիրիա եւ Եգիպտոս, սակայն այնտեղ տարածված ժանտախտը խանգարել է իրականացնել նրանց պլանները: 1702 թ. հունիսին նրանք արդեն Մարսելում են:

Տուրնըֆորի «Ուղեգրության» առաջին հատորը հրատարակվել է Լուվրում, իսկ երկրորդը՝ նրա մահից հետո՝ 1717 թ.: Այն ունեցել է մի քանի հրատարակություն՝ նույն 1717-ին՝ Լիոնում, իսկ 1718 թ.՝ Ամստերդամում, նաև թարգմանվել է մի քանի լեզվով: Տուրնըֆորը որպես գիտնական, ինչպես նաև իր գիտական աշխատությունների, «Ուղեգրության» ու դիսերտացիաների (հրատարակված եւ ձեռագիր) շնորհիվ, մեծ հարգանք էր վայելում իր հայրենիքում եւ ողջ Եւրոպայում: Նա մահացել է 1708 թ.՝ ճանապարհային պատահարի արդյունքում: Բույսերի եւ օտար երկրներից բերված հետաքրքիր առարկաների իր հավաքածուն, ինչպես նաև բնական գիտությունների պատմության կարիներտը կտակել է Ֆրանսիայի արքային:<sup>134</sup>

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. Relation d'un voyage du Levant. Fait par ordre du Roi. ... Par M. Pitton de Tournefort, Tome II. Amsterdam M. DCCXVIII (1718).

134 Տե՛ս Michaud L. G., op. cit., t. 46, 1826, pp. 360-368; Полневктов М. А., 62-աշխ.տ. 184-187; Ջուլյայան Մ., 62վ. աշխ., էջ 53-54: Տե՛ս նաև Карагезян Г., «Армянский мир в Путешествии в Левант Тырнефорта», Ер., 2017.



Պիտոն դը Տուրնեֆորի նամակներից

Նամակ XX Հայերի սովորույթների, հավատքի եւ առեւտրի մասին

Մոնսենյոր,

158/ Էրզրումում անցկացրած օրերի ընթացքում ամեն երեկո գրում ենք այն ամենի մասին, ինչ օրվա մեջ իմանում ենք՝ Հայերի հետ շփվելով, որոնց վանքում էլ ապրում ենք: Ի վերջո ստացվում է այնպես, որ վանքերում ու ճանապարհների վրա արված մեր բոլոր նշումներն իրար միացնելով, բավականին նյութ ստացա այս ազգի սովորույթների, հավատքի եւ առեւտրի մասին մի նամակ հասցեագրելու Ձեզ: Ուստի խնդրում եմ Ձեզ, գերապայծառ, հաճությամբ ընդունել մեր գրույցների պատուղը:

Հայերն աշխարհի ամենալավ մարդիկ են՝ համեստ, խելացի, նպատակասլաց ու ողջամտությամբ լի: Կարծում եմ, որ նրանք առավել երջանիկ կլինեին, եթե դեպքում զենք գործածեին միայն անհրաժեշտության դեպքում, ինչպես վարվում են մարդիկ՝ դաժանությունը քողարկելու համար: Ինչ էլ որ լինի, Հայերը հետաքրքրվում են միայն իրենց առեւտրով եւ դրանով զբաղվում են հնարավորինս մեծ ուշադրությամբ: Նրանք ոչ միայն Լեւանտի առեւտրի տերերն են, այլեւ որոշակի մասնաբաժին ունեն Եւրոպայի մեծ քաղաքների առեւտրում: Պարսկաստանի խորքերից նրանք դալիս են Լիվոռնո: Վերջերս հաստատվեցին Մարսելում: Որքան Հայերի կալի է հանդիպել Հոլանդիայում եւ Անգլիայում: Նրանք գնում են Մոզոլի երկիրը, Սիամ, Ճավա, Ֆիլիպիններ, ողջ Արեւելքով՝ բացառությամբ Չինաստանից<sup>135</sup>:

135 Նույն շրջանում Չինաստանում հայերի առեւտրատնտեսական գործունեության մասին են վկայում վերջին շրջանում կատարված մի շարք ուսումնասիրություններ (տե՛ս Aslanian S. D., op. cit., pp. 53-54, 57-58, 254; Гини Р., Andin, Исторические очерки об армянах в Китае, Ереван, 2016; Բախշինյան Ա., Հայերը Չինաստանում: Հայ-չինական պատմա-մշակութային կապերը, Երևան, 2017, էջ 3-74):

Հայ վաճառականների կենտրոնը Հայաստանում չէ, այլ Ջուլֆայում՝ Սպահանի նշանավոր արվարձանում, որի նկարագրութունը կգտնեք բոլոր ճանապարհորդների մոտ: Այս արվարձանը, որ հավանում է քաղաք կոչվելու, քանի որ ունի ավելի քան երեսուն հազար բնակիչ, հայկական մի գաղթօջախ է, որ Պարսից Շահ-Աբաս արքան, սկզբում հիմնել է Սպահանում եւ քիչ ժամանակ անց՝ Ջենգերուզ գետից այն կողմ, բաժանելու համար մահմեդականներից, որոնք նրանց արհամարհում էին հավատքի պատճառով: Ենթադրում են, որ այս փոփոխությունը կատարվել է Շահ Աբաս Կրտսերի օրոք, ուրիշները վստահեցնում են, որ սա առավել հին պատմություն է: Մի բան հաստատ է. գաղթօջախի հեղինակը Շահ Աբաս Մեծն է՝ Հանրի IV-ի ժամանակակիցը, որի մոտ որպես դեսպան նա ուղարկեց վեղարավոր Հայր Ժյուստին<sup>136</sup> եւ որը տեղ հասավ արքայի մահից հետո միայն: Շահ Աբասն իր երկրի բարօրության համար երկու ուղղությամբ աշխատեց. նա ապահովագրեց իր երկիրը թուրքերի հարձակումներից եւ հարստացրեց՝ առեւտրական հարաբերությունների զարգացմամբ: Թույլ չտալու համար օսմանլի կոչվող թուրքերին իր երկրի տարածքները մտնել, որոշեց նրանց զրկել իր սահմանների վրա բանակներ պահելու միջոցներից, եւ քանի որ Հայաստանը հիմնական սահմանային երկրներից մեկն էր, որի վրա թուրքերը սովորաբար հարձակվում էին, նա, այն ամայացնելով, անմարդարնակ դարձրեց, որքան իր նպատակներն էին պահանջում: Առանձնապես տուժեց երկրի ամենամեծ ու ամենահզոր Ջուլֆա քաղաքը, որի ավերակները դեռ մինչեւ այսօր երեւում են Արաքսի ափին՝ Երեւանի ու Թավրիզի միջեւ: Ջուլֆայի բնակիչները հրաման

136 P. Juste de Beauvais-ն վեղարավոր հոգեւորական, Բաղդադի միսիայի առաջին մեծավորը, վախճանվել է 1638 թ. սեպտ. 1-ին: Նա վերադարձել էր Սպահան կատարած ուղեւորությունից, ուր գնացել էր Օսմանյան թողոք ներկայացնելու Բաղդադի կատավարչի՝ Բաքթաշ Խանի՝ քրիստոնյաների հանդեպ վարած անարդար քաղաքականության համար: Վերջինս նրանց հանդեպ կիրառում էր Իմամ Ջաֆարի օրենքը: Օսմանյան հրամանագրով ներկայանալով Խանին, ըստ փաստաթղթերի վկայության, վերջինս, վրեժխնդիր լինելու նպատակով նրան թունավորել էր: (Տե՛ս Richard Fr., op. cit., t. I, p. 161, ծանոթ. N° 65):



ստացան գաղթել Ապահան, եւ այդ ժամանակվանից իրենց լքած քաղաքը կոչվում է Հին Ջուլֆա: Նախիջևանի եւ Երեւանի շրջակայքի բնակչուկները ցրվել է թագավորութայն տարբեր գավառներով: Վստահեցնում են, որ այս արքան ավելի քան քսան հազար հայ ընտանիք է գաղթեցրել միայն Գիլանի գավառ, որտեղից գալիս են Պարսկաստանի ամենագեղեցիկ մետաքսները:

Քանի որ Շահ Աբաս արքան այլ նպատակ չունեի քան հարստացնել երկիրը եւ համոզված էր, որ դրան կարելի էր հասնել միայն առեւտրի միջոցով, նա իր հայացքն ուղղեց դեպի մետաքսը՝ որպես ամենաարժեքավոր ապրանք, եւ դեպի հայերը՝ որպես վաճառականութայն համար ամենամաքուր մարդիկ՝ բավարարված չլինելով իր մյուս հպատակների սակավ մասնակցութայնից եւ առեւտրի համար նրանց ունեցած տաղանդի պակասութայնից: Հայերի ժուժկալութայնը, տնտեսվարութայնը, ազնվութայնը, նրանց նախաձեռնալու կարող ուժը եւ երկար ճամփորդութայնների դիմանալու ունակութայնն իր հեռանկարի համար շատ ձեռնտու թվացին: Իր նպատակին հասնելու համար ձեռնտու էր նաեւ նրանց բրբիստոնյա լինելը, ինչը հեշտացնում էր Եւրոպայի բոլոր ազգութայնների հետ նրանց հարաբերութայնները: Մի խոսքով՝ հողի մշակից նա հայերին դարձրեց վաճառականներ եւ այդ վաճառականները դարձան աշխարհի ամենահայտնի առեւտրականները:

Այսպիսով՝ այս արքան, որի տաղանդը շատ էր տարածված պատերազմական գործերի եւ քաղաքականութայն շնորհիվ, կարողացավ օգտվել իր ժողովուրդների տաղանդից եւ իր երկրի ապրանքներից: Առեւտուրը լավ հիմքերի վրա դնելու համար նա Նոր Ջուլֆայի հայերին վստահեց որոշ (159) քանակութայն մետաքսի հակեր՝ քարավաններով օտար երկրներ, հատկապես՝ Եւրոպա տանելու համար, պայմանով, որ իրենք էլ կուղեկցեն այդ ապրանքը: Վերադարձին իմաստուն մարդկանց միջոցով նրանք պետք է վճարեին նույն գինը, որով գնել էին մեկնելուց առաջ: Այս առեւտուրը զարգացնելու նպատակով եւ վաճառականներին ոգեւորելու համար, նրանց զիջեց ստացած ողջ եկամուտը, բացի մետաքսի ֆիքս-

ված արժեքից: Հաջողութայնը արդարացրեց արքայի եւ վաճառականների հույսերը: Չնայած մետաքսը հիմա՝ էլ Պարսկաստանի լավագույն ապրանքն է, ժամանակին այն առավել փնտրված էր: Եւրոպայում համարյա թթենիներ չկային. դրա փոխարեն Պարսկաստանում ոսկին ու արծաթն էին հազվագյուտ, եւ քարավանների վերադարձին դրանք այնպես սկսեցին փայլել, որ այսօր այս երկրի հարստութայնն են: Հայերը վերադառնալով, բերեցին անգլիական ու հոլանդական կերպասներ, վենետիկյան դիպակներ ու հայելիներ, որդան կարմիր, ժամացույց եւ այն ամենն ինչ գտնում էին, որ հարգի է իրենց երկրում եւ Հնդկաստանում<sup>137</sup>:

Հնարավոր է տեսնել առավել լավ կառույց (établissement): Նրանց ապրանքները մշակելու համար Եւրոպայում եւ Ասիայում որքան մանուֆակտուրաներ հիմնվեցին: Աբաս Մեծը փոխեց ողջ աշխարհի դեմքը. Արեւելքի բոլոր ապրանքները հայտնի դարձան Արեւմուտքում, եւ Արեւմուտքի ապրանքները զարդարեցին Արեւելքը:

Նոր Ջուլֆան շուտով տարածվեց Ջենդերուզ գետի ափով: Նա հայտնի դարձավ իր առանձնատների շքեղութայնը եւ պարտեզների գեղեցկութայնը, որոնք կառուցվել էին եւրոպական ամենաբնասիր ճաշակով: Այսօր Պարսկաստանի կենտրոնում տեսնում ենք ամենահետաքրքիր ապրանքներն աշխարհի տարբեր երկրներից, ուր վաճառականներն իրենց առեւտուրն էին տարածել: Արքան այլեւս ոչնչի չի խառնվում: Ջուլֆայի բուրժուաներն իրենց միջնորդների կամ գործակալների միջոցով են իրականացնում այս մեծ առեւտուրը՝ աշխարհի մնացած մասերում տարածելով Արեւելքի գույները: Այս միջնորդները հայեր են, որոնք մի փոքրիկ եկամտի ակնկալիքով ուղեկցում են քարավաններով բեռները եւ հնարավոր շահութակով վաճառում են իրենց վստահված ապրանքը:

137 St'u Matthee Rudi, *Between Venice and Surat: The Trade in Gold in Late Safavid Iran*, - Modern Asian Studies, 34, 1 (2000), UK, pp. 223-255.



Թե՛ սեփական առեւտուրն իրագործող հայերը, թե՛ Զուլֆայի վաճառականների համար աշխատողները, ճամփորդությունների ընթացքում չեն հոգնում, եւ արհամարհում են անբարենպաստ եղանակը: Մենք շատերին ենք տեսել, այդ թվում՝ ամենահարուստներին, որոնք ոտքով մեծ գետեր են հաղթահարում: Նույնիսկ երբ ջուրը հասնում է մինչեւ վիզը՝ ձիերին դուրս հանելու եւ իրենց կամ իրենց ընկերների մետաքսի հակերը փրկելու համար նրանք ոչինչ չեն խնայում, քանի որ երթեւեկ ապահովող թուրքերն իրենց նեղությունն չեն տալիս ապրանքների անվնասությունն ապահովելու եւ ընդհանրապես ոչնչի համար պատասխանատու չեն: Գետն անցնելիս հայերը ուղեկցում են իրենց ձիերին եւ ոչինչ ավելի օրինակելի չէ, քան տեսնել միմյանց եւ նույնիսկ այլազգիների նկատմամբ նրանց ունեցած հոգատարությունը քարավանների երթի ընթացքում: Այս բարի մարդիկ իրենց շարժումներով երբեք նեղությունն չեն տալիս: Միշտ հավասարության կողմնակից, նրանք որքան խուսափում են խռովարար օտարազգիներից, այնքան հարգում են խաղաղասերներին: Նրանց հեշտությամբ բնակեցնում են իրենց հետ եւ հաճույքով բաժին են հանում իրենց կերակուրից: Երբ մենք բուժում ենք նրանց հիվանդներից մեկին՝ ամբողջ քարավանով շնորհակալ են լինում մեզնից:

Երբ նրանք իմանում են, որ քարավան է անցնելու, մեկ երկու օր առաջ ընդառաջ են գնում իրենց հայրենակիցներին՝ նրանց զովացուցիչ խմիչքներ եւ հատկապես լավ գինի տանելով: Ձրանկներին ոչ միայն հյուրասիրում են, այլեւ ստիպում են իրենց կենացը խմել: Նրանց մեղադրում են գինի՝ շատ սիրելու մեջ. մեզ երբեք չի թվացել, որ նրանք հրապուրվում են, ընդհակառակը՝ պետք է խոստովանել, որ բոլոր ճամփորդներից հայերն ամենաչափավորներն են, ամենատեսողներն ու սակավ սնապարծները: Եթե երկրից դուրս գալուց երկար ճամփորդության համար պարեն են վերցնում իրենց հետ, հաճախ մեծ մասը ետ են բերում. ճիշտ է, որ այդ մթերքը ոչինչ է նրանց տարած ապրանքի համեմատ, քանի որ սովորաբար եթե վեց ուղտ են վարձում, յոթերորդը շուկայում տալիս են իրենց անձնա-

կան բեռը, խոհանոցային ամանեղենը եւ հագուստեղենը տանելու համար: Մթերքը, որ վերցնում են տնից, այլուրն է, թխվածքաբլիթները, բաստուրման, հալած կարագը, գինին, օղին, չրեղենը:

Քաղաքներում նրանք ապրում են սենեկակիցներով եւ փոքր վարձով: Նրանք երբեք առանց ուռկանի ճանապարհ չեն ընկնում. ճանապարհին ձուկ են որսում: Ծատ հաճախ մեղ ընտիր ձկներ հյուրասիրեցին: Ճանապարհների համեմունքներ են փոխանակում թարմ միսը համեմելու համար, կամ իրենց ձեռնտու այլ ապրանքներ: Ասիայում նրանք վաճառում են վենետիկյան, Ֆրանսիական, գերմանական երկաթեղեն (պղնձեղեն): Փոքրիկ հայելիները, մատանիները, վզնոցները, էմալապատ իրերը, փոքրիկ դանակները, մկրատները, գնդասեղները, հյուսքի ասեղները փողից ավելի են գնահատվում գյուղերում: Եւրոպա են տանում մուշկ եւ համեմունքներ: Հոգնում են եկեղեցական իրեր պահելուց: Կարծես հանգստանում են մի լավ քաղաքում եւ ծախսեր չեն անում, նույնիսկ եթե հիվանդ են: Միակ բանը, որի համար կարելի է փնտվել հայերին իրենց առեւտրի հետ կապված, այն է, որ եթե իրենց գործերը լավ չեն ընթանում արտասահմանում, նրանք տունն չեն վերադառնում: Դա բացառում են նրանով, որ սնանկանալուց հետո երես չունեն երեւալու իրենց քաղաքում, եւ այդ ընթացքում պարտատերերը զեկուցադրեր պահանջելու /160/ իրավունք չեն ունենա իրենցից, բայց մյուս կողմից նրանց պետք է իրավունք տալ քանի որ սնանկները շատ քիչ են նրանց մեջ:

Զուլֆայի վաճառականները Մոսկովիայի մեծ Դքսի հետ պայմանագիր կնքեցին նրա երկրով անցկացնելու այն բոլոր ապրանքները, որոնք հարմար կհամարեն: Եւրոպացի որեւէ վաճառականի, ինչ ազգության էլ լինի, թույլատրված չէ Աստրախանից ավելի առաջ գալ, քաղաք, որ ուսաններին է պատկանում 1554 թ. սկսած: Այն գտնվում է Կասպից ծովից այն կողմ՝ Եւրոպայի եւ Ասիայի սահմանագծին: Մեծ Դուքսը հնարավորինս նպաստում է այս առեւտրին: Զուղայեցիները մաքս են վճարում այն ամենի համար,



ինչ մտցնում են Մոսկովիա, սակայն ոչինչ չեն վճարում այն ապրանքի համար, որ Մոսկովիայից Պարսկաստան են տանում<sup>138</sup>:

Ահա այն ճանապարհը, որով նրանք գնում ու գալիս են: Իրենց ապրանքները նրանք Սպահանից տանում են Թավրիզ, Շամախի, եւ Կասպից ծովի ափին գտնվող Նոգավա (իմա՝ Նիզովայա - է.Թ.) նավահանգիստ՝ Շամախիից երեք օր հեռավորության վրա: Նոգավայում մետաքսը եւ պարսկական ու հնդկական մյուս ապրանքները բարձում են՝ Աստրախան տանելու համար: Աստրախանից ցամաքով դրանք տանում են Մոսկվա՝ այնտեղից Արխանգելսկ, որը Մոսկովիայի վերջին նավահանգիստն է Հյուսիսային օվկիանոսի վրա: Անգլիացիներն ու հոլանդացիները այնտեղ մեծ առևտուր են անում: Այնտեղ են բեռնում ապրանքները Ստոքհոլմ տանելու համար, այնտեղից՝ Հելսինգյորի նեղուցով անցնում են դեպի Հոլանդիա եւ Անգլիա:

Հոլլանդյնի Դուքս Զրեգերիկը<sup>139</sup>, ինչպես Օլեարիուսն է ասում, Հոլլանդյնի դքսությունում կառուցեց Զրեգերիկշտատ<sup>140</sup> քաղաքը, այնտեղ ավելի լրջորեն մետաքսի առևտրով զբաղվելու նպատակով, քան ողջ Եւրոպայում<sup>141</sup>: Ուստի նա սրտչեց հարաբերություններ հաստատել Պարսից արքայի հետ՝ հեշտացնելու համար ցամաքային փոխադրումները: Եւ քանի որ սա անհնար էր իրագործել առանց Մոսկովիայի Մեծ Դքսի թույլտվության, 1633 թ. նա որոշեց պաշտոնական դեսպանություն ուղարկել նրա մոտ, որի վրա

138 Տուրնըֆորի տեղեկությունը անկասկած վերաբերվում է 1667 թ. Նոր Ջուղայի հայ վաճառականների եւ Ռուսական իշխանությունների միջև կնքված առևտրական պայմանագրի փաստական իրականացմանը (Պայմանագրի եւ հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերություններում մրա խաղացած դերի եւ հետևանքների մասին մանրամասն տե՛ս Խաչիկյան Ծ., Աշխ. էջ 15-65):

139 Ֆրիդրիխ 3-րդ ֆոն Օլեգվիզ-Հոլշտեյն-Գոտտորպ (1597-1659):

140 Այժմ՝ Ֆրիդրիխշտատ (Friedrichstadt), հիմնվել է 1621 թ. դուքս Ֆրիդրիխ 3-րդի կողմից, գտնվում է Օլեգվիզ-Հոլշտեյնի երկրամասում՝ Հյուսիսային Ֆրիզիայի շրջանում:

141 Подробное описание путешествия Голштинскаго Посольства въ Московію и Персію въ 1633, 1636 и 1639 годах, составленное секретаремъ Посольства Адамом Олеаріем, Москва, 1870.

կարգեց իր պետական խորհրդականներից Քրյուսիուսին եւ Համբուրգի վաճառական Բրուգմանին, վերջինս իր ձախորդությունը պատճառով վտանգավոր դրություն մեջ ընկավ Դադստանի թաթարների մոտ եւ պատճառ դարձավ, որ մետաքսների գործը չկայանա: Հետագայում իր անկարգությունների համար մահվան դատապարտվեց եւ մահապատժի ենթարկվեց Գոթթորպում 1640 թ. մայիսի 5-ին<sup>142</sup>: Հոլանդացիները, որոնք այդ ժամանակվանից սկսած ուզում էին Աստրախան հասնող Պարսկաստանի մետաքսի տերերը դառնալ, ստիպված էին ամեն տարի որոշ քանակություն գնել. դա նրանց քիչ եկամուտ էր ապահովում այդ ապրանքատեսակի վրա, որովհետեւ հայերը լավագույն մասն իրենց էին վերցնում, իսկ մնացածը մնում էր նրանց: Պրն. Պրեսկոտը<sup>143</sup> մեզ վստա-

142 Նույն տեղում, էջ 512-514, 1033-1038: Տե՛ս նաեւ Ծանոթ. 32:

143 Ըստ Տուրնըֆորի, Պ. Պրեսկոտը, որին նա հանդիպում է Էրզրումում հունիս ամսին, արդեն 10-12 տարի անգլիացիների հյուպատոսն է (Հայաստանում - է. Թ.) - «Mr. Prescott qui est Consul de la nation Angloise depuis 10 ou 12 ans»: Հեղինակը նշում է որ Հյուսպատոսի մոտ հաճախ էին հավաքվում հետաքրքր զրույցներ վարելու ոչ միայն հայ մեծ վաճառականները (les plus gros Marchands Arméniens), այլև բոլոր օտարերկրացիները: Պ. Պրեսկոտն աշխարհի ամենաազնիվ մարդկանցից մեկն է, ով մեր ուշադրությունը հրավիրում էր այն ամենի վրա, ինչը մեզ կհետաքրքրեր: Հեղինակը նշում է, որ տեղացիները եւս հարգանքով են լցված մրա Ակատմամբ, բացի այդ նա մշտապես հեշտացնում է միսիոներների ելումուտն ու գործունեությունը այդ երկրում (տե՛ս Աշխ., հտ. II, էջ 118-119): Անգլիացի ճանապարհորդ Հանվեյը (Jonas Hanwey, 1712-1786) իր «A Historical Account of the British Trade over the Caspian Sie» etc. (1753) ուղեգրության 1-ին հատորում այն կարծիքն է հայտնում, (թարգմանությունը՝ Ա. Աբեղյանի) «թէ Պարսկաստանի հայերը աշխատում են ոչնչացնել անգլիական առևտուրը այդ երկրի հետ» (էջ 481): «Հայերը մի քանի տարուան ընթացքում իրենց առևտուրը Հիսիսային Պարսկաստանում իսկապես որ շատ անելի մեծ չափերով են ընդարձակել, քան՝ ռուսները: Վասնզի, նրանք Հոլանդիայում ունեցած իրենց վարկի շնորհիւ, այլ եւ սեփական միջոցներով, այդ գործի մէջ գետեղել են մօտաւորապէս հարիւր հազար ֆունտ ստերլինգ» (էջ 316), (տե՛ս Աբեղյան Ա., Ուղեգիր Հանվեյ հայոց մասին, «Հայրենիք» ամսագիր, 1935, N° 2, էջ 65): Հայ անգլիական առևտրական հարաբերությունների մասին տե՛ս նաեւ Քիրտեան Թ., Հայ եւ անգլիական դրամազխի պայքարը կովկասի մէջ: Նիթեր հայ վաճառականութեան պատմութեան համար (Նիթեր ԺԶ պատմութեան համար), «Հայրենիք» ամսագիր, 1941, NN° 3-10: Քիրտեան Թ., Հուս



հեցրեց, որ անգլիացիները ասիական շատ ապրանքներ են բեռնում Արխանգելսկից, եւ նրանք այնտեղ գտնում են լավագույն խավիարը: Թուրքիայում վաճառվածը Սեւ ծովից է գալիս, այն այնքան էլ մաքուր չէ եւ տիկերի մեջ է փակված: Իսկ Կասպից ծովի խավիարն, ընդհակառակը, ավելի խնամքով է պատրաստված եւ շատ մաքուր է պահեստավորված: Պ. Պրեսկոտի մոտ թառափի հավիլիթներ եւ խավիար կերանք, որոնք աղած էին Կասպից ծովի շրջակայքում, եւ գտանք որ հրաշալի էին. Մարսելի նրբերչիկներն ավելի լավը չեն:

Մենք չէինք կարողանում գույքի մեր ծիծաղը, երբ էրզրումում տեսնում էինք թե հայերն ինչպես են սակարկություն անում: Նույն ձեւով են սկսում, ինչպես թուրքերը՝ փողը սեղանին դնելով, դրանից հետո հնարավորինս վիճարկում են՝ մեծ աղմուկով մի մետաղաղբամբ մյուսի վրա ավելացնելով: Նրանց խոսակցությունը լսելով՝ կարծում էինք, որ պատրաստ են իրար կոկորդ կրծել, սակայն դա ոչինչ չի նշանակում: Իրար կատաղաբար հրմշտելուց հետո, գործակալներն ու շուկայական միջնորդներն այնքան ուժգին են վաճառողի ձեռքը սեղմում, որ վերջինս ցավից ճչում է, եւ նրան բաց չեն թողնում մինչեւ գնորդը որոշ գումար չի վճարում, ապա բոլորը ծիծաղում են: Նրանք իրավացիորեն պնդում են, որ փողի տեսքը լուծում է շուկայի բոլոր հարցերը:

Ինչ վերաբերվում է հավատքին, բոլորը գիտեն, որ հայերը քրիստոնյա են եւ կարող էին շատ լավ քրիստոնյաներ լինել, եթե հերձվածողությունը մեզնից չբաժաներ նրանց: Նրանց մեղադրում են մոնոֆիզիտ (միաբնակ) լինելու մեջ, այսինքն ճանաչում են Հիսուս Քրիստոսի մեկ բնությունը, կամ եթե ավելի լավ ասելու լինենք՝ երկու միախառնված բնությունները: Ընդունելով յուրաքանչյուր բնությունն առանձին-առանձին՝ խոսում են միմիայն մեկ բնության մասին: Նրանց ամենաշեղծաբանող եպիսկոպոսները մտածում են հերքել այդ հերետիկոսությունը եւ գտնում են, որ ողջ սխալը գալիս է իրենց լեզվի աղքատությունից, որտեղ մաքուր արտահայ-

մետաքսի վաճառականությունը եւ հայերը, - «Հայրենիք» ամսագիր, 1944, NN° 3-6, 1945, NN° 1-2:

ությունները պակասում են, ուստի նրանք հաճախ շփոթում են «բնություն» բառը «անձնավորություն» բառի հետ: Երբ նրանք խոսում են անձնավորված (Հիպոստատիկ) միության մասին, մտածում են ապացուցել այն՝ խոստովանելով, որ Հիսուս Քրիստոսը մարդեթյան մեջ լիարժեք Աստված է եւ լիարժեք մարդ՝ առանց իրար խառնելու, առանց փոփոխության, առանց շփոթության: Իրականում ... [161] հայերի եւ հույների անհաշտ հակառակությունը արմատները գալիս են դեռեւս Քաղկեդոնի ժողովից, եւ դա այնքան խորն է, որ երբ մի հույն մտնում է հայկական եկեղեցի կամ որեւէ հայ մտնում է հունական եկեղեցի, ե՛ւ առաջինները, ե՛ւ մյուսները եկեղեցին համարում են պղծված ու կրկին այն օրհնում են: ...

[162] (Խոսվում է Գրիգոր Լուսավորչի եւ Տրդատի կողմից հաստի հրովարտակով քրիստոնեությունը ընդունման մասին: Խոսվում է նաեւ Ս. Կույսերի մասին - է. թ.):

Պետք չէ շփոթել հայոց առաջին պատրիարք Գրիգոր Լուսավորչին նույն երկրից եւ նույն անունով մի այլ սրբի հետ, որը X դարում եկավ եւ վախճանվեց Յրանսիայում՝ մենակյացությամբ իր օրերն անցկացնելով Pluviers en Beauce-ի մոտ Օուլեանի թեմում<sup>144</sup>: Նա այս մենաստանում (ճանաչվում էր Hermitage) յոթ տարի անցկացրեց՝ իր երկրի ավանդությունով ծոմ պահելով, այսինքն՝ այնպես, որ Արեւմուտքի քրիստոնյաները համարյա չէին կարող նմանակել: Նա ոչինչ չէր ուտում երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ եւ շաբաթ օրերին եւ նույնիսկ եթե խախտում էր իր պահքը երեքշաբթի եւ ուրբաթ օրերին՝ մայրամուտից հետո մի քանի կտոր գարեհաց ուտելու համար՝ մի քանի խոտաբույսեր, մի ամի ջրի մեջ խոնավացրած եւ արեւի տակ չորացրած ոսպ: Տոնական օրերին եւ կիրակիները մի քիչ ավելի լավ էր սնվում, սակայն երբեք միս չէր ուտում:

144 St' u S. Grégoire d'Arménie, reclus à Pluviers en Beauce, Vies des Père des martyrs et des autres principaux saints: ..., Louvain, 1829, vol. 4, p. 127. Գրիգորը դր Պիթիվիեն վախճ. 11-րդ դ. սկզբին (տե՛ս Դեդեյան Ժ. Հայ վաճառականները եւ ուխտավորները Արեւմտյան Եւրոպայում X դարի վերջում - XI դարի սկզբում, ՊԲՀ 1984, N 3, էջ 27-28):



(Նոսուս է հայոց եկեղեցու հիերարխիայի մասին - է.Թ.) Հայերը բազմաթիվ պատրիարքներ ունեն այսօր պարսից Թափափորի եւ Մեծ Սենյորի (իմա՝ սուլթանի - է.Թ.) տիրույթներում: Ամենահռչակավորը էջմիածնինն է: Բացի սրանից, Պարսկաստանում կա Շամախու թեմը՝ Կասպից ծովի մոտ, Նախիջևանինը, ուր Հայ կաթողիկները իրենց պատրիարքին ընդունում են Պապից հետո: Թուրքիայում երկու առաջնորդ կա, որոնք պատրիարքութուն են ստացել Մեծ Վեզիրի կողմից: Նա վաճառում է ա՛յն առաջնորդներին, որոնք ուզում են պատրիարքի պաշտոն ունենալ, ինչպես Կիլիկիայում Սսի եպիսկոպոսը եւ Երուսաղեմի Հայոց եպիսկոպոսը, որոնք նվերների շնորհիվ են ստացել իրենց առաքելութունն ու իշխանութունը Բարձր Դռնից:

Հայերը մի պատրիարք էլ ունեն Կամենիցում՝ Լեհաստանում, քանի որ Թեաթինյան հոգեւորական առաքելական միսիոներ Հ. Պիդուն<sup>145</sup> Փարիզից, այնքան լավ աշխատեց լեհահայերի եւ հատկապես նրանց արքեպիսկոպոսի ուղեղների վրա, որ բոլորին առաջնորդեց դեպի Հռոմեական մայր եկեղեցին 1666 թ.: Նրանց զբքերը մաքրեցին /163/ այն բոլոր սխալներից, որ հերձվածողներին բաժանում են մեզանից: Այդ պատրիարքը<sup>146</sup> ճանաչեց Պապին որպես ճշմարիտ եկեղեցու ղեկավար, եւ Սրբութուն Սրբոցը անցկացրին փողոցներով մեծ թափերով, առավել հանդիսավորութամբ Աստծուն շնորհակալ լինելու համար:

էջմիածնի պատրիարքը մի կողմից ամենահարուստն է, քանի որ վստահեցնում են, որ տարեկան վեց հարյուր հազար էկյու եկամուտ ունի: Նրան ընդունող եւ 15 տարեկանը լրացած բոլոր Հայերը նրան տարին հինգ սոլ են վճարում: Բարեկեցիկները նրան մինչեւ 3-4 էկյու են վճարում: Սակայն մյուս կողմից էլ նա աղքատ է եւ իսկապես աղքատ, քանի որ ստիպված է գլխահարկ վճարել նրանց համար, ովքեր անվճարունակ են, որպեսզի պահի նրանց իր հոտի մեջ: Հաճախ նա իր եկամուտներն օգտագործում է նման ծախսերի հա-

145 Պիդուի մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 115:

146 Նկատի ունի լեհահայոց Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչին:

մար: Ամեն տարի արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները նրան զեկուցում են իրենց թեմերի աղքատ ընտանիքների վիճակի մասին, որոնց սպառնում է վաճառվել կամ կրոնափոխ լինել՝ գլխահարկ վճարել չկարողանալու պատճառով: Այս պատրիարքը մյուս քահանաների նման պարզ հանդերձանք ունի: Նա շատ անպաճույճ նիստուկաց ունի եւ շատ փոքր թվով սպասավորներ: Սակայն իր ազդի վրա ունեցած իշխանությամբ այս առաջնորդն ամենանշանավորներից մեկն է աշխարհում: Նրա բանադրանքի մտքից անգամ դողում են Հպատակները: Վստահեցնում են, որ 80.000 գյուղ է ենթարկվում նրան: Իր տեղում մնալու համար որքա՞ն է տալիս Երեւանի կառավարչին եւ արքունի իշխանավորներին: Որքա՞ն պետք է ստրկական փափագ ունենալ նման պաշտոններ գնելու համար:

Մի ժամանակ Հայերի մեջ միակը պատրիարքն էր, որ իրավունք ուներ մյուսոն պատրաստել՝ հունարեն «Միոսնի» անունով՝ հեղուկ խառնուրդ կամ հոտավետ յուղ: Այն ուղարկում էին Պարսկաստանի եւ Թուրքիայի բոլոր դավառները, նույնիսկ հույներն էին Հայերից գնում մեծ հարգանքով, եւ միահամուռ ասում էին, որ Երեք եկեղեցիներից (իմա՝ էջմիածնից - է.Թ.) սուրբ յուղի աղբյուր է հոսում, որը ողողում է ողջ Արեւելքը: Պատրիարքն այն ուղարկում էր Հայ արքեպիսկոպոսներին ու եպիսկոպոսներին՝ տարածելու եւ մկրտության եւ վերջին օժման ժամանակ օգտագործելու համար: Սակայն 40 տարի է, որ Հակոբ վարդապետը՝ Երուսաղեմի Հայոց եպիսկոպոսը<sup>147</sup> մեծ Վեզիրի բարի կամքով որոշել է դառնալ պատրիարք եւ հրաժարվել է մյուսոն վերցնել էջմիածնի պատրիարքից: Քանի որ յուղն էժան է Պաղեստինում, եւ քանի որ այդ խառնուրդը չի փչանում, նա պետք եղածից ավելի շատ էր պատրաստել օճելու համար, եւ տարիներ շարունակ Թուրքիայի Հայերն օգտագործում էին այն: Ահա հերձվածողության մի մեծ օրինակ է սա: Պատրիարքներն իրար բանադրում էին փոխադարձաբար: էջմիածնի պատրիարքը մի մեծ դատական գործընթաց սկսեց Բարձր

147 Ամենայն հաւանականությամբ Գկատի ունի Եղիազար Այնթապցուն:



Դուան առջեւ Երուսաղեմի պատրիարքի դեմ: Թուրքերը, որոնք շատ ճարպիկ էին հարցը լուծելու համար, բավարարվում էին նվերներ (իմա՝ կաշառք - է.թ.) ստանալով երկու կողմից էլ, պայմանով որ նրանք վերադառնան իրենց պաշտոններին եւ սպասեն. այդ ընթացքում երկուսն էլ պետք է շարունակեն մյուսոն պատրաստել, ինչպես կարող են:

Մյուսոնը սկսում են պատրաստել Ծաղկազարդի երեկոյան ժամերգութիւնից մինչեւ Ավագ Հինգշաբթի օրվա պատարագը, եւ այդ օրն այն փառաբանվում է այն մեծ կաթսայի մեջ, որի մեջ պահվում է այդ լիկյուրը (խառնուրդը, մյուսոնը). ո՛չ փայտ եւ ո՛չ էլ սովորական ածուխ են օգտագործում կաթսան եռացնելու համար եւ որն ավելի մեծ է Invalides-ի կաթսայից (այսինքն՝ շատ մեծ): Այն եռացնում են օրհնված փայտերով եւ հին եկեղեցական իրերով՝ հին պատկերներով, մաշված զարդանախշերով, պատուված եւ շատ ճարպոտ գրքերով. ամեն ինչ պահվում է այս արարողութեան համար: Այդ կրակը լավ հոտ չպետք է ունենա, սակայն յուղը բուրումնավետ է դառնում զանազան հոտավետ խոտերի ու դեղաբույսերի շնորհիվ, որ խառնում են դրա մեջ: Կրտսեր տիրացուները չէ, որ աշխատում են այս հրաշալի լուծույթի վրա, այլ՝ անձամբ պատրիարքը՝ հանդիսավոր հանդերձանքով, եւ շրջապատված նվագագույնը երեք առաջնորդներով՝ նույնպես հանդիսավոր հանդերձաներով, որոնք ողջ արարողութեան ընթացքում աղոթքներ են երգում: Ժողովուրդը սրանից է առավել տպավորված, քան Հիսուս Քրիստոսի իրական ներկայութեանից եւ այնքան ճշմարիտ է, որ մարդիկ դյուրազգաց են միայն զգայական բաների համար:

Բացի Մեծ Պահքից, նրանք եւս չորսն ունեն՝ ութական օր տարվա մեջ, որոնք որոշված են՝ /165/ պատրաստվելու համար չորս մեծ տոներին՝ Կաղանդին, Համբարձմանը, Ավետմանը եւ Ս. Գրիգորին: Այս պահքերը նույնքան խիստ են, որքան Մեծը. գրանց ժամանակ չի կարելի խոսել ո՛չ ձկնեղենի, ո՛չ հավկիթի, ո՛չ էլ նույ-

նակ մեթի կամ կարագի մասին: Ոմանք էլ երեք օր շարունակ ուշքի չեն ուտում:

Հայերը, մեզ նման, յոթ սրբութիւնն ունեն՝ մկրտութիւնը, պատմը, ապաշխարութիւնը, հաղորդութիւնը, վերջին օծումը, հոգեւոր կարգը եւ ամուսնութիւնը:

Մկրտութիւնը նրանց մոտ, ինչպես հույների մոտ, ջրի մեջ ընկղմելու միջոցով է կատարվում, եւ քահանան նույն բառերն է պատասանում. «Ես քեզ մկրտում եմ յանուն Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ...», նա երեք անգամ երեխային ընկղմում է ջրի մեջ՝ հանուն Սուրբ Երրորդութեան հիշատակի: Քանի որ մեր միսիոնները նրանց սովորեցրել են կրկնել այդ բառերը յուրաքանչյուր անգամ ընկղմելուց առաջ՝ շատ քահանաներ անգիտակցաբար այդպէս էլ անում են մինչեւ հիմա: Այն ընթացքում, երբ քահանան, պարողակարգի համաձայն, մի քանի աղոթք է ասում, մի կապ է պատրաստում՝ կեսը սպիտակ բամբակից եւ կեսը՝ կարմիր մետաքսից, ընդ որում՝ ինքն էլ մանել է այդ կապերն առանձին-առանձին: Երեխայի վզից դրանք կախելով՝ նա մյուսոնով օծում է ճակատը, ստամոքսը, թեւատակերը ձեռքերն ու ոտքերը՝ յուրաքանչյուր մասի վրա խաչի նշան դնելով: Կապի արարողութիւնը, ասում են, ինչպէս Հիսուս Քրիստոսին գեղարդով վիրավորելիս նրա վերքից հոսած արյան եւ ջրի հիշատակութեամբ են անում: Մկրտում են միայն կիրակի օրը, եթե երեխան մահվան վտանգի առաջ չի կանգնած, եւ քահանան միշտ երեխային անվանակոչում է այդ կիրակի օրվա կամ մոտակա մեծ տոնի Սրբի անունով: Երեխայի ծնունդն ընդունող կինը տանում է նրան եկեղեցի, սակայն կնքահայրն է բերում երեխային մոր մոտ՝ թմբուկների, փողերի ու այլ երաժշտական գործիքների հնչողութեան ներքո: Մայրը ծնկի է դալիս՝ երեխային վերցնելու համար, եւ այդ ընթացքում կնքահայրը համբուրում է մոր ճակատը եւ հետո, ծնողների, բարեկամների ու հոգեւորականների հետ միասին սեղան են նստում: Հոգեւորականներն անպայման պետք է մասնակցեն տոնակատարութեանը, քանի որ հայերը հավատում են, որ միայն քահանաները կարող են իսկապես



մկրտել եւ օրհնել որեւէ տոնակատարութիւն: Լսել եմ, որ քահանաներ կան, որոնք անգամ մահացած երեխաների են կնքել, եւ իսկապես հավատում եմ, քանի որ նրանք Վերջին Օծումը տալիս են վախճանվածներին:

Կաղանդին արված մկրտութիւններն ամենաշքեղն են, եւ այդ օրը երեխաներին, որոնց առողջութիւնը թույլ է տալիս, ուղարկում են արարողութիւնը տարբեր ձեւով նշելու: Ամենամեծ (կարեւոր) արարողութիւնները հիմնականում կատարվում են այնպիսի վայրերում, ուր լին կամ գետ կա: Այս նպատակով գեղեցիկ գորգերով պատված նավերից մեկի վրա մի փոքրիկ խորան են պատրաստում, արեւածաղին հոգեւորականները՝ ծնողների, բարեկամների ու հարեւանների ուղեկցութեամբ գալիս են այստեղ, որպէսզի նույնպէս զարդարված նավեր պատրաստեն: Որքան էլ եղանակը խիստ լինի, ավանդական աղոթքներից հետո, քահանան երեք անգամ երեխային ընկղմում է ջրի մեջ եւ օծում նրան: Հայրերի վրա այս արարողութիւնը էժան չի նստում, քանի որ արարողութիւնը վերափոխվում է տոնակատարութիւն եւ նվերներով է ուղեկցվում: Կան նաեւ հայրեր, որոնք չեն սպասում Կաղանդի տոներին, եւ ենթադրում են, որ իրենց երեխան կարող է մահանալ: Իրականում ինչ խենթութիւն է առանց պատճառի որոշում ընդունել: Գավառների կառավարիչները հաճախ ներկա են գտնվում այս տոնակատարութիւններին: Նույնիսկ արքան ժամանակ առ ժամանակ Զուլֆա է գալիս նմանատիպ տոնակատարութիւններ դիտելու: Ուստի, բացի հանդիսութիւնից ու ճաշկերույթից, շատ նվերներ է պետք պատրաստել: Ծննդկան մայրերը եկեղեցի կարող են գնալ ծննդաբերութիւնից 40 օր հետո միայն<sup>148</sup>: Նրանք բազմաթիվ հուղայական ավելորդապաշտութիւնների են հետեւում

Ասածից երեւում է, որ կարծես թե հայերը երկու սրբութիւն են ընդունում միաժամանակ՝ մկրտութիւնը եւ հաղորդութիւնը, քանի որ երեխաներին մյուսոնով են օծում: Նրանք հավատում են,

148 Մկրտության ձեւի մասին տես Գալե աստ՝ ծանոթ. 39:

որ բոլոր քահանաները կարող են տալ այդ Սրբութիւնը, սակայն համոզված են, որ միմիայն պատրիարքը կարող է օրհնել մյուսոնը:

Հաղորդութեան համար քահանաները հավատարիմներին տալիս են մի կտոր սրբագործված նշխար՝ թաթախված սրբագործված գինու մեջ, սակայն խիստ տարօրինակ է, որ նրանք հաղորդութիւն են տալիս երկու-երեք ամսական երեխաներին՝ իրենց մոր գրկում. նրանք շատ հաճախ փսխում են սրբագործված նշխարը: Հայ քահանաներն առանց դրոժի հացն են սրբագործում եւ այն պատրաստում են պատարագի նախօրյակին: Դրանք նման են մեր նշխարներին միայն երեք-չորս անգամ ավելի հաստ են: Պատարագը սկսելուց առաջ քահանան նշխարները դնում է մի սկուտեղի (մաղզմա - էթ.) վրա, իսկ մաքուր գինին՝ սկիհի մեջ: Հիսուս Քրիստոսը, - ասում է, - Տերունական Ընթրիքը գինով արեց եւ ջուրը պահեց մկրտութեան համար: Ապա դրանք ծածկում է մեծ շղարշով եւ պահում ավետարանի մոտ գտնվող մի պահարանիկում՝ Ս. Խորանի վրա: Ընծայման աղոթքի ժամանակ նա պետք է հանդիսավորութեամբ վերցնի սկիհը եւ մաղզման՝ այսինքն՝ սարկավազների ու արեղանների ուղեկցութեամբ, որոնցից ոմանք մոմեր են բռնում, մյուսները՝ ծնծղաներ, ուրիշներն էլ՝ բավականին երկար գավազաններ, որոնք զարդարված են զանգակներով (քրոցներ - է.թ.) եւ բավականին ներդաշնակ ձայներ են սփռում: Այս թափորի ուղեկցութեամբ եւ բուրվառավոր հոգեւորականներով շրջապատված՝ քահանան հանդիսավոր ձեւով այս սկիհն ու սկուտեղը պատեցնում է Ավագ Խորանի շուրջը: Այդ ընթացքում անգետ ժողովուրդը ծնկի է գալիս եւ պաշտում այդ նշխարներն ու սկիհը, որոնք դեռեւս օծված չեն: Առավել, մեղավոր հոգեւորականները /166/ ծնկաչոք երգում են մի շարական, որ սկսվում է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էին Աստուած աստ բազմեցաւ» տողերով: Կարծես թե հայերն այս գարշելի ավանդույթը հույներից են ընդօրինակել:

...  
Չնայած այս Սուրբ խոհեմութեանը, ամենեւին չի երեւում, որ հայ հերձվածողները խորանում են այս պաշտելի Խորհրդի մեծու-



թյան մեջ: Նրանց մեծ մասը Հաղորդության է գալիս անպատրաստ, եւ այն տրվում է նաեւ 15-16 տարեկան երեխաներին, չնայած այդ տարիքում նրանք այնքան էլ անմեղ չեն, որքան ժողովուրդն է կարծում: Իսկ գյուղերում Հայերը Հազվադեպ են Հաղորդություն ընդունում, քանի որ Հաճախ միջոցներ չունեն պատարագ անելու, եւ քահանաները նրանց Հավատացնում են, թե վատ վճարված պատարագը մեծ զորություն չունի:

Մեր միսիոներները Հիացմունք են առաջացնում իրենց գիտելիքներով, իրենց ջերմեռանդությամբ ու առատաձեռնությամբ: Սակայն Հերձվածողներն իրենց դրամով ավերում են այս մարդկանց «ամուր կառույցները»: Ամենաբարգավաճ առաքելություններն անգամ կկործանվեն, եթե Աստված չփոխի Հերձվածողների սրտերը: Այս խեղճերն, ամենեւին չեն ըմբռնում մեր հոգեւորականների սրբազան առաքելությունը: Նրանց սոսկ հետաքրքրում է պետության Հզորությունը, եւ չեն դադարում ցույց տալ, թե որքան վտանգավոր են իրենց տառապանքները, երբ լատինները բազմապատկվում են իրենց մոտ: Կառավարության Հանդեպ անբարյացկամորեն տրամադրված այդ մարդիկ Հնազանդվում են (նվիրված են) Պապին եւ քրիստոնյա թագավորներին: Նրանց Համարում են լրտեսներ, որոնք կրոնի շղարշի տակ գալիս են ուսումնասիրելու երկրի ուժերը, եւ իրենց Հավատակիցներին ներշնչում են ապստամբության եւ Հեղափոխության գաղափարներ: Եւրոպայի ամենահզոր արքաները չէին հետաքրքրվի նրանցով, եթե նրանք չձառայեին նրանց որպես էմիսարներ՝ իրենց նվաճումներն ընդլայնելու Համար:

Այս բոլոր կեղծ պատճառները, որոնք Հիմնված են ոսկու ուժի վրա, բացեցին մահմեդականների աչքերը, եւ չնայած բոլոր երաշխիքներին, ստիպում էին միսիոներներին ետ վերադառնալ: Այդուհանդերձ այդ առաքյալներն անգիջում են: Ամեն օր Լեւանտում կարելի է տեսնել նոր վեղարավորներ, դոմինիկյաններ, կարմելիտներ, Հիսուսյաններ, Փարիզի արտասահմանյան միսիանների քահանաներ: Նրանք բացատրական աշխատանք են տանում ցանկացող-

ների հետ, մկրտում են, մոլորված գաղնուկներին մուր են տանում, ընտրյալների Համար Երկնքի Դռներն են բացում:

Ինչ վատ է, որ Հայերն աչքերը չեն բացում, քանի որ նրանք լավ բնավորություն ունեն եւ պատրաստ են անձնվիրության (նվիրման): Մեր եկեղեցիները տեսնելուց հետո նրանք իրենցը շատ մաքուր են պահում: Յուրաքանչյուր եկեղեցու դասի խորքում միակ խորանն է լինում, ուր բարձրանում են Հինգ-վեց աստիճանով: Մեծ ծախսեր են անում Ավագ խորանը զարդարելու Համար: Յի մի աշխարհականի, ինչ դասի էլ որ նա պատկանի, թույլատրված չէ այնտեղ բարձրանալ: Այս Հարստությունից կարելի է ենթադրել, որ Հայերը Հույներից կրկնակի ավելի դրամներ են շոշափում: Հույների թշվառությունը երեւում է նրանց ունեցած ամենասուրբ բաներից. նրանք պատարագելու Համար Հազիվ երկու փոքրիկ մոմ ունեն: Հայերի մոտ, Հակառակը, գեղեցիկ լուսավորություն կտեսնես եւ մեծ ջահեր: Նրանց երգեցողությունը եւս շատ ավելի Հաճելի է, եւ զանգակների մեղեդին էլ չգիտեմ՝ ի՞նչ է ներշնչում, որ սիրտդ շարժում է:

...

[167] Այստեղ պետք է խոսել նաեւ Հայերի Վերջին Օծման մասին, քանի որ նրանք դա ներառում են սրբությունների մեջ: Սակայն ես առավել տարօրինակ գործընթաց չեմ տեսել, քանի որ նրանք այդ արարողությունն անում են վախճանվելուց հետո, եւ սա էլ սովորաբար Սուրբ մարդկանց. մյուսները բոլորովին մերժված են:

Նրանք Հատուկ կանոններ ունեն ամուսնության վերաբերյալ: Այրի տղամարդը կարող է ամուսնանալ միայն կնոջ հետ (այլ ոչ օրիորդի - է. թ.), եւ նրանց մոտ երրորդ ամուսնություն չի կնքվում: Դա Համարվում է պոռնկություն: Նմանապես կինը չի կարող ամուսնանալ տղայի (չամուսնացած) հետ: Սա այնքան էլ վատ չէ, եթե կողմերը ճանաչում են իրար միանալուց առաջ, քանի որ ամուսնությունները Համապատասխանեցված են՝ ավելի լավ, քան ուրիշ կրոններում: Սակայն նրանց մոտ չգիտեն՝ ինչ է սիրով զբաղվելը: Ամուսնությունները կնքվում են մայրերի կամքի Հա-



մաճայն, որոնք միայն իրենց ամուսինների հետ են խորհրդակցում: Մանրամասների մասին համաձայնության գալուց հետո տղայի մայրը գալիս է աղջկա տունը՝ մի քահանայի եւ երկու տարեց կանանց ուղեկցությամբ: Ապագա հարսին տղայի անունից մատանի է նվիրում: Նույն ժամանակ ներկայանում է նաեւ տղան՝ պահպանելով հնարավոր լրջութիւն, քանի որ ընդունված է՝ ժպտալ առաջին տեսակցության ժամանակ. ճիշտ է, որ այս տեսակցությունն այնքան էլ մեծ արժեք չունի, քանի որ գեղեցկուհին կամ տգեղ հարսնացուն նույնիսկ աչքերի ճերմակը ցույց չի տալիս, այնքան քողարկված է լինում: Քահանային խմիչք են հյուրասիրում նշանադրությունից հետո: Սովորություն չկա այն հրապարակել:

Հարսանիքի նախորդ օրը փեսացուն հանդերձներ է ուղարկում եւ մի քանի ժամ անց ինքն էլ գնում է՝ ստանալու հարսնացուի՝ իր համար նախատեսված նվերները: Հաջորդ օրը ձի են նստում, որն այնքան գեղեցիկ է զարդարված, որ ավելին հնարավոր չէ պատկերացնել: Փեսացուն, դուրս գալով իր նշանածի տնից, առաջինն է գնում՝ գլուխը ծածկած ոսկյա, արծաթյա կամ ձեռագործ շղարշով՝ ըստ դասակարգային պատկանելության: Այս քողը կամ վարագույրն իջնում է մինչեւ դռակատեղը: Աջ ձեռքով բռնում է այն դռտու մի ծայրը, որի մյուս ծայրը հարսնացուի ձեռքին է, որը հետեւում է նրան ձիով՝ սպիտակ քողով ծածկված, որն իջնում է մինչեւ ձիու ոտքերը: Երկու հոգի քայլում է հարսնացուի ձիու կողքից սանձը պահելու համար:

Ծնողները, ընկերները, երիտասարդության սերուցքը՝ ձիերով կամ ոտքով, նրանց ուղեկցում են դեպի եկեղեցի՝ երաժշտական գործիքներով, մոմերով եւ առանց իրար խառնվելու: Եկեղեցու շեմին իջնում են ձիերից, եւ նորապսակները մինչեւ խորան են քայլում՝ դռտու ծայրերը ձեռքներին: Այնտեղ նրանք ճակատները մոտեցնում են իրար, եւ քահանան, Աստվածաշունչը դնելով նրանց գլխին, հարցնում է, թե նրանք իսկապե՞ս ուզում են կին եւ ամուսին դառնալ: Նրանք խոնարհում են գլուխները՝ որպէս համաձայնության նշան: Քահանան սրբազան խոսքեր է արտասանում, ապա

մատանիների փոխանակության արարողությունից հետո պատարագ է անում: Հետո նույն կարգով, ինչպես եկել էին, գնում են հարսի տուն: Ամուսինը պառկում է առաջինը՝ այն բանից հետո, երբ կինը հանում է նրա գուլպաները եւ զբաղվում մոմերը հանագնելով, իսկ իր քողը հանում է միայն անկողին մտնելուց: Ահա թե ինչպես են ամուսնությունները կնքվում, եւ ինչպես են Հայաստանի երիտասարդները հետեւում ավանդույթներին: Եւ այն խավարը, որ ծածկում է եռանդը կարծես կոծկում է նրանց ամոթն ու պարկեշտությունը:

Հավ Ֆրանսերենով սա կոչվում է «կատու գնել գրպանում գահելու համար»: Ասում են, որ հայեր կան, որ չեն ճանաչի իրենց կնոջը, նույնիսկ եթե նա ուրիշ տղամարդու հետ պառկած լինի: Ամեն անգամ քնելուց առաջ նրանք նախքան քողը հանելը հանագնում են մոմը: Շատերն այն չեն հանում նույնիսկ օրվա ընթացքում: Հայր, որ երկար ճամփորդությունից է գալիս, վստահ է, որ նույն կնոջը կգտնի իր անկողնում, կամ գուցե մի ուրիշը նրա տեղը գրաված կլինի հանգուցյալ կնոջ փոխարեն:

Երբ աղջիկները կորցնում են իրենց մորն ամուսնանալուց առաջ, սովորաբար ամենամոտ ազգականուհին է նրանց ամուսնության խնամքը վերցնում իր վրա: Պատահում է, որ մայրերն իրենց երեխաներին նշանում են դեռեւս երկու-երեք տարեկան հասակում, նույնիսկ որոշ կանայք դեռ հղի վիճակում են պայմանավորվում ամուսնացնել իրենց երեխաներին: Սա բարեկամության մեծագույն ապացույցն է մարդկանց մեջ: Նրանց միացնում են հենց ծննդյան օրից, եւ մինչեւ ամուսնության տարիքը տղան ամեն տարի Ս. Զատիկի առիթով հարսնացուին հագուստ է ուղարկում: Ես չեմ խոսում ո՛չ հարսանեկան տոնախմբության եւ ո՛չ էլ զվարճությունների մասին: Տոնախմբությունը երեք օր է տեւում, եւ տղամարդիկ ամենեւին չեն խառնվում կանանց հասարակության հետ: Ասում են, որ շատ են խմում, այս բարի կանայք իրենց հասարակության



մեջ հանում են քողերը, գեղեցիկ խոսքեր են ասում, եւ խմիչքը չեն խնայում:<sup>149</sup>

Հայերը մեծ արարողություններ չեն կազմակերպում /168/ հոգեւոր կարգ ստանալու առիթով: Նա ով իրեն նվիրում է հոգեւոր կյանքին, քահանային է ներկայանում իր հոր ու մոր հետ, որոնք պաշտոնապես հաստատում են, որ դեմ չեն իրենց որդու՝ Աստուծոն նվիրվելուն: Ի տարբերություն մեր հանդիսավոր արարողությունների, քահանան բավարարվում է նրա ուսերին մի շապիկ դնելով եւ մի քանի սաղմոս կարդալով: Սա է առաջին արարողությունը: Այն կրկնում են վեց անգամ, եւ դա կրկնվում է տարեցտարի՝ առանց այդ տարիների մեջ որեւէ կանոնիկ օրինաչափություն պահելու: Սակայն երբ տղան հասնում է 18 տարեկանին, նրան կարելի է ձեռնադրել: ... Սպասելով, որ դուցե նա կուզի ամուսնանալ (սա սովորաբար նրանց մոտ չորրորդ արարողությունից հետո է պատահում)՝ ամուսնացնում են իր ուզած աղջկա հետ: Շապիկն ընդունելուց հետո նա դիմում է եպիսկոպոսին կամ արքեպիսկոպոսին, որը նրան ձեռնադրության հանդերձներն է հազցնում: Այս արարողությունն ավելին արժե, քան մյուսները, քանի որ ավելի շատ պետք է վճարել հոգեւոր կարգերի մեջ առաջանալու համար: Մի ժամանակ հայ քահանաները երեցկնոջ մահից հետո չէին կարող կրկին ամուսնանալ: Հիմա չեն կենտրոնանում այս օրենքի վրա, սակայն երկրորդ ամուսնություն կնքած քահանաները պատարագելու իրավունքից զրկվում են, կարծես նրանց բնավորությունը փոխվում է երկրորդ կին ունենալուց հետո: Նոր քահանաները պարտավոր են մեկ տարի եկեղեցում մնալ՝ միայն աստվածային ծառայությանը իրենց զբաղեցնելու համար: Որոշ ժամանակ անց, նրանք քնում են եկեղեցում պատարագելու նախորդ գիշերը, ոմանք նաեւ հինգ օր տուն չեն գնում այդ առիթով, եւ միայն խաչած հավկիթ, բրինձ են ուտում: Եպիսկոպոսները միս կամ ձուկ են ուտում տարին չորս անգամ միայն, արքեպիսկոպոսները սնվում են միայն բանջարեղե-

149 Հայերի Ռարսացեկաց ձեսի մասից տե՛ս Ասու՝ ծագոթ. 38:

նով, ... այս տրամաբանությամբ պատրիարքները պետք է սովից մեռնեին: Մեր միսիոներները ստիպված են գոնե փոքր-ինչ ընդունել նրանց սովորութիւնները, այլապես չեն կարող ակնկալել նրանց հարգալից վերաբերմունքը: ...

Առաջնորդները ջուրը տարին մեկ անգամ են միայն օրհնում, եւ այդ արարողությունը կոչում են խաչի օրհնություն, քանի որ Ս. Մենդյան օրը մի խաչ են ընկղմում ջրի մեջ բազմաթիվ երգասացություններով, եւ ջուրն օրհնված լինելուց հետո յուրաքանչյուրն, իր ջրամանը լցնելով, տուն է տանում: Քահանաները եւ հատկապես առաջնորդներն այս հանդիսությունից մեծ շահույթ են ստանում:



## ԺԱԿ ԿԻԼԼՈՏ

Ժակ Վիլլոտը (1656-1743) ծնվել է Բար լը Դյուկում (Ֆրանսիայի Հյուսիս)։ Դառնալով Հիսուսյան միաբանության անդամ՝ հանձնարարություն է ստացել մեկնել Չինաստան, Թուրքիայի, Պարսկաստանի եւ Թարթարիայի վրայով։ Մինչ այդ Հիսուսյանների փորձերը՝ Ռուսիայի վրայով այնտեղ հասնելու, անհաջողություններ էին ավարտվել։

Մարտիկից մեկնելով 1688 թ. սեպտեմբերի 25-ին՝ ափ է իջել Մեսինայում, ապա Իզմիրում, որն ավերվել էր երկրաշարժից հետո եւ հոկտեմբեր 15-ին հասել է Կոստանդնուպոլիս, ուր մնալով երեք շաբաթ, կրկին նավ է նստել՝ Տրապիզոն մեկնելու համար։ Տասը օր Սեւ ծովում նավարկելուց հետո դեկտեմբերի 15-ին քարավանով հասել է Էրզրում դեկտեմբերի 24-ին։ 1689 թ. հունվարի 6-ին, շարունակելով ճանապարհը կանգ է առել Երեւանում եւ Գյանջայում, ապա մարտի 2-ին հասել Շամախի՝ Կասպից ծովի մոտ, ուր Հիսուսյաններն արդեն երկու տարի էր, ինչ առաքելություն էին հիմնել։ Նրանք միսիաներ ունեին նաեւ Էրզրումում, Երեւանում, Գյանջայում եւ Սպահանի մոտ գտնվող Զուլֆայում։ Արեւելքի այս շրջաններում Հիսուսյաններն առավել բազմամարդ էին ու առավել մեծ լիազորություններ ունեին, քան վեղարավորները, ավգուստինյանները, կարմելիտները, թեաթինյանները ու դոմինիկյանները, որոնք ավելի վաղուց էին այստեղ։

Շամախիում հինգ ամիս մնալուց հետո, սպասելով իր հաջորդ նշանակմանը, նա խնամքով սկսել է ուսումնասիրել թուրքերեն, պարսկերեն եւ հայերեն, ինչն ամենեւին անօգուտ չէր. ուսական արքունիքը թույլ չէր տալիս միսիոներներին ճամփորդել իր պետություն տարածքով՝ Չինաստան հասնելու համար, ուստի հարկ էր ցամաքային այլ ճանապարհներ բացահայտել։

Օգոստոսի 2-ին Վիլլոտը ճանապարհ է ընկել Պարսկաստան՝ նպատակ ունենալով այցելել արքունիք։ Անցնելով Կուր-Արաքսը, Մուղանի դաշտը՝ եղել է Արդեբիլում, Ջենջանում, Սուլթանիեում,

Սաֆանում, Բոմում, Քաշանում եւ հոկտեմբերի 16-ին հասել է Սպահան։ Զուլֆայում գտնվող Հիսուսյանների նստավայրում նա մնացել է ավելի երկար, քան նախատեսել էր՝ գալով այն եզրակացություն, որ իր տեղը Պարսկաստանի եւ Թուրքիայի միսիաներում է։

Սպահանից հեռանալով 1690 թ. դեկտեմբերի 5-ին՝ ավելի քան վեց տարի ճամփորդել է Արեւելքում եւ զանազան արկածների հանդիպել՝ այդպես էլ չկարողանալով հատել Ռուսիայի սահմանը՝ Չինաստան հասնելու համար։ Նա 1696 թ. հուլիսի 3-ին վերադարձել է Պարսկաստանի մայրաքաղաք, ուր մնացել է 12 տարի։ Այս երկար ժամանակահատվածը նա օգտագործել է հայ քրիստոնյաներին իր կողմը գրավելու համար՝ նրանց սովորեցնելով կաթոլիկ ծեսերը, հորդորելով չհնազանդվել իրենց պատրիարքին եւ ընդունել Պապի իշխանությունը։ Միաժամանակ առիթ է ունեցել ծանոթանալու նրանց սովորույթներին, կենցաղին, կրոնական առանձնահատկություններին, կառավարման ձեւին, ուժային կառույցներին, ինչպես նաեւ՝ պարսիկների առեւտրին. այս ամենը նա նկարագրել է մեծ ճշգրտությամբ։

Այդուհանդերձ Վիլլոտը միակ ճանապարհորդն է, ով որոշ ժանրամասներ է հաղորդել Շահ Հուսեյնի մոտ Լուզովիկոս 14-րդի ուղարկած դեսպանության մասին։ Հակիրճ անդրադառնալով բանազնաց Փաբրին՝ սխալվել է՝ ասելով, որ այս բանազնացը թունավորվել է Երեւանի խանի կողմից։

Փաբրին փոխարինող Միշելի հետ Վիլլոտը 1708 թ. հոկտեմբերի 29-ին մեկնում է Սպահանից՝ Ֆրանսիա վերադառնալու համար՝ Թավրիզ, Երեւան, Կարս, Էրզրում ճանապարհով։ Անցնելով Անատոլիայի մի մասը, Թոքատը, Նիկոմեդիան՝ մարտի 21-ին հասել է Կոստանդնուպոլիս, որտեղից էլ ապրիլի 24-ին նավ է նստել՝ Ֆրանսիա մեկնելու համար։

Հակոբ Վիլլոտն այնուհետեւ մեկնել է Հռոմ, որտեղ ինչպես Հավատաստիյուսի ժողովի տպարանում, այնպես էլ Վենետիկում հայերենով տպագրել է հետեւյալ աշխատությունները՝ «Քրիստոնէական վարդապետութիւն» (Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի,



1710)<sup>150</sup>, «Մեկնութիւն դաւանութեան հաւատոյ» (Հոռոմ, Ուրբանյան տպարան, 1711)<sup>151</sup>, «Պատմագրութիւն կաթողիկոսաց եւ թաղաւորաց Հայոց» (Վենետիկ, «տպեցեալ խարճիւք, եւ հոգաբարձութեամբ Տեառն Արութենի Արհիեպիսկոպոսի Կոստանդինուպօլսեցւոյ», 1713)<sup>152</sup>, «Մեկնիչ սրբոյ աւետարանին» (Հոռոմ, Ուրբանյան տպարան, 1714)<sup>153</sup>, «Dictionarium novum Latino-Armenium/Բառգիրք Հայկական լեզուի շարադրեալ յԱկոբ վարդապետէ ի կարգէն Յիսուսեանց» (Հոռոմ, Ուրբանյան տպարան, 1714)<sup>154</sup>: Իր թարգմանչական գործունեությունից հայտնի է Զիռ Բատիստա Մանիի «Չորք խոկմունք յաղագս յաւիտենականութեան» (Հոռոմ, տպ. Ուրբանյան, 1714) քրիստոնական բարոյախոսական աշխատությունը, որի ըն-

150 Նկարագրությունը տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երեւան, 1988, էջ 179-180: Հիշատակարան չունի: Գիրքը տպվել է «...խարճիք եւ հոգաբարձութեամբ բարեպաշտի Խօջայ Գասպարի որդի Խօջայ Սարատիմ ի սեճ տանէն Երիմանեց»:

151 Գիրքը հիշատակարան չունի: Նկարագրությունը տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, նշվ. աշխ., էջ 189:

152 Նկարագրությունը տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, նշվ. աշխ., էջ 197: Բերում ենք գրքի հիշատակարանը. «Ծնորհօք ամենագօրին Աստուծոյ միոյ եւ երրեակի, ծնողի հօր, եւ ծնեցելոյ որդոյ փրկչին մերոյ, եւ բղխեցելոյ ի անցանէ հոգւոյն սրբոյ. եւ բարեխօսութեամբ ամենօրհնեցելոյ սրբուհոյ Մարիամոյ Աստուածածնին, եւ ամենից սրբոց, աւարտ եղև թղթիկս պատմութեան հայոց կաթողիկոսաց եւ թագաւորաց, որ հայոց կոչի Գաւազանագիրք: Բազում աշխատանս կրելով հավաքեցի աստի եւ անտի. մի տուի շարադրեցի. առ ի գրօսանս եղբարց մերոյ հայոց ճշմարտասիրաց. Արդ որք հանդիպիք սմա. յիշեալիք ի մաքրափայլ աղօթս ձեր, զի լոյս ւածող սորին Տէր Յակոբ Վարդապետն ի կարգէն Յիսուսեանց: եւ ընդ նմին ստամպօցի Տէր Յարութիմ եպիսկոպոս պատճառ տպագրութեան սորին. եւ տպագրութեան հոգաբարձու գառաքելագործ Տէր Խաչատուրն, որ եւ դուք յիշեալ յիշիք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. Ամէն»: Մեր քննությունը ցույց տվեց, որ առանց կասկածի, այս գրքի մասին է նաև Տէր Յովհաննէանցի կողմից (հտ. Բ, էջ 46, 48) Վիլլոտին վերագրված աշխատությունը, որ հիշատակված է նաև «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» հատորում (տե՛ս էջ 766, թիւ 1030, «Գժտութիւն եղելոյ ընդ մէջ Ստեփաննոսի առաջնորդին Նոր Զուղայու»):

153 Նկարագրությունը տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, նշվ. աշխ., էջ 209-210: Գիրքը հիշատակարան չունի:

154 Նկարագրությունը տե՛ս Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, նշվ. աշխ., էջ 209: Գիրքը հիշատակարան չունի:

թիւրքոզին ուղղված առաջաբանում Վիլլոտը գրում է. «Նրբաբար գրեցին արդեօք բազումք յաղագս յաւիտենականութեան զմեծամեծ հատորս, բայց ի լեզուս եւ ի բարբառս որք հայոց են անծանօթք: Թող թէ ոչ կարեն ամենեքեան գնել զհաստ եւ զմեծագին գիրսն: Նա եւ սակաւ գտանէին զպարապ ընթեռնոյ զնոսա. Վասն այնորիկ կարճառօտեցի. եւ հայ լեզուաւ գրեցի զայս ցածագին եւ հեշտալուր ոճիւ տետրիկս, որպեսզի կարիցեն ամենեքեան առնուլ. եւ ընթեռնուլ. եւ վայելել զպտուղս ի նմանէ»<sup>155</sup>:

1715-ին Ֆրանսիա վերադառնալով՝ նա բազմաթիվ բարձրագույն դպրոցներ է գլխավորել: Մահացել է Ս. Նիկոլայում (Նանսիի մոտ) 1743 թ. հունվ. 14-ին 87 տարեկան հասակում: Հակոբ Վիլլոտի Ուղեգրությունը (*Voyage d'un missionnaire de la compagnie de Jésus*) համակարգված եւ ձեւավորված է իր եղբայրակիցներից մեկի՝ Լ. Ֆրիզոնի կողմից:<sup>156</sup> Գուցե դա է պատճառը, որ ուղեգրություն-հուշագրությունը ներկայացված է երրորդ դեմքով:

Թարգմանությունը կատարվել է հետեւյալ հրատարակությունից. *Villette Jacques, Voyages d'un missionnaire de la Compagnie de Jésus, en Turquie, en Perse, en Arménie, en Arabie et en Barbarie. Paris, 1730.*

Ժակ Վիլլոտի «Ուղեգրություններից»

/132/ Սպառնալու հիսուսյան Հայրերի միաբանության  
առաքելության մասին

Սպահան գալով 1650-ին՝ (Հիսուսյան) Միաբանության Հայր Ռիզորդին երջանկությունն ունեցավ արժանանալ արքա Շահ Աբասի բարձր հյուրընկալությանը: ... Նա օգտվեց արքայի մոտ ելուժուտ ունենալու հնարավորությունից՝ Նորին Գերազանցությունից թույլտվություն ստանալու Սպահանում եւ Շիրազում իր առաքելությունները հաստատելու համար: Արքան 1653 թ. հոկտեմբերի 8-

155 Նույն տեղում, էջ 210:

156 Տե՛ս Michaud L. G., op.cit, t. 49, 1827, pp. 109-111.



ի ռազամով<sup>157</sup> կամ հրամանագրով ամենաշնորհալի ձեռով եւ ամենալայն իրավունքներով թույլտվութիւն շնորհեց նրան: ...

/133/ Այս վայրերի դատավորներին, սպաներին, կառավարիչներին եւ մյուս բնակիչներին հրամայվում էր չհանդգնել խանդարել ու նեղել վերոհիշյալ անձնավորութեանը, ինչպես նաեւ՝ նրա միաբանութեան անդամներին եւ ազատ թողնել նրանց՝ Սպահանի եւ Շիրազի հայ բնակչութեան մեջ իրենց հոգեւոր առաքելութիւնն իրագործելու, իրենց բնակատեղին հիմնելու, իրենց կրօնի (հավատքի) օրենքներով եւ կարգով (ստատուսով) գործելու ու պատարագելու համար: Նրանք պետք է իմանան, որ այսպես է պատշաճ եւ սա՛ է նրանց պարտականութիւնը, որը 1653 թ. Ջիկարդեզ ամսին տրված է Խորասան գավառին:

Բացի այս ռազամից, (հիսուսյան) Հայրը կարողացավ ստանալ նաեւ Ֆրանսիայի եւ Պարսկաստանի միջեւ առեւտրի հաստատման մասին մի քանի շահեկան նամակներ: Քիչ ժամանակ անց նա Եւրոպա վերադարձավ՝ նոր առաքելութեան հիմնադրման կապակցութեամբ վերադասներից իր հետ աշխատելու համար ավետարանիչ սպասավորներ խնդրելու նպատակով:

Սակայն այս մեծ առաքելութիւնը վերապահված էր նույն միաբանութեան անդամ Հայր Էմե Շեզոյին (P. Aimé Chezaud)<sup>158</sup>, ով այսօր Սպահանի քրիստոնյաների եւ նույնիսկ մահմեդականների կողմից /134/ ճանաչված է Հ. Աբիբ անունով, որն արաբերեն նշա-

նակում է Հայր Սիրելի (Père Aimé): Մի քանի տարի Սիրիայի միաբաներում աշխատելուց հետո վերջինս Հ. Ռիգորդիի<sup>159</sup> մեկնումից քիչ անց եկավ Սպահան եւ շատ շուտով հայերենից ու արաբերենից զատ, հմտացավ նաեւ պարսկերենի մեջ:

Նախախնամութիւնը, որը ցանկանում էր օգտվել նրա ծառայութիւններից փառասիրական նպատակներով, Սպահանում ազնվականական մի հավաքույթի ժամանակ առիթ ստեղծեց հոգեւոր հոր բանիմացութիւնն ընդգծելու համար: Արքան արդեն երկար ժամանակ ճնշում էր գործադրում հայազգի շատ հայտնի մի անձնավորութեան վրա, որպեսզի վերջինս մահմեդականութիւն ընդունի: Հայր, լինելով հերձվածող, միշտ դիմադրել էր, սակայն այլեւս չիմանալով՝ ինչպես հակադրել արքայի ճնշումներին, դիմեց մի հնարքի, որը նրան ամբողջութեամբ հաջողվեց՝ անեզր պատիվ բերելով Հ. Շեզոյին եւ ճշմարիտ հավատքին: «Ձերդ Մեծութիւն, - ասաց նա արքային, - ես կհամաձայնեմ մահմեդականութիւն ընդունել, ինչպես Ձերդ Բարձրութիւնն է ցանկանում, եթե ձեր հոգեւորականները կարողանան հարցաքննել Հ. Աբիբին եւ չբավարարվեն նրա արած բոլոր նկատառումներով: Պայմանն ընդունվեց, եւ բանավեճը կայացավ վարչապետի մոտ: Հայր ներկա էր: Հոգեւոր հայրն այնպիսի հստակութեամբ եւ հաստատականութեամբ պատասխանեց հարցերին (135), որ մյուս հոգեւորականները չկարողա-

157 Ռադամ - պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. պրակ երրորդ (1652-1731), կազմեց Կոստիկյան Ք. Պ., Երեւան, 2005, էջ 199):

158 P. Aimé Chézaud - Էմե Շեզոյ (1604-1664)՝ ծնունդով Լիոնից, Սպահանի Հիսուսյան միաբանության իսկական հիմնադիրն է (1653 թ.): Նա շատ հետաքրքիր անձնավորություն էր՝ լեզուների գլխատմամբ իր ունեցած հետաքրքրությամբ: 1639 թվականից նա ապրել է Հալեպում եւ տիրապետում էր արաբերենին: Իրանում նա սովորել է պարսկերեն՝ կաթոլիկ հավատքի մասին ջատագովական տեքստեր կազմելու համար: ... Հ. Շեզոյ, Հ. Ջերոնիմո Քսավիեից հետո հիսուսյաններից միակն է, ով գրել է պարսկերեն լեզվով: Տե՛ս Fr. Richard Fr., *Le père Aimé Chézaud controversiste et ses manuscrits persans*, - Námeh-ye Bahārestān, vol. VI-VII, No.1-2, 2005-2006, Ser. No. 11-12, p. 7.

159 P. Rigordi - Հ. Ռիգորդի (1609-1679) ծնունդով Պրովանսից էր: 1646-1647 թթ. մեծ ջանքեր է գործադրել Պարսկաստանում միաբանություն հիմնելու համար, սակայն՝ ապարդյուն: 1653 թ. վերադարձել է Սպահան իր մեծավորի և Լեհաստանի թագուհի Մարիա Լուիզա Գոնզագոյի հանձնարարական անակնբերով: Նա Սպահան է եկել Էմե Շեզոյի ուղեկցությամբ: Հանդիպել է Օսմ Արաս 2-րդին՝ Ֆրանսիայի արքայի կողմից թանկարժեք նվերներ հանձնելով: Նրա ջանքերը պսակվել են հաջողությամբ, եւ 1653 թ. հոկտեմբերին հիսուսյաններն իրավունք են ստացել հաստատվելու Ջուլֆայում, Թավրիզում ու Շիրազում: Վերադարձել է Եւրոպա՝ Օսմ Արաս 2-րդի պատասխան անակնբերով տարբեր միապետներին՝ Հ. Շեզոյին մեծակ թողնելով Սպահանում: Տե՛ս Fr. Richard, նշվ. աշխ., էջ 8: *Dictionnaire de la Provence et du Comté-Venassin*, t. IV, Marseille, 1787, p 158-159.



ցան սրբազրել նրան, եւ վեճին մասնակցող վարչապետի ու արքունի մեծերի հավանությամբ փակեց նրանց բերանը:

Բանավեճի հաջողության մասին զեկուցեցին արքային, որը հարգեց հային տված իր խոստումը եւ նրան երեք այլեւս չանհաստացրեց իր հավատքի առիթով: Այս եւ հաջորդ բանավեճերը հոգեւոր հոր հեղինակութունը կտրուկ բարձրացրին ինչպես պարսից արքունիքում, այնպես էլ հայ բնակչության մոտ: Ջուղայի արքեպիսկոպոսն ազգի մեծավորների ուղեկցությամբ անձամբ եկավ /136/ շնորհավորելու Հայր Աբիբին եւ նրան շնորհակալութուն հայտնեց այն մեծ պատվի համար, որ նա արել էր հերձվածողներին: Արքան, լսելով վարչապետի խոսքերն այն մասին, որ հիսուսյան Հայրը դիտելիքի ծով է, ցանկացավ լսել նրան, սակայն նրա հոգեւորականները կարողացան ի դերեւ հանել այդ ցանկությունը՝ վախենալով, որ Արքան կտատանվի եւրոպացի հոգեւորականի ճշմարտացիության ուժի եւ հաստատակամության առջեւ:

Ալեքսանդր դը Ռոդի Կոշիճիճից գալը Պարսկաստան եւ Արա հրամանը՝ գլխավորել այստեղի միսիան (1659-ի վերջ)

/137/ Խոսեցինք այս միսիայի սկզբնավորման մասին, իսկ նրա առաջխաղացումները դիտարկելու համար պետք է իմանալ, որ Պարսից արքա Շահ Աբաս I-ը, որը Մեծ էր կոչվում իր լավագույն հատկանիշների համար, Հին Ջուլֆայի, Երեւանի եւ Թավրիզի հայկական համայնքները տեղահանեց ու վաղթեցնելով՝ բնակեցրեց Շիրվանի, Գիլանի գավառներում եւ Սպահանում: Այդ ժամանակից ի վեր հայերը ցիր ու ցան՝ մահմեդականների եւ միսիոներների հետ ապրում են այս մայրաքաղաքում: Միսիոներներն այստեղ էին եկել հիմնականում հայ ազգին հավատափոխ անելու նպատակով եւ իրենց բնակութունն էին հաստատել Սպահանում՝ ինչպես հայերը, ինչպես պորտուգալացի ավգուստինյան Հայրերը, բոկոտն կարմեւիտները եւ Ֆրանսիացի վեղարավորները, որոնք հիմնել էին իրենց

տները ու կառուցել իրենց եկեղեցիները: Հ. Ռոդը<sup>160</sup> եւս նրանց օրինակով բնակութուն հաստատեց քաղաքում:

Մի քանի տարի անց, Շահ Աբաս II-ը, ցանկանալով բաժանել քրիստոնյաներին մահմեդականներից՝ Սպահանից Ջենդերուդ գետով սահմանազատված տարածքում հայերին մի գեղեցիկ ու լայնածավալ, առվակներով ողողված տարածք հատկացրեց, /138/ նրանց լիակատար արտոնութուն տվեց այնտեղ հաստատվելու, տներ ու եկեղեցիներ կառուցելու, ազատորեն իրենց կրոնը դավանելու եւ առեւտրով զբաղվելու նպատակով: Նրանք կառուցեցին այս հարուստ ու հրաշալի արվարձանը, որը մի մեծ քաղաքի է նմանվում. ոչ այնքան տարածված, ինչպես Սպահանը, սակայն նրանից ավելի գեղեցիկ: Այս արվարձանը նրանք բաժանեցին երեք գլխավոր թաղերի, որոնք կոչեցին Ջուլֆայի թաղ, Թավրիզի թաղ եւ Երեւանի թաղ՝ այն քաղաքների անուններով, որտեղից մեծն Շահ Աբասը դաղթեցրել էր հայկական համայնքները՝ չհաշված Ֆրանկների թաղը, որը համարյա ամբողջությամբ բնակեցված էր արքայի ծառայության մեջ գտնվող ֆրանսիացի բանվորներով, ինչպես նաեւ՝ Գյավուրների կամ նախկին պարսիկների թաղը.

160 Ալեքսանդր դը Ռոդը (1591-1660) ֆրանսիացի ճիսուսյան միսիոներ: Երիտասարդ տարիքում մտել է Հիսուսյան միաբանություն՝ հեռավոր Ասիայում իր միսիան իրագործելու նպատակով: 1619-1645 թթ. Դը Ռոդն իր հոգեւոր գործունեությունն է ծավալել Մակաոյում եւ Կոշիճիճում, ուր իր առաջնային պարտականությունները կատարելու գուգահեռ սովորել է նաև տեղական լեզուները, կազմել բառարաններ: Վերադարձի ճանապարհին (1648 թ.) որոշել է այցելել նաև Պարսկաստան: Սպահանի ճանապարհին հանդիպել է ճանապարհորդ եւ վաճառական (հետագայում՝ Արևելահնդկական Ֆրանսիական Հնկերության ներկայացուցիչ) Լա Բուլե լը Գուզիմ: Նոր Ջուղայի հայ գաղթօջախի եւ տեղի միսիոներական միաբանությունների մասին Դը Ռոդի հուշագրությունները տե՛ս Alexandre de Rhodes, Divers voyages et missions du père Alexandre de Rhodes de la Compagnie de Jésus en la Chine et autres royaumes de l'Orient, avec son retour en Europe par la Perse et l'Arménie, Cramoisy, Paris, 1653, էջ 55-61: Նշենք, որ նրա՝ Հոմմի և Ֆրանսիայի հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների հետ տարած աշխատանքների շնորհիվ է, որ 1662-1664 թթ. ընթացքում ստեղծվել է Փարիզի արտաքին միսիաների կազմակերպությունը: Փոքր չէր նրա դերը նաև Արևելահնդկական Ֆրանսիական Հնկերության ստեղծման գործում (տե՛ս Michaud, Op. cit., Paris, 1824, t. 37, pp. 481-483):



որոնք կրակապաշտ էին, քանի դեռ նրանց չէին ստիպել մահմեդականություն ընդունել: Այս հինգ թաղերը դեռ պահում էին իրենց անունները, երբ միսիոները ժամանեց, սակայն քանի որ Ջուլֆան ամենամեծն էր իր տարածքով, ամենազեղեցիկն իր կառույցներով եւ ամենաստվարն իր բնակչությամբ, ողջ արվարձանին Ջուլֆանուն են տալիս: Այն կոչում են նաեւ Նոր Ջուլֆա՝ չչփոթելու համար Արաքսի վրա գտնվող հին Ջուլֆայից, որը ժամանակին մեծ եւ խիտ բնակեցված քաղաք է եղել, սակայն Մեծ կոչված Շահ Աբասը քաղաքական նկատառումներով ավերել է այն, ինչպես Նախիջևեանը եւ Հայաստանի այլ բնակավայրերը, որոնք /139/ նույն հորիզոնականի վրա էին գտնվում, որպեսզի թուրքական զորաբանակներն ապրուստ չունենան, եւ ազատվել է մի մեծ թշնամուց, որն այս կողմից ամեն տարի վերադառնում էր Պարսկաստան: Այսպիսով՝ կասեցրել է նրա ախորժակը՝ անապատի վերածելով էրզրումից Թավրիզ ընկած երկրամասը: Սա շատ լավ է նկատել Շրվալիե Շարգենն իր «Պարսկաստանի ուղեգրության» մեջ:

Մայրաքաղաքից Նոր Ջուլֆա հայերի վերաբնակեցմանը (transmigration) միսիոներները սկզբում չհետեւեցին: Սակայն Հ. Ալեքսանդր դը Ռոզը, որը 1660-ին վախճանվեց, եւ միսիայի գլխավորի պարտականություններն իր վրա վերցրեց Հ. Աբիբը (Հ. Շեզոն, ում մասին արդեն խոսեցի), նկատում էր, որ հայերի հեռանալով հոգեւոր գործերը տկարանում են, եւ համարյա ոչինչ չի մնում անելու Սպահանում: Նա որոշում ընդունեց դուրս գալ այնտեղից, վաճառեց միաբանության բնակարանը եւ բոլոր միսիոներներից առաջինը հայերի հետ միասին բնակություն հաստատեց Ջուլֆայում: Հայազգի հերձվածողներն ամեն հնարքի դիմեցին Հ. Շեզոյի նպատակներն ի դերեւ հանելու համար: Նրանք դրամի գորություններ կարողացան հասնել այն բանին, որ հիսուսյաններին թույլ չտրվեց տուն գնել Ջուլֆայի իրենց հատկացված թաղամասում: /140/ Ի վերջո միաբանությունը հաստատվեց հինգ թաղամասերի հատման սահմանադրում, մի վայրում, որտեղից կկարողանար օգտակար լինել բոլոր համայնքներին:

(Մանրամասն նկարագրվում է հիսուսյանների գրադեցրած տարածքը եւ կառուցած եկեղեցին):

/141/ Ջուլֆայում հիսուսյանների հաստատվելը մյուս միաբանությունների միսիոներների մոտ եւս ծնեց նրանց հետեւելու միտքը: Բոկոտն կարմելիտները, առանց իրենց Սպահանի տունը լքելու, փոխադրվեցին Ջուլֆա: Դոմինիկյան Հայրերը հետագայում եւս հաստատվեցին այստեղ: Ուստի միսիոներների երեք տուն հաստատվեց Սպահանում եւ երեքը՝ Ջուլֆայում: Ավգուստինյանները, կարմելիտներն ու վեղարավորները Սպահանում էին, իսկ կարմելիտները, դոմինիկյաններն ու հիսուսյանները՝ Ջուլֆայում: Եվ բոլորն էլ իրենց գործունեությունը նույնքան ազատորեն էին ծավալում մահմեդական աշխարհի այս կենտրոնում, որքան ամենակաթոլիկ երկրներում:

Հայր Շեզոյի եռանդն ու հեղինակությունը, ինչպես նաեւ Ջուլֆայում հիսուսյանների բնակության լուրը դեպի նրանց օթեւանն ու եկեղեցին ուղղեցին կաթոլիկ եւ հերետիկոս հայերի մի ողջ բազմություն: Սա երեւում է Հ. Շեզոյի 1662 թ. Հալեպ գրած մի նամակում, ուր նա նշում է. «Մեր եկեղեցին շատ փոքր է՝ տեղավորելու համար հայերի այն ողջ բազմությունը, որ Ջուլֆայի բոլոր թաղերից վազում է մեզ մոտ՝ ուսանելու եւ մեր Սուրբ Պատարագին մասնակցելու համար»: Հունձքն իրականում այնքան առատ էր, որ անհնար էր մենակ քաղել, որքան էլ առույգ եւ անդավաճան լիներ նրա /142/ եռանդը: Նախախնամությունը, ժամանակին հոգալով իր ծառայի կարիքները, 1664-ին նրա իսկ միաբանությունից նրան որպես օգնական ուղարկեց Հ. Լա Մագին<sup>161</sup> եւ Հ. Մերսիեին<sup>162</sup>: Իսկ

161 Հ. Ժան Բատիստ դը լա Մազը Շամախի Հիսուսյան առաքելության գլխավորն է եղել, ապա փոխարինել է Հայր Մերսիեին Սպահանում: Նրա մասին տե՛ս «Journal du Voyage du Père de la Maze de Chamaké à Hispaham (1698-99)» in Nouveaux Mémoires III, 393-482. (Lettres Edifiantes et Curieuses, écrites des missions étrangères IV, Paris 1780, p. 53-112).

162 Հ. Կլոդ Իգնատիոս Մերսիեին փոխարինել է Հայր Շեզոյին Սպահանի Հիսուսյան առաքելությունում 1664 թ.: Նա հայ երեսմաների համար դարոց էր հիմնել: Վախճանվել է 1674 թ.:



նրա վախճանից հետո միսիայի գլխավոր նշանակեց Հ. Մերսիեին: Վերջինիս օրոք Ջուլֆայի միսիայի կառավարման մեջ մեծ փոփոխություններ չիրականացվեցին:

...

/147/ Արքան Ջուլֆայի գեղեցիկ թաղերի եկեղեցիների վրա մշտապես տարեկան 12.000 լիվր տարեկան հարկ դրեց: Սա շատ մեծ ցավ պատճառեց հայերին, բայց այս խեղճ քրիստոնյաների մոտ սոսկալի տագնապ առաջացրեց հատկապես այն տարածված աղմուկը, որի համաձայն արքան որոշել էր հայ օրիորդներին ամուսնացնել թուրք (մահմեդական) երիտասարդների հետ: Այս ճիշտ կամ սուտ լուրն իրարանցում առաջացրեց Ջուլֆայում: Հուսահատ մայրերն իրենց սպասվող դժբախտությունը կանխելու համար շտապում էին ամենավաղ տարիքում ամուսնացնել իրենց աղջիկներին: Գլխավորույս վազվզելով քաղաքի թաղերում՝ նրանք ստիպում էին երիտասարդներին ամուսնանալ իրենց աղջիկների հետ եւ գիշերներն անց էին կացնում հարսանիքներ անելով:

Այսօր էլ դեռ գոյություն ունի պարսից արքաների բարբարոսական ավանդույթը, ըստ որի հայերի Ս. Մննդյան տոնին, որը Հայոց եկեղեցին տոնում է հունվարի 6-ին, բոլոր գեղեցիկ հայ աղջիկները ներկայացվում են արքային: Հաճախ արքան նրանց դիտելով՝ բոլորին վերադարձնում էր իրենց մայրերին՝ շատ վերավորական ուղեկցությամբ: Ուրիշ անգամ նա /148/ ընտրում էր մի քանիսին, որոնց դաստիարակում էր իր հարեմում՝ հարճերի միջավայրում, ուր նրանք շուտով մոռանում էին իրենց քրիստոնեական մկրտության մասին եւ մահմեդական էին դառնում: Պատահում էր, որ մի քանի տարի պահելուց հետո նրանց ամուսնացնում էր թուրքերի (մահմեդականների - է. թ.) հետ, որտեղից էլ սկսվում էր հայ ընտանիքների ավերումը, քանի որ, ամենաբարբարոսական օրենքի համաձայն, այն տղան կամ աղջիկը, որը մահմեդականություն էր ընդունել, հոր եւ մոր մահից հետո ամբողջությամբ ժառանգում էր

ընտանիքի ունեցվածքը<sup>163</sup>: Մինչ ես հետեւում էի Պարսից արքաների այս տարօրինակ եւ անտրամաբանական սովորություններին, 1690 թ. ապրիլի 13-ին մի դեպք պատահեց:

Ամսի 12-ին Սպահանում եւ Ջուլֆայում թմբուկների զարկերի տակ հայտարարվեց, որ հաջորդ օրը Բուրուֆ տեղի կունենա, այսինքն՝ Արքան իր սուլթանուհիների ուղեկցությամբ դուրս կգա Սպահանի իր պալատից եւ մի քանի օրով գյուղ կմեկնի : ... Արքան չէր ցանկանա, որ երթը տեսնեն եւ առավել եւս չէր ցանկանա, որ իր կանայք հանդիպեն որեւէ /149/ տղամարդու կամ պատանու: Սա է պատճառը, որ Բուրուֆի օրերին մահվան սպառնալիքի տակ չի թույլատրվում որեւէ տղամարդու կամ պատանու հայտնվել նրանց ճանապարհին, փողոցներում, դարպասների առջեւ կամ իրենց առանձնատների պատշգամբներում, որտեղից նրանք կարող են նկատվել: Նրանց նույնիսկ ստիպում են դուրս գալ իրենց թաղերից եւ կես լյո հեռավորություն վրա գտնվել այն վայրերից, որտեղից պետք է անցնի արքայական շքախումբը: /150/ ... Հայտնաբերվելու դեպքում տվյալ տղամարդը կամ պիտի սպանվի, կամ դառնա մահմեդական եւ կամ բավականին զգալի գումարով փակի իրեն հայտնաբերողի բերանը: ...

/152/ Այս կոշտ օրենքների եւ օտարոտի ավանդույթների պատճառած դժբախտությունները շատ տխուր տպավորություն էին թողնում ոչ միայն կաթոլիկ, այլեւ հերձվածող հայազգի բնակչության վրա: Նրանք այս մասին բարձրաձայնում էին, ինչպես տեսնում ենք Հ. Մերսիեի 1672 թ. գրած մի նամակում, որ իրենց բոլոր դժբախտությունների պատճառը հերձվածող լինելն է, եւ Աստծո զայրույթը մեղմացնելու համար, որն իր Աջը ծանրացրել էր իրենց վրա, մտածում էին միանալ հռոմեական եկեղեցուն: Նրանք իսկապես Ֆրանսիայի արքային շատ զգացմունքային մի նամակ էին գրել, որի տակ ստորագրել էին Ջուլֆայի հայազգի Եպիսկոպոսներն ու համայնքի գլխավորները՝ նրան խնդրելով իրենց պատվել

163 Իմամ Ջաֆարի օրենքի մասին տե՛ս ծանոթագրություն 56:



իր հզոր հովանավորությամբ: Նամակին կցել էին իրենց պաշտամունքի կարճ նկարագրությունը, ուր շարադրում էին, որ հավատում են Հիսուս Քրիստոսի երկաթնույթ էությունը, Նոր կտակարանի յոթ գլխավոր պատվիրաններին, Հիսուս Քրիստոսի մարմնի իրական լինելուն Սուրբ Հաղորդության մեջ: Նամակում նրանք պաշտոնապես հանդիմանում էին կալվինյաններին, որոնք կա՛մ տգիտություն է, կա՛մ էլ ճշացող կեղծավորություն է հայտարարում էին, որ իրենց հավատամքը գլխավոր կետում համանման է հայոց եկեղեցուն:

Այդ ընթացքում Ջուլֆայի միսիոներները, որոնք առավելապես վշտանում էին, քան /153/ հանգստանում, բարեբախտաբար օգտվում էին հայ համայնքի բարի տրամադրվածությունից: Հ. Լա Մազը, որ հաջորդել էր Հ. Մերսիեին եւ Հ. Վերը, որ հաջորդել էր Հ. Լա Մազին, այստեղ աշխատում էին աներեւակայելի եռանդով: Միսիայի երկու առաջնորդներից վերջինը նոր ջերմեռանդությամբ ընդունեց առաքելությունը եւ նրան նույնիսկ նոր փայլ հաղորդեց, որը պատիվ էր բերում իսկական հավատքին: Սա մեծ առիթ էր:

Երբ Իննոկենտիոս XI Պապի վախճանի լուրը հասավ Սպահան, Հիսուսյան միաբանությունը հայրերը, վկայելու համար այն հատուկ նվիրվածությունը, որ տաժում էին Սուրբ Աթոռի նկատմամբ, ինչպես նաեւ հերձվածող հայերին հարգանքի եւ հնազանդության նույն զգացումները ներարկելու նպատակով, որ պետք է ունենային բոլոր ճշմարիտ հավատացյալները Հիսուս Քրիստոսի փոխանորդի նկատմամբ, 1690 թ. մարտի 17-ին Ջուլֆայի իրենց եկեղեցում հնարավոր չքեղությունը ս. պատարագ մատուցեցին հանգուցյալ Քահանայապետի հիշատակին: Ներկա էր Լեհաստանի դեսպանը՝ երկու հայ կաթոլիկ եպիսկոպոսների հետ, եւ այնպիսի բազմություն էր հավաքվել, որ եկեղեցին չէր կարող բոլորին տեղավորել: Այս արարողության հուզիչ ներկայացումը ոգեւորեց Պարոն Շեհրիմանին, ով /154/ արդեն հրապարակայնորեն կաթոլիկություն էր ընդունել եւ որոշեց հիսուսյանների համար կառուցել շատ ավելի գեղեցիկ եկեղեցի, քան նրանք ունեին, այնպիսին, որը կկարողանար ընդգրկել

այն մեծ բազմությունը, որ արարողությունների օրերին գեպի իրեն էր ձգում Հայրերի մատուցած ս. պատարագի փայլն ու ջերմեռանդությունը: Ահա, թե ինչ է գրում մեր միսիոներն այն պարոնների մասին, որոնց հատկապես ճանաչում էր:

Պարոն Շեհրիմանյանները, անուն, որի նկատմամբ ամենավառ երախտիքը մեզ միշտ անչափ հարգալից պահեց նրանց նկատմամբ, հայազգիների մեջ այսօր միակ տոհմիկ ազնվական այրերն են՝ փառավոր մի կոչում, որ Պարսից արքաները շնորհել են նրանց՝ իրենց սեփական եկեղեցին ունենալու արտոնություն հետ միասին: Այստեղ ս. պատարագը մատուցվում է կաթոլիկ ծեսով, բայց՝ հայերենով, երկու եպիսկոպոսների եւ երեք քահանաների սպասավորությամբ, որոնք հարել են հոռմեական եկեղեցուն՝ հովանավորվելով այս պարոնների առատաձեռն ազատամտությամբ: Պարսից արքաներն այս բոլոր շնորհները նրանց ընձեռել են պետությունը մատուցած մեծ ծառայությունների համար: Նրանք հինգ եղբայրներ են՝ զբաղված միեւնույն առեւտրով, բազմամղամ եւ ծաղկող ընտանիքներով, Եւրոպայի եւ Ասիայի բոլոր հիմնական քաղաքներում իրենց գործակալներով ու հաշվետարներով:

/155/ Եվ նրանց գործերին Աստված այնքան օրհնություն է շնորհել, որ նրանք, առանց չափազանցություն, իրենց ազգի ամենահարուստ եւ ամենահզոր ընտանիքներն են: Նրանք առավելապես աչքի էին ընկնում իրենց բարեպաշտությամբ, հավատի տարածման եռանդով, քան իրենց ազնվականությունն ու ունեցվածքի փարթամությունը կթույլատրեր: Նրանք միսիոներների եւ հատկապես՝ Ջուլֆայի հիսուսյանների հովանավորները լինելու արժանիքն ունեին, եւ այստեղ նրանց համար մի գեղեցիկ եկեղեցի կառուցել տվեցին, որի մասին խոսեցի: Սա հավատի հանդեպ նրանց սիրո հավերժական հուշարձանը կհանդիսանա եւ միաբանության հետ նրանց սերտ կապվածության առհավատչյան է:

Այս բարեպաշտ եւ հռչակավոր ազնվականների ծառայությունները մեր օրերում փոխադարձվեցին նրանով, որ Կղեմես XI-ը դաստիարակեց նրանց երեսաններից մեկին՝ գերապայծառ Բարսեղ



Շեհրիմանին<sup>164</sup>, եւ արժանացրեց Հոռմեական եկեղեցու առաջնորդի բարձրագույն տիտղոսին՝ նրան վստահելով Եկեղեցապետութեան ամենագլխավոր քաղաքների կառավարումը: ... Ուստի կարելի է հուսալ, որ Եկեղեցապետերը պարզեւատրում են գիտնականներին եւ շնորհաշատ հոգեւորականներին անձնական արժանիքների համար: ...

/164/ Քարոզչութիւնն անելու նպատակով մեր միսիոները դուրս է գալիս Ջուլֆայից ... եւ իր գործունեութիւնը սկսում է մի հայկական գյուղից, որի բնակիչները միայն անունով էին քրիստոնյա: Արարողութեան նորութիւնը, հավատքի կանոնները, մեծ շքեղութեամբ մատուցվող ս. պատարագը, /165/ որքան կթուլատրեին այդ աղքատ գյուղի պայմանները, ... շուտով դեպի իրենց հրավիրեցին նաեւ հարեւան գյուղերի բնակիչներին, որոնք հիացմունքով հետեւում էին միսիոներների խոսքին ... Սակայն նրանց հերետիկոս առաջնորդը եւ առավել հերետիկոս քալանթարը, միանալով իրենց համախոհ թուրքերին (մահմեդականներին), կասեցրին հավատքի մուտքը բնակչութեան մեջ: Սպառնալիքներ, կաշառք, բռնութիւն, ամեն ինչ գործի դրվեց քարոզիչների եռանդը կասեցնելու համար, եւ նրանք ստիպված եղան զիջել ուժին՝ սպասելով, որ թշնամիների զայրույթը նվազի եւ հալածանքը դադարի:

/166-167/ Երկար եւ տանջալից դեգերումներից հետո Պ. դը Սեն Մարին (արքայական սպան) հայտնվեց Ջուլֆայում՝ Հիսուսյանների մոտ: Նրան ամեն ինչով ապահովելուց եւ Հալեպի վրայով դեպի Մարսել ճամփորդութիւնը կազմակերպելուց հետո նրանք անշուշտ իրենց միսիայի համար պետք եղած հատուցումը ստացան ֆրանսիական կառավարութիւնից:

164 Խոսքը Նոր Զուղայի Թեհրիմանյան տոհմից Մեծ Սահրատի որդի Գասպարի որդու՝ Տեր Բարսեղի (Basilio Scheriman Veneziano) մասին է (մահացել է 1766 թ. Վենետիկում), որը «Հոովմայ քահանայապետական տէրութեան մէջ 40 տարի Ումբրիոյ եւ Պերուցիոյ այլեւայլ քաղաքաց քաղաքապետ եղեր է» (տե՛ս Ալիշան Ղ., Հայ-վենետ, Վենետիկ, 1896, էջ 511):

Ոչինչ չափսոսացին Հիսուսյանները դեկտեմբերի 3-ին Սրբոց Առաքելոց տոնը Ջուլֆայում հնարավորինս շքեղ տոնելու համար եւ միսիոներների առաջնորդ Ս. Ֆրանսուա Քասպիեն<sup>165</sup> /168/ մեծ ցնծութեամբ եւ բավականին մեծ բազմութեան ներկայութեամբ անցկացրեց այն, որպէսզի օտար միսիոներին մոռացնել տա, որ ինքը եւրոպայում չէ, այլ մահմեդական աշխարհի կենտրոնում: Բարեկունի առաջնորդ գերապայծառ Պիդու դը Սենտ-Օլոնը<sup>166</sup> հայերենով արտասանեց Սրբի ներբողական խոսքը: Երկու եպիսկոպոսներ եւ Սպահանի ու Ջուլֆայի բոլոր միսիոներները մասնակցեցին արարողութեանը:

Պարոն Շեհրիմանյանները, որոնց մեծ գովքն արդեն իսկ միսիոներն արել է, այդ ժամանակ նրա համար առիթ ստեղծեցին իր երախտիքը որոշ ձեւով հայտնելու. նրա վրա դրեցին իրենց եւ Ջուլֆայի մյուս հայտնի ընտանիքների երեխաների դաստիարակութեան պարտականութիւնը: Հիսուսյաններն ու ինքը շատ պարտական էին նրանց այդ ծառայութիւնից խուսափելու համար: Սուրբ Հայրը բաց սրտով ընդունեց այդ առաջարկը եւ նախաձեռնութիւնը ջերմութեամբ վերցրեց իր ձեռքը: Դպրոցը հաջողութեամբ սկսել էր իր գործունեութիւնը, երբ հերթական անակնկալ հարվածը մեկ վայրկյանում խափանեց Ջուլֆայի համարյա բոլոր երեխաների քրիստոնեական ուսուցման համար տարվող ծրագրերը:

Ստացանք Հայր Ռոշի մահվան անակնկալ գույթը: Նա Պարսկաստանում եւ Հայաստանում Հիսուսյան միաբանութեան միսիա-

165 Francisus Xavier Champion, Հայր լա Մազի Տեա միասին պաշտոնավարել է Օսմանիի եւ Սպահանի հիսուսյան սուաքելություններում: Բժշկական ուսումն ավարտելով, եւ դառնալով Հիսուսյան միաբանության անդամ, Ֆրանսիայից այս տարածաշրջան է եկել երիտասարդ տարիքում: Իր հիստորիաների շնորհիվ շատ լավ է ընդունվել տեղի բնակչության կողմից: (Mémoire de la province du Shirvan, en forme de lettre adressée au P. Fleuriau. Lettres Edifiantes et Curieuses, concernant l'Asie, l'Afrique et l'Amérique, I, Paris 1838, p. 356-357): **Matthee Rudi**, *Poverty and Perseverance: The Jesuit Mission of Isfahan and Shamakhi in Late Safavid Iran*. Al-Qantara, 36 (2), 2015, p. 483. Տե՛ս նաեւ ծանոթ. 138:

166 Պիդուի մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 115:



ների ընդհանրական առաջնորդն էր, ով շուրջ 169/ իր կյանքը էրզրուժի ժանտախտով հիվանդներին ծառայելով այնպես, որ այս ծաղկող միսիան մնաց առանց հոգեւորականի եւ առանց հիսուսյան միաբանի ... Ջուլֆայի երեք միսիոներներից Հայր Վերը, որն առաջնորդն էր, գնացել էր Հնդկաստան, Ն. Բուշեն<sup>167</sup> չէր կարող լքել Ջուլֆան այն պարտականութիւնների պատճառով, որ վերցրել էինք տեղի հանրահայտ հայերի հանդեպ, եւ որոնք նաեւ ինչոր ձեւով միսիայի հենարանն էին այստեղ: Ընտրութիւնն ուստի ընկավ մեր միսիոներին վրա: ...

Մեր միսիոները Սպահանում 1696 թ. հուլիսի 3-ից մինչեւ 1708 թ. հոկտեմբերի 28-ը:

... Մեր միսիոներին վերադարձին Ջուլֆայի միսիան ծաղկում էր թե՛ ներսից եւ թե՛ դրսից: ... Հավատքն օր օրի ամրանում էր կաթոլիկների շրջանում եւ նույնիսկ /411/ հերետիկոս հայերի մեջ, որոնց հաճախակի հավատափոխութիւնները որոշակիորեն փառաբանում էին Մեր Հովվի հոտը:

Միսիան գլխավորում էր Ն. Ժան Բուշեն՝ Լիոնի գալառից: Սերտելով ու անձանձիր աշխատանքով նա հայոց լեզվի գործածութեան այնպիսի ազատ մակարդակի էր հասել, որ կարծես իր մայրենի լեզուն լինէր: Կարողանում էր այնպես օգտագործել Աստծո կողմից իրեն շնորհված տաղանդը, որ իր բանիմացութիւնը, հեղութիւնը (մեղմութիւնը) եւ վայելուչ վարվելակերպը զբաղել էին ժողովրդի սիրտն ու վստահութիւնը: Նրան նայում էին որպէս Ջուլֆայի հայութեան առաքյալ: ...

/424/ Նա հաճելիորեն զարմացած էր Պարսկաստանի երիտասարդ հայերի մեջ տեսնելով դուրըմբռնող, հեզահամբույր, արթուն ու խորաթափանց միտք ունեցող պատանիներ, ի տարբերութիւն էրզրուժի հայ երեխաների: Սա նրան մտածել տվեց չսահմանափակվել

167 Ն. Ժան Բուշեն ծնվել է 1646 թ. Լիոնում: 1662 թ. Հիսուսյան միաբանության անդամ էր: Ջրաղվել է մանկավարժական գործունէությանը: Մահացել է Սպահանում 1696 թ.:

նրանց միայն հայերեն եւ ֆրանսերեն գրել ու կարդալ, աղոթքներ եւ իրենց կրօնական սկզբունքները սովորեցնելով, ինչը մյուս բոլոր գաղտնիների կրթական հիմունքներն էին կազմում: Առավել մեծերին առաջարկեց որոշ ճշգրիտ գիտելիքներ՝ նրանց միտքը զարգացնելու համար: Թելադրեց տիեզերքի եւ աշխարհագրութեան մասին հակիրճ աշխատանքներ, որոնք հապճեպ պատրաստել էր հայերենով, նրանց համար դյուրութիւններ ստեղծեց աշխարհագրական քարտեզներից օգտվելու համար: Երեխաների համար խաղ էր հարցերին ճիշտ պատասխանելը, ինչպէս օրինակ՝ «ի՞նչ կլիմա ունի Սպահանը, կլիմայական ո՞ր ուղիով եւ այժմ գտնվում է հարավային կիսագունդը, հիմա /425/ ժամը քանի՞սն է Պեկինում, Վենետիկում, Փարիզում»: Նրանց համար կազմում էր նաեւ այլ, առավել դժվար հարցեր, որոնց չէր կարելի պատասխանել առանց աշխարհագրական աստիճանների, գուգահեռականների եւ աշխարհամասերի ճշգրիտ իմացութեան: Այսպիսով՝ նա ոչ միայն լիարժեքորեն բավարարում էր, այլ նույնիսկ հուզում ու զարմացնում էր իր վերադասին: Երեխաներին սովորեցնում էր նաեւ գրական հայերենը, որը նրանց մոտ համարվում էր գիտնականների լեզու, եւ սրա համար նա այնպիսի խրթին կտորներ էր ընտրել, որ ամենագիտուն հայ վարդապետներն անգամ հազիվ էին հասկանում: Եվ որքան սովորեցնում էր, այնքան նրանք ծարավի էին սովորելու:

Աշակերտներից ոմանք ծնողների նախաձեռնութեամբ պատրաստվում էին ստանձնել Հնդկաստանի առեւտուրը եւ ցանկանում էին որոշ չափով պորտուգալերեն իմանալ, քանի որ այդ լեզուն ընդհանուր գործածութիւնն էր վայելում Արեւելյան երկրներում: Մյուսները իտալերեն էին ուզում սովորել: Մեր միսիոները բավականաչափ գիտեր լեզուները՝ նրանց ծանոթացնելու համար, եւ ինքն էլ վարժութիւն էր ձեռք բերում՝ նրանց սովորեցնելով: Ինչ վերաբերում է թվաբանութեանը, որը հայերին պետք էր առեւտրով զբաղվելու համար, որը կարծես նրանց հիմնական մասնագիտութիւնն էր, նա բոլոր աշակերտներին սովորեցնում էր կանոնները: Հանգստյան ժամերին նա երեխաներին զբաղեցնում էր աշխար-



Հագրական եւ քրիստոնեական վարդապետութիւնը վերաբերող խաղերով, որոնց մասին վերը խոսեցի, կամ նրանց առաջարկում էր Հանելուկներ, /426/ պատասխանը զարմանալի դժուրութեամբ էին գտնում: Ծնողները Հաճախ ցանկանում էին մասնակցել այս վարժութիւններին եւ Հաճույքով էին լսում իրենց երեխաների բացատրութիւնները որոշ բաների մասին, որոնք իրենք իսկ չգիտէին: Ամանորյա տոներին Հովվերգութիւններ էին ներկայացնում, եւ այնքան լավ էր Հաջողվում նրանց, որ կարծես պարօրինները ծնված էին ներկայացումների եւ թատրոնի Համար:

Նրա նվիրական երազանքն էր ս. պատարագը նրանց եկեղեցում մատուցել պատշաճութեամբ, ինչպէս նաեւ՝ շքեղ ու Հաճելի մակարդակով, ինչը կգրավեր ժողովողին եւ ջերմեռանդութիւն կներշնչէր: Այս նպատակով նա երեխաներին սովորեցրեց Եւրոպայի ամենականոնավոր մենաստաններում ողջ տարվա ընթացքում կատարվող բոլոր սաղմոսներն ու երգեցողութիւնը: Այս ամենը Հավաքելով մի գրքում՝ ուղարկեց Մարսել՝ տպագրելու, եւ ստանալով Հրատարակված օրինակները՝ արարողութեան օրերին բաժանում էր դրանք երգչախմբի փոքրիկ անդամներին: Նրանք նույնիսկ սովորեցին Հայերենով եռաձայն երգել Հիսուս Քրիստոսի տառապանքները, ինչպէս Եւրոպայում Տաղավար տոներին են կատարում, մի բան, որ երբեք չէր կիրառվում Արեւելքում: Երեխաներն այս ամենը կատարում էին այնպիսի շնորհալի ձեւով ու Հնարքներով, որ մյուս առաքելութիւնների միսիոներներն իրենց տոնական արարողութիւններին որոշ /427/ փայլ Հաղորդելու Համար՝ ցանկանում էին մեր միսիոների երգչախմբի անդամներին Հրավիրել՝ իրենց վանքի երգեցողութիւնը կանոնակարգելու եւ պահպանելու Համար:

Այս մանրամասներից կարելի է եզրակացնել, թե այս ձեւով կազմակերպված պարսկական դպրոցը միսիոներին ողջ օրվա մի մասը չէ, որ զբաղեցնում էր: Վերջինս, որի օրագրին քայլ առ քայլ Հետեւում եմ, չէր դժգոհում ո՛չ ժամանակի պակասից, ո՛չ Հոգնածութիւնից եւ մխիթարվում էր իր սաների մտքի մեջ դաջելով

առավելապես կրոնական սկզբունքները, քան մարդկային գիտելիքների Հիմունքները:

Այս ամենը նրան երկյուղ էր պատճառում ապագայի նկատմամբ, քանի որ սովոր չէր ապրել առավել Հանգիստ ու կազմակերպված կյանքով, ինչպիսին վարում էր Սպահանում: Միսիայի այս մեծ անդորրը նրա Համար ապագա փոթորիկին սպասող խաղաղ ծովի էր նման ...: Փոթորիկը չուշացավ եւ, Հարվածն ուղղելով Հայերի վրա, միսիային առավել նոր փայլ Հաղորդեց: Հայ ազգի նկատմամբ տածած նրա անսահման գթասրտութիւնը սրութեամբ զգացնել տվեց նրանց վհատութեան Հասնող երկյուղի ժամին: Ահա, թե ինչ պատահեց:

1697 թ. օգոստոսին /428/ Զուլֆայում լուր տարածվեց, որ Արքան մի քանի օրվա մեջ պետք է Հավաքեր Հայ աղջիկներին եւ նույնիսկ նորապսակ կանանց, որոնք դեռ երեխա չէին Հասցրել ունենալ: Նորութիւնը սարսափեցրեց ողջ արվարձանը, բոլոր բնակիչները Հուսահատութեան մեջ ընկան, յուրաքանչյուրը մտածեց պահել իր երեխային նման աղետալի ու բռնակալ կողոպուտից, որը Հիմնահատակ ավեր էր նշանակում բոլոր Հայ բնտանիքներում:

Այս ընդհանուր ցավի մեջ Զուլֆայի ամենահարուստ կաթոլիկ բնտանիքներից մի վաճառական տասներեքից տասնչորս տարեկան աղջիկ ուներ, այնքան գեղեցիկ, որ անկասկած արքայի սպաները առաջիններից մեկը նրան կտանէին: Յանկանալով կանխել այս մեծ զժբախտութիւնը՝ նա որոշեց այլակերպել աղջկան՝ դեմքին քերծվածքներ ու վերքեր անելով, որոնք կխամբէին նրա գեղեցկութիւնը: Այսպիսի արարքը, որն իր մեջ ուներ բարբարոսական եւ անմարդկային բնույթ, կասկածներ ծնեց վշտացած Հոր Հոգում: Իր խիղճը Հանգստացնելու Համար նա եկավ մեր միսիոներին մոտ, որին բոլոր Հայերը որպէս իրենց բժիշկն ու Հայր էին ընդունում, նրան նկարագրեց իր վիճակը՝ ավելացնելով, որ նույնիսկ /429/ կսպաներ աղջկան, եթե վստահ լիներ, որ Աստուծոն դեմ չի գործում:

Մեր միսիոներն այդ տարօրինակ մտքից իսկ սկսեց դողալ: Մեծահարուստ Հայի զայրույթն ու երկյուղածութիւնը սաստկուց



Հետո հարցրեց, թե այդ մասին հարցրե՞լ է դատերը, եւ եթե պատմել է, արդե՞րք վերջինս հավանութիւնն է տվել այդ մտքին: «Նա համաձայն է,- ասաց վաճառականը,- նա նույնիսկ հակված է հարկ եղած դեպքում հրաժարվել կյանքից՝ իր պատիվն ու հավատը պահպանելու նպատակով»: «Այն շտապողականութիւնը, որով նա ուզում էր իմ կարծիքն իմանալ,- ասում էր մեր միսիոները,- ինձ կաշկանդեց, եւ ժամանակ խնդրեցի մտածելու համար՝ որպէս միջնորդ ունենալով Ֆրանսիացի բժշկին»:

Բժիշկը հենց որ իմացավ, թե խնդիրն ինչ է, եւ ո՞րն է հավաքի նպատակը, «Հանգստացեք, Պարոն,- ասաց հայ վաճառականին,- Ձեր աղջիկը արքայի կողմից չի վերցվի եւ իր գեղեցկութիւնը չի կորցնի, խոսք եմ տալիս: Իմ արվեստի մի փոքրիկ գաղտնիքով ես նրա դեմքը կզարձնեմ կապարագույն, պալարներով պատված, ինչը նրան ժանտատեսիլ կզարձնի, եւ երբ վտանգը անցնի, այս ամենը մի վայրկյանում կվերացնեմ, եւ Ձեր աղջկան կվերադարձնեմ իր դեմքի ողջ փայլն ու գեղեցկութիւնը»: Վերահատուցութիւնը հաջողութեամբ իրագործվեց /430/ այնպէս, ինչպէս բժիշկը խոստացել էր: Մեր միսիոներն այս օգնութեան համար ի լուր սրտի փառք տվեց Աստուծոյն այս մեծ շնորհի համար, որն ազատեց հորն իր դատերը կորցնելու վտանգից, ինչպէս նաեւ ազատեց դատերն իր կյանքից, պատվից, իր կրօնից ու հավատքից զրկվելու վտանգից:

Անհատներին իրենց սեռական պատկանելութեան սկզբունքով վերցնելու առիթով մի այլ՝ առավել կարեւոր իրադարձութիւն կատարվեց, որին ավելի մանրամասն կանգնադառնամ: Պողոս<sup>168</sup> (Boghues), այսինքն՝ Պոլ անունով հարուստ ու հզոր, նաեւ ջերմեռանդ մի կաթոլիկ հայ վաճառական իր կնոջ համար նույն վտանգն էր ենթադրում, ինչ մեզ ծանոթ հայրն իր դատեր համար: Կինը, որի

անունը Մարի էր, երիտասարդ էր, նորապսակ եւ արդեն հղիութեան նշաններ ուներ: Պողոսը որոշ ժամանակ անց առեւտրական գործերով Հնդկաստան պետք է մեկներ: Լավ մտածելով այն միջոցների մասին, որ հարկ էր նախաձեռնել կնոջը, միաժամանակ նաեւ ողջ ընտանիքը վտանգից փրկելու եւ այնպիսի կարգավիճակի մեջ դնելու համար, որ առանց մահամեղապաններից ու ազգակից հերձվածողներից որեւէ ակնկալութեան, կարողանան իրենց կաթոլիկութիւնը բարձրաձայնել, մի որոշում ընդունեց, որը նրան թանկ արժեցավ: Նրան հաջողվեց արքայից մի ռաղամ կամ հրահանգ ստանալ, /431/ որով նա իր ողջ ընտանիքով հայտարարվում եւ ճանաչվում էր Ֆրանկ: Ազատվում էր հայերին վերաբերող բոլոր պարտականութիւններից ու ծառայութիւններից, անկախ էր հայ վարդապետներից ու եպիսկոպոսներից իր ընտանիքի հետ կապված բոլոր արարողութիւններում՝ կնուներ, պսակներ եւ այլ կրօնական պարտականութիւններ: Հարցը բավականին խրթին էր եւ նախադեպը չունեցող, ընդ որում՝ իր եզրակետին հասավ դրամի զորութեամբ՝ արքունիքից ստանալով այն, ինչին ձգտում էր:

Մեկնելուց անմիջապէս առաջ նա եկավ մեր միսիոներին մոտ, նրան իրազեկեց իր գործունեութեան մասին: «Ձեր ձեռքն եմ տալիս արքայական հրամանը,- ասաց նա,- եթե իմ բացակայութեան ընթացքում պատահի, որ երիտասարդ հայուհիներին տանելու լինեն եւ ուզեն իմ կնոջն ընդհանուր պատվազրկութեան մեջ ներգրավել, Դուք միայն այս ռաղամը կներկայացնեք, եւ նրան չեն անհանգստացնի, ու երբ ժամանակը գա, եւ նա հաջողութեամբ ծննդաբերի, կարծում եմ, որ արքայական այս հրամանագրի զորութեամբ լույս աշխարհ եկած երեխան կկնքվի ձեր եկեղեցում, եւ շնորհը, որ Ձեզնից խնդրում եմ, այն է, որ ոչինչ չզլանան անել կնուների արարողութիւնը հնարավոր չքեղութեամբ անելու համար: Սրանով բոլորին ուզում եմ հասկացնել, որ արքայի թույլտվութեամբ ես եւ իմ ընտանիքը Ֆրանկներ ենք»:

/432/ Պողոսը մեկնեց Հնդկաստան: Երբ հայուհիներին տանելու ժամանակը եկավ, Թագավորի ներքինիները եկան Զուղա, ցրվեցին

168 Նոր ջուղայեցի Պողոս դը Սերքիսը եւ օսմամահպատակ հալեպահայ Հարությունը կամ Պասկալը համատեղ սրճարան էին բացել (Փարիզում): Նրանց համագործակցությունը տևեց 12 տարի՝ սկսած 1670 թվականից: Պողոսը զբաղվել է նաեւ մարջանի, բրդյա կերպասեղենի, թյուրքաճեղերի առեւտրով: (Séu Aslanian S. D., op. cit., p. 77, 290, 295):



բոլոր թաղերով ու կանգնեցին Հայկական եկեղեցիների դռների առաջ: Աղջիկները եւ կանայք, ըստ հրապարակված օրենքի, պետք է շարք կազմեին եւ հերթով անցնեին ներքինու առջեւից՝ ի տես: Այդ ընթացքում նրանք պետք է քողազրկեին իրենց դեմքը: Ներքինին եկեղեցուց ներս էր մտցնում այն հայուհիներին, որոնք, իր կարծիքով, հաճո կլինեին արքային, իսկ մնացածին ետ էր ուղարկում: Մեր միսիոները Մարիի ծխական եկեղեցու մոտ էր՝ ներքինու կողքին, եւ տեսնելով, որ նրա հերթը մոտենում է, ուզեց զգուշացնել ներքինուն, սակայն վերջինս ասաց, որ տեղյակ է եւ կարգադրեց նրան տուն ուղարկել: Նույնիսկ չցանկացավ, որ մեր միսիոները նրան ցույց տա արքայական կարգադրությունը: Այն ժամանակ, երբ մեր միսիոները Մարիին տուն էր ուղեկցում, արվարձանի բոլոր փողոցները զրնգում էին աղեկտուր ճիչերից: Խեղճ մայրերը, ողբալով իրենց դուստրերի դժբախտությունը եւ տեսնելով մեր միսիոների կողմից փրկված Մարիին, հազար օրհնություն էին տալիս նրան եւ գոռում էին. «Ձեր թաղավորը մեզ երբեք չի ազատի այս ամոթալի եւ դաժան ստրկությունից»:

/433/ Այս առաջին իրողությունը մեծ պայթյուն առաջացրեց Ջուղայում, եւ սրան բնականորեն հաջորդեց երկրորդը: Պողոսը գեռ Բենդեր Աբասի նավահանգստից դուրս չէր եկել եւ հարմար եղանակի էր սպասում Հնդկաստան մեկնելու համար, երբ նրա կինը բարեհաջող ծննդաբերեց: Ինչպես արդեն գիտեինք, Պողոսին եւ իր ընտանիքին տրված արքայական հրամանի համաձայն՝ հայ վարդապետները չկարողացան ընդդիմանալ, որ երեսման կնքվի Հիսուսյանների եկեղեցում: Նրանց լուծությունը կա՛մ անտարբերության, կա՛մ էլ չարացածության հետեւանք էր:

Երեխային ծննդկանի տնից Հիսուսյանների եկեղեցին տանելու համար հարկ էր անցնել (հայկական) ծխական եկեղեցու առջեւով, ուր հայ քահանաներն, իրենց հողեւոր հանդերձանքով, շարք կազմած, սպասում էին մկրտության թափորի անցնելուն: Երեխային տեսնելով՝ առաջ եկան, մտցրին իրենց եկեղեցին ու մկրտեցին, այնուհետեւ տարան Հիսուսյանների եկեղեցին՝ առանց նրանց իրազե-

կելու կատարվածի մասին: Մեր միսիոները կրկին մկրտեց նրան: Արարողությունից հետո, երկրի սովորություն համաձայն, նա ուզեկցեց երեխային դեպի Մարիի տունը՝ թմբուկների եւ երաժշտական այլ գործիքների, /434/ երգչախմբի երեսմանների ձայնարկության ներքո, որոնք հոգեւոր սաղմոսներ էին երգում՝ անցնելով բազմամարդ փողոցներով: Ժողովուրդը հավաքվել էր արվարձանի համարյա բոլոր թաղերից՝ Ջուղայում դեռեւս չտեսնված այս հանգիստությանը մասնակցելու համար:

Հաջորդ օրը հերձվածող երկու քահանաներ եկան մեր միսիոներին մոտ՝ իրենց եպիսկոպոսի բողոքը հայտնելու այն բանի համար, որ նա կնքել է մի երեխայի, որը մկրտություն է ստացել հայ քահանաների ձեռքից: Սա ընդունված կարգ չէր ինչպես հայկական, այնպես էլ լատին եկեղեցու կողմից: «Ինչ վերաբերում է մյուսոսին, մենք ամենեւին տարբերություն չենք դնում,- ասաց նրանց մեր միսիոները,- եւ ես երբեք չէի մկրտի մի երեխայի, եթե իմանայի, որ ձեր քահանաներն արդեն մկրտել են նրան: Նրանք երկու ծանր սխալ են գործել, որոնց հետեւանքները հետագայում կերեւան: Առաջինը, որ հակառակվել են արքայի հրամանին, որը ռազամի տեսքով իմ ձեռքին է, ուր ձեզ արգելվում է նման առիթների դեպքում խառնվել Պողոսի ընտանիքի գործերին: Երկրորդը, որ ավելի կարեւոր է, իրողությունն ինձնից թաքցնելն է եւ այս ձեւով կրկնակի մկրտության կատարումը: Այս մասին ասացեք ձեր եպիսկոպոսին,- ավելացրեց միսիոները,- եւ եթե նա իր թեմում /435/ օրինականության եւ կարգապահության կողմնակից է, պետք է փրկոնազուրկ անի եւ պաշտոնանկ անի անկարգ հոգեւորականներին»:

Պողոսն, իմանալով Ջուղայում իր ընտանիքի հետ տեղի ունեցածը, մեր միսիոներին շնորհակալական նամակ գրեց, որի մեջ երախտագիտությունը ներփակեց տասը թուման, այսինքն՝ երկու հարյուր էկյու, միսիայի եկեղեցին զարգարելու ակնկալությամբ:

1699 թ. մարտի 19-ին այս երջանիկ միսիան մի նոր փայլ ստացավ իր հոգեւոր հովանավոր Սուրբ Հովսեփի տոնի արարողության առիթով: Սուրբ Պետրոսի աթոռը զբաղեցնող Իննսկենտիոս XII-ը,



անցյալ տարի Հռոմում գտնվող մի քանի կաթոլիկ հայերից իմանալով, թե հավատքի հանդեպ ինչպիսի պատվով է իրականացվում պատարագը Ջուլֆայի Ս. Հովսեփի անունը կրող Հիսուսյանների վանքում, Տոնական օրվա առիթով լիակատար ցերեղամտությամբ գիր ուղարկեց (*Indulgence plenièrè*)<sup>169</sup>: Մեր միսիոներն, այս Բուլլան ստանալով եւ հրապարակելով կաթոլիկ եկեղեցիներում, մեծ բազմութուն հրավիրեց Հիսուսյանների վանք: Քահանայապետական հանդիսությամբ ու հանդերձանքով Սպահանի եպիսկոպոս գերապայծառ Եղիան<sup>170</sup> պաշտոնավարեց արարողությունը: Մեր միսիոները «Սրբի ներբողականը», /436/ ինչպես նաեւ Պապի Բուլլան (Թարգմանությամբ - է. Թ.) կարգաց հայերենով: Դրանք ունկնդրության արժանացան այնպիսի մեծ ուշադրությամբ, որը ցույց էր տալիս կաթոլիկ հայերի հարգանքը եւ Սուրբ Աթոռի նկատմամբ նրանց լիակատար հնազանդությունը: Բուլլայի ընթերցումից հետո հուզիչ էր տեսնել, թե ինչպես տղամարդիկ ու կանայք, հայեր ու ֆրանկներ, մեծեր ու փոքրեր, շտապում էին գալ եւ համբուրել այն: Դժվար է հավատալ, սակայն իրականություն է, որ հերձվածող հայերի մի մեծ բազմություն այս առիթով միախառնվել էր կաթոլիկներին եւ, չնայած իր ազգային հավատամքին, Հիսուս Քրիստոսի փոխանորդի հանդեպ կատարեց իր պարտականությունը:

Այս արարողությանը հաջորդեց մի ուրիշը, որը պատիվ բերեց մեր առաքելությանը եւ քաղաքում մեծ աղմուկ հանեց: Մոտ մեկ ամիս է, ինչ Անկյուրիայի արքեպիսկոպոս, Բոկոտն Կարմելիտների միաբանությունից գերապայծառ Պողոս-Պետրոս<sup>171</sup> եկել էր Սպա-

169 Լիակատար կամ մասնակի մեղքերի թողության Կաթոլիկ եկեղեցու այս արարողությունը գալիս է 11-րդ դարից: Այն կորցրել է իր առաջնային ճշմարտությունը, սակայն դեռես չի վերացել: Ինդուլգենցիայի վկայական ստանալու համար որոշակի վճար է նախատեսված: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Letouzey et Ané, *Dictionnaire de droit canonique*, Paris, vol 5, 1950, p. 1331-1352.

170 Եղիա կարմելիտականի մասին տե՛ս Թաքիրյան Է., *Աշխ.*, էջ 72-83: Նաեւ տե՛ս աստ՝ ծանոթ. 130:

171 Անկյուրիայի արքեպիսկոպոս մոնս. Պետրոս Պողոսի մասին տե՛ս *A Cronicle of the Carmelites in Persia*, vol II, pp. 337, 487-497:

հան՝ այնտեղից որպես առաքելական լեզատ (պատվիրակ - է. Թ.) Հնդկաստան մեկնելու եւ Մալաբարի քրիստոնյա համայնքն այցելելու համար:

Նա տանում էր Պապի եւ Կայսեր նամակները, ուստի ընդունվեց արքունիքում դեսպաններին հատուկ ողջ արարողակարգով: Արքան, /437/ իմանալով, որ գերապայծառը Պապի ազգականն է, առաջին ամիսներին արքայական պատիվների արժանացրեց նրան:

Սոֆիի հետ ունեցած հաճախակի հանդիպումների ընթացքում նա բացահայտեց իր դեսպանության հիմնական նպատակը՝ Հայոց եկեղեցու եւ Հռոմեական եկեղեցու միավորումը, որոնք բաժանված էին եւ քանիցս միացման փորձեր էին արել: Նա հասկացնել տվեց, որ այս միացումը Պապի եւ Կայսեր սրտով էր եւ Նորին Գերագանցությանն արժանի ձեռնարկ, որը նրա իշխանությունը կփառավորեցներ եւ նրա հիշատակը կանմահացներ: Ի վերջո այս միությունը հայերի մոտ կավելացներ նրան ծառայելու եռանդը եւ որպես ենթակա՝ իրենց թագավորի հանդեպ ունեցած անդրժելի հավատարմությունը: Դեսպանն իր խոսքերը հիմնում էր այնպիսի հավանական ճշմարտությունների վրա եւ այնպիսի համոզիչ ու վառ գույներով էր համեմուտ խոսքը, որ Արքան ոչ միայն հասկացավ, այլեւ իրապես ընդունեց այս մեծ ծրագիրը: «Քանի որ նրանք ամենեւին մահմեդական չեն, - ասաց Արքան, խոսելով հայերի մասին, - ճիշտ է, որ լինելով քրիստոնյա, /438/ կրոնին վերաբերող հարցերում ենթարկվեն Տիրոջը եւ քրիստոնյաների միասնական Պապին: Աշխատեք այդ միությունն իրականացնելու ուղղությամբ եւ այս նպատակի իրագործման համար օգտագործեք այն բոլոր միջոցները, որ կթելադրի Ձեր խելքը եւ վստահ եղեք, որ ես իմ ողջ իշխանությամբ կկանգնեմ Ձեր թիկունքին»:

Արքայի այս երջանիկ տրամադրվածությունը շուտով Հայտնի դարձավ հոգեւորական եւ աշխարհիկ Հայ ազգաբնակչությանը: Նրանք հաճախակի սկսեցին այցելել դեսպանին, դեսպանն էլ իր հերթին էր նրանց հանդիպում, զրուցում էր նրանց հետ, տրամադրում նրանց, համոզում: Այդ ընթացքում Սոֆին, որը միացման



մասին արքայական խոսքի տերն էր, շտապեցնում էր դրա իրականացումը: Պայմանավորվեցին, որ կհավաքվեն Ջուլֆայի Մայր Տաճարում եւ հայ եպիսկոպոսների ու արքեպիսկոպոսի ներկայացուցիչների միջեւ մի երկխոսություն կլինի, ուր բարեկամաբար կխոսեն այն միջոցների մասին, որոնցով պիտի իրագործվի այս կարեւոր ծրագիրը: Մեր միտիոները եւս պետք է բանակցեր եպիսկոպոսների հետ: Երկխոսությունը կայացավ կարգով ու շնորհքով, հանգիստ պայմաններում: Հայերը ներկայացրին իրենց «Հաւատոյ Հանգանակը»: Ուսումնասիրվեցին լատինների եւ նրանց հողվածների միջեւ եղած հակասություններն ըստ կաթոլիկական դոգմաների եւ /439/ հայոց եկեղեցական օրենքների: Պայմանավորվեցին այն կետերի շուրջ, որոնք պետք է փոփոխության ենթարկվեին հայոց հավատքի մեջ՝ նրանց օրթոդոքս դարձնելու համար:

Տեսնելով այն ընթացքը, որով հառաջանում էր գործը, ամենեւին կասկածի ենթակա չէր, որ այն անհաջողության կմատնվի, սակայն դժբախտաբար գործին խառնվեցին մարդիկ, որոնք հայերի առեւտրական շահերն էին հետապնդում: Կարելի էր ասել, որ դա նման էր աչքը հանելուն եւ նրանց ամենանվիրական զգացմունքները վիրավորելուն: Բարձրաստիճան հոգեւորականի շատ խելացի եւ շատ եռանդուն այս քայլը, հակառակ իր մտադրության, ոգեւորեց բոլորին: Այստեղ կարելի է հիշել Մարգարեի խոսքերը՝ «ստեպե բեր ձիթնույ»<sup>172</sup>, այսինքն՝ այն հույսը, որ ներկայանում է խաղաղ ձիթապտղի տեսքով, հաճախ խաբուսիկ է: Հերձվածող եպիսկոպոսներն ու քահանաներն, օգտվեցին այս հանգամանքից գործընթացն անհաջողության մատնելու համար: Նրանք վաճառականներին տրամադրեցին դեսպանի դեմ, որին անվստահելի (կասկածելի) էին համարում, եւ դրամ չխնայեցին /440/ Սոֆիի շնորհներից նրան զրկելու համար: Նրանց քիչ ընդհանրապես չէր հաջողվեց եւ այնքան, ինչքան Արքան նրան պատիվների էր արժանացրել իր ժամանման եւ Սպահանում իր անցկացրած օրերի առիթով, նույնքան ընդդ-

172 Ամբակում Գ. 17:

ված սառնությունը ու անտարբերությունը ճանապարհեց դեպի Հնդկաստան: Այդուհանդերձ, չպետք է մոռանալ հիսուսյանների հանդեպ ցույց տված նրա հարգանքն ու ակնածանքն այն շրջանում, երբ նա հզոր էր արքունիքում: Հունիսի 28-ին իմաց տվեց նրանց, որ իր բարեկամությունը նրանց հավաստելու համար հաջորդ օրը Ս. Պետրոսի եւ իր իսկ տոնի առիթով կգա նրանց մոտ՝ նրանց հետ տոնելու եւ իրենց եկեղեցում քահանայապետական պաշտոնավարությունը արարողություն անցկացնելու: Շատ զգացված այն պատվից, որ բարձրաստիճան հոգեւորականը նրանց շնորհում է, Ս. Հայրերն ուրախությունով ընդունեցին այս լուրը: Նրանք նախապատրաստվեցին ընդունելությունը եւ ոչինչ չխնայեցին արարողությանը շքեղություն հաղորդելու համար: Ամպօղակներով երկու գահ պատրաստեցին, որոնք դեմ առ դեմ էին դրված, մեկը պաշտոնավարող արքեպիսկոպոսի, մյուսը Սպահանի եպիսկոպոս գերապայծառ Եղիայի համար, որը պետք է արտասաներ «Սրբի ներբողականը»:

/465/ Կոմս Ֆիլիպ դը Զաղլին<sup>173</sup> ազգությունը հայ էր, ծնվել եւ մեղրտվել էր Ջուլֆայում, սա նկատելի էր: Հայրն արծաթագործ էր եւ ապրում էր հիսուսյանների տան հարեւանությունում, չենք կարող ուրանալ, որ նա ուներ բնատուր ընդունակություններ, որոնք փոխարինում էին իր ցածր ծագմանն ու հարստության բացակայությունը, քանի որ նա իր բացարձակ գեղեցիկ մարմնի մեջ արթուն, գյուրըմբռնող եւ ներթափանցող միտք ուներ: Նրա շարժումներն ավելի էր հղկված, քան սովորաբար հատուկ էր իր ազգի ներկայացուցիչներին: Հասկանալով, որ այստեղ հնարավորություն չունի հարստանալու, ինչպես նաեւ ցանկություն ունենալով աշխարհը տեսնել եւ աչքի ընկնել՝ նա ստիպված եղավ լքել երկիրը:

173 Ֆիլիպ դը Զաղլիի մասին տե՛ս Gulbenkian Roberto, Philippe de Zagly, marchand arménien de Julfa, et l'établissement du commerce persan en Courlande en 1696,- «Relações entre Portugal Arménia e Médio Oriente» [Estudios Historicos, III], Lisboa, 1995, p. 15-83.



Եկավ իր բախտը փնտրելու Ֆրանսիայում եւ Հասնելով Փարիզ՝ իրեն ներկայացրեց որպես Սպահանի մի հարուստ մահմեդականի որդի, որին Եւրոպան տեսնելու ցանկությունը ստիպել էր ծնողների կամքին հակառակ լքել հայրական տունը. այնքան խելացի էր խաղում իր դերը, որ նրան լիովին հավատում էին: Ազնվական տեսքն ու շարժումները նրան նույնիսկ մուտք ապահովեցին բարձրաշխարհիկ, հատկապես՝ տիկնանց հասարակութայն մեջ, որոնք հաճույք էին ստանում երիտասարդ պարսիկի ընկերակցությունից: Չուշացրին նրա մոտ խոսել նաեւ կրոնից: Մի որոշ թույլ դիմադրությունից հետո, որը /466/ առավելապես նրա խաղի մասն էր կազմում, նա ի վերջո թույլ տվեց, որ իրեն համոզեն քրիստոնեական ճշմարտությունների մեջ, եւ ինքն իրեն իբր համոզեց ընդունել մկրտության խորհուրդն ու ամբարշտությունն ունեցավ կրկնակի մկրտվելու: Անարժանը նույնիսկ պատիվ ունեցավ որպես կնքահայր ունենալու Լուդովիկոս Մեծ արքայի միակ եղբորը, որն էլ իր անունը տվեց նրան՝ Ֆիլիպ<sup>174</sup>: Այս առաջին փայլուն դեմարշն ուրվագծեց իր փնտրած հարստութայն ճանապարհը եւ նրան թույլ տվեց դիրք գրավել հասարակութայն մեջ: Որոշ ժամանակ այդ հասարակութայնը ծառայելով՝ չգիտեմ, գուցե ձգտեց ի վերջո հայտնի դառնալ նաեւ հայկական միջավայրում, որը գնալով ավելի էր ստվարանում Փարիզում: Այդուհանդերձ, նա որոշեց թողնել իր պարտականությունները Ֆրանսիայում՝ դեպի Լեհաստան ճամփորդելու պատրվակով, ուր, իբր, կարեւոր գործեր ունեւ:

Այն խելքն ու ճարակությունը, որ նրան հնարավորություն էին տվել մտնելու Ֆրանսիական արքունիք, դյուրությամբ ծառայեցին նրան նաեւ լեհական արքունիքը՝ գրավելու. համար: Այստեղ նա ընդունվեց որպես Սպահանում ծնված հայկական ծագումով քրիստոնյա: Նրան, որը մայրենի լեզվի պես տիրապետում էր հայերենին, թուրքերենին ու պարսկերենին, թույլ էին տալիս առաջադիմել, քանի որ մարդկային այս սեսակը, որը վարժված է կեղծարար-

174 Օւլեանի դուքս Ֆիլիպը՝ Լուդովիկոս XIII-ի որդիս եւ Լուդովիկոս XIV-ի եղբայրը:

րության, /467/ ժամանակ առ ժամանակ պետք եղած տեղում գիտեօգտագործել նաեւ իրականն ու ճշմարիտը:

Լեհաստանի արքան, ով պարսից արքայի հետ դաշնակցելու որոշ հասարակական նպատակներ էր հետապնդում, հավատաց, որ այս հայը հարկ եղած բոլոր հատկանիշներն ունի իր դեսպանությունը պարսից արքունիքում հաջողությամբ գլխավորելու համար: Նրան կոմսի ազնվական տիտղոս շնորհեց՝ կոչելով Ֆիլիպ՝ կոմս դը Զաղլի:

Մեր միսիոները Սպահանում էր գտնվում նրա դեսպանութայն ողջ ընթացքում: Այն սերը, որ նա (Զաղլին - է. Թ.) պահպանել էր Ֆրանսիացիների հանդեպ, որոնց այնքան պարտական էր, նրան սերտորեն կապեց Ջուլֆայի հիսուսյանների հետ: Սակայն հազվադեպ է պատահում, որ Աստված երկար ժամանակ չպատժի այնպիսի մեծ ամբարշտությունը, ինչպիսին «Սուրբ Մկրտության» պղծումն է: Նա դժբախտությունն ունեցավ վիճելու Սպահանում այդ ժամանակ պաշտոնավարող Ֆրանսիայի դեսպանի հետ: Հայի խարդախությունները քողազրկվեցին նրա Լեհաստան վերադառնալուց հետո, ուր նա տարել էր Պարսկաստանի արքայի պատասխանները եւ (Լեհաստանի - է. Թ.) արքան, իմանալով նրա կյանքի պատմությունը եւ նրան վերադրվող մեղադրանքները, գլխատել տվեց նրան: Ընդհանրապես այսպիսի վախճան են ունենում (այսպես են դասավորվում) խաբեբայի մասնագիտություն ունեցողների ճակատագրերը:

/490/ 1705, վեց, յոթ թվականների ընթացքում, որոնք մեր միսիոների Սպահանում գտնվելու վերջին տարիներն էին, Ջուլֆայի միսիան ծաղկում էր կատարյալ խաղաղությամբ: Ո՛չ անհավատները եւ ո՛չ էլ հերձվածող հայերը, որոնք նրան ամենաքիչը նեղեցին, նրան չանհանգստացրին: Ոչ մի յուրահատուկ բան տեղի չունեցավ, որ արժանի լիներ մեր այս պատմութայն մեջ տեղ գտնելուն եւ որին մեր միսիոները չուզենար անդրադառնալ: ...

/496/ ... Պետք է իմանալ, որ Սպահանում նույնիսկ մզկիթ գնալու եւ աղոթելու համար կանայք համարյա երբեք դուրս չեն գալիս



տնից: Եթե որոշ այցելութուններ անելու նպատակով էլ դուրս են գալիս, ապա երեկոյան եւ միշտ այնպիսի քողարկված դահավորակներով, որ ոչինչ չեն կարող տեսնել եւ իրենց էլ ոչ ոք չի կարող տեսնել: Ինչ վերաբերում է Ջուլֆայի հայ կանանց, ապա նրանց հպատակութունը առավել քան նվազ է: Նրանք օրվա ընթացքում դուրս են գալիս ու քայլում փողոցներով, սակայն՝ գլխից մինչեւ ոտքերը միշտ նուրբ մուսլինով քողարկված, այնպես, որ քողերի տակ ճիշտ կողմնորոշվելու համար միայն աչքերն են բաց: Այդուհանդերձ նրանք իրենց թույլ են տալիս շքեղ հանդերձանքներ՝ մինչեւ գոտկատեղը հասնող ոսկե շղթաներով, որից բազմաթիվ ոսկեդրամներ են կախված՝ եւրոպացի արքաների նմանությամբ: Յուրահատուկն այն է, որ, փաթաթված քողերի մեջ, նրանք իրենց շքեղ արդուզարդը փողոցներում ու եկեղեցիներում ցույց չեն տալիս, այլ միայն իրենց տներում, ուր մտնելուց անմիջապես հետո նետում են քողը եւ հայտնվում իրենց ողջ փայլով՝ ընդգծելու համար, որ իրենց նպատակն ամուսիններին հաճույք պատճառելն է: Սրանով նրանք շատ գեղեցիկ դաս են տալիս մեր եւրոպացի կանանց:

1529/ Ամեն տարի երկիր ներմուծվող խոշոր դրամագլուխները ավելացնում են Պարսից արքաների ունեցվածքը: Իր սովորական ծախսերի համար արքան համեմատաբար նվազ միջոցներ է օգտագործում եւ հազվադեպ կարող է յուրահատուկ ծախսեր անել:

Հասկանալու համար, թե ինչպիսին են թագավորութայան հարստութունները, պետք է այսպես դատել. այստեղ մոտք է գործում անհամար քանակությամբ ոսկի, արծաթ եւ համարյա ոչինչ դուրս չի գալիս: Գիտենք, որ ոսկու եւ արծաթի ոչ մի հանքավայր չեն /530/ աշխատեցնում, գուցե միայն մեկը՝ Թավրիզի մոտ: Հաստատ է, որ դրանք գործում են, եւ այստեղ ավելի շատ ոսկի ու արծաթ կա, քան բոլոր եւրոպական երկրներում միասին վերցրած: Այստեղ ոչ մի տեսակի ոսկեդրամ չեն կտրում: Եւրոպացիների ներմուծած վենետիկյան եւ հունգարական ոսկե դուկատները նրանց ազատում են այդ հոգսից: Քաղաքում լավ քաղաքաբնակ չի համարվի այն կինը, որն այդ դուկատներից գլխազարդ չի կրում: Պարսիկներն

իրենք կտրում են միայն արծաթե դրամ, բայց դա էլ ընդհանրապես Եւրոպայից եկած տարբեր արծաթներն են, որոնց վրա երկրի գրոշմն են դնում: Եթե ինձ հարցնեն, թե ինչո՞վ են նրանք փոխում այն մեծաքանակ ոսկին ու արծաթը, որ նրանց է հասնում Եւրոպայից, ապա ես կասեմ՝ միմիայն իրենց երկրում արտադրվող բազմատեսակ եւ տարաբժեք ապրանքներով:

Մի խոսքով՝ պարսիկների ամենամեծ եւ անխափան դեմքը առեւտուրն է: Գիլանի եւ Կասպից ծովի հարեւանությամբ գտնվող գավառներից արտահանվող մետաքսները շատ ավելի նուրբ են, քան մերը: Հումքը փոխադրում են Ջմյուռնիա եւ Լեւանտի մյուս երկրները, որտեղից էլ մեր վաճառականները դրանք ձեռք են բերում:

Մետաքսյա, արծաթակար ու ոսկեկար կերպասները /531/ հիմնականում արտադրվում են Քաշանում: Ամենանուրբ եւ ամենագեղեցիկ մուսլինները գալիս են Բենգալիայից, սակայն պահեստավորումն ու վաճառքն իհարկե Սպահանում է կատարվում:

Հնդկական կերպասները, հատկապես՝ վրձնով նկարազարդվածները, բերվում են Հնդկաստանից, իսկ Պարսկաստանում գործվածներն առաջիններին ոչնչով չեն վիջում՝ միայն թե լավ պահպանեն իրենց գույները:

Սպահանն աներեւակայելի առեւտրի կենտրոնն է. սուտակները (rubis, ուրբին) գալիս են Հնդկաստանից, ազամանդները՝ Գոլկոնդայի եւ Պեգուի թագավորութուններից: Խոշոր հայ վաճառականների առեւտրի զգալի մասը թանկարժեք քարերն են: Նրանց մեջ կան նաեւ այնպիսիք, որոնք քարավաններով մեծաքանակ մետաքս են փոխադրում: Սա ընդամենը խայծ է Թուրքիայի մաքսավորներին հաճույք պատճառելու համար, որոնք մեծ գումարներ են գանձում հայ վաճառականից՝ մետաքսի տեղափոխման մասին մաքսային օրենսդրության համաձայն: Սակայն չեն մտածում այն մասին, որ վերջինս կարող է եւ ա՛յլ ապրանքատեսակ ունենալ: Եվ կան այնպիսի հայեր, որոնք անպատիժ անցնում են մաքսատունը՝ զրպանում ունենալով միլիոնից ավելի գումար արժեցող թանկարժեք քարեր:



Պարսկական գորգերը, որոնց ընդհանրապես սխալմամբ կոչում ենք թրքական, սքանչելի գեղեցկություն ունեն: Հատկապես բրդից գործվածները /532/ շատ էժան են: Բայց մետաքսից պատրաստված եւ ոսկյա ու արծաթյա զարդանախշերով գորգերը բավականին արժեքավոր են եւ դրանցից հազվադեպ կտեսնես եւրոպայում: Հռոմ գնացող հետաքրքրասերները կարող են այցելել Ս. Ֆրանսուա Քսավիեի վանքը, ուր կտեսնեն խորանի աստիճանները ծածկող ամենագեղեցիկ ու ամենահարուստ պարսկական գորգերը:

Չեմ խոսում այլ ապրանքատեսակների մասին՝ հաշիշ, համեմունքներ, բամբակ եւ այլն, որոնց մասին այս պատմություն տարբեր էջերում արդեն խոսել եմ, եւ որոնցով պարսիկները մեծ առեւտուր են իրականացնում: Այն, ինչ պատմեցի նրանց հանճարի, նրանց ապրանքաշրջանառության, նրանց կրոնի մասին եւ այլն, ավելի քան բավարար է նրանց կայսրության մասին ճշգրիտ պատկերացում կազմելու համար: Հիմա անցնեմ հայերին, որոնց երկիրը, որքան էլ մեծ ու տարածված լինի, գրավված է մասամբ պարսիկների, մասամբ թուրքերի կողմից: Ես նախ կխոսեմ նրանց կրոնի մասին, որն, իմ կարծիքով, արժանի է ընթերցողի ուշադրությանը:

/536/ Հերձվածող հայերի սխալները հաղթահարելու եւ հերձվածության պատճառած դժբախտությունը վերացնելու նպատակով է, որ Հռոմեական Եկեղեցին ամեն օր առաքելական սպասավորներ է ուղարկում, որոնք միսիաներ են հիմնում Պարսկաստանի եւ Հայաստանի գլխավոր քաղաքներում...

Սպահանում պորտուգալացի ավզուստինյան Հայրերը, բոկոտն կարմելիտ Հայրերը, ֆրանսիացի վեղարավոր Հայրերը:

Ջուլիֆայում, Սպահանի արվարձանում դոմինիկյան Հայրերը, բոկոտն կարմելիտ Հայրերը, հիսուսյանները:

Թավրիզում՝ ֆրանսիացի վեղարավոր Հայրերը:

Շամախիում՝ հիսուսյան Հայրերը:

Գանձակում՝ իտալացի վեղարավոր Հայրերը եւ լեհ հիսուսյան Հայրերը:

Երեւանում՝ հիսուսյան Հայրերը:

Շիրազում՝ բոկոտն կարմելիտ Հայրերը:

Բենդեր Կոնգոյում՝ Պարսկական ծոցում՝ պորտուգալացի ավզուստինյան Հայրերը:

/537/ Ապարաններում եւ Նախիջևանի մյուս վեց գավառներում՝ դոմինիկյան Հայրերը:

Էրզրումում՝ հիսուսյան Հայրերը:

Թիֆլիսում՝ մայրաքաղաքում, Գորիում, Կոտատիսում (Քուլթայիս), Համադանում՝ իտալացի վեղարավոր Հայրերը եւ այլ արտասահմանյան միսիաներ:

Այս բոլոր քաղաքներում, ուր հաստատված են առաքելությունները, եկեղեցու շուրջ միավորված բազմաթիվ կաթոլիկ եւ հերձվածող հայեր կան: Եվ ամեն օր նրանց թիվն ավելանում է այն օրհնության շնորհիվ, որ Աստված տարածում է Միսիոներների աշխատանքի վրա:

Հայոց պատրիարքները I, II, III դդ. .... /537-561/  
XVII դ., 1600-1700 թթ.

/558/ Շահ Աբասի կողմից հայտնի չէ, թե ի՞նչ պատճառով հալածվելով՝ Սրապիոնը պատրիարքական աթոռից ստիպված եղավ (հրաժարվել) եւ քաշվել Թուրքիայի Դիարբեքիր քաղաքը, ուր վախճանվեց 1666 թ.:

Սրապիոնի մահից հետո նրա երկու նախորդները (Դավիթ V-ը եւ Մելքիսեդեկը), մտածելով, որ իրենց պարտքերը չեղյալ են համարվել, ուղեցին կրկին բարձրանալ գահին (պատրիարքական աթոռին - է. Թ.) եւ արքայի մոտ վիճարկեցին այս ծրագիրը /559/: Մելքիսեդեկը հաղթեց այս մրցակցությունը, սակայն հաղթանակը նրա վրա ծանր անդրադարձավ, քանի որ Երեւանի խանի հետ վիճելուց հետո վերջինս նրան շատ դաժանորեն վերաբերվեց: Բարբարոսը նրան ստիպեց ուսել սեփական մաշկը: Աբաս արքան նրան բերել տվեց Սպահան, բերել տվեց Ս. Գրիգորի մասունքները, ավերեց էջ-



միաձնի Մայր տաճարի մի մասը եւ Հիմնական քարերը փոխադրել տվեց Սպահան: Քաղաքագետ միապետի նպատակն էր այս քաղաքականութեամբ ստիպել պատրիարքներին իրենց նստավայրը հաստատել իր մայրաքաղաքում՝ կանխատեսելով, որ այս արարքով դեպի իր մայրաքաղաքը կհրապուրեն անհամար քանակութեամբ հայերի: Մելքիսեդեկն այս մեծ խնդիրը հաղթահարելու համար խոստացավ ամեն տարի արքայական դանձարան մուծել երկու հազար էկյուլ, սակայն հետագայում, հասկանալով այդ գումարը տալու անհնարինությունը, տեղը զիջեց եղբորորդուն՝ Իսահակին, եւ փրկություն գտավ Կոստանդնուպոլսում, այնտեղից էլ մեկնեց Լեհաստանի Լեոպոլ (Լվով – է. Թ.) քաղաքը, ուր վախճանվեց 1629-ին:

Սահակ V-ը պատրիարքական աթոռը վիճարկեց Դավթի հետ: Վերջինս նրան հաղթեց, բայց քանի որ ընդունված չէր հայերի կողմից, քաշվեց Վան՝ աթոռը զիջելով իր մրցակցին:

Մովսես II-ը հաջորդեց Իսահակին եւ ահա, թե ինչպես նա ընդունեց պատրիարքական աթոռը. Շահ Սեֆին Պարսկաստանի գահին էր բարձրացել իր հորեղբոր՝ Աբաս Մեծի մահից հետո: /560/ Մովսեսը բախտ ունեցավ ընդունելու նրա շնորհները եւ դարձավ Հայաստանի պատրիարք: Օգտվելով թագավորի մոտ ունեցած շնորհաշատ հարգանքից՝ թոթափեց նախորդ պատրիարքից մնացած տարեկան երկու հազար էկյուլ թագավորական դանձարան մուծելու պարտավորությունը:

Փիլիպոսը՝ երգվյալ կաթողիկե Մովսեսին հաջորդելով, դնաց Սպահան՝ իր հարգանքի տուրքը մատուցելու Շահ Սեֆին: Արքայի մոտ շահեկան մի հանդիպման ընթացքում կարողացավ ետ ստանալ Ս. Գրիգորի հուշակավոր մատուցները: Մեծ արարողակարգով բերեց դրանք էջմիածին, վերանորոգեց եկեղեցին, ապա գնաց Երուսաղեմ, ուր հանդիպեց Սսի պատրիարք Ներսեսին, եւ միասին երգվեցին երկու եկեղեցիների սերտ միաբանության համար: Այնտեղից նա ճամփորդեց Կոստանդնուպոլիս, ապա վերադարձավ էջմիածին, ուր պատրիարքական աթոռին նշանակալից ծառայություններ մատուցելուց հետո 1655 թ. վախճանվեց խաղաղութեամբ:

Հովհաննես III-ն<sup>175</sup> իրեն նախորդող պատրիարքներից առանձնանում էր յուրահատուկ եռանդով: Նա ձեռնարկեց դեպի Հոռոմ իր ճամփորդությունը՝ անձամբ Հիսուս Քրիստոսի տեղապահին իր եւ իր եկեղեցու հնազանդությունը հայտնելու համար: Սակայն Կոստանդնուպոլիս հասնելով՝ վախճանվեց՝ թողնելով հանգամանորեն շարադրված իր օրթորոքս «Հաւատոյ Հանգանակը»:

/561/ Նրան հաջորդող Եղիազարը հետեւեց նրան Սուրբ Աթոռին իր կապվածությունը:

Նահապետն ունեւր նույն զգացումները, որոնք նրա տառապանքների պատճառը դարձան: Զուլֆայի արքեպիսկոպոս Ստեփանոսը, որ հայտնի հերետիկոս էր, նրան վռնդեց իր թեմից, սակայն այս Ստեփանոսը շուտով վախճանվեց, եւ Նահապետը վերականգնվեց իր պաշտոնում:

XVIII դար, 1700-ից սկսած

Զուլֆայի եպիսկոպոս Ալեքսանդրը իր նախորդի՝ Ստեփանոսի նման նույնպես դեմ էր կաթողիկեներին, մինչեւ այդ դաժան տառապանքների էր ենթարկել նրանց Օսմանյան կայսրություն մայրաքաղաքում: Քանի որ նրա ջնավորության կեղծավորությունը գերազանցում էր չարությունը, մտածեց, որ կարող է հավատացնել նաեւ Կղեմես XI Պապին: Նա վերջինիս առերեւոյթ հնազանդությունն անմակնեւր գրեց, ուր նրան անվանում էր Հիսուս Քրիստոսի փոխարինողը երկրի վրա, «տիեզերական եպիսկոպոս» եւ այլն, սակայն նրա կեղծավորությունը շատ չանցած դիմագերծվեց, եւ Հոռոմում նրա հանդեպ լցվեցին զայրույթով ու արհամարհանքով:

/587/ ... Դեսպան Մ. Միշելը<sup>176</sup> Զուլֆայից որոշեց մեկնել 1708 թ. հոկտեմբերի 29-ին: Մեր միսիոները նրան պետք է ուղեկցեր:

175 Խոսքը Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Դ. Զուղայեցու մասին է:

176 Լուդովիկոս XIV-ի Պարսից Օսմի մոտ որպես դեսպան ուղարկված Ֆարի սպանությունից հետո, Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Ֆերիոլը որոշում է Երան փոխարինել իր քարտուղար Միշելի նշանակմամբ, որը հաստատվում է Ֆրանսիայի արքայի կողմից: Միշելի դեսպանությունը պարսից



Սակայն վստահ էր, որ դա միսիային ոչ մի կորուստ չպետք է պատճառեր, քանի որ այստեղ էր թողնում հայոց լեզվին տիրապետող երեք հրաշալի սպասավորների: /588/ Այդուհանդերձ նա հայոց լեզվով բազմաթիվ աշխատանքներ էր ավարտել, որոնք շատ օգտակար կարող էին լինել ոչ միայն հայերին, այլ նաև միսիոներներին, որոնք հետագայում պիտի դային այստեղ աշխատելու: Խնդիրը դրանք Հռոմում հրատարակելն էր, եւ վստահ էր, որ Հավատասիրյուրի միաբանության ծախսերով գլուխ կբերի այդ գործը, սակայն հարկ էր, որ ի՛նքը դնա եւ հսկի տպագրության ընթացքը:

/589/ ... Մ. Միշելը ճանապարհ ընկավ հոգեւոր հոր հետ: Նրանց ուղեկցում էր բազմամարդ մի շքախումբ, որը ոչ միայն Ֆրանկներից էր բաղկացած, այլևս պարսիկ եւ հայ հայտնի անձանցից, որոնց Արքան թույլ էր տվել որպես հարգանքի նշան ուղեկցել դեսպանին: Շքախումբը միայն հաջորդ օրը համաձայնվեց ետ վերադառնալ՝ դեսպանի երկարատեւ համոզական աշխատանքից հետո: Նա շատ շնորհակալ էր արքայի ցուցաբերած մեծ պատվի ու հարգանքի համար եւ իր հավերժ երախտագիտությունը հայտնեց նրանց:

/590/ Ճանապարհին Ջուլֆայի հիսուսյաններից լուր հասավ հայերի նկատմամբ թշնամական մի արարքի մասին, որի մեջ ներգրավված էին (որին մասնակից էին) նաև Ֆրանկները: Ջուլֆայի հարակից պարտեզներում զբոսնելիս արքան խոսեց հայկական մի եկեղեցում զոդանջող բազմաթիվ փոքր զանգերի եւ հոգեւորականների բարձրաձայն աղոթքների ձայնը: Նա հենց տեղում կարգադրում է վերացնել հայկական եկեղեցիների բոլոր զանգերը, ինչպես նաև հրամայում է պատարագը մատուցել առավել ցածր տոնայնությամբ: Արքայական հրամանը վերաբերում էր միայն հայերին,

Շաֆի մոտ 1707-1708 թթ. պատկերում է հաջողությամբ (տե՛ս Villotte, op. cit., p. 580-589; «Mémoire du sieur Michel sur le voyage qu'il a fait en Perse en qualité d'envoyé extraordinaire de Sa Majesté dans les années 1706, 1707, 1708 et 1709», Bibliothèque National de France, Dép. des Manuscrits, Ms 7200; Kroell Anne, Les missions de Fabre et de Michel, բաժինը հեղինակի «Louis XIV, la Perse et Mascate», հոդվածում (տե՛ս "Le monde Iranien et l'islam", IV, 1976-1977, Paris, 1977, p. 24-41):

սակայն նախանձախնդրությունն այն տարածեց նաև Ֆրանկների վրա, եւ միսիոներներին եւս ստիպեցին իջեցնել իրենց զանգերը: Վերջիններս այնպես ներկայացրին, որ դրանք ծառայում են միայն որպես դռան զանգեր, եւ դրանք գործածելու թույլտվություն ստացան՝ պայմանով, որ չեն օգտագործի ժողովրդին եկեղեցի հրավերելու առիթով:

Այս լուրը ստանալով՝ դեսպանը /591/ վարչապետին գրեց սուր, սակայն արքայի նկատմամբ հարգալից մի նամակ, (ամբողջությամբ մեջբերվում է - է. Թ.), որն ավարտվում էր այն դիտարկումով, /592/ որ դեսպանը չէր ցանկանա կայսերը ներկայացնել պարտից Շահի նամակները, որոնք միայն խոսքերից են բաղկացած, իսկ իր պատմածները պիտի դրանց հակառակը վկայեն:

Նամակը դեսպանի ակնկալած հաջողությունն ունեցավ, եւ Արքան, իր տված խոստմանը նախանձախնդիր, հայտարարեց, որ իր արգելքներն ամենեւին չէին վերաբերում ո՛չ Ֆրանկներին, ո՛չ միսիոներներին եւ ո՛չ էլ նրանց եկեղեցիներին, եւ իր կամքն է, որ նրանք օգտվեն իրենց արտոնություններից ու վայելեն իրենց շնորհված ազատությունները:

Դեկտեմբերի մեկին դեսպանը հասավ Թավրիզ եւ ցանկացավ իջեւանել վեղարավոր Հայերի մոտ: Մեր Միսիոները մխիթարությունն ունեցավ հաջորդ օրը պատարագելու նրանց եկեղեցում եւ, քանի որ Jour d'Avant-ի<sup>177</sup> առաջին օրն էր, քարոզ կարդաց հայերի մի մեծ բազմության առջեւ, որոնց այստեղ էր բերել օրվա հանդիսավորությունը եւ դեսպանի ներկայությունը: Նա անդրադարձավ նաև այն երկու ուղամներին, որ Մոնս. Միշելը ստացել էր արքա-

177 Ըստ Սուրբ Ծճճդյան օրացույցի, կաթոլիկ աշխարհում Ս. Ծճճդյան տոնին Գախորդող 4 կիրակիներից մեկն է՝ դեկտեմբերի 1-ից հաշված: Սովորաբար այն Գշվում է հանդիսավոր պատարագով՝ երեխաներին միճելու Ս. Ծճճդյան տոնը համբերություն քարոզելու համար եւ ուղորդվում է փոքրիկ Գվերներով: Այդ օրը թղթե օրացույցներ են պատրաստվում՝ պատուհանիկներով, որոնք երեխաներն ամեն օր պատռում են՝ սպասելով իրենց սիրելի տոնին: Առաջին անգամ այդ օրն է հյուսվում Ս. Ծճճդյան տոնական պատկեր:



դից Շամախիի միսիայի եւ հավատքի մասին, որ կցում ենք մեր շարադրանքին:

/593/ Շամախիի միսիայի վերաբերյալ թագավորական հրամանագիրը(ուղղամբ) կամ կարգադրությունը՝ Շիրվանի թագավորության խանին.

Արքայական կնիքի փոխարեն գրված է՝

Հանուն Հոր՝ ես՝ իր սպասավորը,

Թագավորության Արքան՝

Սուլթան Հուսեյն

«Սա է մեր կարգադրությունը, որին պետք է հնազանդվեն մեր բոլոր ենթակաները: ...Մեր Վարչապետը, ... Ֆաթ Ալի Նանը ... եւ Շիրվանի կառավարիչը ... իմացեք, որ այսուհետեւ Ֆրանսիայի բարձրագույն կայսեր դեսպանը մեզ ներկայացրեց, որ Շամախիում բնակվող վարդապետները եւ մյուս հայերը դժվարություններ են ստեղծում եւ անհանգստացնում են այնտեղ քարոզող Հայերին, բողոքում են նրանց դեմ: Եվ մեզ թախանձեց կարգավորել, չափավորել, ճշել, նույնիսկ գավառից տարագրել նշված հայերին:

/594/ Ընդառաջ գնալով դեսպանի թախանձանքին՝ հրամայում ենք այս կարգադրությունը տեղ հասնելուն պես տեսնեք ու հասկանաք, որ այդ բողոքները համապատասխանում են իրականությանը, որ հայերը սխալվում են եւ դժվարություններ են ստեղծում Հայրերի համար, նրանցից երդում վերցնեք, որպեսզի հետագայում բարեկամանան նրանց, ինչպես նաեւ նոր եկողների հետ եւ այլեւս երբեք չանհանգստացնեն: Որպեսզի ոչ ոք չհակադրվի սույն կարգադրությանը եւ հասկանան, որ իրենց պարտքն է դրան հնազանդվել»:

Այստեղ չեմ անդրադառնում երկրորդ կարգադրությանը, որի մասին կարելի է ենթադրել առաջինից: Բավական է ասել, որ այն ավելի քան նպաստավոր էր հավատքի համար: Միսիոներներին թույլ էր տրվում ողջ Պարսկաստանում լիակատար ազատությամբ իրենց գործունեությունը զբաղվել, եւ սա պարտական են Ֆրանսիայի կայսեր նկատմամբ պարսից արքայի բարեհաճությունը:

### ՋԻԱԼՆԻ ՖՐԱՆՉԵՍԿՈ ՋԵՍԵԼԼԻ-ԿԱՐԵՐԻ

Ջեմելլի-Կարերին (1651-1725 թթ.) ծնվել է Նեապոլում՝ ազնվական ընտանիքում: Ավարտել է Նեապոլի համալսարանի իրավունքի ֆակուլտետը դոկտորի աստիճանով եւ զբաղվել է իրավաբանական պրակտիկայով: 1685-ին նախաձեռնել է ճանապարհորդություն եւրոպայով (Ֆրանսիա, Իսպանիա, Գերմանիա, Ֆլանդրիա, Հունգարիա), ընդ որում՝ 1687 թ.՝ թուրքերի կողմից Բուդայի պաշարման ժամանակ, վիրավորվել է:

Այնուհետեւ ապրել է Պորտուգալիայում եւ Իսպանիայում եւ Ջենովայի վրայով վերադարձել հայրենիք 1689 թ.: 1693 թ. նախաձեռնել է մի այլ ճամփորդություն դեպի Մալթա, Ալեքսանդրիա, Նեղոսով հասել է Կահիրե, ուր հյուրընկալվել է Ֆրանսիայի դեսպան Մայեի մոտ: Մշտապես ներկայացել է որպես Ֆրանսիացի՝ հնարավորինս քիչ մաքս վճարելու ակնկալությամբ եւ օգտվելով այն առանձնահատուկ ուշադրությունից, որ Ֆրանսիացիները վայելում էին Արեւելքում: Եղել է Պաղեստինում եւ Սբ. Վայրերն այցելելուց հետո Ալեքսանդրիայի վրայով մեկնել է Ջմյուռնիա:

1694 թ. սկզբին Կոստանդնուպոլսում էր: Կրկին Ջմյուռնիայից անցել է Տրապիզոն, ապա՝ Հայկական լեռնաշխարհով Վրաստան եւ Պարսկաստան (նույն տարվա հուլիսին Սպահանում էր): Այնուհետեւ նրան սպասում էին Հնդկաստանի բնակավայրերն ու քաղաքները՝ իրենց ղեղեկությունները ու նաեւ վտանգներով (Մալաբար, Գոա, Գոլկոնդա): Մանոթացել է Օրենզգեբ արքայի հետ, ով այդ ժամանակ պատերազմում էր: Վերջինս նրան առաջարկել է իր մոտ ծառայության անցնել: Հրաժարվելով՝ քրիստոնյա զինվորների օգնությամբ կրկին հասել է Գոա, որտեղից նավով մեկնել է Մակաո: Հագնվելով չինացու նման՝ կարողացել է հեշտությամբ անցնել սահմանը եւ իջեւանել է Կանտոնի Ֆրանցիսկյանների մոտ, որոնք ընդունել են նրան որպես Պապի էմիսար:

Այցելել է նաեւ Պեկին, որտեղ կաթոլիկ միսիոներներին միջնորդությամբ նրան ընդունել է կայսրը: Չինական մեծ պարիսպը տես-



նեկուց հետո 1695 թ. նոյեմբերին մեկնել է Պեկինից: 1696 թ. նա կրկին Մակաոյում էր, ապա՝ Մանիլայում, որտեղից նստել է Ակապուլկո դնացող իսպանական մի նավ: Հասնելով Մոնտեսուեմայի Մեքսիկան՝ այցելել է երկրի հիշարժան վայրերը, ապա մեկնել է Վերա Կրուզ, իսկ այնտեղից՝ Հավանա, եւ 1698 թ. հունիսին հասել է Կադիքսի նավահանգիստ:

Նա աշխարհի շուրջ պտտվել է 5 տարի, 5 ամիս եւ 20 օր: Ընկերները նրան ընդունում էին որպես ուրիշ աշխարհից եկած մարդու: Բավականին երկար է ապրել՝ հրատարակելու համար իր նկարագրող «Ճամփորդութունը» ("Giro del mondo", Napoli, 1699, 1700, 6 vol. in-12)՝ յուրաքանչյուր հատորը նվիրելով որոշակի անձնավորութան: Հեղինակը շատ չի անդրադարձել Թուրքիային եւ Պարսկաստանին, որոնք իր ժամանակակիցների կողմից արդեն բավականաչափ քննարկվել էին: Կենտրոնացել է առավելապես Հինդոստանի, Չինաստանի, Ֆիլիպինների եւ Նոր Իսպանիայի վրա: Հմտորեն տիրապետել է զենքին, ինչը նրան պետք է եկել գլխավորապես Թուրքիայում:

Իր ժամանակակիցներին, ովքեր երկար ճամփորդութունն ձեռնարկելու մտադրութուն ունեին, խորհուրդ էր տալիս ճամփորդելու ընթացքում զբաղվել առեւտրով. հակառակ դեպքում ճամփորդութունը կարող էր անհնար լինել, քանի որ որքան էլ մեծ գումար վերցնեին իրենց հետ, այն անսպասելիորեն կարող էին կորցնել որեւէ միջադեպի ընթացքում: Պարտամուրհակները (lettres de change) եւս նրանց չէին փրկի. չէր բացառվում, որ իրենց թղթակցին մահացած կամ անվճարունակ գտնեին: Միակ ձեւը դրամը ապրանքի վերածելն էր:

Ջեմելլի Կարերիի օրագրութունը կարեւոր է թե՛ պատմական, թե՛ աշխարհագրական եւ տեղեկատվական տեսանկյունից: Նա Վերա Կրուզում կորցրել է իր օրագրության միակ օրինակը եւ հասկացել, որ անպայման հարկ է կրկնօրինակն ունենալ:

Ջեմելլի Կարերին մահացել է Նեապոլում: Նրա «Ճամփորդութուն աշխարհի շուրջ» խորագրով ուղեգրութունը հրատարակվել

է բազմաթիվ անգամ՝ թարգմանվելով տարբեր լեզուներով, թեեւ թարգմանութունները հաճախ զիջում էին բնագրին: Այն իր ժամանակի անգերազանցելի տեղագրական բնույթի աշխատանքներից մեկն է եղել:<sup>178</sup>

Թարգմանութունը կատարվել է հետեւյալ հրատարակութուններից. Voyage du tour du monde, traduit de l' Italien de Gemelli Careri, par L.M.N. Enrichi d'un grand nombre de Figures. Tome second. De la Perse. Paris, 1719:

Ջեմելլի-Կարերիի Ուղեգրությունից

1694 թ.

Գլուխ II

[21] Արաքսն ինը ժամվա ընթացքում 27 մղոն նավակով անցնելով չորեքշաբթի օրը կանգ առանք Ջուլֆայում: Կարելի է ասել, որ այս տարածաշրջանն այլեւս բնակեցված չէ այն ժամանակից ի վեր, երբ Պարսից արքա Շահ Աբաս I-ը բոլոր ընտանիքները տեղափոխեց Նոր Ջուղա՝ Գիլանի գավառ եւ այլ բնակավայրեր, նրանց թուրքերի անդադար ասպատակութուններից ապահովագրելու նպատակով: Այն, ինչ մնացել է այդ քաղաքից, ցույց է տալիս, որ այն մեծ նշանակութիւն (կարեւորութիւն) քաղաք չի եղել՝ աղբակույտերի ու գետնափոր մառանների մի հավաքածու: Գետի երկու կողմերում խոջա Նազարի<sup>179</sup> մեծ ծախսերով կառուցած երկու քարվանսարանները եւս ավերված էին: Այդուհանդերձ, քիչ թվով հայեր (ղեռեւս) բնակվում էին այստեղ, քանի որ (չըջակայքում) մեկ մղոն հեռավորութիւն վրա հողը պարարտ է ու բերրի:

178 St'a' Michaud L. G., t. 17, 1816, pp. 50-54.

179 Իրականում Հիմ Ջուղայի երկու քարվանսարաները կառուցել էր տվել Հիմ Ջուղայի քաղաքապետ Թաֆիխասենց խոջա Խաչիկը՝ Խոջա Նազարի Քայրը (տե՛ս Тер-Аветисян С., Город Джуга, материалы по истории торговых сношений джюльфинских купцов. (XV-XVII), Тбилиси, 1937, ст. 37; Խաչիկյան Ե., նշվ. աշխ., էջ 29):



Գլուխ V

/85/ Իջեաճանում է Սպահանի պորտուգալացի ավգուստինյան-ների մոտ, որտեղ ի թիվս այլազգի ծառայողների՝ երեքը հայ էին:

/92/ Կիրակի օրը դպիրը, պորտուգալացի երեք հոգեւորականներ ու ես գնացինք Ջուլֆա՝ դոմինիկյանների մոտ, որտեղ պատարագեց Ապարանների նույն միաբանութեան հայ արքեպիսկոպոսը: Արարողութեանը հաջորդեց 24 անձից բաղկացած մեծ ճաշկերույթը՝ Պապի դեսպան Մոնս. Պիդուի<sup>180</sup> պատվին, որն օծվել էր Բաբելոնի արքեպիսկոպոս եւ պետք է մեկներ Համադանի իր նստավայրը: Ներկա էին նաեւ Սպահանի արքեպիսկոպոս ընտրված Հայր Եղիա կարմելիտականը<sup>181</sup>, մեկ այլ ասորի կաթողիկ արքեպիսկոպոս, Լեհաստանի դեսպանը<sup>182</sup>, հիսուսյանների Հայր Ռեկտորը<sup>183</sup> եւ հոգեւոր ու աշխարհիկ այլ ներկայացուցիչներ<sup>184</sup>: ...

/93/ Շքեղ շուկաների առջեւով անցանք Ջուլֆա գնալու համար եւ այնտեղ հասանք մի երկար-պողոտայով, որ Շիրաբախ (Չարբախ) կամ «չորս այգիներ» անունն է կրում: Այն սկսվում է նկարագարող պատշգամբներով զարդարված գեղեցիկ տաղավարով, որը կապված է պալատի հետ: Այստեղով Արքան դուրս է գալիս Ջուլֆա կամ մյուս այգիներն այցելելու համար: Կենտրոնում քարե մի գեղեցիկ ջրանցք է, որի ջուրը հոսելով լցվում է ձկներով լի չորս մեծ ավազանները: Այստեղ չինարի ծառերի չորս շարք կա, երկուսն էլ՝ դրսում: Ներքեւում չորս ոտնաչափ բարձրութեամբ բազրիք է, որի լայնքն այնքան է, որ հանգիստ կարելի է զբոսնել ստվերում՝ առանց ձիերի երթեւեկից զգուշանալու: Պարսիկներն

180 Պիդուի մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 115:

181 Եղիա կարմելիտականի մասին տե՛ս աստ, ծանոթ. 130:

182 1694 թ. Սպահանում Լեհաստանի Յան III Սոբիեսկի արքայի դեսպանն էր Իգնատիուս Զապոլսկի (Brzezinski Stanislaw, *Misjonarze i dyplomaci polsci w Persji w XVII i XVIII wieku*, "Annales Missiologicae" 1935, st. 42-45):

183 Իմա՝ Լ. Ժան Բուշեմ, տե՛ս աստ, ծանոթ. 166:

184 Այս մասին տե՛ս նաև Martin Gaudereau, *Relation de ce qui s'est passé à la consecration de Monsieur Pidou de Saint Olon, Evêque de Babylone, faite à Ispahan ce 9 mai 1694.* (Kroell Anne, *Nouvelle d'Ispahan. 1665-1695*, Paris, 1979, p. 81-83):

այստեղ են գալիս՝ զբոսնելու (զվարճանալու), ծխելու, մրգեր համեսելու: Այստեղ մեծ թվով մաքուր սենյակներ կան:

/98/ Երկուշաբթի օրը սկսեցին հալածել ու վռնդել Ջուլֆայի բնիտան կարմելիտներին: Արքայի կարգադրութեամբ դիվան բեկը կամ կառավարիչն ինքն էր փոխադրում նրանց: Հուսով եմ, որ ընթերցողը չի զարմանա՝ այս պատմութունն իմանալով: Այս հոգեւորականները, տարիներ առաջ Ջուլֆայում մի հյուրատուն հիմնելով, մտածում էին մեծացնել այն եւ վանք կառուցել: Այդ առիթով նրանք հիսուն թումանով, որը մի կաթողիկ էր նրանց որպես ոգորմութուն տվել, գնեցին հայերից մեկի տունը, /99/ սակայն միամտութունն ունեցան, երկրի սովորութեան համաձայն, դրանցից այդ ձեռքբերումն արքայական մատյաններում: Հերետիկոս հայերը, որոնք մտադիր էին խանգարել եկեղեցու կառուցումը, սկսեցին մեծ աղմուկ բարձրացնել՝ հիմք ունենալով արքայական հրամանը, որը Ջուլֆայում արգելում էր, հայկականից բացի, որեւէ հոգեւոր գործունեութեամբ զբաղվել: Մյուս կողմից հոգեւոր հայրերը աշխատում էին չընդհատել շինարարութունը՝ թագավորութեան որեւէ տեղում իրենց շինութունն ունենալու մասին արքայի թույլտվութեանը հետեւելով: Հայերն աղմկելով չբավարարվեցին. շուրջ երկու հազար հոգով եկան կարմելիտական Հայրերի դուռը տապալելու եւ մեծ իրարանցում կարող էին ստեղծել, եթե Լեհաստանի դեսպանն իր մարդկանց չուղարկեր հայերի նախաձեռնութունը կասեցնելու:

Սպահանի կաթողիկները բազմաթիվ անգամներ միավորվեցին այս անկարգութեան լուծումը գտնելու համար, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետեւ հայերը հարուստ էին: Ոմն Ստեփանոս վարդապետ<sup>185</sup> կամ քարոզիչ, երեք հազար թուման ճարելով, որ նեապոլիտանական հիսունյոթ հազար էկյուրի է հավասար, նվիրեց մայր թագուհուն ու հարգված նախարարներին՝ կարողանալով իր ուզած կարգադրութունը ստանալ: /100/ Դիվան բեկի առաջին գոր-

185 Իմա՝ Ստեփանոս Զուղայեցի:



ծը եղավ հարցնել Հ. Եղիային, թե ունի՞, արդյոք, փաստաթղթեր, որոնք ապացուցում են, որ ինքը գնել է այդ տունը: Հոգեւորականը ոչինչ չկարողացավ ցույց տալ, քանի որ պատրաստ չէր:

Մյուս կողմից՝ վաճառողը, որին հերետիկոս հայերը բազմիցս սպառնացել էին, պնդում էր, որ ինքը չի վաճառել, այլ վանքին տված հիսուն թումանի դիմաց Հ. Եղիան իրենից ուժով խլել է տունը: Հ. Եղիան ժխտեց դա եւ ասաց, որ օրինական ձեւով է գնել՝ վաճառողի կամքով, սակայն դիվան բեկը, ընդհատելով նրան, ասաց. «Ինչպե՞ս եք առգրավում արքայի ենթակաների տներն առանց որեւէ գրության»: Միաժամանակ նա թույլ տվեց քանդել շինությունը, որ սկսել էին կառուցել, կարգադրեց փակել վանքի դռները եւ կնքել արքայական կնիքով: Հ. Եղիան հարցրեց, թե արդյոք Պարսկաստանում այս ձեւով են հյուրընկալում արքայի հյուրերին: Նրան պատասխանեցին, որ հենց այդ պատճառով էլ իրենց հետ առավել խիստ չեն վարվում:

Դիվան Բեկը<sup>186</sup>, քաղաք վերադառնալով, արքայի հրամանով իր մարդկանցից տասներկու հոգի ուղարկեց Հ. Եղիային եւ նրա երեք պաշտոնակիցներին ուղեկցելու դեպի /101/ Զուլֆայի դաշտը, պայմանով, որ երբեք այլեւս ոտք չդնի այդտեղ, այլապես կտուգանվի հարյուր թումանի չափով: Բարեպաշտ հայրերը քայլելով անցան այս աղմկարար ամբոխի միջով, բայց ճանապարհին հանդի-

186 Դիվանբեկի - այսպես էր կոչվում գերագույն դատավորը, որ մեծ լիազորություններ էր վայելում: Երկրի տարբեր կողմերից բոլոր հարցերի շուրջը տրված բոլոր բողոքները ուղղվում էին դիվանբեկիին: Վերջինս սովորաբար դրանք ներկայացնում էր քննության սադրի գլխավորած Ծարի հոգեւոր խորհրդին՝ Դիվան-ալ-սադարայթին եւ կամ կոնկրետ հարցերի վերաբերյալ դիմում էր սադրին՝ նրա կարծիքն իմանալու: Վերջինիս կողմից տրված վճիռները ենթակա էին հաստատման դիվանբեկիի կողմից առանց որի դրանք չէին կարող օրինական համարվել: Դիվանբեկին փաստորեն քաղաքացիական դատարանի ֆունկցիաներն էր իրագործում եւ առաջնորդվում էր սովորույթային կամ «ուրֆի» օրենքներով՝ սերտ կապ պահպանելով սակայն հոգեւոր դատարանի պետի՝ սադրի հետ (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. արակ երրորդ (1652-1731), կազմեց Կոստիկյան Ք., Երևան, 2005, էջ 190):

պեցին երկու ավգուստինյան հոգեւորականների, որոնց Հ. Գասպար դոս Ռեյեսը<sup>187</sup> ինձ հյուրընկալած վանքի առաջնորդը, ուղարկել էր նրանց ընդառաջ, եւ որոնք նրանց ձիեր տրամադրեցին: Դիվան բեկը դժկամությամբ նրանց արձակեց՝ թույլ տալով օթեւանել Լեհաստանի դեսպանի տանը:

Իրարանցումը մեծ էր, եւ հերետիկոսների ուրախությունն էլ փոքր չէր: Նրանք անասելի անպատկառությամբ սպառնում էին վռնդել նաեւ հիսուսյաններին ու դոմինիկյաններին՝ հույսը դնելով Ազա Քամալ անունով մի սեւամորթ ներքինու պաշտպանության վրա, որը արքայի եւ արքայամոր, ինչպես նաեւ բազմաթիվ ազնվական պարոնների սիրելին էր: Սրա արդյունքում Լեհաստանի դեսպանն իր մարդկանց ուղարկեց հիսուսյանների մոտ: Հ. Գասպարը եւ մյուս պորտուգալացի հոգեւորականները, որոնք մեծ հարգանք էին վայելում, երկյուղելով, որ բոլոր կաթոլիկ միսիոներները կվռնդվեն, երեքշաբթի օրը մեկնեցին Զուլֆա՝ վարդապետին հասկացնելու, որ եթե նրա նպատակը մյուս հոգեւորականներին վռնդելն է, /102/ ինչպես դա արել է կարմելիտականների հետ, ապա

187 Gaspar dos Reis - Սպահանի ավգուստինյան առաքելության նորընտիր առաջնորդը, որը 1696 թ. ընտրվելով Արեւելյան Հնդկաստանի միաբանության առաջնորդ մեկնում է Գոա: (Alonso Carlos, *El Convento agustiniano de Ispahan durante el periodo 1690-1702* Archivo Agostiniano, vol. LXVII, N° 185, 1983, p.162-170; Flannery J. M., *The Mission ...*, op. cit., p. 95; Gulbenkian R., op. cit., vol. I, p. 250-251):

Նրան 1696 թ. Սպահանում պիտի հաջորդի Antonio de Jesus անունով ավգուստինյան հոգեւորականը, որը տարիներ շարունակ ապրել էր Սպահանում եւ որը 1697 թ. դավանափոխվելով կոչվեց Ալի Ղուլի Բեգ՝ Ջադիդ ուլ խլամ: «...Այս մասին Հավատաստիյուն Ժողովի քարտուղար Կառլո Ֆաբրոնիին 1697 թ. սեպտեմբերի 12-ին գեկուցող բոկոսն կարմելիտական Բ. Basilio de S. Carlos-ը նկարագրելով «հերձուածող հայերի» վրա դավանափոխության թողած տպավորությունը, շփոթանալով բացակայում է. "O che scandalo!", (նամակը տե՛ս SC Mesopotamia, Persia, vol. 2, ff 196-197, Թաշիրյան է., նշվ աշխ., էջ 91-92): (Այս մասին տե՛ս Alonso Carlos, *El Convento agustiniano de Ispahan durante el periodo 1690-1702*, Archivo Agostiniano, vol. LXVII, N° 185, 1983, pp. 162-171; *A Chronicles of the Carmelites ...* vol. I, p. 486; Richard F., *Augustine portugais renegat apologiste de l'islam chiite au debut du XVIII s.*, "Moyen Orient et Océan Indien", I, Paris, 1984, pp. 73-85):



նրան կհայտարարեն կաթոլիկների թշնամի, ինչի հետեւանքով Պորտուգալիայի թագավորը եւ բոլոր մյուս կաթոլիկ արքաները կիմանան իրենց անելիքը: Եվ որպէս բարեկամ վստահեցրեց, որ քրիստոնյա երկրներում ցրված հայ վաճառականներն այս պատճառով վատ վերաբերմունքի կարժանանան:

Քանի որ այդ վարդապետը համառ մի ծերուկ էր եւ պատասխանեց, որ արքաներն իրեն չեն հուզում, երբ խոսքն իր հոտի հավատքի մասին է, առաջնորդը եւ նրա փոխանորդը, որն արեւելյան լեզուների հրաշալի գիտակ էր, համոզեցին նրան իրենց ներկայութեամբ պատուել կաթոլիկներին վռնդելու մասին ռազամը կամ արքայական հրամանը: Նա հայտարարեց, որ դա անում է իրենց պատճառով:

Հարկ չկա զարմանալու այն բանի վրա, որ չնայած Հայրերն իրենց հաստատման համար ունեին բոլոր ռազամները, հայերը հեշտութեամբ կարողանում էին ձեռք բերել դրանց հակառակ հրամանները: Արքան, լինելով մտքի շարունակական ապշութեամբ մեջ, թույլ էր տալիս, որ իրեն կառավարեն, հնարավոր չէր կյանք անվանել այն, որն արքան էր ապրում: Հազիվ արթնանալով այն խորքնից, որ նրան պատճառել էին Շիրազի եւ այլ /103/ շրջանների գիւնիները, նա կրկին խմիչք էր փնտրում .....

/104/ Մինչ պորտուգալացի հոգեւորականներն իրենց ողջ ողորմածութիւնն էին օգտագործում Ջուլֆայի գործի համար, չորեքշաբթի օրը մեկ այլ փորձանք պատահեց: Թագավորից հրաման եկավ, որ խոջա Մարգարա կաթոլիկ հայը պետք է վճարի 500 թուման: Որոշ մարդիկ ասում էին, որ սրա պատճառն այն է, որ ինքն էր այս իրարանցման գլխավոր սաղրիչը, քանի որ շատ էր համակրում Հ. Եղիային: Իսկ մյուսները վստահ էին, որ պատճառը նրա կրօնափոխ լինելն էր, եւ թագավորութեան օրենքի համաձայն՝ մահմեդականութիւն չընդունելը: Այս պատճառն ամենահավանականն էր: Նրանք ավելացրին, որ դիվան բեկն, իմանալով այս մասին, մարդ էր ուղարկել Աքսոնդի մոտ, որն ամուսնութիւնների, ապահարգանքների պայմանագրերի եւ այլ գործարքների համար

նախատեսված անկախ դատավոր էր, հարցնելու, թե ինչպե՛ս պետք է վարվել այսպիսի մարդու հետ: Նա պատասխանել էր, որ պետք է ողջակիզել: Սակայն արքան, գտնելով, որ պատիժը չափազանց դժան է, /105/ այն փոխարինել էր 2000 թուման տուգանքով, որն էլ կրճատեցին՝ դարձնելով 500, հարեմում գտնվող Մարգարայի դստեր խնդրանքով:

Հայերը, դժգոհ լինելով կաթոլիկներին հալածելու գործընթացից, հնարավոր ամեն ինչ արեցին նրանց հովանավորող դեսպանին պաշտոնազուրկ անելու համար: Արդեն մի քանի ամիս է, ինչ Վեզիրն արքայի անունից նրան պատասխանել էր, որ վերջինս ամենեւին նպատակ չունի թուրքերի հետ կնքած խաղաղութիւնը խախտելու: Դեսպանն ակնկալում էր հրաժեշտի տեսակցութիւն ստանալ արքայի մոտ: Բարի հայերն այնքան լավ կարգադրութիւններ արեցին պետական նախարարների հետ, որ հինգշաբթի օրը նրան մեկնելու հրաման ներկայացրին՝ հասկացնելով, որ եթե չի ցանկանում վարչապետին հրաժեշտ տալ, կարող են ավելի ցածր պաշտոն ունեցող մի անձնավորութիւն ուղարկել: Բացի այդ, հրաժարվեցին վճարել նրա վերջին երեք ամսվա աշխատավարձը (օրապահկը), որը նա, ինչպէս նաեւ մեկնելու համար նախատեսված ուղեկցող անձնակազմը, ստանում էին արքայի մոտ նրա առաջին ընդունելութիւնից սկսած: Չվճարեցին նաեւ նախատեսվածից առավել երկար մնալու համար տան վարձակալութեան գումարը:

Ուրբաթ օրը հոգեւորականների մոտ ճաշի ժամանակ դեսպանն ասաց, որ օգոստոսի վերջին կվերադառնա Լեհաստան, անկախ այն բանից՝ արքան կընդունի իրեն /106/, թե ոչ, քանի որ տեսնում է, որ ոչ մի հնարավորութիւն չկա պարսիկների եւ թուրքերի միջեւ պատերազմ հրահրելու, ինչպէս ցանկանում էր իր Տերը: .....

/116/ Այս ողջ ընթացքում Ստեփանոս վարդապետը<sup>188</sup>, որը պատրիարքից անկախ էր, այլ չորս կախյալ եպիսկոպոսների հետ

188 Իմա՛ Ստեփաննոս Ջուղայեցի (1626-1698), եպիսկոպոս, 1683 թվականից, Նոր Ջուղայի առաջնորդ, ավելի ուշ Էջմիածնի կաթողիկոս (կենսագրությունը, այս անույն օրերի ամսուրարձը, կտակը եւ մատենագրական ժառանգությունը մասին



միասին չէր դադարում ջանք գործադրել Ջուլֆայից մյուս միսիոներներին եւս հալածելու համար: Սակայն Աստծո թույլտվութեամբ Հովհաննէս<sup>189</sup> անունով մի այլ վարդապետ մի մեծ ամպրոպ սարքեց նրա գլխին: Այս Հովհաննէսը Ջուլֆայի արքեպիսկոպոսն էր, սակայն, Ստեփանոսի ձեռքով այդ պաշտօնից զրկվելով, կաթողիկոսութուն ընդունեց եւ իր հոգեւորականներից մեկի հետ քաշվեց Ալապիի, այնուհետեւ, հուլիսի 117/ Ջուլֆայի քաղաքի վրա, որը մահմեդականութուն էր ընդունել<sup>190</sup>, Ստեփանոսին մեղադրեց Մուհամմեդի դեմ գրքեր պահելու համար<sup>191</sup>: Նրա մոտ խուզարկութուն անցկացրին, երկու գիրք գտան, որոնցից մեկը երեսուն տարի առաջ հայերենով հրատարակված էր մի այլ Ստեփանոս վարդապետի կողմից եւ լի էր մահմեդականների հանդեպ բազմաթիվ հայհոյանքներով:

Քննելով նյութը՝ հավատափոխ մի հայ թարգմանում էր գիրքը Նահաբի եւ Աքսոնդի ներկայութեամբ, իսկ այլ երկու պարսիկներ գրի էին առնում թարգմանութունը: Ստեփանոսը դատապարտվեց ողջակիզման, քանի որ վկայեց, որ այդ գիրքը կազմված է մի այլ

տե՛ս Ղուկասեան Վազգէն, *Ստեփանոս կաթողիկոս Ջուղայեցի*, - «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ-Գ տարի, 1981-1982, էջ 313-344, հմմտ. Գաեի Ghougassian Vazken, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*. Atlanta, 1998):

189 Հովհաննէս վարդապետը Ստեփանոս Ջուղայեցու աշակերտներից մեկն էր, որը խաբէութեամբ եպիսկոպոսական աստիճան ստանալով փորձում էր իր ձեռքը վերցնել թեմական իշխանությունը, սակայն Ստեփանոս Ջուղայեցին Աղափիրի քաղաքարի հետ միասին ձերբակալում են Գրան: Հովհաննէսը փախչելով մահմեդականություն է ընդունում՝ անվանափոխվելով Թիմոնե՛ն եւ չարախոսութեամբ է գրադրում հայ եկեղեցու եւ հոգեւորականների դեմ: Ըստ Մ. Օրմաճյանի ուրացությունը պետք է որ տեղի ունեցած լինի 1685 թ. հետո (այս մասին մանրամասն տե՛ս Ղուկասեան Վազգէն, *Ստեփանոս կաթողիկոս Ջուղայեցի*, - «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ-Գ տարի, 1981-1982, էջ 319):

190 Խոսքը Նոր Ջուղայի քաղաքար Ավետի՛ խաչիկի որդու մասին է, որը 1691 թ. մահմեդականություն ընդունեց եւ անվանափոխվելով կոչվեց Մահմատ Հուսեյն բեկ (տե՛ս Խաչիկյան Շ., *Գշվ աշխ.* էջ 30):

191 1687-1688 թթ. Ստեփանոս Ջուղայեցու տպագրած գրքերի մասին տե՛ս Վազգէն Ղուկասեան, *Ստեփանոս կաթողիկոս Ջուղայեցի*, էջ 323:

Ստեփանոս վարդապետ Լեհացու<sup>192</sup> կողմից էջմիածնում (Ismaizen), եւ որ մյուս ձեռագիրը կեղծվել է իրեն մեղադրողների կողմից: Սակայն արքան, որը լավ աչքով չէր նայում այս կղերական դատավորներին, արգելք դրեց հավատքի դատաստանի վրա այն ժամանակ, երբ ողջ քաղաքը անհամբերութեամբ սպասում էր շարագործի մահվանը: Բայց ես, իմանալով, որ այս արքեպիսկոպոսը հարուստ է, միշտ վստահ էի, որ իր բարեկամների միջոցով կյանքը կփրկի: Դա ոչ միայն այդպես եղավ, այլեւ տանջանքների փոխարեն մայր թագուհին նրան խալաթ (Calant) ուղարկեց՝ պատվո բաճկոն /118/, եւ մեղադրողներին կարգադրեց կաթողիկ հոգեւորականների՝ Փրանկներին հետ իր հովանավորութեամբ Ջուլֆա վերադառնալ:

Գլուխ VII

/119/ Կիրակի օրը պատարագի մասնակցեցի կարմելիտ Հայրերի մոտ: Հ. Եղիայից իմացա, որ իր վստահութեան շնորհիվ ի դերեւ է հանել կաթողիկների բոլոր ջանքերը Ջուլֆայում իրենց միսիան հաստատելու ուղղութեամբ:

192 17-րդ դ. աստվածաբան, փիլիսոփա եւ թարգման Ստեփանոս Լեհացու մասին մանրամասն տե՛ս Ակիմեան Հ. Ն., *Ստեփանոս վարդապետ Լեհացի*, - «Հանդես ամսօրեայ», 1912, N 1, էջ 61-66, թիւ 2-3, էջ 147-153: Թարվերդյան Յու. Ա., *Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները*, Եր., 1979: Տապանագիրը վերջերս հրատարակուեց մի քանի անգամ (տե՛ս. Հարությունյան Արսեն, *Նորահայտ տապանագրեր Ս. Հովսիսիմեի վանքից*, - «Էջմիածին», էջ 2012, Բ, 73: Նույնի, *Ստեփանոս վարդապետ Լեհացին եւ Գրա տապանագիրը*, - «ՎԷՄ» հանդես, 2013, թիւ 3 (43), էջ 78-87: Նույնի, *Վաղարշապատ. Վանքերը եւ վիմական արձանագրությունները*, Ս. Էջմիածին, 2016, էջ 281-285): Մայր Աթոռում երկար տարիներ կաթողիկոսական տեղապահ եւ աթոռակալ Ստեփանոս Լեհացու հակակաթողիկե գործունեության վերջին վկայությունը պատկանում է Եղիա Կարմելյանին, որ 1690-ին գրում էր Հոռոմ, տեղեկացնելով թե Ստեփանոս Լեհացին Սահրատների ընտանիքին (Օեհրիմանյաններ) կրկին հրավիրում է «հերձվածող դառնալ» (տե՛ս Թաշիրյան Է., *Գշվ. աշխ.*, էջ 82-83):



VIII գլուխ

Ջուլֆայի գաղթօջախի եւ հայերի ծիսակատարությունների Ակարագրությունը

131/ Գնացի Ջուլֆա՝ հիսուսյանների եկեղեցին տեսնելու նպատակով: Ճանապարհին տեսա հայերի գերեզմանոցը, որտեղ գերեզմանները վատ չեն շինված:

135/ Ջուլֆայից վերադարձին մի հայ ինձ ցույց տվեց նորագույն հնարքներով շինված մի ժամացույց:

136/ Ջուլֆան կամ Ջուլֆան գորերի<sup>193</sup> գյուղին մոտ է, Սպահանից երկուսուկես մղոն հեռավորության վրա է գտնվում եւ նրանից բաժանված է Ջենդերուդ (Senderout) գետով: Սա մի նոր հայկական գաղթօջախ է, որն այստեղ հաստատվել է Մեծն Շահ Աբասի հրամանով թուրք-պարսկական պատերազմի ամենաթեթ ժամանակաշրջանում: Այս քաղաքը երեք մղոն երկարություն ունի եւ ինը մղոն շրջագիծ՝ ընդարձակ պարտեզների շնորհիվ, որոնք նրան ավելի շուտ անտառի տեսք են տալիս:

Տները ներսից շատ գեղեցիկ են, մինչդեռ դրսից բավականին սգեղ են երևում: Փողոցները շատ ավելի ուղիղ են ու մաքուր, քան Սպահանում: Դրանք երկու կողմից չինարի ծառերով են զարդարված՝ կենտրոնից հոսող խաչափառներով լի ջրանցքով: Ջուլֆայում ապրող ֆրանսիացիներն ինձ պատմեցին, թե ինչպես են խաբել Թավերնիեին: Քառասուն տարի առաջ, երբ նա 137/ ճաշում էր Մ. էթուալի<sup>194</sup> հետ, նրանց խաչափառներ հրամցրին, որոնք հրաշալի էին: Հաճոյախոսությունների վարպետ Մ. էթուալը նրան

193 Իմա՝ գաբրերի:

194 Sieur Alexandre de L'Estoille.- Արեւելահնդկական ֆրանսիական ընկերության անւտրական ներկայացուցիչը Պարսկաստանում: (Նրա մասին տե՛ս Kroell A., Alexandre De Lestoille: dernier agent de la Compagnie Royale des Indes en Perse, (Moyen Orient & Océan Indien, XVI<sup>e</sup>-XIX<sup>e</sup> s., 1), 1984, pp. 65-72; Ասլա-նեան Ս. Դ., Ջուղայեցի վաճառականներ եւ երոպական արեւելահնդկական ընկերություններ. Ցամաքային անւտուր, պաշտպանութեան ծախսեր եւ հաւաքական ինքնակերպացման սահմանները վաղ արդի Սեֆեան Իրանի մէջ. «Հանդէս ամսօրեայ», 2015, էջ 256 - 290:

ասաց. «Դրանք միշտ էլ լավագույնն են այստեղ, որովհետեւ միայն սպիտակ թութ են ուտում»: Տեսնելով, որ միամիտ Թավերնիեն հետաքրքրվեց այդ պատմությամբ՝ գրի առնելու համար, թե ինչպես են դրանց աճեցնում եւ ինչպես են բուսում, ավելացրեց. «Երեկոյան նրանք դուրս են գալիս թթենիների մոտ գտնվող իրենց բներից, դրանց վրա բարձրանալով ողջ գիշեր թութ են ուտում եւ առավոտյան վերադառնում ջրի մեջ: Սակայն պարտիզպաններն արագ թափ են տալիս ծառերը եւ հավաքելով տանում, վաճառում են հրապարակում»: Այս որպես կատակ արված պատմությանը, Թավերնիեն հավատաց եւ լուրջ ընդունելով՝ գրի առավ որպես իրականություն: Սա հաստատվեց նույն Մ. էթուալի որդու, մի ծերունի հայի եւ բաղձաթիվ ֆրանսիացիների կողմից, որոնք նրան ճանաչել էին Սպահանում: Այստեղից պետք է համասպատասխան եզրակացություն անել այն ամենի մասին, ինչ գրել է այս հեղինակը, որն այդքան դյուրահավատ է նույնիսկ այն բաների վերաբերյալ, որոնք անհավանական են, քանի որ պարսիկները ոչ միայն երբեք չեն ուտում այդ խաչափառները, այլեւ սոսկում են դրանցից:

138/ Ինչ վերաբերում է Ջուլֆայում հայերի կառավարմանը, արքան քրեական հարցերում շատ խիստ արդարադատություն է կիրառում, իսկ աշխարհիկ հարցերում նա լիազորում է քալանթարին կամ դատավորին, որոնք նրանց ազգակիցն են, արքայական գանձարանին բնակիչների վճարելիք հարկերը հավաքելու համար: Սրանք այսօր թագավորության ամենահարուստ բնակիչներն են՝ որքան այն դրամի շնորհիվ, որ նրանց փոխ է տվել Շահ Աբաս Առաջինը, այնքան էլ հատկապես մետաքսի մեծ ապրանքաշրջանառության շնորհիվ, որ նրանք իրականացնում են ողջ աշխարհում: Բացի դրանից, նրանք շատ չափավոր են իրենց ընտանեկան կյանքում եւ իրենց ճամփորդություններում, այնպես որ դրամն ամեն վայրկյան ծաղկում է նրանց զրպաններում:

Հոգեւոր կյանքում նրանք կառավարվում են արքեպիսկոպոսի կողմից, որն անկախ է պատրիարքից եւ ունի չորս ենթակա եպիսկոպոսներ: Այդ Ստեփանոսը, որի մասին խոսել ենք, հանգիստ լինելով



իր անկախ վիճակի շնորհիվ, բացահայտ առեւտուր է անում հաղորդություններ եւ հուղարկավորություններ կատարելիս եւ այս միջոցով հեշտությամբ հավաքում է հարյուր հազար էկյուն:

Բացի հայերենից, որը երկու ձեւ ունի եւ գրվում է տարբեր տառատեսակներով<sup>195</sup>, հայերը վարժ խոսում են պարսկերեն եւ թուրքերեն: Գրական հայերենը ծառայում է կրոնին, իսկ գեհեհիկը ժողովրդի լեզուն է:

[139] Բացի կարմելիտական միսիոներներից, որոնք բավականին մեծ թիվ են կազմում, Զուլֆայում կան նաեւ Հիսուսյաններ եւ դոմինիկյաններ: Բայց սրանք այնքան սակավաթիվ են, որ դժվարանում են պատարագ մատուցել: Բնակչության մեջ կաթոլիկները շատ չեն, եւ երեխաներից քչերն են կաթոլիկություն ընդունում, քանի որ հենց վարդապետն իմանում է այդ մասին, նրանց ծնողներին զրկում է հաղորդություն ստանալու իրավունքից: Վերջիններս ժողովրդի զայրույթը չշարժելու համար ստիպված են լինում ետ պահել երեխաներին կրոնափոխությունից:

Հայ կանայք շատ գեղեցիկ են. արվեստն ամենեւին չի աջակցում նրանց հմայքին: Նրանք ծածկում են իրենց գլուխը սպիտակ եւ նուրբ կտավով, որն ամրանում է կզակի տակ: Մազերը մեկ հյուս են անում, որ, պահելով թավշե քսակի մեջ, թողնում են ուսերի վրա: Այդուհանդերձ ամենահարուստներն ու առավել սնապարծները ոսկու եւ թանկագին քարերի մեջ են դեռ փնտրում իրենց գեղեցկությունն ավելացնելու միջոցը:

Չորեքշաբթի օրը մնացի քաղաքում եւ պատարագի մասնակցեցի հայկական եկեղեցում, որն ընդամենը մեկ խորան ուներ զոհարարության համար: Դասը մի քանի աստիճան բարձր էր գավթից: [140] Երկուսն էլ ծածկված էին գեղեցիկ գորգերով:

Պատարագը մատուցվեց արքեպիսկոպոսի կողմից, որին սպասարկում էին երկու եպիսկոպոսներ՝ սարկավագի եւ արեղայի կարգավիճակով: Խորանի աջ կողմում բազմաթիվ վառվող մոմեր կային:

195 Տե՛ս աստ՝ ծանոթ 70:

Ավետարանն ընթերցելուց հետո դպիրները հինգ թղաչափ երկարություն ունեցող զավագանների վրա ամրացված փոքրիկ զանգակները (իմա՝ քշոց - է. Թ.) շարժեցին եւ այդ ձայնի տակ հոգեւորականներն ու աշխարհականները միասին երգեցին: Նշխարը սրբագործելուց հետո եպիսկոպոսներից մեկը մի փոքրիկ խորշից հանեց սկիհը, պտտեց Ս. Խորանի շուրջը եւ, դնելով խորանի վրա, մի քանի աղոթք ասաց: Պատարագիչն այնուհետեւ վերցրեց այն՝ նշխարը վրան, եւ, դառնալով դեպի ժողովուրդը (որն անմիջապես ծնկի գալով, սկսեց կուրծք ծեծել), ասաց. «Սա Տերն է, ով իր մարմինը եւ իր արյունը տվեց մեզ համար»: Այնուհետեւ, շրջվելով դեպի Ս. Խորանը, գինու մեջ թաթախված նշխարը եւ սկիհը ձեռքին իջավ այնտեղից ու ժողովրդի հետ միասին երեք անգամ կրկնեց. «Ես խոստովանում եմ եւ հավատում եմ, որ սրանք մարմինն ու արյունն են Աստծո Որդու, որը աշխարհի մեղքերին է թողություն տալիս [141] եւ ոչ միայն մեր, այլեւ ողջ մարդկության փրկությունն է»:

Սրանից հետո նա գինու մեջ թաթախված նշխարով հաղորդություն տվեց նույնիսկ երկու-երեք տարեկան երեխաներին՝ առանց հաշվի առնելու, որ նրանք կարող են դցել այն: Հայերը սկիհի մեջ երբեք ջուր չեն ավելացնում, քանի որ ասում են, որ Տերը Խորհրդավոր Ընթրիքին մաքուր գինի խմեց: Նշխարն առանց թթիմորի է հուցվում. վարդապետն այն պատարագի նախորդ օրն է թխում՝ մոտավորապես մեր նշխարների չափով:

Հաղորդություն չեն առնում Մեծ Պահքի շրջանում: Կիրակին է միայն «Ի թիվ պատարագ», երբ պատարագիչը չի երեւում խորանի վրա եւ ավետարանի «Հաւատոյ հանգանակը» միակ բարձրաձայն արտասանվող տեքստն է: Նույն ձեւով են պատարագում նաեւ Ավագ Հինգշաբթի օրը: Այդ օրը ցանկացողները կարող են հաղորդություն ստանալ, այդուհանդերձ բոլորը նախընտրում են սպասել շաբաթ օրվա (ճրագալույցի - է. Թ.) պատարագին, որը մատուցվում է մայրամուտից առաջ եւ որից հետո կարելի է ձեթ, յուղ եւ հավիկիթ ճաշակել:



Ջատկի օրը նորից պատարագ է մատուցվում եւ Հաղորդություն տրվում, որից հետո բոլորը կարող են նույն օրը մորթված մսեղեն ճաշակել: Նրանց չորս /142/ Տաղավար տոները՝ Ս. Ծնունդը, Համբարձումը, Ավետումը եւ Ս. Գեւորդը, ուղեկցվում են ութնօրյա պահքով, որի ընթացքում չեն ուտում ո՛չ միս, ո՛չ հավկիթ, ո՛չ ձուկ, ո՛չ կարագ, ո՛չ ձեթ: Այնպիսի ջերմեռանդներ կան, որ նույնիսկ Ս. Գեւորդի պահքի ժամանակ երեքից հինգ օր ոչինչ չեն ուտում:

Եթե որեւէ մեկն ուզում է իր որդուն հոգեւորական դարձնել, տանում է նրան քահանայի մոտ, որը, մի քանի աղոթք ասելով, նրան շուրջառ է հագցնում: Այս արարողությունը յոթ անգամ պետք է կրկնվի տարիների ընթացքում: Եթե չորրորդից հետո երիտասարդը չի ցանկանում քահանա դառնալ, կարող է ամուսնանալ, սակայն եթե կինը մահանում է, եւ նա ցանկանում է կրկին ամուսնանալ, ապա չի կարող քահանայական կոչում ունենալ: Վերջին արարողությունը կատարում են, երբ լրանում է պատանու տասնութ տարին: Եպիսկոպոսը կամ ինքը՝ արքեպիսկոպոսն ուղեկցում է քահանայական զգեստներ հագած պատանուն այն վանքը, որտեղ նա արդեն ծառայում էր նախորդ մեկ տարվա ընթացքում: Քահանաները իրենց կանանց հետ չեն կարող ուտել կամ խմել ո՛չ պատարագից հինգ օր առաջ եւ ո՛չ էլ հինգ օր հետո: Նրանք արեղաների նման ստիպված են /143/ առաջին հինգ օրն անցկացնել առանց մսեղենին մատով դիպչելու, իսկ մյուս հինգ օրը միայն հավկիթ եւ աղաջրի մեջ խաշած բրինձ պետք է ուտեն:

Արքեպիսկոպոսների կյանքը շատ խիստ է, որովհետեւ նրանք միս չեն ուտում, իսկ ձուկ՝ տարին չորս անգամ: Տարվա ընթացքում նրանք սնվում են խոտերով ու բանջարեղենով: Բոլոր հոգեւորականներն ու աշխարհականները տարվա ընթացքում վեց ամիս եւ երեք օր պահք ունեն: Ուստի նրանք միայն հաց եւ մի քանի տեսակ հում խոտ են ուտում: Բանվորները ցանկության դեպքում սնվում են աղաջրի մեջ խաշած խոտերով, որի վրա ընկույղի ձեթ են լցնում, բայց մտով չեն սնվի նույնիսկ ամենազաժան հիվանդության դեպքում:

Կնուկների արարողությունը միայն կիրակի օրն են կատարում, Համենայն դեպս՝ եթե մահվան վտանգ չկա: Մանկաբարձուհին երեխային տանում է եկեղեցի, ուր քահանայի մի քանի աղոթքից հետո երեխային՝ ամբողջովին մերկ, ընկղմում են ջրի մեջ, այնուհետեւ տալիս են կնքահորը: Քահանան, իրար միացնելով երկու թել՝ առաջինը կարմիր մետաքսից, երկրորդը բամբակից, որոնք խորհրդանշում են ջուրը եւ Մեր Տիրոջ արյունը, /144/ ամրացնում է երեխայի վզին՝ օձելով երեխայի ճակատը մյուսողով ասելով. «Ես քեզ մկրտում եմ յանուն Հօր, Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»: Նույն խոսքերն արտասանելով՝ նա շարունակում է օձել երեխայի վերջույթները:

Երբ մկրտությունն ավարտվում է, կնքահայրը եկեղեցուց դուրս է գալիս՝ երեխան ձեռքին, վառվող մոմերով: Մի քանի երաժիշտների ուղեկցութամբ նա երեխային տանում է մոր տունը: Մայրը, շնորհակալություն հայտնելով կնքահորը, համբուրում է երեխայի գլուխը: Ինչ վերաբերում է երեխայի անվանը, դա պայմանավորվում է օրվա տոնացույցով: Ապա մեծ ճաշերույթ է տեղի ունենում՝ կախված հրավիրյալների թվից եւ կարգավիճակից: Նրանց մեջ կան ընկերներ, ծնողներ, հոտի բոլոր քահանաներն ու դպիրները: Ովքեր ուզում են խոսափել այս բավականին մեծ ծախսերից, հայտնում են, որ երեխան մահամերձ է, եւ մկրտության արարողությունը կատարում են շաբաթվա մեջ: Շատ մեծ անհարմարություն է այն կանանց համար, որոնք ծննդաբերում են Սուրբ Ծնունդից տասնհինգ օր առաջ, քանի որ երեխային պետք է մկրտել հենց այդ օրը:<sup>196</sup>

Բոլորը գիտեն, որ հայերը հետեւում են /145/ Հին տոմարին. այսպիսով՝ Ս. Ծնունդը տասը օր ուշ է տոնվում, քան մեկ մոտ: Այդ ընթացքում Ձենդերուզ գետի վրա կառուցում են երեք բեմ, որոնց վրա գեղեցիկ գորգեր են փռում, իսկ կենտրոնական բեմի վրա խորան են սարքում: Ս. Ծնունդի օրը՝ արեւածագին, Ջուլֆայի եւ շրջակայքի ողջ հայ հոգեւորականությունն այնտեղ է հավաք-

196 Մկրտության մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 39:



վում՝ իր հանդերձանքով, խաչերով ու դրոշներով: Խաչը երեք անգամ թաթախում են գետի մեջ՝ ամեն անգամ մյուսոն լցնելով ջրի մեջ: Այնուհետև մկրտության աղոթքներ են ասվում, ապա կնքվող երեխային ընկղմում են գետի մեջ՝ սաղմոսներ երգելով եւ ավանդական արարողությունները կատարելով:

Նրանց օգտագործած մյուսոնը ձիթապտղից չի պատրաստված, այլ տարբեր ծաղիկներից, հատկապես՝ դրախտի ծաղիկներից, որ նրանք կոչում են Բալասան Մաղիկ (Balassan-Jaghe), եւ գանազան հոտավետ համեմունքներից: Այն օրհնում են Ս. Կույսի Վերափոխման տոնակատարության նախօրյակին, ապա պատրիարքն այն բաժանում է Ասիայի, Աֆրիկայի եւ Եւրոպայի հայկական թեմերին:

Հրավիրված լինելով Ջուլֆայում տեղի ունեցող մի հարսանիքի<sup>197</sup> հինգշաբթի օրը՝ վաղ առավոտյան, ճաշեցի հիսուսյանների Հայր Ռեկտորի հետ: Երբ եկան մեզ հայտնելու, /146/ որ արարողությունը սկսվելու ժամն է, մենք անմիջապես հայտնվեցինք փեսացուի տանը, ուր հավաքվել էին մեծ թվով ազգականներ ու բարեկամներ: Հանկարծ փեսացուն թռավ ձիու վրա եւ բազմաթիվ մարդկանց ուղեկցությամբ ընդառաջ գնաց հարսնացուին, որը նույնպես թանկագին քարերով զարդարված ձիու վրա էր նստած: Նրանք, վառվող ճրագները ձեռքներին, ուղղվեցին դեպի եկեղեցի՝ բազմաթիվ հեծյալ ազգականներով շրջապատված: Եկեղեցու առջեւ ձիերից իջնելով՝ նորապսակներն առաջացան դեպի Ս. Խորանը, ուր ճակատ ճակատի տալով՝ կանգնեցին, եւ եպիսկոպոսը, ավետարանը նրանց գլխին հենած, աղոթքներ կարդաց, ապա նորապսակների համաձայնությունը ստանալուց հետո օրհնեց նրանց՝ թմբուկների եւ այլ երաժշտական գործիքների ձայների ներքո: Արարողությունն ավարտվելուց հետո նրանք նույն ձեռով վերադարձան:

Պետք է իմանալ, որ հայերն իրենց աղջիկներին շատ վաղ հասկում են ամուսնացնում, նույնիսկ օրորոցում՝ զգուշանալով, որ Արքան նրանց չտանի հարեմ: Մայրերը սովորություն ունեն պայ-

ման կապելու, ապա դրա մասին հայտնելու հորը: Պայմանը կապելուց անմիջապես հետո փեսացուի մայրը քահանայի եւ երկու մեծահասակ կանանց հետ գնում է հարսնացուի մոր մոտ՝ /147/ որդու կողմից գառնուկ տանելով: Որդին ներկայանում է քիչ անց եւ քահանան նրանց երկուսին էլ օրհնում է: Այնուհետև խմում են այս ուրախության առթիվ: Այս պսակը կայանալուց հետո փեսացուն ամեն տարի Ջատիկի տոնի կապակցությամբ հարսնացուին նրա ընտանեկան դիրքին համապատասխան զգեստներ պետք է ուղարկի: Ս. Պսակի արարողությունից երեք օր առաջ ամուսնու հայրը ճաշկերույթ է կազմակերպում սկեսուրի տանը, ուր հրավիրվում են երկու կողմերի ազգականները՝ կանայք մի սենյակում, տղամարդիկ՝ մյուսում: Հաջորդ օրը փեսացուն զգեստներ է ուղարկում հարսնացուին, ինքն էլ ընդունում է զոքանչի ուղարկած հանդերձաները, որ անմիջապես հագնում է:

Եթե հայը մահանում է, հանգուցյալին լվացող անձը եկեղեցուց վերցնում է մյուսոնի սրվակը եւ լցնում այնտեղ, ուր պիտի լվանա դին: Մերկացնելուց եւ լվանալուց հետո հաղցնում է սպիտակ շապիկ, բոլորովին նոր սպիտակեղեն եւ նրան դնում կտավից կարված մի նոր տոպրակի մեջ (պատանք - է. Թ.), որի բացվածքը կարում է: Սրանից հետո ազգականների ուղեկցությամբ եւ վառվող մոմերով գալիս են քահանաները /148/ մարմինը եկեղեցու խորանի առջեւ տանելու համար: Երբ քահանան ավարտում է աղոթքը, նրանք մոմերը գնում են հանգուցյալի շուրջը եւ նրան ողջ դիչեր թողնում են եկեղեցում: Հաջորդ օրն առավոտյան պատարագից հետո հանգուցյալին տանում են արքեպիսկոպոսի կամ եպիսկոպոսի տան առջեւ, որպեսզի վերջինս «Հայր մեր» ասի հանգուցյալի հոգու համար: Ապա իջնում են գերեզմանի մեջ եպիսկոպոսի եւ քահանաների աղոթքների ու երգեցողության ուղեկցությամբ: Եպիսկոպոսն այնուհետև բռով հող է նետում հանգուցյալի վրա՝ երեք անգամ կրկնելով. «Հող էիր եւ հող դարձիր, մնա այնտեղ մինչեւ Տիրոջ վերադարձը»: Այնուհետև հողով լցնում են փոսը: Ազգականներն ու ընկերները վե-

197 Հայերի Ռարսամիքի մասին տե՛ս աստ՝ ծանոթ. 38:



րադարձին հոգեհաշ են գտնում հարուստ տներում: Հոգեկորականներին հյուրասիրում են յոթ օր շարունակ:

Եթե եպիսկոպոս է վախճանվում, բացի այն արարողություններից, որոնց մասին խոսեցինք, պատարագից հետո, հանգուցյալի ձեռքերի մեջ են դնում մի թուղթ, որի վրա գրված է. «Հիշի՛ր, որ դու հող էիր եւ հող պիտի դառնաս»: Եթե հանգուցյալը ստրուկ է, նրա տերը /149/ եւս թղթի վրա գրում է, որ ինքը չի բարկանում, որ այսուհետեւ նա ազատ է, եւ ազատություն է շնորհում նրան: Եթե հանգուցյալն ինքնասպանություն է գործել, նրան երբեք դուրս չեն բերում տան շքամուտքից, այլ՝ պատի մեջ նոր բացված անցքից, եւ թաղում են առանց որեւէ արարողության:

Սուրբ Խաչի արարողության նախորդ օրը տղամարդիկ եւ կանայք գերեզմանոց են գնում՝ իրենց հետ մեծ քանակությամբ մթերք տանելով: Նրանք այնտեղ են անցկացնում ողջ գիշերը՝ որոշ ժամանակ լաց լինելով, հետո՝ ուտելով ու խմելով: Անգամ քաղաքի ամենաաղքատ բնակիչը չի բացակայում այս արարողությունից<sup>198</sup>:

Ի վերջո, այս գլուխն ամփոփելով, ասեմ, որ հայերը, չնայած մահմեդականների մշտական հալածանքներին, անփոփոխ պահպանում են իրենց հին ավանդույթներն ու հավատքը: Նրանցից շատ քչերն են, որ շահից դրդված՝ մահմեդականություն են ընդունել, քանի որ կրոնափոխներին թույլ է տրվում յուրացնել իրենց ազգականների, նույնիսկ՝ հոր ողջ ունեցվածքը<sup>199</sup>. վերջինս ստիպված է դրանից հետո ապրել որդու կամքի համաձայն:

198 Սուրբ Խաչի արարողության մասին տե՛ս Թաշիրյան Է., Գշվ. աշխ., էջ 59-60:

199 Տե՛ս աստ, ծանոթագրություն 56:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [Avril P. Ph.], *Voyage en divers États d'Europe et d'Asie, entrepris pour découvrir un nouveau chemin à la Chine...*, Paris, 1692.
- [Brun Corneille le]. *Voyages de Corneille le Brun, par la Moscovie, en Perse et aux Indes Orientales, ...* T. IV, Amsterdam, 1718.
- [Chinon P. Gabriel de], *Relations nouvelles du Levant, ou traités de la Religion, du gouvernement et des coutumes des Perses, des Arméniens, et des Gaures...*, et donnée au public, par le sieur L. M. P. D. E. T. [Louis Moreri prêtre, docteur en théologie] [P.G.D.C.], Lyon, MDCLXXI (1671).
- [Daulier Deslandes]. *Les Beautés de la Perse, où ce qu'il y a de plus beau dans ce Royaume est décrit et dessigné au naturel par le Sieur Daulier Deslandes, Vandomois, avec une relation de quelques aventures maritimes de [Louis] M[arot] P[ilote] R[éal] - D[es] G[alères] D[e] F[rance]*. — Paris, G. Clouzier, 1673.
- [Della Valle Pietro]. *Voyages de Pietro della Valle, gentilhomme romain, dans la Turquie, l'Egipte, la Palestine, la Perse, les Indes Orientales et autres lieux*, Rome, 1650.
- [Febure Michel]. *Théâtre de la Turquie, ...*, Paris, 1682.
- [Figueroa D. Garcias de Silva]. *L'Ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, contenant la politique de ce grand empire, les mœurs du Roy Schach Abbas, & une relation exacte de tous les lieux de Perse & des Indes, ou cét Ambassadeur a esté l'espace de huit années qu'il y a demeuré. Traduite de l'Espagnol par Monsieur de Wicqfort. Chez lean du Puis, Paris, MDCLXVII (1667).*
- [Fleuriat P]. *Mémoire de la province du Shirvan, en forme de lettre adressée au P. Fleuriat. Lettres Edifiantes et Curieuses, concernant l'Asie, l'Afrique et l'Amérique*, I, Paris 1838.
- [Gemelli Careri]. *Voyage du tour du monde, traduit de l' Italien de Gemelli Careri, par L.M.N. Enrichi d'un grand nombre de Figures. Tome second. De la Perse*. Paris, 1719.
- [Gouven Antoine de P. Fr]. *Relation des grandes guerres et victoires par le roy de Perse Shah Abbas contre les empereurs de Turquie, Mohamet et Ach-*



*met son fils par le P. Fr. Antoine de Gouvea, traduit de l'original portugais.* Rouan, 1646.

[**La Maze, Père de**]. *Journal du Voyage du Père de La Maze de Chamaké à Hispaham* (1698-99),- Nouveaux mémoires des missions de la Compagnie de Jésus dans Levant, III, 1723, pp. 393-482. (այլ հրատարակություն) Lettres Edifiantes et Curieuses, écrites des missions étrangères IV, Paris 1780, p. 53-112).

[**Michel**]. *Mémoire du sieur Michel sur le voyage qu'il a fait en Perse en qualité d'envoyé extraordinaire de Sa Majesté dans les années 1706, 1707, 1708 et 1709*. Bibliothèque National de France, Dép. des Manuscrits, Ms. 7200.

[**Olearius**]. Relation du voyage de Moscovie, Tartarie et de Perse, fait à l'occasion d'une ambassade envoyée au Grand-Duc de Moscovie et au Roy de Perse, par le Duc de Holstein, depuis l'an 1633, jusques en l'an 1639, traduite de l'allemand du sieur Olearius,... par L.R.D.B. [le Résident de Brandebourg, Abraham de Wicquefort]. Deux lettres du sieur de Mandeslo au sujet de son voyage des Indes. Publication: Paris: G. Clouzier, 1656.

[**Picquet Francois**]. *La vie de Messire François Picquet, Consul de France et de Hollande, à Alep. Ensuite Evêque de Cesarople, puis de Babylone, Vicaire Apostolique de Perse. Contenant plusieurs événements curieux arrivés dans les tems de son Consulat et de son Episcopat dans les Etats de Turquie et de Perse, et dans les Eglise de ces deux Empires. Divisée en trois Livres.* Paris MDCCXXXII (1732).

[**Poulet**]. *Nouvelles relations du Levant.* Paris, II partie, 1668.

[**Sanson**]. *Estat present du royaume de Perse,* Paris MDCXCIV (1695).

[**Struys Jean**]. *Les voyages de Jean Struys, en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes, et en plusieurs autres Païs étrangers; accompagnés de remarques particulières sur la qualité, la religion, le gouvernement, les coutumes et le négoce des lieux qu'il a vus; avec quantité de figures en taille douce dessinées par lui-même...*, Tome III, Lyon, MDCLXXXII (1682).

[**Tavernier J. B**]. *Les six voyages de Jean Baptiste Tavernier écuyer baron d'Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes, pendant l'espace de quaranté ans, et par toutes les routes que l'on peut tenir...* t. I, Paris, 1692.

[**Thévenot**]. Suite du voyage de Mr. de Thévenot au Levant, dans laquelle, après plusieurs remarques très singulières sur des particularitez de l'Égypte, de la Syrie, de la Mésopotamie, de l'Euphrate et du Tygre, il est traité de la

Perse et autres estats sujets au roy de Perse et aussi des antiquitez de Tchehelminar et autres lieux vers l'ancienne Persepolis, et particulièrement de la route exacte de ce grand Voyage, tant par terre, en Turquie et en Perse, que par mer, dans la Méditerranée, Golfe Persique et Mer des Indes. Troisième Edition, Tome Troisième, Amsterdam MDCCXXVII, (1727).

[**Tournefort Pitton de**]. *Relation d'un voyage du Levant. Fait par ordre du Roi.*, Tome II. Amsterdam M. DCCXVIII (1718).

[**Villotte Jacques**]. *Voyages d'un missionnaire de la Compagnie de Jésus, en Turquie, en Perse, en Armenie, en Arabie et en Barbarie.* Paris, 1730.

*A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIII Centuries.* Vol. I, II, London, 1939.

**Alonso Carlos, D. García de Silva y Figueroa.** *Embajador en Persia:* Depto. de Publicaciones de la Diputación Provincial, Badajoz, 1993.

**Alonso Carlos,** *Due lettere riguardanti i primi tempi delle missioni Agostiniane in Persia,-* "Analecta augustiniana", vol. XXIV, 1961, pp. 152-201.

**Ambrosius A St. Teresia,** *Hierarchia Carmelitana,* Roma (s.d.), pp. 16-26;

**Aslanian S. D.,** *From the Indian Ocean to the Mediterranean e Global Trade: Networks of Armenian Merchants from New Julfa,* Univers. California Press, 2011.

**Blussé I.,** *The Dutch Encounter with Asia, 1600-1950,* Univ. of Michigan, 2002.

**Boissel J.,** *Le voyage en Perse de Jean Thévenot (1633-1667),-* "Cahiers de l'Association internationale des études française", 1975, vol. 27, N 1, p. 109-122.

**Brzezinski Stanislaw,** *Misjonarze i dyplomaci polsci w Persji w XVII i XVIII wieku,* "Annales Missiologicae" 1935.

**Carlo Longo OP.,** *Relazioni d'Armenia (1583-1640),-* "Archivium fratrum praedicatorum", 1997, vol. LXVII, pp. 173-226.

**Carlos Alonso. O.S.A.,** *Angel Maria Cittadini. O.P., Arzobispo de Naxivan (+1629). Una iniciativa de Propaganda Fide en favor de Armenia,* Roma, 1970 (Studia Ephemerides "Augustinianum" 6), pp. 231-232.

**Catanzaro Francesco Gligora-Biagia,** *Anni Santi. I Giubilei dal 1300 al 2000.* Città del Vaticano, 1996).

**Cruisse Dirk Van der,** *Jean Chardin,* Paris, 1998.



- El-Mudarris Hussein.I., Salmon Olivier,** *Le Consulat de France à Alep au XVII siècle (Journal de Louis Gédoyen, Vie de François Piquet, Mémoire de Laurent d'Arvieux)*, Alep, 2009.
- Flannery J. M.,** *The Mission of the Portuguese Augustinians to Persia and Beyond (1602-1747)*, Studies in Christian Mission, vol. 43, Brill, Leiden, Boston 2013.
- Floristán Imízcoz J. M.,** *Armenios en la corte de Felipe III de España (1598-1621)*, - Revue des Etudes Arménienne, N°32 (2010), pp. 165-199.
- Fontana V. M.,** *Monumenta dominicana*, Roma, 1675, an. 1607-1632, pp. 590-622.
- Garswell J.,** *New Julfa*, Venezia, 1991 (Documenti di architettura armeni, 21).
- Ghougassian V.,** *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century*. Atlanta, 1998.
- Goyau G.,** Un précurseur: François Piquet, Consul de Louis XIV en Alep et Évêque de Babylone, Paris 1942.
- Gulbenkian R.,** *Relações religiosas entre os arménos e os Agostinhos portugueses na persia no século XVII*, - *Relações entre Portugal Arménia e Médio Oriente*, - "Estudios Históricos", I, 1995, pp. 211-253.
- Gulbenkian Roberto,** *Philippe de Zagly, marchand arménien de Julfa, et l'établissement du commerce persan en Courlande en 1696*, - *Relações entre Portugal Arménia e Médio Oriente*, - "Estudios Históricos, III", Lisboa, 1995, pp. 15-83.
- Heller M.,** *Le testament olographe de Jean de Thévenot*, XVII siècle, 167, n° 2 (avril-juin 1990), p. 227-234.
- Karapetian M.,** *Le Diocèse arménien catholique du Nakhitchevan. Formation ethnique et processus ethno-confessionnels aux XVII-XVIII siècles*, - *Roma-Armenia*, sous la direction de Claude Mutafian, Roma, 1999, pp. 322-326.
- Kevorkian R. H.,** *Diplomatie et Mouvement de liberation arménien de la guerre de Candie au siège de Vienne (1683)*, - *Moyen Orient et Océan Indien*, VI, 1989, pp. 1-44.
- Kevorkian R. H., Ter-Stépanian A.,** *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France*, Catalogue, Paris, 1998.
- Kroell Anne,** *Alexandre De Lestoille: dernier agent de la Compagnie Royale des Indes en Perse*, - "Moyen Orient & Océan Indien, XVI<sup>e</sup>-XIX<sup>e</sup> s.", 1984, vol. 1, p. 65-70.

- Kroell Anne,** Louis XIV, la Perse et Mascate, - "Le monde Iranien et l'islam", IV, 1976-1977, Paris, 1977, pp. 1-78.
- Kroell Anne,** *Nouvelles d'Ispahan, 1665-1695*, Paris: Société d'Histoire de l'Orient, 1979.
- Leclant J.,** *Le Café et les cafés à Paris (1644-1693)*, Annales, 1951, /1/, pp. 1-14.
- Lemmens P. L., O.F.M.** *Hierarchia Latina Orientis, 1622-1922*, Roma, (Orientalia Christiana, vol. II, 4, num. 10, 1924, pars II, pp. 265-274.
- Lemmens P. Leonardus O.F.M.,** *Hierarchia latina orientis. 1622-1922*, Pars I, Roma, 1923, p. [11] 235 (Orientalia Christiana, Vol. II, 4, nom. 10, 1924, pars II pp. 265-274; Vol. I-5, Num. 5).
- Letouzey et Ané,** *Dictionnaire de droit canonique*, Paris, vol 5, 1950, pp. 1331-1352.
- Matthee Rudi,** *Betwin Venice and Surat: The Trade in Gold in Late Safavid Iran*, - *Modern Asian Studies*, 34, 1 (2000), pp. 223-255.
- Matthee Rudi,** *Coffee in Safavid Iran: Commerce and consumption*, - "Journal of the Economic and Social History of the Orient", Vol. 37, No. 1 (1994), pp. 1-32.
- Matthee Rudi,** *Poverty and Perseverance: The Jesuit Mission of Isfahan and Shamakhi in Late Safavid Iran*, - "Al-Qantara", 36 (2), 2015, p. 483.
- Matthee Rudi,** *Tobacco in Iran*, - "A Global History of Smoking". Edited by Sander L. Gilman and Zhou Xun, Published by Reaction Books, London, 2004, pp. 58-67, 369-371.
- Matthee Rudi.** *Safavid Iran through the Eyes of European Travel*, - Harvard Library Bulletin. From Rhubarb to Rubies: European Travels to Safavid Iran (1550-1700), The Land of the Sophi: Iran in Early Modern European Maps (1550-1700), Spring-Summer 2012, Vol. 23: N° 1-2, pp. 10-24.
- Metzler J.,** *Nicht erfüllte Hoffnungen in Persien*, - "Sacrae Cingregationis de Propaganda Fide. Memoria Rerum, 1622-1972", vol I/1 1622-1700, Roma-Freiburg; Wien, 1971, SS. 680-706.
- Rhodes Alexandre de,** *Divers voyages et missions du père Alexandre de Rhodes de la Compagnie de Jésus en la Chine et autres royaumes de l'Orient, avec son retour en Europe par la Perse et l'Arménie*, Cramoisy, Paris, 1653.
- Richard F.,** *Augustine portugais rénegat apologiste de l'islam chiite au début du XVIII<sup>e</sup> s.*, "Moyen Orient et Océan Indien", I, Paris, 1984, pp. 73-85



- Richard Fr.**, *Le père Aimé Chézaud controversiste et ses manuscrits persans*, - Nāmeḥ-ye Bahārestān, vol. VI-VII, No.1-2, 2005-2006, Ser. No. 11-12.
- Richard Francis**, *Raphaël du Mans missionnaire en Perse au XVIIe s.*, vol. I, Biographie. Correspondance. 318 pp.; vol. II, Etats et Mémoire, 403 pp., Paris: Société d'Histoire de l'Orient, Edition L'Harmattan, 1995 (*Moyen Orient & Océan Indien XVIe—XIXe s.*, t. 9).
- Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria Rerum, 1622-1972*, vol I/1 1622-1700, Roma, Freiburg, Wien, 1971.
- Thomas D., Chesworth J.**, *Christian-Muslim Relations. A Bibliographical History*. Vol. 9, Western and Southern Europe (1600-1700), Brill, 2017, p. 529-538.
- Turley J. S., Souza G. B.**, *The commentaries of D. Garcia de Silva y Figueroa on his Embassy to Shāh 'Abbās I of Persia on Behalf of Philip III, King of Spain*. Brill, 2017.
- Барсегов Ю. Г.**, *Консульские учреждения в истории Армении*. - «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 69-79; 1983, № 1, էջ 43-57:
- Гини Р.**, *Andin, Исторические очерки об армянах в Китае*, Ереван, 2016.
- Карагезян Г.**, «Армянский мир в Путешествии в Левант Тырнефора», Ер., 2017.
- [**Олеарий Адам**]. Подробное описание путешествия Голштинского Посольства въ Московию и Персию въ 1633, 1636 и 1639 годах, составленное секретаремъ Посольства Адамом Олеарием, Москва, 1870.
- Тер-Аветисян С.**, *Город Джуга, материалы по истории торговых сношений джюльфинских купцов. (XV-XVII)*. Тбилиси, 1937.
- Արեղեան Ա.**, *Ուղեգիր Հանվել հայոց մասին*, - «Հայրենիք» ամսագիր, 1935, № 2:
- Ալիշան Ղ.**, *Հայ-վեներտ, վեներտիկ*, 1896:
- Ակինեան Հ. Ն.**, *Ստեփանոս վարդապետ Լեհացի*, - «Հանդես ամսօրեայ», 1912, N 1, էջ 61-66, թիւ 2-3, էջ 147-153:
- Ակինեան Հ. Ներսէս Վ.**, *Մովսէս Գ. Տաթևացի Հայոց Կաթողիկոսն եւ իր ժամանակը*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1936 (Ազգային մատենադարան, ՃԼԹ):
- Ասլանեան Ս. Գ.**, *Ջուղայեցի վաճառականներ եւ երոպական արեւելահնդկական ընկերություններ. Ցամաքային առևտուր, պաշտպանութեան*

- ծախսեր եւ հաւաքական ինքնաներկայացման սահմանները վաղ արդի Սեֆեան իրանի մէջ*, - «Հանդես ամսօրեայ», 2015, էջ 256 - 290:
- Բախչինյան Ա.**, *Հայերը Չինաստանում: Հայ-չինական պատմա-մշակութային կապերը*, Երեւան, 2017:
- Բիզանդացի Նորայր**, *Բաղգիրք ի գաղղիներէն լեզուէ ի հայերէն*, Կ.Պոլիս, 1884:
- Բոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցոյն Հոովմայ**, Ս. Պետերբուրգ, 1884:
- Դանելյան Լ.**, *Առաքել Դավրիժեցու երկը որպէս Սեֆյան իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր*, Երեւան, 1978:
- Դեղեյան Ժ.** *Հայ վաճառականները եւ ուխտավորները Արեւմտյան Եւրոպայում X դարի վերջում - XI դարի սկզբում*, ՊԲՀ 1984, N 3, էջ 27-28:
- Եսայի Հասան Զալալեանց**, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Երուսաղէմ, 1868:
- Զուպլյան Մ.**, *Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ երոպացի հեղինակների, XIII- XVIII դդ.*, գիրք Ա, Երեւան, 1990:
- Քաջիրյան Է.**, *Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. երոպական աղբյուրներում*, մաս I, Երեւան 2012:
- Քաջիրյան, Է. Խ., Կարապետյան, Մ. Կ., Գրախոս.** **Richard Francis, Raphaël du Mans missionnaire en Perse au XVIIe s.**, vol. I, Biographie. Correspondance. 318 pp.; vol. II, Etats et Mémoire, 403 pp., Paris: Société d'Histoire de l'Orient, Edition L'Harmattan, 1995 (*Moyen Orient & Océan Indien XVIe—XIXe s.*, t. 9). - Պատմա-բանասիրական հանդես, 1996, № 1-2, էջ 364-369:
- Քարվերդյան Յու. Ա.**, *Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական հայացքները*, Եր., 1979:
- Քուռնըֆոո Գաղիացոյն** *ղէպի Մասիս ըրած ճանապարհորդութիւնը*, - «Մասեաց աղանի», 1864, լուճուար, 1, էջ 26-28:
- Խաչիկյան Ծ.** *Նոր Ջուղայի հայ վաճառականությունը եւ նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ.*, Երեւան, 1988:
- Կարապետեան Մ.**, *Հայ կաթողիկէ թեմը եւ էթնոհաւանական գործընթացները Նախիջեւանում XVII-XVIII դարերում*- **Հ. Սահակ Ճեմճեմեան, Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հոռմը**, Վեներտիկ-Ս. Ղազար. 2000, էջ 6-21:



- Կարապետյան Մ. Մ., «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (17-18-րդ դդ.), ՊԲՀ, 1988, 1, էջ 219-221:
- Հակոբյան Հ. Հովհաննիսյան Ա., *Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII-XVIII դդ.)*, Երևան, 2007:
- Հարությունյան Արսեն, *Նորահայտ տապանագրեր Ս. Հոհիսիմեսի վանքից*, - «Էջմիածին», 2012, Բ, էջ 71-82:
- Հարությունյան Արսեն, *Ստեփանոս վարդապետ Լեհացին և նրա տապանագիրը*, - «ՎԷՄ» հանդես, 2013, թիւ 3 (43), էջ 78-87:
- Հարությունյան Արսեն, *Վաղարշապատ. Վանքերը և վիմական արձանագրությունները*, Ս. Էջմիածին, 2016:
- Հացունի Վ., *Պատմություն հին հայ տարագին*, Վենետիկ, 1923:
- Ղուկասեան Վազգէն, *Ստեփանոս կաթողիկոս Ջուղայեցի*, - «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ-Գ տարի, 1981-1982, էջ 313-344:
- Մեսնեմեան Հ. Սահակ, *Նախիջևանի հայոց վարժարանը և Հոռմը*, Վենետիկ-Ս. Ղազար, 2000:
- Մատենադարանի պարսկերեն հրովարտակները*, II (1601-1650), կազմեց Փափազյան Հ., Երևան, 1959:
- Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. պրակ երրորդ (1652-1731) կազմեց Կոստիկյան Ք.*, Երևան, 2005:
- Մինասեան Լ., *Իրանի հայկական վանքերը*, Թեհրան, 1971, Նոր Ջուղա, 2003:
- Մինասեան Լ., *Նոր Ջուղան անլի քան մէկ և քառորդ դարում*, Ս. Էջմիածին, 1999:
- Մինասեան Լ., *Սպահանի հայոց թեմի առաջնորդները 1606-1996*, Նոր Ջուղա, 1996:
- Յոթելեան Սուրբ տարի թողութեան, հոչակեցեալ 'ի Հայրապետէն սրբազանէ Բէնէտիքոսէ երեքտասան երրորդէ // II Giubileo dell'Anno Santo, pubblicato dal Sommo Pontefice Benedetto XIII. 'ի լեզուն հայոց եղէ շարադրեցեալ աշխատութեամբ ԅօնանու եպիսկոպոսին», Հոռմ, տպ. Ուրբանեան, Ռէժիս-1725:
- Նորագոյն ուղղեկցութիւն հրեշտակային հոռմեական և մշտատեւ, սակսայց առնելոյ զեկեղեցիս 'ի ներքս և 'ի արտաքս Հոռմայ, ուր հոչակին ուխտք և տօնախմբութիւնք: Nuova Guida Angelica Perpetua Romana. Per visitare le Chiese dentro, e fuori di Roma. Եւ 'ի լեզւէ իտալիականէ ածանցեցեալ և շարադրեցեալ 'ի հայկական բարբառն, աշխատութեամբ Թօ-

- խաթեցոց տեառն ԅօնանու վարդապետին և եպիսկոպոսին: Հոռմ, տպ. Ուրբանեան, 1725:
- Ռսկանյան Ն., *Կորկոտյան Ք., Սավալյան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, 1988:
- Ստեփանյան Ա., *Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը*, Երևան 2000:
- Տէր Յովհաննեանց Յ., *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*, հտ. Ա, Բ, Նոր Ջուղա, 1880:
- Փափազյան Հ. Գ., *Սեֆյան Իրանի ախմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը*, - Բանքեր Մատենադարանի, հտ. 3, Երևան, 1956, էջ 85-99:
- Քիրտեան Յ., *Էջմիածին այցելող Եւրոպացի ուղեգիրներ ԺԷ, ԺԸ, և ԺԹ. դարի առաջին կիսուն*, - «Հասկ», 1957, սեպտ., էջ 331-334:
- Քիրտեան Յ., *Հայեանգլիական դրամագլխի պայքարը Կովկասի մէջ: Նիւթեր հայ վաճառականութեան պատմութեան համար (Նիւթեր ԺԶ պատմութեան համար)*, - «Հայրենիք» ամսագիր, 1941, NN° 3-10:
- Քիրտեան Յ., *Հում մետաքսի վաճառականութիւնը և հայերը*, - «Հայրենիք» ամսագիր, 1944, NN° 3-6, 1945, NN° 1-2:
- Քիրտեան Յ., *Ջուղայեցի խօջայ Սաֆար և խօջայ Նազար և իրենց գերդաստանը*, - «Բազմավէպ», 1975, թիւ 3-4, 379-396; 1976, թիւ 1-2, էջ 52-73; թիւ 3-4, էջ 375-395:
- Քիրտեան Յ., *Ջուղայեցի խօջայ Նազար և իր գերդաստանը*, - «Հայրենիք», 1943, թիւ 4, (Յուլիս-Օգոստոս), էջ 77-78, թիւ 5 (սեպտեմբեր-հոկտեմբեր), էջ 63-73; թիւ 6 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 69-87:
- Քօսթեանց Լուդովիկոս. *Յիշատակք և դիտողութիւնք տեղագրական, մաթեմաթիքական, մեքենական, բնական, քաղաքական, և եկեղեցական. Շուրջ զկայսերութեամբ Չիւսաց: Թարգմանեալ նախ 'ի Գաղղիացոց 'ի լեզու անգլիական, և ապա անտի 'ի հայ բարբառ. յազնուական Աղայ Մարգարէ Օահրիմանեանց Ջուղայեցոյ, Թրեստ, 1783, էջ 9-11:*
- Օրմանեան Մաղաքիս արքեպս. Օրմանեան, *Միասկան բարբառն*, Անթիլիաս, 1979:



**ՑԱԼԿԵՐ**

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ**

Արիս Աբադ 110	Արիսանգելակ 190, 192
Ալա-Կափի 254	Արտազ 17
Ալեքսանդրիա 105, 106, 245	Աֆրիկա 129, 262
Ակապուլկո 246	Բաբելոն 47, 126, 138, 140, 148, 150, 151, 153, 154, 155, 156, 157, 158, 173, 176, 221, 248
Ադուանք 166	Բադայուս 14
Ամասիա 182	Բաթավիա 129, 163, 164
Ամերիկա 6	Բահրեյն 126
Ամստերդամ 129, 183	Բաղդադ 55, 106, 108, 139, 148, 175, 185
Անատոլիա 105, 207	Բանդար-ե Կանգան 127
Անգլիա 105, 137, 182, 184, 190	Բասրա (ճան Բասորա) 27, 122-127, 149, 160, 164
Անդալուզիա 181	Բար լը Դյուկ 206
Անթիլիա 29	Բարձր Հայք 109
Անկլուրիա 230	Բասորդ 12
Ապարաներ 17, 138, 174, 239, 248	Բենգալիա 237
Ապրակունիս 17	Բենդեր Աբաս 96, 120, 121, 122, 129, 161, 162, 164, 228,
Աստրախան 129, 172, 189-191	Բենդեր Կոնգո 239
Ավիզա 164	Բենդեր Ռեդ 126, 127
Ավիլյոն 27	Բիթլիս 172
Ատրպատական 106	Բողրոս 105
Արաբիա 99	Բորդո 97
Արազ 101	Բուդա 245
Արարատ լեռ 182	Բուխարա 172
Արաքս 185, 206, 214, 247	
Արդեբիլ 164, 206	
Արեւելյան Հայաստան 69	
Արեւելյան Հնդկաստան 31, 251	
Արեւմտյան Աֆրիկա 129, 193	

**ՑԱԼԿԵՐ**

Բուրսա 105	Երոպա 3, 5, 6, 16-17, 35, 50, 51, 77, 94, 101, 109, 129, 134, 137, 151, 161, 183-184, 186-187, 189-190, 193, 200, 210-211, 219, 221, 224, 234, 237-238, 245, 262
Բրուսս 182	Զենդերոս (Զենդերոն) 15, 20, 48, 100, 109, 131, 140, 144, 185, 187, 213, 256, 261
Փալիպոլի 105	Զենջան 206
Փանձակ 17, 172, 238	Զմյուռնիա (Զմիւռնիա) 8, 96, 182, 237, 245
Փանձասար 166	Զուլֆա (տե՛ս Զուլֆա) 256
Փավր 110	Էկրատան 15
Փերաբադ 103	Էջմիածին 21, 36, 50, 102, 172, 177, 182, 194, 195, 239-241, 253, 255
Փերմանիա 27, 105, 245	Էրզրոս 138, 172, 182, 184, 191, 192, 206, 207, 214, 222, 239
Փիլան 45, 47, 48, 97, 109, 186, 212, 237, 247	Էքս ան Պրովանս 181
Փյանջա 206	Թայվան 129
Փոս 14, 27, 172, 245, 251	Թավրիզ 15, 19, 30, 46, 51, 106, 110, 138, 149, 164, 185, 190, 207, 211-214, 236, 238, 243
Փոկոնդա 245, 237	Թարթարիա 206
Փոջարաթ 123	Թեհրան 25
Փադիան 164	Թերեբոն 97
Փաղատան 191, 129	Թիֆլիս 182, 239
Փամասկոս 106	Թուլոն 123
Փարդանել 105	Թունիս 96, 105
Փարբենդ 129	Թուր 101
Փարբեքիր 138, 172, 239	Թուրքիա 6, 45, 46, 51, 78, 102, 109, 110, 115, 161, 192, 194, 195, 206, 207, 237, 239
Փիզակ 42	
Փիլիջան 182	
Փոթաբաբադ 19	
Փոթգերդամ 129	
Փոլիստոս 183	
Սրեան 9, 17, 20-21, 25, 35, 38, 42, 47, 49-51, 69, 97, 102, 110-111, 113, 129, 138, 162, 164, 172, 184-186, 195, 206-208, 210, 212-213, 239, 250	
Սրուսադեմ 25, 166, 194, 195, 196, 240	



Թուրքոմանիա 166  
 Թոքաթ 182, 207  
 Թրեստ (տե՛ս Տրիեստ) 12  
 Ժնեւ 173  
 Իզմիր 105, 206  
 Ինդոնեզիա 129  
 Իսկենդերուն 27  
 Իսպանիա 4, 14, 19, 22-24, 27, 75, 181, 245, 246  
 Իսրայել 79  
 Իտալիա 27, 45, 105, 111  
 Իրան 13, 25, 42, 69, 159, 210, 256  
 Լայպցիգ 33  
 Լատ 163  
 Լեհաստան 27, 40, 129, 153, 172, 194, 211, 218, 234, 235, 240, 248, 249, 251, 253  
 Լեոպոլ (Լեոպոլիս, Լվով) 153, 240  
 Լեանտ 70, 72, 81, 153, 184, 200, 237  
 Լիբանան 27  
 Լիոն 27, 137, 183, 210, 222  
 Լիվոնոն 105, 123, 137, 184  
 Լնջան (Լինգեն) 159  
 Լուվր 183  
 Խարզ (Խարկ) 124  
 Խոշկաշեն 17  
 Խորասան 12, 45, 47, 166, 210  
 Կ. Պոլիս 118  
 Կադիքս 246  
 Կազան 129  
 Կազբին 30, 56, 97, 151  
 Կալաբրիա 27  
 Կաֆիրե 105, 245  
 Կամենից 194  
 Կանդաֆար 47, 55, 96, 165, 166  
 Կանդիա 123, 182  
 Կանտոն 245  
 Կասպից ծով 111, 166, 189, 190, 192, 194, 206, 237  
 Կաստիլիա 24, 141  
 Կատալոնիա 181  
 Կարս 172, 182, 207  
 Կեծուկ 17  
 Կեսարոպոլիս 138, 141, 143, 146  
 Կիլիկիա 194  
 Կոմրոն 127  
 Կոնգո 127, 128, 239  
 Կոշիմշին 212, 213  
 Կոստանդնուպոլիս 51, 96, 105, 153, 172, 182, 206, 207, 240, 241, 245  
 Կովկաս (Կալկաս) 166, 191  
 Կոտատիս 239  
 Կուր 206  
 Հազարչեքիք 100  
 Հալեպ 8, 27, 106, 137, 158, 172, 210, 215, 220  
 Համադան 106, 139, 149, 151-153, 154, 158, 164, 174, 239, 248,  
 Համբուրգ 191  
 Հայաստան 3, 8-9, 17, 24-25, 47, 49, 69, 101, 132, 138, 153, 178-179, 185, 191, 203, 214, 221, 238, 240  
 Հավանա 246  
 Հարավային Ամերիկա 6

Հարբոր 127  
 Հելսինգյոր 190  
 Հինդուստան 246  
 Հիսիսային Պարսկաստան 191  
 Հյուսիսային օվկիանոս 190  
 Հյուսիսային Ֆրիզիա  
 Հնդկաստան 6, 11, 12, 31, 45, 106, 109, 111, 120-123, 126-128, 160-162, 164, 174, 187, 222-223, 227-228, 231, 233, 237, 245, 251  
 Հոլանդիա 27, 105, 129, 137, 160, 182, 184, 190, 191  
 Հոլշտեյն 5, 33, 34, 190  
 Հորմուզ 4, 14, 127  
 Հունգարիա 157, 245  
 Հոոմ (Հոսոմ) 7, 9, 17-18, 27, 29, 49, 76, 80, 111, 119, 137-138, 148, 153, 176, 177,  
 Ղազվին 158  
 Ղանտաֆար 166  
 Ղարաբաղ 45, 47  
 Ղարադուշ 17  
 Ճամուկ 17  
 Ճապոնիա 129  
 Ճավա 184  
 Մադագասկար 129  
 Մադրիդ 14, 22  
 Մազանդարան 45, 47, 109  
 Մազովիպատան 127  
 Մալաբար 231, 245  
 Մալթա 105, 245  
 Մակաո 213, 245, 246  
 Մանիլա 246  
 Մաշեղ 164  
 Մասիս 182  
 Մարսել 96, 106, 182, 183, 184, 206, 220, 224  
 Մեդիա 15  
 Մեծ Հայք 15, 17, 44  
 Մեծշեն 17  
 Մեհրիզան 110  
 Մելդանի 98, 110  
 Մենդիլի 106  
 Մեսինա 206  
 Մեքսիկա 246  
 Միանեֆ 106  
 Միջագետք 27  
 Միջերկրական ծով 129  
 Միջին Արեւելք 111  
 Մոկկա 122  
 Մոնպելիե 181  
 Մոնտեսումա 246  
 Մոսկովիա 115, 189, 190  
 Մոսկվա 33, 129, 172, 190  
 Մոսուլ 106, 108  
 Մուղանի դաշտ 206  
 Նախիջեւան (Նախչեւան, Նախչեւան) 17-18, 49, 63, 76, 110, 138, 168, 186, 194, 214, 239  
 Նանսի 209  
 Նեապոլ 27, 245, 246  
 Նեղոս 245  
 Նիզաբադ 172  
 Նիզովայա (Նոզավա) 190



Նիկոմեդիա 207	102, 104, 106, 108-112, 124, 127-128, 130, 132, 139, 152-153, 158, 161-166, 177, 184, 186-187, 190-191, 194-195, 206-207, 210-214, 221-222, 235, 237-238, 240, 244-246, 250, 256
Նովգորոդ 129	
Նոր Իսպանիա 246,	
Նոր Ջուլֆա 186, 187, 214	
Նոր Ջուղա 3-4, 6, 9, 15-16, 25-26, 32, 35-38, 49, 52, 76, 82, 85, 108, 113, 123, 151, 176, 190, 204, 208, 213, 216, 218, 220, 247, 253, 254, 271-273	
Նոր Ֆրանսիա 97	
Շաթ էլ Աարաբի 125	
Շահապունիք 17	
Շամախի 41, 129, 130, 172, 190, 194, 206, 215, 221, 238, 244	
Շաքսաբան 110	
Շիրաբախ (տե՛ս Չարբախ) 248	
Շիրազ 97, 100, 111, 127, 128, 149, 209-211, 239, 252	
Շիրվան 45, 47, 212, 244	
Շլեզվիզ 33	
Շլեզվիզ-Հոլշտեյն 190	
Ումբրիա 220	
Չարբախ 19, 98, 131, 135, 248	
Չարեք 124, 126, 127	
Չինական մեծ պարիսպ 245	
Չինաստան 6, 172, 184, 206, 207, 246	
Չինաց կայսրություն 12	
Պաղեստին 195, 245	
Պարսկաստան 3, 5, 6, 9, 14-15, 18-19, 27, 30, 33, 35, 43, 45-47, 50, 51, 55, 58-59, 73, 77, 85, 94, 96-97,	
102, 104, 106, 108-112, 124, 127-128, 130, 132, 139, 152-153, 158, 161-166, 177, 184, 186-187, 190-191, 194-195, 206-207, 210-214, 221-222, 235, 237-238, 240, 244-246, 250, 256	
Պեգու 237	
Պեկին 223, 245, 246	
Պենտերբուրգ 153	
Պերունիա 220	
Պերսեպոլիս 96	
Պիրենեյան լեռներ 181	
Պորտուգալիա 31, 181, 245, 252	
Պրաման 10	
Պրովանս 181, 211	
Ջելալի, գյուղ 152	
Ջենովա 137, 245	
Ջուլֆա 21, 25, 28, 30, 32, 35, 38, 44, 51-52, 55-59, 63, 71-73, 76, 77, 78, 82, 84-86, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 98, 100, 101-103, 108-110, 115, 123, 131-132, 135, 140-142, 144, 149, 173, 179-180, 185, 186, 187, 188, 189, 198, 206-208, 211-222, 225, 228-230, 232-233, 235-236, 238, 241-242, 247-252, 254-258, 261-262	
Ջուղա 3-4, 6, 9, 15-16, 19, 20, 21, 24-25, 26, 32, 35-38, 49, 52, 60, 78, 82, 108, 113, 123, 151, 176, 190, 212, 213, 220, 227, 247, 253, 254	
Ռիգա 129	

Ռոդոս 105		Սուրա 122
Ռուսաստան 5, 25, 33, 129, 130, 153, 172		Սուրաթ 120, 123-125, 172
Ռուսիա 129, 206, 207		Սուրբ Անտոնի վանք 32
Ս. Էջմիածին 50, 240, 255		Սուրբ Երկիր 27, 105,
Ս. Թերեզայի վանք 32		Սպահան 3, 9, 14, 16, 18, 20, 26-28, 30, 32-34, 35-36, 42-45, 46-48, 51-52, 54, 56, 71, 73, 77, 90, 93-94, 98, 101, 106-111, 115, 119, 126, 129-132, 138-141, 147, 149-151, 153, 158, 160, 162, 164, 172, 176, 185-186, 190, 206-207, 209-214, 215, 217-218, 221-223, 225, 230, 232-234, 235, 237, 238-240, 245, 248-249, 251, 256, 257
Ս. Ժերմեն դե Պրե 105		
Ս. Հովսեփի վանք 230		Ստոբոլով 190
Ս. Հոսիսիմենի վանք 255		Ստրասպուրկ 12
Ս. Նիկոլա 209		Վալախիա 153
Ս. Ֆրանսուա Քսավիեի վանք 238		Վաղարշապատ 255
Սալթաղ 17		Վան 160, 240
Սամարղանդ 172		Վանանդ 138
Սավան 207		Վատիկան 3
Սաքսոնիա 33		Վարանդա 42
Սեվիլիա 160		Վենետիկ 17, 24, 49, 76, 207, 208, 220, 223
Սեֆառնը (տե՛ս Սպահան) 98		Վերա Կրուզ 246
Սեֆյան (Սեֆեան) Իրան 42, 69, 256, 271		Վերսալ 158
Սիամ 129, 184		Վիեննա 28
Սինայ 105		Վրաստան 45, 47, 49, 111, 149, 245
Սիչան 110		Տրապիզոն 172, 182, 206, 245
Սիս 194, 240		Տրիեստ 10, 12
Սիվածի (Sivagy) 120		Տյուրիխ 43
Սիրիա 153, 183, 211		
Սիրու-Կայնան 110		
Սիրու-Կայնան 110		
Սկյութիա 166		
Սունգ 105		
Սուլթանիե 206		
Սումատրա 160		



Փարիզ 3, 6, 7, 15, 27, 35, 85, 96, 98-99, 106, 111, 118, 137, 140, 147, 153, 158, 172, 181-182, 194, 200, 213, 223, 226, 234  
 Քաղկեդոն 8, 119, 193  
 Քաջան 97, 164, 207, 237  
 Քերեք 97  
 Քերման 112  
 Քոն 207  
 Քուրայիս 239  
 Քոնա 17  
 Քրդստան 49  
 Օղեան 193, 234  
 Օսմանյան կայսրություն 161, 241  
 Օրմուզ (տե՛ս նաև Հորմուզ) 75, 141  
 Ֆլամորիա 14, 245  
 Ֆորմոզա 172  
 Ֆրանսիա 6, 9, 27, 57, 60, 90, 96-97, 101, 105, 106, 107, 111, 121, 138, 139, 146-147, 150, 153, 158, 172, 175, 178-179, 182-183, 193, 206-207, 209-210, 211, 213, 217, 221, 234-235, 241, 244-245  
 Ֆրեդերիկշտատ (նաև Ֆրիդրիշտատ) 190  
 Ֆրիզիա 190  
 Afrique 105, 221  
 Al-Qantara 221  
 Alep 4, 139  
 Amérique 221  
 Amsterdam 5, 20, 24, 108, 183

Arabie désert d' 105, 209  
 Archipel 105  
 Arménia 17, 69, 97, 233  
 Arménia Maggiore 17  
 Arménie 193, 209, 213  
 Asia 160  
 Asie 105, 173, 221  
 Aspahan 30  
 Atlanta 113, 253  
 Babylone 139, 248  
 Badajoz 15  
 Bagdat 105  
 Barbarie 209  
 Boston 73  
 Brandebourg 34  
 California 113, 123  
 Candie 49  
 Carek 124  
 Caspian Sie 191  
 Cesarople 139  
 Chamaké (Shamakhi) 215, 221, 266, 269  
 China (Chine) 114, 173, 213  
 Ciulfa 131  
 Constantinople 105  
 Courlande 97, 233  
 Cramoisy 213  
 Desach (Դիզակ) 42  
 Egipte 105, 111, 265  
 Espana (Espagne, Espagnol) 15, 19, 24, 268

Euphrate 107, 267  
 Europe 49, 173, 213, 265, 269  
 France 4, 105, 118, 139, 242, 266, 268  
 Freiburg 7, 138, 269, 270  
 Friedrichstadt 190  
 Golfe Persique 108, 267  
 Hezarguerib 131  
 Hollande 139, 266  
 Holstein 34, 266  
 Indes 5, 15, 20, 34, 108, 130, 256, 265, 266, 267, 269  
 Indes Orientales 20, 111, 265  
 Indian Ocean 114, 123, 267  
 Invalides 196  
 Iran 13, 99, 128, 187, 221, 269  
 Iruan (Երեւան) 42  
 Isfahan (Ispahan, Hispaham) 73, 97, 215, 221, 248, 251, 269  
 Ismaizen (Էջմիածին) 255  
 Kermon 112, 268,  
 Latina Orientis 176, 269  
 Leiden 73, 268  
 Levant 5, 20, 24, 35, 50, 105, 107, 183, 265-267  
 Lisboa 233, 268  
 London 11, 15, 20, 27, 128, 176, 267, 269  
 Louvain 193  
 Lyon 5, 20, 27, 50, 130  
 Marseille 211  
 Mascate 241  
 Méditerranée 108, 267  
 Meque 105  
 Mesopotamia 251  
 Mésopotamie 107, 267  
 Michigan 161, 267  
 Mogol 105  
 Moscovie 5, 20, 34, 130, 265, 266  
 Moyen Orient (Medio Oriente) 49, 77, 86, 97, 233, 251, 256, 268-271  
 Nakhitchewan (Naxivan, Maxivan) 17, 69, 268  
 Napoli 246  
 New Julfa 25, 97, 114, 123, 233, 253, 267, 268,  
 Nil 105  
 Océan Indien 49, 77, 86, 251, 256, 268-271  
 Orient 27, 77, 99, 213, 269-271  
 Palestine 111, 265  
 Paris 4-6, 15, 20, 24, 34, 35, 50, 77, 85, 97, 105-107, 118, 139, 147, 159, 173, 209, 213, 215, 221, 230, 241, 247, 248, 251, 265-271  
 Perse 4, 5, 15, 20, 34, 73, 77, 85, 97, 106, 107, 108, 111, 130, 139, 158, 159, 209, 213, 241, 247, 248, 256, 265-271  
 Persepolis 107  
 Persia 15, 20, 73, 230, 251, 267-270  
 Pluviers en Beauce 193  
 Pologne 153  
 Portugal 97, 233, 268



Roma 7, 17, 18, 69, 138, 148, 176, 267-270, 272, 273  
 Rouan 73, 266  
 Safavid Iran 13, 99, 187, 221, 269  
 Shirvan 221, 265  
 Spain 15, 270  
 Surat 187, 269  
 Syrie 107, 267  
 Tartarie 5, 34, 130  
 Tcharbag 131  
 Tchehelminar 107  
 Terre Sainte 105

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբեղյան (Աբեղեան) Ա. 191  
 Աբիբ Հ. (տե՛ս Ասաև Հ. Էմե Օեզո) 210-212, 214  
 Ագուլիս 138  
 Ազարիա Ավագ 49  
 Ալեքսանդր VIII պապ 173, 178,  
 Ալեքսանդր եպս. 241  
 Ալեքսանդր Լուի Մարի 107  
 Ալեքսանդր Մակեդոնացի 51  
 Ալեքսեյ 1-ին ցար 129  
 Ալի Ղուլի Բեգ 251  
 Ալիշան Ղ. Հ. 220  
 Ալոնսո Կառլոս 3  
 Ակինեան Ներսես վրդ. 28, 255  
 Աղափիրի 113, 254  
 Ամիրջան 113  
 Ասիա 24, 51, 104, 187, 189, 213, 219, 262  
 Turquie 50, 108, 111, 139, 209, 265-267  
 Valachie 153  
 Vaticano Città del 148, 267  
 Venezia 25, 268  
 Venice 187, 269  
 Verende (տե՛ս Վարանդա) 42  
 Vienne 49, 268  
 Western Europe 49, 270  
 Zenderont (Senderout) 140, 256  
 Zulfa (Zulpha, Ciulfa) 15, 131

Ասլանեան Ա. 256  
 Աստվածատուր Միրիթեանց 113  
 Ավետ (տե՛ս Մամնուտ Հուսեյն բեկ) 113, 254  
 Ավրիլ Ֆիլիպ Հ. 172, 173  
 Արութեն Կոստանդինուպոլսեցի 208  
 Արվիո 138  
 Աքսոն 252, 254  
 Բախչիմյան Ա. 184  
 Բարբերինի, կարդ. 27  
 Բարբուրո Սիմոն 19  
 Բարդուղիմեոս Բուլոնիացի եղբ. 18  
 Բարոն Ֆրանսուա 106  
 Բարսով Պավել 34  
 Բաքթաշ խան 185  
 Բենո Ֆրեդերիկ 130  
 Բեռնարդո 123

Բեթիսե Տելլա Քոռչե 10  
 Բեճեֆեթի Քոռչե XIII պապ 148  
 Բոնիֆացիոս VIII պապ 148  
 Բորսոլի Անտոն 207  
 Բուշե Ժան Հ. 222, 248  
 Բրիգասիե 147  
 Բրուզման 34, 191  
 Գալանոս Կղեմես 7, 153  
 Գեորգյան Հարություն Ռայմոն 3  
 Գյունդելսհայմեր 182  
 Գոնգագո Մարիա Լուիզա 211  
 Գորի 239  
 Գուվեա Ա. 73  
 Գրիգոր Լուսավորիչ 76, 157, 193, 196, 239, 240  
 Գրիմալդի կարդ. 138  
 Դանելյան Լ. 42  
 Դավիթ (Դատթ) IV Վաղարշապատեցի 19, 26  
 Դավիթ V 239, 240  
 Դավության 113  
 Դավրիժեցի Առաքել 21, 42  
 Դարեհ 51  
 Դեղեյան Ժ. 193  
 Դըլա Կրուա, Պետի 77, 107  
 Դիեզո դե Սանտա Անա 74  
 Դոլիե Դելանո 5, 96, 97, 106, 118  
 Դոս Ալեքսանդր 11  
 Եզեանց Կարապետ 153  
 Եզեկիել 79  
 Եզովպոս 10  
 Եղիա (Էլիագ) Բեկ 37, 38, 43, 44,  
 Եղիա կարմելիտական (Կարմելյան) 176, 230, 233, 248, 250, 252, 255  
 Եղիազար Այնթապցի 195, 241  
 Եսայի Հասան Զալայանց 166, 271  
 Զախե 179  
 Զապուլսի Իգնատիոս 248  
 Զաքար 114  
 Զեքիյան Լեոն արք. 3  
 Զուլայան Մ. 111, 159, 173, 183  
 Էթուալ Մ. 256, 257  
 Էլիագ 37  
 Էստրե (դ'), կարդինալ 148  
 Էրազմոս Մատթեոս 17  
 Թահմասպ 47  
 Թամերլան 166  
 Թաջիրյան Էլիզաբեթ 4, 6, 8, 9, 10, 12, 73, 77, 141, 149, 175, 176, 230, 251, 255, 264  
 Թաջիրյան Խոսրով 3  
 Թավերնիե Ժան Բատիստ 4, 5, 9, 77, 96, 97, 104, 106, 120, 121, 159, 256, 257  
 Թարվերդյան Յու Ա. 255  
 Թեղըն Ժան դը 4, 38, 77, 96, 104-108, 111  
 Թորոսովիչ Նիկոլ արք. 194  
 Թորոսովիչ Նիկոլ արք. 194  
 Ժյուստ Հ. 185  
 Իննոկենտիոս XI 138, 148, 153, 218  
 Իննոկենտիոս XII 229



Իսահակ (Սահակ Գառնեցի) 240  
 Լա Բուլե լը Գուգ 213  
 Լա Մազ Ժան Բատիստ դը 215, 218, 221  
 Լալեն դը 77  
 Լանկթամուր 166  
 Լը Բրյուիճ 20, 24  
 Լինեն վան 160  
 Լոնգո Կալոյ 3  
 Լոշ Ժան Բատիստ դը 108  
 Լուդովիկոս XIII 234  
 Լուդովիկոս XIV (Մեծ) 158, 172, 182, 207, 234, 241  
 Խաչատուր Կեսարացի 36  
 Խաչիկյան Ծ. 25, 37, 52, 58, 113, 114, 123, 151, 177, 190, 247, 254, 271  
 Խոջա Գասպար 208, 220  
 Խոջա Գասպար 208  
 Խոջա Խաչիկ 25, 52, 114, 247, 254  
 Խոջա Մարգարա 176, 252  
 Խոջա Մինաս (Խոջամինաս) 123, 126  
 Խոջա Մուրադ 176  
 Խոջա Նազար 25, 52-58, 208, 247, 273  
 Խոջա Սարատ 208  
 Խոսրով Սուլթան (դարուղա) 44  
 Կարապետեան Մ. 17-18, 69, 77, 271-272  
 Կենպֆեր Էնգելբերտ 77  
 Կենպֆեր Էնգելբերտ 77

Կղեմես VI պապ 48  
 Կղեմես VIII պապ 31  
 Կղեմես XI պապ 219, 241  
 Կոլբեր 77, 107  
 Կոնրադ վան Կլենկ 129  
 Կոստիկյան Ք. 23, 42, 113, 162, 210, 250  
 Կորկոտյան Ք. 208  
 Հակոբյան Հ. 35, 38, 272  
 Հայկազ 37  
 Հանվել 191  
 Հանրի IV 185  
 Հարություն (Պասկալ) 226  
 Հարությունյան Արսեն 255, 272  
 Հացունի վ. 24  
 Հիսելին 166  
 Հովհաննես վրդ. 254  
 Հովհաննես XII 18  
 Հովհաննիսյան Ա. 35, 38, 272  
 Հովսեփ Հ. 35  
 Հուսեին Ծաֆ 207, 244  
 Ղազար 17, 49, 76  
 Ղուկաս 114  
 Ղուկասեան վազգէն 254, 272  
 Ծեմենեան Սահակ վրդ. 3, 17, 18, 49, 76  
 Ծենկիզ խան 10  
 Մաթյո Ռուդի 12  
 Մահմատ Հուսեյն բեկ 113-114, 254  
 Մայե 245  
 Ման Հ. Ռաֆայել դյու 9, 77, 85, 104, 106, 108, 139

Մանի Ջիո Բատիստա 208  
 Մարգարա (խոջա) 252, 253  
 Մարի 227, 228, 229  
 Մարի Ալեքսանդր Լուի 107  
 Մարի Ֆր. 176  
 Մելքիսեդեկ (Մելքիսեթ Գառնեցի) 19, 21, 26, 104, 239, 240  
 Մեհմեդ-Ռիզա-Բեգ 153  
 Մեհդես Մանուել 128  
 Մերսիե Կլոդ Իգնատիոս Հ. 215-218  
 Մեցլեր Յոզեֆ 3  
 Միխայիլ Ֆեոդորովիչ (ցար) 33  
 Մինաս խոջա 123, 126  
 Մինասեան Լեոն 25, 36, 272  
 Միշել Մ. 153, 207, 241, 242, 243  
 Միքայել արք. 175  
 Մոզոլ (Մեծ) 120, 165, 166, 184  
 Մոն Ֆերե 162  
 Մովսես Տաթևացի կամ Սյունեցի 28, 240  
 Մսերյանց Մսեր 182  
 Յաքոնոսկի Ստանիսլավ 172  
 Յակոբ (Ակոբ) վրդ. 208  
 Յոանն վրդ. Թոխարթեցի 148  
 Նազար Ծաֆիսասեանց, Խոջա Սաֆրազյան գերդ. 20, 25, 35, 37, 52, 54-58, 114, 247, 273  
 Նահապետ եպիսկ. 241  
 Ներսես Այս պատրիարք 240  
 Նորայր Բիզանդացի 118  
 Շաֆ Աբաս I 14, 16, 20, 30, 42-44, 46, 47, 51, 53-58, 73, 74, 88, 89, 101, 132, 146, 159, 165, 185-187, 212, 213, 214, 240, 247, 256, 257  
 Շաֆ Աբաս II (Կրտսեր) 77, 96, 185, 211, 213, 239,  
 Շաֆ Սեֆի 37, 43, 46, 89, 159, 161, 185, 240  
 Շաֆ Սուլեյման 77, 158  
 Շաֆիսասեանց գերդ. 25, 35, 37, 52, 247  
 Շահրիմանեան 12  
 Շահրիմանյան Մուրադ 176  
 Շարդեն Ժան (Շըվալիե) 4, 10, 14, 19, 77, 104, 106, 159, 214  
 Շարպանտիե Ֆրանսուա 4  
 Շեզոյի Էմե Հ. 210, 211, 214, 215  
 Շեհրիման Բարսեղ 218-219, 220  
 Շեհրիմանյան Մուրադ 176, 180, 220  
 Շեհրիմանյան Մարգար 10, 176  
 Շեհրիմանյան Միքայել 176  
 Շեհրիմանյան Սահրատ 176  
 Շեհրիմանյան(ց) Մարգար(է) 10-12, 176, 273  
 Շեհրիմանյաններ 140, 174-177, 219, 221, 255  
 Շերիմանեանց տուն 208  
 Շըմեն Լուի դյու 148  
 Շըմեն Լուի դյու 148  
 Շիմոն Գաբրիել 20, 38, 39, 49, 50  
 Շիվաժի (Շիվաջի) մահարաջա 120  
 Շխմոսէն 254



Ոսկանյան Ն. 208, 273  
 Ուզուն Հասան 18  
 Ուսկոլո 123  
 Չիտտադիսի Ա. Մ. 17  
 Չուլֆա (Ջուրֆա) 140  
 Պասիֆիկ դը Պրովանս 77, 104  
 Պետի դը լա Կրուա, Ֆրանսուա 77, 107  
 Պիդու դը Սենտ-Օլոն, Լուի Մարի 153, 154, 157, 173, 194, 221, 248  
 Պիետրո դելլա Վալլե 111  
 Պիթիվիե Գրիգոր դը 193  
 Պիկե Ֆրանսուա 4, 49, 137-139, 141, 147, 149, 150, 152, 157, 158  
 Պոդոս II պապ 148, 230  
 Պոդոս V պապ 18  
 Պոդոս դը Սերքիս 226  
 Պոդոս դը Սերքիս (Պոլ) 226-229  
 Պոդոս Մարիա 18  
 Պոդոս Մարիա եղբ. 18  
 Պոդոս Փիրոմալի 76  
 Պոդոս-Պետրոս 230  
 Պոդոս-Պետրոս գերապ. 230  
 Պոնցարտրեն Լուի դը 6, 182  
 Պուլե 35  
 Պադոմենու 17  
 Պրեսկոտ 191, 192  
 Պրովանս Պասիֆիկ դը 104  
 Ջալալեանց Եսայի Հասան 166  
 Ջաֆար, իմամ 69, 114, 170, 185, 217, 272  
 Ջաֆար, խոջա (տե՛ս Սաֆար) 25, 26  
 Ջեմելի-Կարերի Ջիաննի Ֆրանչեսկո 6, 20, 245, 246, 247  
 Ջիոտերիդա Մաան 111  
 Ռազիմ Ստեփան 129  
 Ռեկտոր, հիսուսյան կրոնավոր 248, 262  
 Ռեյես դոս Գասպար (Gaspar dos Reis) 251  
 Ռիգորդի 209, 211  
 Ռիշար Ֆրենսիս 3, 77, 85-86  
 Ռիշելիո 77, 137  
 Ռոդ Ալեքսանդր դը 212, 213, 214  
 Ռոշ Ժան Բատիստ 147, 149, 153, 158, 221  
 Ս. Ստեփանոս 157,  
 Ս. Լեոն, պապ 8  
 Սալոմե 117, 118  
 Սահրատ 176, 220  
 Սահրատներ 255  
 Սամսոն (տե՛ս Սանսոն) 174  
 Սանսոն Նիկոլա 159  
 Սանսոն Ֆրանսուա 147, 152-153, 155, 158-159, 174  
 Սավալյան Ա. 208  
 Սարատ, խոջա, Օենրիմանենց 208  
 Սարգիս 113  
 Սարֆրազ (տե՛ս նաև Սաֆրազ), խոջա, քալանթար 25, 52, 113  
 Սաֆար, խոջա, Շահիխասենց 25, 52, 113, 273

Սաֆրազ (տե՛ս նաև Սարֆրազ), խոջա, քալանթար 35, 36, 37, 43, 58  
 Սաֆրազյան գերդաստան (նաև Շահիխասենց) 25, 35, 37, 52  
 Սեն Մարի 220  
 Սեա ծով 182, 192, 206  
 Սոքիեսկի Յան 172, 248  
 Սուլեյման, շահ 77, 158, 160  
 Ստադլերը Ռուդոլֆ 43  
 Ստեփան Մուսաբեկենց 113  
 Ստեփանյան Ա. 38, 273  
 Ստեփանոս արքեպիսկոպոս Ջուդայեցի 141-142, 149, 208, 241, 249, 253, 254-257, 272  
 Ստեփանոս վրդ. Լեհացի 255  
 Ստրյուիս Ժան 5, 129, 130  
 Սրապիոն 239  
 Վալանտեն դ'Անժեր 108  
 Վանվիկ 121  
 Վիլլոտ Ժակ 24, 206, 207, 209  
 Վիտսեն Նիկոլաս 129  
 Տավերնիե Ժան-Բատիստ 20, 38, 39  
 Տեր Խաչատուր 208  
 Տեր Յարութիմ եպսկ. 208  
 Տեր-Յովհաննեսենց Յ. 24, 25, 35, 37, 123, 176, 208  
 Տուրնդֆոր Ժոզեֆ Պիտոն դը 5-6, 181-183, 184, 190, 191  
 Տրդատ 193  
 Փափազյան Հ. Դ. 21, 69, 272-273  
 Փիլիպոս Աղբակեցի 36, 240  
 Փիրոմալի Պոդոս 76  
 Քամալ Աղա 251  
 Քիլադրյան Եղիա Վրդ. 3  
 Քիրտեան Յ. 20, 25, 182, 191  
 Քնաք Սեքաստիան 138  
 Քոստ Բեթիս Տելլա 10  
 Քսավիե Ջերոնիմո 210  
 Քսավիե Ֆրանսուա 221  
 Քրյուսիոս 191  
 Քոմթեանց Լուդովիկոս 10, 12, 273  
 Օբրիեն 182  
 Օլեարիոս Ադամ 5, 33-34, 190  
 Օմար 168  
 Օրենզգեր 245  
 Օրմանեան (Օրմանյան) արք. Մադաքիա 20, 29, 254, 279  
 Ֆաբր 207, 241  
 Ֆաբրոնի Կալոլ 251  
 Ֆաթ Ալի խան 244  
 Ֆերուր 153  
 Ֆերիաներ 14  
 Ֆիգեռոա Գարսիա դե Սիլվա 4, 14, 15  
 Ֆիլիպ 2-րդ 4, 14,  
 Ֆիլիպ Ավրիլ 172, 173,  
 Ֆիլիպ դը Ջալլի 97, 233, 235  
 Ֆիլիպ դը Ջալլի 97, 233-235  
 Ֆիլիպ կարմելիտական 27-28, 234  
 Ֆիլիպ Օռլեանի դուքս 234  
 Ֆիլիպիններ 6, 184, 246



Ֆրայեր Զոն 77  
 Ֆրեդերիկ, դուքս 190  
 Ֆրիդոն Ազարիա 17  
 Ֆրիդրիխ 3-րդ ֆոն Օլեգովիզ-  
 Հոլշտեյն-Գոտտորբ 5, 33, 34, 190  
 Ֆրիզոն, ճիսուսյան կրոնավոր 209  
 Ֆերիոլ 241  
 Abbas Schach (Shäh) 15, 73, 265  
 Alberici 7  
 Alonso Carlos 15, 17, 18, 73, 251,  
 267  
 Ané 230  
 Angers Valentin d', P. 108  
 Arvieux Laurent d' 4, 139, 266  
 Aslanian S. D. 114, 123, 184, 226,  
 267  
 Avril Ph. p. 173  
 Azevedo Bernardo de 73  
 Baibórtula Simón 19  
 Beauvais P. Juste de 185  
 Benedetto XIII Pont. 148  
 Bent Frederik Lambertszoon 130  
 Blussé I 160, 163  
 Boghues 226  
 Boissel J. 106  
 Brisacier Jaques Charles 147  
 Brüggemann Otto 34  
 Brun Corneille le 20, 35, 39, 41, 135  
 Brzezinski Stanislaw 248, 267  
 Catanzaro Francesco Gligora-Biagia  
 148  
 Champion Franciscus Xavier 221  
 Chardin Jean 4, 106, 268  
 Chesworth J. 49  
 Chézaud Aimé P. 210, 211  
 Chinon Gabriel de 20, 38, 39, 41, 50,  
 265  
 Cittadini Angel Maria 17, 18, 267  
 Clouzier G. 34, 97  
 Comte Louis Le 10  
 Croix François Pétis de la 107  
 Cruyisse Dirk Van der 4, 106  
 Daulier Deslandes André 97, 265  
 Della Valle Pietro 111, 265  
 El-Mudarris Hussein. I. 4, 73, 139,  
 251, 268  
 Estoille (Lestoille) Sieur Alexandre  
 de L' 256, 269  
 Eszer A. 7  
 Etienne 141  
 Fabre 241  
 Febure Michel 50, 265  
 Felipe III de Espana 19, 268  
 Figueroa D. Garcias de Silva 4, 15,  
 265, 267, 270  
 Flannery J. M. 73, 74, 2514, 268  
 Fleuriau P. 221, 265  
 Floor Willem 42  
 Fontana V. M. 18, 268  
 Garswell J. 25, 268  
 Gaudereau Martin 248  
 Gédoyne Louis 4, 139, 268  
 Gemelli Careri G. F. 6, 20, 24, 41,  
 135, 247, 265

Ghougassian Vazken 114, 253, 268  
 Gilman Sander I. 128, 269  
 Gouvea Antoine de 73, 265, 266  
 Gouvea Antoine de 73, 265, 266  
 Gouveia Antonio 73, 251  
 Goyau G. 139, 268  
 Guennou Jean 7, 148  
 Gulbenkian Roberto 97, 233, 251,  
 268  
 Hanwey Jonas 191  
 Heller M. 106, 268  
 Imízcoz Floristán 19, 268  
 Antonio de Jesus 251  
 Joseph 35  
 Kevorkian R. H. 49, 105, 118, 268  
 Kroell Anne 242, 248  
 Kroell Anne 97, 107, 147, 159, 241,  
 248, 256, 269  
 Leclant J. 107, 267  
 Leenen Van 160, 163  
 Lemmens Leonardus P. 17, 176, 269  
 Lestoille Alexandre De 256, 269  
 Letouzey 230, 269  
 Loches P. Jean-Baptiste 108  
 Longo Carlo 17, 267  
 Louis XIV 139, 242, 268, 269  
 Löwenberg 34  
 Mandeslo 34, 266  
 Mans Raphaël du 77, 86, 106, 107,  
 270, 271  
 Maze Père de la 215, 266  
 Metzler J. 7, 138, 147, 269  
 Michaud L. G. 15, 27, 49, 97, 107,  
 111, 130, 139, 183, 209, 213, 247  
 Michel 242, 266  
 Mont Ferré 162  
 Moreri Louis 50, 265  
 Mutaflan Claude 69  
 Mutaflan Claude 69, 268  
 Olearius Adam 34, 266  
 Olivier Salmon 4, 268  
 Pétis de la Croix François 107  
 Philip III 15, 270  
 Philippe R. P. 27  
 Picquet François 139, 266  
 Pidou de Saint-Olon, Louis-Marie  
 153, 248  
 Piquet François 4, 139, 268  
 Pouillet 35, 266  
 Prescott 191  
 Pretejan 105  
 Reis Gaspar dos 251  
 Rhodes Alexandre de 213, 269  
 Richard Francis 77, 86, 106-108, 138,  
 139, 147, 148, 185, 210, 211, 251,  
 270, 271  
 Rigordi P. 211  
 Roch Jean Baptiste 147  
 Rudi Matthee 13, 99, 128, 187, 221,  
 269  
 Elia P. F. S. Alberto 176  
 Diego de S. Ana 73  
 S. Carlos Basilio de 251  
 S. Grégoire d'Arménie 193



- |                                         |                                           |
|-----------------------------------------|-------------------------------------------|
| Sander L. 128, 269, 266                 | Thévenot Jean de 24, 39, 105-107, 266-268 |
| Sanson François 147, 159                | Thomas D. 49, 270                         |
| Santa Ana Diego de 73                   | Tournefort Pitton de 41, 183, 267         |
| Scheriman Basilio Veneziano 220         | Turley J. S. 15, 270                      |
| Sivagy (Shivagy) radja 120              | Tygre 107, 267                            |
| Sophi 13, 269                           | Villotte Jacques 24, 209, 242, 267        |
| Southern Europe 49, 270                 | Wicqfort 15, 265                          |
| Souza G. B. 15, 270                     | Wicquefort Abraham de 34, 266             |
| St. Teresia Ambrosius A. 176            | Wien 7, 138, 269, 270                     |
| Struys Jean 5, 130, 266                 | Xun Zhou 128, 269                         |
| Tavernier Jean Baptiste 20, 38, 39, 266 | Zagly Philippe de 97, 233, 268            |
| Ter-Stépanian A. 105, 118, 268          |                                           |

## ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

### "New Julfa in European sources of the 17-18 centuries".

(Abstract)

The second part of the "New Julfa in European sources of the 17-18 centuries" monography includes parts of travel notes of European travelers and missionaries who visited Persia in the 17th century and were engaged in diplomatic, scientific, educational, religious and commercial activities. These notes directly relate to the various spheres of New Julfa Armenian community life starting with the establishment of Armenian community in the suburbs of Isfahan to the socio-economic problems and analysis of religious and ethno-cultural life. The publication includes the Armenian translations and annotations of European authors' original works (Garcias de Silva Figueroa, P. Philippe, Adam Olearius, Gabriel de Chinon, André Daulier Deslandes, François Picquet, Thévenot, Sanson, Philippe Avril, Tournefort, Jacques Villotte, Gemelli Careri and others). Referring to the significant authors, we wanted to identify through them the issues that the secular and spiritual elites of Europe had posed in regard to the Armenian population of the region. We have also reflected the attitude of the Armenian community towards them and their authorities. In this regard, the notes of some authors are highly important for us from the point of view of analyses of various facts examined by people of different professions.

With a critical approach, information contained in European sources is invaluable for researchers for the ethnic and geographical details contained in it but also for the observations made foreigners which cannot be found in original writings of locals. It is worth citing the thought of by Iranian studies scholar Rudi Matthee: "With a critical approach, information contained in European sources is invaluable for researchers for the ethnic and geographical details contained in it but also for the observations made foreigners which cannot be found in original writings of locals. It is worth citing the thought of by Iranian studies scholar Rudi Matthee: "European travelers as irredeemably biased outsiders rely on them and occasionally even quote them. The information found in these works remains valuable for its ethnographic detail, stands out for its verisimilitude, and is at times unique in that no other sources offer anything like it. The Western writings on seventeenth-century Iran remain indispensable as evidence for life and society of that time. They also show us how Europeans viewed Iran as well as their own society and culture. As such, these travel accounts continue to inform us as much as they delight us".



**Новая Джульфа в европейских источниках 17-18-х веков**  
(Резюме)

Вторая часть монографии „Новая Джульфа в европейских источниках 17-18-х веков” включает части путевых заметок европейских путешественников и католических миссионеров, которые посетили Персию в 17-ом веке и занимались дипломатической, научной, образовательной, религиозной и коммерческой деятельностью. Эти заметки напрямую связаны с различными сферами жизни армянской общины Новой Джульфы, начиная с создания армянской общины в пригороде Исфахана, до социально-экономических вопросов и анализа религиозной и этнокультурной жизни общины. Публикация включает в себя армянские переводы и комментарии произведений европейских авторов (Гарсиа де Сильва Фигероа, П. Филипп, Адам Олеарий, Габриэль де Шиннон, Андре Даулье Деланд, Франсуа Пике, Тевено, Сансон, Филипп Аврил, Турнефор, Жак Вилотт, Джемелли Карери и другие).

Ссылаясь на ценные заметки европейских путешественников, данная работа ставит перед собой целью определить через них те вопросы, которые ставила светская и духовная элита Европы по отношению к армянскому населению региона. В работе также отражается отношение армянской общины к ним и их властям. В связи с этим заметки некоторых авторов очень значимы для нас с точки зрения анализа различных фактов, учитывая сторонний взгляд людей разных профессий.

При критическим подходе, информация, содержащаяся в европейских источниках, бесценна для исследователей, так как в ней содержатся этнические и географические подробности, а также наблюдения, сделанные иностранцами, которых не найти в оригинальных трудах местных авторов. Стоит упомянуть цитату ираниста Руди Матти: „Европейские путешественники, как неисправимо предвзятые иностранцы, полагаются на них, а иногда даже цитируют их. Информация, найденная в этих работах, остается ценной в связи с содержащейся в ней этнографической подробностью, отличается своим правдоподобием и порой уникальна тем, что нигде более не упоминается. Западные писания об Иране 17-ого века остаются незаменимыми как свидетельство об образе жизни и обществе того времени, показывая каким представлялся европейцам Иран, а также европейское общество и культура. Как таковые, эти путевые заметки продолжают как информировать, так и удивлять нас”.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

ԱՌԱՋԱՐԱՆ .....	3
ԳԱՐՍԻԱ ԴԵ ՍԻԼՎԱ ՖԻԳԵՌՈՍԱ .....	14
<i>Գարսիա դե Սիլվա Ֆիգեռոսայի դեսպանագնացությունը</i>	
<i>Պարսկաստան .....</i>	15
ՀԱՅՐ ՖԻԼԻՊ .....	27
<i>Հ. Ֆիլիպի Ուղեգրությունից .....</i>	28
ԱԴԱՄ ՕԼԵԱՐԻՈՒՍ .....	33
<i>Ադամ Օլեարիոսի դեսպանագնացությունից .....</i>	34
ԳԱՐՐԻԵԼ ԴԸ ՇԻՆՈՆ .....	49
<i>Գարրիել դը Շինոնի նկարագրությունից .....</i>	50
ԱՆԴՐԵ ԴՈԼԻԵ ԴԵԼԱՆԴ .....	96
<i>Դոլիե Դելանդի նկարագրությունից .....</i>	97
ԺԱՆ ԴԸ ԹԵՆԸՆՈ .....	104
<i>Ժան դը Թենընի Տեղեկություններից .....</i>	108
ԺԱՆ ՍՏՐՅՈՒՒՍ .....	129
<i>Ժան Ստրյուիսի երրորդ ճամփորդության շարունակությունը .....</i>	130
ՖՐԱՆՍՈՒԱ ՊԻԿԵ .....	137
<i>Ֆրանսուա Պիկեի վկայություններից .....</i>	139
ՍԱՆՍՈՆ .....	158
<i>Սանսոնի նկարագրությունից .....</i>	159
ՖԻԼԻՊ ԱՎՐԻԼ .....	172
<i>Հ. Ֆիլիպ Ավրիլի ուղեգրությունից .....</i>	173
ԺՈՋԵՖ ՊԻՏՈՆ ԴԸ ՏՈՒՐՆԸՖՈՐ .....	181
<i>Պիտոն դը Տուրնեֆորի նամակներից .....</i>	184
ԺԱԿ ՎԻԼԼՈՏ .....	206
<i>Ժակ Վիլլոտի «Ուղեգրություններից» .....</i>	209
ՋԻԱՆՆԻ ՖՐԱՆՉԵՍԿՈ ՋԵՄԵԼԼԻ-ԿԱՐԵՐԻ .....	245
<i>Ջեմելլի-Կարերիի Ուղեգրությունից 1694 թ. ....</i>	247
ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	265
ՑԱՆԿԵՐ .....	274
ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ .....	291



**ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱՅԻՐՅԱԼ**

**ՆՈՐ ԶՈՒՂԱՆ ԵԿՐՈՂԱԿԱՆ ԱՐՔՈՒՐՆԵՐՈՒՄ  
17-18 ԴԱՐԵՐՈՒՄ**

**ՄԱՍ II**

(ԲՆԱԳՐԵՐԻ ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ, ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Տեխնիկական խմբագիր՝ Ա. Մարանգոյան  
Սրբագրիչ՝ Ն. Ռաֆյան  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 15.12.2017

Տպաքանակը՝ 200 օրինակ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
INSTITUTE OF HISTORY OF NAAS RA

---

ՀՀ, 0019, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
RA, 0019, Yerevan, pr. Marshal Bagramyan 24/4  
24/4, Marshal Bagramyan Ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>



ՄԱՍՏՏԱՐ 1:5000000



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

- Օսմանյան կայսրության վիճակների սահմաններ
- վիճակների կենտրոններ
- Այլ բնակավայրեր
- ⊙ Բ Ե Ր Դ Ե Ր
- ⊕ Վ ա ն ք ե ղ
- == Գլխավոր ճանապարհներ
- + Լ Ե ռ ն ե ղ X Լ Ե ռ ն ա ն չ ք

ՄԱՍՏՏԱՐ 1:2000000

Քարտեզագիր՝ Հ. Գ. ՄԱՐԳՍՅԱՆ

Քարտեզ «Կիլիկիան և արևմտահայ շրջանները (XIX դ. վերջ - XX դ. սկիզբ)» (հեղինակ՝ պ. գ. ք. Համետ Սարգսյան, աղբյուր՝ Վերժինե Սվալյան, Կիլիկիա. արևմտահայոց բնակավայր պատմությունը (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994):